Այսօր դրամահավաքի գործընթացն ընկալվում է իբրև ոչ այնքան ֆինանսական միջոցների ձեռքբերում, որքան փոխշահավետ համագործակցություն: Իբրև արդյունք՝ մշակութային հիմնարկների աշխատակիցները նաև նոր բարեկամներ և հետևյալ հմտություններն են ձեռք բերում՝

- մարքեթինգային որոշումներ ընդունելու,
- նոր տեխնոլոգիաների և տեղեկատվական միջոցների օգտագործման,
- շնորհանդեսային միջոցառումների կազմակերպման և այլ բնագավառներում:

Ֆանդրեյզինգը և շուկայավարությունը փոխկապակցված են: Ֆանդրեյզինգը երբեմն դիտվում է որպես ոչ առևտրային մարքեթինգ [Музей. Маркетинг. Менеджмент: Практическое пособие, 2001, 38]: Շուկայավարման ճիշտ քաղաքականությունը նպաստում է արտաբյուջետային գումարների ներգրավմանը: Որքան հայտնի է թանգարանը, այնքան ավելի հեշտ է գրավել ֆինանսավորող կազմակերպությունների ուշադրությունը: Պատահական չէ, որ դրամահավաքի մասնագետները մշտապես շեշտում են, որ նախապես անհրաժեշտ է բարձրացնել տվյալ թանգարանի հանրաճանաչությունը, ապա զբաղվել ֆանդրեյզինգով:

Մեր օրերում Հայաստանում արդյունավետ աշխատող շատ թանգարաններերում հատուկ շուկայավարման բաժիններ են գործում, որոնք միտված են իրականացնելու հետևյալ խնդիրները՝

- այցելուների քանակի ավելացում,
- թանգարանային լսարանի ընդլայնում,
- գործընկերների, հովանավորների և բարեկամների շրջանակի ընդլայնում,
- անձանոթ միջավայրում թանգարանի մասին տեղեկատվության տարածում:

Վերջին տարիներին համեմատաբար աճել են թանգարաններին պետության կողմից տրվող հատկացումներն ու բարելավվել է տեխնիկական հագեցվածությունը, ինչը չի կարելի ասել մարզային և համայնքային ենթակայության թանգարանների մասին:

1997 թ.-ից հանրապետությունում կիրառված մշակութային հաստատությունների քաղաքականության ապակենտրոնացման սկզբունքի արդյունքում՝ մշակույթի նախարարության համակարգի թանգարանների մի մասն անցավ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայությանը՝ պետական սեփականության իրավունքը պահպանելով միայն հավաքածուների նկատմամբ: Այսօր արդեն ակնհայտ է, որ այս քաղաքականությունը չարդարացրեց իրեն և սպասված արդյունքը չտվեց, այս փաստն արձանագրվել է դեռևս 2003 թ. Եվրոպայի խորհրդի փորձագետների կողմից [Պիկիյան, Հարոյան, Գրիգորյան, 2007, էջ 189]:

Ավելի ուշ Լոռու և Շիրակի մարզային և համայնքային թանգարանների կարիքների գնահատումը ցույց տվեց, որ շատ թանգարաններ հայտվել են ոչ միայն ֆինանսական ծանր կացության մեջ, այլև ունեն մեթոդական և մասնագիտական տեղեկատվության և խորհրդատվության կարիք [Հարոյան, 2009, 76]:

Պետական ֆինանսավորման նվազման պայմաններում, բնականաբար, արտաբյուջետային միջոցների հայթայթման խնդիրն ավելի է սրվում: Շուկայավարման ռազմավարության գործունեության շնորհիվ հնարավոր է վերափոխել թանգարանի գործունեության արդյունավետությունը: Կարևոր է՝ չանտեսելով շուկայավարության ծրագիր կազմելու գործընթացը, իրավիճակի վերլուծության արդյունքում հստակ սահմանել թանգարանի առաքելությունը, խնդիրները (անելիքները), իրականացնել PEST և SWOT վերլուծություն, գնահատել ռեսուրսներն ու մշակել ռազմավարական պլան, որն իրականացնելուց հետո

անպայման անցկացնել մարքեթինգային աուդիտ (ստուգում, վերահսկում), որի ընթացքում արդյունքի վերլուծությունները համեմատել սպասվելիք արդյունքների հետ:

Շուկայավարության ծրագրի կազմման գործընթացի հիմնական փուլերը պարզաբանելուն կօգնեն հետևյալ հարցերը.

1. Իրավիճակի վերլուծություն.

Ի՞նչ ձեռքբերումներ ունենք, և ինչպե՞ս ենք հասել այդ ամենին:

2. Խնդիրների որոշում.

Ի՞նչ նոր նպատակներ ունենք:

3. Ռազմավարության որոշում.

Ի՞նչ ճանապարհներով կարող ենք հասնել առաջիկա նպատակին:

4. Ռեսուրսների գնահատում.

Ի՞նչ միջոցներ են անհրաժեշտ դրանց հասնելու համար:

5. Ծրագրի մոնիթորինգ.

Ի՞նչ եղանակով կարելի է ճշտել՝ հասել ենք արդյոք նպատակին:

Ներկայացված ծրագրի օրինակն, իհարկե, կատարյալ տարբերակ է, սակայն հայտնի է, որ աշխատանքն իրականացնելիս բազմաթիվ դժվարություններ են առաջանում հատկապես մարդկային փոխհարաբերությունների ընթացքում, որոնց հաղթահարմանը մեծապես նպաստում են հաղորդակցվելու հմտություններին ու վարվելաձևերին տիրապետելու դիվանագիտական կարողությունները: Այս ամենը մարքեթինգային ծրագրի բարեհաջող իրականացման գրավականն են:

Հայաստանում վերջին տարիների ընթացքում թանգարանային գործունեության, այդ թվում՝ շուկայավարման տեսանկյունից, աճ է նկատվում: Կարևորելով այցելուների հետ տարվող աշխատանքները՝ մի շարք սոցիոլոգիական ուսումնասիրություններ են կատարվում՝ նպաստելով այցելուների վերաբերմունքի և ակնկալիքների հստակեցմանը և թանգարանային գործի զարգացմանը [Սարոյան, 2011, 63]:

Մի շարք թանգարաններում գործում են շուկայավարության, գովազդի, դրամահավաքի և հասարակության հետ կապերի հարցերով զբաղվող բաժիններ: Օրինակ, Հայաստանի ազգային պատկերասրահում մարքեթինգի և արտաքին կապերի բաժինը ստեղծվել է 2017 թվականին: Այն իրագործում է բազմաբնույթ նախագծեր, որոնք միտված են ապահովելու թանգարանի այցելուների քանակի մաքսիմալ աճն ու հանրության հնարավորինս լայն շրջանակների ներգրավումը թանգարանային գործունեության տարբեր ոլորտներում: Մեր առաքելությունն է առավել գրավիչ կերպով ներկայացնել առանձնապես մեր հավաքածուները, ինչպես նաև ամրապնդել մեր հաղորդակցման շրջանակները: Պարբերաբար իրականացվում են այցելուների խմբերի մոնիթորինգ, արդյունքների վերլուծության հիման վրա նոր խմբերի թիրախավորում, ընդլայնվում են հովանավորների շրջանակները: Թանգարանը համագործակցում է տուրիստական գործակալությունների, հանրակրթական և բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ, մշակվում են համատեղ ծրագրեր:

Մարքեթինգի և արտաքին կապերի բաժինն իրականացնում է այցելուների ներգրավմանը միտված գործողություններ, այն է՝ առաջարկվող ծառայությունների որակի բարելավում, թանգարանային բովանդակության թարմացում, հավաքածուի մեկնաբանման առավել հասանելիություն, հանգստի և ժամանցի տարածքների ձևավորում, գիտակրթական ծրագրերի և միջոցառումների իրականացում, Հայաստանում և արտերկրում թանգարանի մասին տեղեկատվության տարածում: Իրականացվում են նաև դասական և թվային տեխնոլոգիաների վրա հիմնված էքսկուրսիոն ծրագրերի մշակում, ինչպես նաև համապատասխան մասնագետների ներգրավմամբ էքսկուրսիոն ծրագրերի կազմում հաշմանդամություն ունեցող անձանց համար: Բաժինը նաև աշխատանքներ է իրականացնում կամավորական ծրագրերի ընդլայնման ուղղությամբ:

Հանրության հետ հաղորդակցումն առավել դյուրին դարձնելու նպատակով քաղաքային տարածքների համար մշակվում են համապատասխան նավիգացիայի, ցուցանակների, վահանակների և այլ գովազդային նյութեր:

Կազմվում և մշակվում են այցելության տոմսերի, հուշանվերների և հրատարակությունների վաճառքի, կայքէջի գործունեության և այլ կարևոր վիճակագրական տվյալներ:

Բաժնի առաջնահերթությունների թվում է լուսավորչական, գիտացուցադրական, հանրահեռացված և այլ մշակութային ծրագրերին և միջոցառումներին ուղղված դրամական միջոցների ավելացումը տարբեր օրենքով և կանոնադրությամբ չարգելվող մեթոդներով: Բացի դրամաշնորհի ձևով բյուջեից տրվող հատկացումներից, թանգարանն ունի նաև հիմնական գործունեությունից և այլ աղբյուրներից գոյացող ֆինանսական միջոցների (արտաբյուջետային միջոցներ) որոնման բազմաթիվ հնարներ [ՀԱՊ, Մարքեթինգի և արտաքին կապերի բաժին]:

21-րդ հարյուրամյակն, իրավամբ, տեղեկատվության դարաշրջան է անվանվում: Իբրև հաղորդակցական համակարգի տարր՝ թանգարանները պետք է աշխատեն հասանելի լինել և կարողանալ արագ ու ճշգրիտ արձագանքել այցելուին հուզող կամ հետաքրքրող հարցերին: Թանգարանը պետք է ջանա հստակ ու մատչելի ներկայացնել իր առաջարկներն ու հնարավորությունները և տարածել դրանք հատկապես բարեկամների (հոգաբարձուների խորհուրդ, այցելուներ, հովանավորներ, քաղաքական գործիչներ, զբոսաշրջության գործակալություններ, ԶԼՄ-ներ և այլն) շրջանում:

Այսպիսով, թանգարանային շուկայավարությունը գործելակերպի և որոշումների համահավաք ամբողջություն է՝ միտված թանգարանի առաջարկած ծառայությունները հնարավորինս գրավիչ դարձնելուն, այցելուների և լրացուցիչ ռեսուրսների ստվար քանակ ապահովելուն: Արդյունավետ գործընթացի համար անհրաժեշտ է թանգարանը դիտել այցելուի աչքերով, հետազոտել այցելուների պահանջներն ու մշակել համապատասխան ծառայություններ: Ծառայությունների գրավչությունը բարձրացնելու նպատակով թանգարանները պետք է աշխատեն հասանելի լինել, և կարողանալ արագ ու ճշգրիտ արձագանքել այցելուին հետաքրքրող հարցերին: Մարքեթինգային գործունեությանն ուղղված քաղաքականությունը պետք է իրականացնել հետևողականորեն, իսկ կիրառվող ձևերի արդյունավետությունը գնահատել ժամանակ առ ժամանակ՝ ինչպես քանակական, այնպես էլ՝ որակական առումներով:

SUMMARY

Thus, the concept of museum marketing encompasses a range of practices and decisions aimed at enhancing the appeal of the museum's services, and ensuring a significant number of visitors. To achieve this effectively, museums must adopt the visitor's perspective, analyze their needs, and tailor services accordingly.

To boost service appeal, museums must respond promptly and accurately to visitors' inquiries. Consistency in implementing marketing policies is crucial, and their effectiveness should be assessed through both quantitative and qualitative measures.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Cowell, D. W. The Marketing of Services, Oxford, Butterworth-Heinemann, 1984, 340 p.
2. McLean, Fiona Marketing the Museum, New York, Routledge, 1998, 268 p.
3. Schuler, Thomas Tourists – an inhomogeneous species. How a museum should diversify its strategies and services // Museum. Research-Metodical Annual, Yerevan, Amaras printing house, No. 2, 2010, pp. 193-207.
4. Абанкина Т., Социальный маркетинг в “цивилизации досуга” // Музеи. Маркетинг. Менеджмент, Москва, 2001, Прогресс-Традиция, стр. 28– 45.
5. Буари Филипп А., паблик рилейшнз, или стратегия доверия: пер. с фр., Москва, ИМИДЖ-Контакт, 2001, 178 с.
6. Кози С., Партнерство во имя развития // Музеи. Маркетинг. Менеджмент, Москва, Прогресс-Традиция, 2001, с. 9–14.
7. Лорд Б., Лорд Г. Д., Менеджмент в музейном деле. Учебное пособие, пер. с англ., Москва, Логос, 2002, 256 с.

8. Майлз Р., Наш посетитель: кто он и каковы его потребности // Музеи. Маркетинг. Менеджмент. Москва, Прогресс-Традиция, 2001, с. 138–155.
9. Музеи. Маркетинг. Менеджмент: Практическое пособие / Сост. В. Ю. Дукельский. Москва, Прогресс-Традиция., 2001, 210 с.
10. ՀԱՊ, Մարքեթինգի և արտաքին կապերի բաժին, <http://www.gallery.am/hy/Departments/marketing2019/>, 02.10.2024.
11. Հարոյան Մ., Նոր հնարավորություններ, թե՛ նոր մարտահրավերներ // «Թանգարան» գիտատեսական և մեթոդական ամենամյա հանդես, Երևան, Ամարաս, 2009, N1, էջ 74-79:
12. Պիկիչյան Հ., Հարոյան Մ., Գրիգորյան Ա., Թանգարանային մենեջմենթ և մարքեթինգ /ուսումնական ձեռնարկ/, Երևան, Էդիթ Պրինտ, 2007, 196 էջ:
13. Սարոյան Տ., Սոցիոլոգիական հետազոտությունը՝ որպես թանգարանային գործունեության բարելավման միջոց // «Թանգարան» գիտատեսական և մեթոդական ամենամյա հանդես, Երևան, «Էդիթ Պրինտ», 2011, N2, էջ 61-69:

ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՆՐԱՀՈՉԱԿՈՒՄ
ARMENIAN HERITAGE PRESERVATION & PROMOTION
СОХРАНЕНИЕ И ПОПУЛЯРИЗАЦИЯ АРМЯНСКОГО НАСЛЕДИЯ

<https://doi.org/10.52027/18294685-lhmp.2-01>

ՀԱՅՐԻՑԱՆ ԼՈՒՄԻՆԵ

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

ՍՈՒՇԻ ԵՎ ՊԱՏՄԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՐԱԿԻՑ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԳԻՏԱԿԱՆ
ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՂԱՄ ՏԵՐ-ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԴԻՏԱԿԵՏՈՒՄ

Բանալի բառեր՝ Գեղամ Տեր-Կարապետյան, Սրվանձտյանց, ժառանգություն, ժողովրդագիտական, բանահյուսական, ազգագրական, Տարոն, Մուշ, արխիվ, ժանր:

Keywords: Gegham Ter-Karapetyan, Srvandztyants, heritage, ethnological, folklore, ethnographic, Taron, Mush, archive, genre.

Հոդվածում ներկայացված է 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի արևմտահայ նշանավոր գրագետ, հանրային գործիչ և բանահավաք Մշո Գեղամի կյանքի ուղին ու գործը: Եթե Տարոն աշխարհի գավակի ազգանվեր գործունեությունն ու գրական ժառանգությունը մասամբ բացահայտված են նվիրյալ պատմաբանների և գրականագետների շնորհիվ (Պետրոսյան Հ. «Գեղամ Տեր-Կարապետյան, Մշո Գեղամ», «Գեղամ Տեր-Կարապետյան», Տեր-Մինասյան Ա. «Տատրակ կամ Մշոյ Գեղամ. Վերահաս աղետի մը արթուն դիտորդը», Հայրիյան Լ. «19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի արևմտահայ հեքիաթագրությունը (Թվատինցի, Մշո Գեղամ, Զարդարյան)», Բադայան Գ. «Արևմտյան Հայաստանի պատմաժողովրդագրական նկարագիրը մեծ եղեռնի նախօրեին»), ապա բանահավաք Գեղամն ու նրա գրառած ժողովրդական նյութը մնացել են ստվերում, պատվել մոռացության փոշով:

Հոդվածի նպատակն է բացահայտել վերոհիշյալ ժամանակաշրջանի արևմտահայ նշանավոր ազգային գործչի, հեղափոխականի և երեսփոխանի, գավառական գրական հոսանքի նշանավոր անդամի և, որ չափազանց կարևոր է, Գ. Սրվանձտյանց բանահավաքի հավատարիմ և արժանավոր հետևորդի դիմագիծն ու ժառանգությունը:

Գեղամ Տեր-Կարապետյանը ((1866-1918), Մշո դաշտ, գյուղ Խեյայան) գրական շրջանակներին առավել հայտնի է Մշո Գեղամ գրչանունով: Նա ստեղծել է ժողովրդական բանահյուսության ենթաշերտերի ու լեզվամտածողության հենքով գոյավորվող գրականություն, հեղինակել ազգագրական, բանագիտական, տեղագրական, կրոնական և հրապարակախոսական հոդվածներ՝ թողնելով հարուստ ժառանգություն, սակայն առայսօր ազգագրագետների ու բանագետների պատշաճ ուշադրությանը չի արժանացել և գիտական շրջանառության մեջ չի դրվել նրա ազգագրական ու բանահյուսական բազմաժանր գրառումների մեծ մասը (հեքիաթներ, առած-ասացվածքներ, երգեր, ավանդազրույցներ, «Մշո գաւառական լեզուի բառեր», որը բարբառային բառերի, ասույթների և առածների հավաքածու-բառարան է՝ մոտ չորս հարյուր էջանոց աշխատություն և այլն), իսկ գրական ստեղծագործությունները թեև ժողովրդագիտական սկզբնաղբյուրների արժեք ունեն, սակայն դրանց նվիրված փոքրաթիվ ուսումնասիրություններում շրջանցվել են ժողովրդագիտական շերտերը:

Բայց նախ պարզենք, թե ով էր Գեղամ Տեր-Կարապետյանը, ինչ կարևորություն ունի նրա կյանքի և գործի ուսումնասիրությունը: Մի մարդով մշեցու, հայ մարդու կենսական և իրավական իրավունքների պաշտպանությունը դարձրել էր իր կյանքի գործը, իր գերնպատակն ու առաքելությունը: Բավական է հիշատակել միայն նրա «Հողային հարցը հայաբնակ նահանգներում մեջ» աշխատությունը (1911 թ. Կ. Պոլիս), որը հեղինակի կենդանության օրոք առանձին հրատարակված միակ գրքույկն էր, և Ռուբեն Զարդարյանի կողմից գնահատվել էր «որպես հակիրճ, բայց ամբողջական խտացումը հայ կյանքին արդի ամենեն հրատապ հարցին»

[Պետրոսյան, 2012, 109]: Գեղամը բարձրացնում է հողային այն ահռելի խնդիրները, որոնք հրատապ էին իր հողի վրա հազարամյակներ ապրող և իր իրավունքները պաշտպանող ժողովրդի համար: Ժողովրդի ցավերով ապրող նվիրյալի, մտավորական-գրողի, հրապարակագրի, հասարակական գործչի և Օսմանյան խորհրդարանի պատգամավոր Գեղամի խոսակցության ու անհանգստությունների միակ նյութն, ինչպես նշում է Օսյանը, Մուշն էր «գիւղացիներուն վիճակը, էշրաֆներու բռնութիւնները, կառավարութեան ընթացքը, տնտեսական խեղճութիւն, կրթական խեղճութիւն, հողային յափշտակութիւն, զուլում...» [Օսեան, 1913, 119]:

1888 թ. Սրվանձտյանցին ուղղված նամակներից մեկում խոսելով համատարած անտարբերության և մի քանի հայրենանվեր անձնուրացների մասին՝ Գեղամն ակամա բնութագրում է նաև իր սկզբունքներն ու կյանքի ուղին. «Անտարբերությունն մը միայն կտեսնեմ իմ չորս դին, անտարբերություն մը, այո՛, ոչ թե ուրիշ պատճառով, այլ դա մի սովորական հատկություն է մարդոց՝ մեր հայրենակցաց, մտածել ավելի այն նյութերու վրա, որ անմիջական առնչություն ունին իրենց կյանքին ու գործոց հետ, չեմ մոռնար ըսելու թե բացառություններ էլ կան, որք կորոնին ավելի բարձր և հանրային շահեր...» [Պետրոսյան, 1977, 194]:

Գեղամը Սրվանձտյանի սանն (Սրվանձտյանցի սանն է եղել Մշո Սուրբ Կարապետ վանքին կից ժառանգավորաց վարժարանում) ու հետևորդն էր, ուստի իր մեծ ուսուցչին համարում էր հայ ժողովրդի բարոյական հացի մատակարարն ու ժողովրդական համակրանքին և երախտագիտությանն արժանի զավակը [Պետրոսյան, 1977, 182]:

Ժողովրդական պատկերավոր մտածողությանը Գեղամ Տեր-Կարապետյանը ծանոթանում է դեռևս մանկության տարիներին՝ հեքիաթասաց Շիրո ջոջիկից [Պետրոսյան, 1983, 267]:

Ինչպես դիպուկ նկատում է Անահիտ Տեր-Միինասյանն իր «Տատրակ կամ Մշոյ Գեղամ. վերահաս աղետի մը արթուն դիտորդը» հոդվածում. «Գեղամ կարդացած է Սրուանձտեանցի *Գրոց-Բրոց*, որ իրեն համար կը մնայ օրինակելի աշխատութիւն» [Տեր Մինասեան, 2017, 70]: Ուստի, հետևելով իր հոգևոր ուսուցչի օրինակին, նա նվիրվում է բանահավաքչական աշխատանքին՝ գրառելով Տարոն-Տուրուբերանի, Մշո դաշտի, Մասունի, Բուլանքի, Վարդոյի, Գինջի և Տիգրանակերտի ազգագրական, վիպական, քնարական ու ասույթաբանական բանահյուսության բազմաժանր և արժեքավոր նյութերն ու թողնում բանահավաքչական հարուստ ժառանգություն՝ հեքիաթներ, ժողովրդական երգեր, հարսնագովքեր և փեսայագովքեր, պարերգեր, առած-ասացվածքներ, հանելուկներ և առակներ, տեղեկություններ ժողովրդական նախապաշարմունքների վերաբերյալ, մանկախաղեր ու զրույցներ, աշուղական սիրավեպեր և այլն (Մշո Գեղամի ֆոնդ, ԳԱԹ): Ծանոթանալով ժողովրդի ստեղծագործ միտքը ներկայացնող Մշո Գեղամի արխիվային ժառանգությանը՝ վստահորեն կարելի է պնդել ժողովրդագիտական նյութի հարստության, բազմաժանրության, ծանոթագրությունների և դիտարկումների մեծարժեքության մասին: Իհարկե, Գեղամ Տեր-Կարապետյանի ժառանգությունն ամբողջովին անտիպ չէ, հատկանշական է, որ հրապարակումները նույնպես ժողովրդագիտական հարուստ նյութ են պարունակում:

«Մշո մուրատատուր Ս. Կարապետ. իր գրոց ու բրոց բանկիկը» մոտ 1500 էջանոց աշխատության մեջ, որն ամբողջությամբ նվիրված է Մշո Ս. Կարապետ վանքին, այդ թեմի մեջ մտնող վանքերին, պատմական անցքերին ու վանահայրերին, դպրությանն ու ավանդություններին, Գեղամն անդրադառնում է նաև ձմեռային երեկոներին գյուղական օդաներում, աշխարհիկ-ռամկական հեքիաթներից ու զրույցներից բացի, կռատների, վանքերի, եկեղեցիների, սրբերի, նրանց մասունքների, զանազան հրաշագան անցքերի մասին պատմվող ավանդություններին, հեքիաթ-զրույցներին, որոնք իր պատանեկան տարիների քաղցր վերհուշը կարելի է համարել [Տեր-Կարապետյան, 2000, 45-56]:

Հարուստ ժողովրդագիտական նյութ է պարունակում «Տարօնի վանքերը. ուղեւորի յիշատակներ» գիրքը, որտեղ հրապարակվել են Գեղամի մեծաթիվ հոդվածները՝ նվիրված Ս. Կարապետ, Ս. Հովհաննես, Եղորդուտի, Ս. Սարգիս վանքերին, Եղեսիայի, Դիարբեքիի եկեղեցիներին, տարբեր սրբավայրերի շուրջ հյուսված և կենցաղավարած նվիրական ավանդություններին, ժողովրդական հավատալիքներին, հայերի և քրդերի կենցաղին ու սովորություններին [Տեր Կարապետեան, 2003, 143]:

Ուշագրավ է, որ նույնիսկ հորը նմիրված «Տերտերին մահը» վերհուշում Գեղամը ժողովրդագիտական կարևոր տվյալներ է փոխանցում ընթերցողին, ինչպես օրինակ. «Մեծօրեից աւանդութեամբ՝ շինականք պէտք կը տեսնեն, որ նոր գերեզմանատան մէջ՝ ամենէն յառաջ՝ անպատճառ քահանայ մը թաղուի, որպէս զի հողը օրհնուի, սրբանայ ու նուիրական ըլլայ: Հակառակ մերիններու եւ միամիտներու ընդդիմութեան թէ մինակ ու մալուլ թողելու չէ քահանային գերեզմանը, ես հաւանեցայ սակայն գիւղացիներու անկեղծ ու բարեմիտ առաջարկութեան» [Գեղամ, 1902, 484]:

Գեղամին գրավում էին հայրենի ավանդությունները, որոնց նմիրել է «Իննականեաց մեհեանները եւ Նաւասարդի տօնը Տարօնոյ մէջ» աշխատությունը [Վարուժան, Սիրունի, 1914, 148-157]:

Անկրկնելի են ժամանակի մամուլում նրա հրապարակած՝ «Շահմարա՞ն թէ Շամիրամ», «Խորենացին. իր ջաղացքն ու ջրխջրխիկը», «Վարինէն» և այլ ավանդազրույցները, որոնք բանահյուսական բացառիկ նմուշներ են՝ ներկայացված հյութեղ խոսքով, տեղացու փայլուն իմացությամբ: Բանահավաքը գիտակցում և արժևորում էր իր գրառած և հանրայնացրած՝ պատումները, դրանց մեծ մասի սկզբնաղբյուրային նշանակությունը (որոշ պատումներ, ինչպես՝ «Շահմարա՞ն թէ Շամիրամ» (Բիւզանդիոն, 1900), «Վարդ-խաղը» (Ազատամարտ, 1911) չեն հանդիպում այլ բանագետ-բանահավաքների գրառումներում). «Թէ՛ այս, թէ շրջակայ գիւղերու մէջ զանազան աւանդական պատմութիւններ կ'գտնուին հնասէր ժողովրդեան մօտ, որոց մէկն հետեւեալն է ու կ'վերաբերի Շամիրամին ծագման եւ ինչ ինչ գործերուն: Բանասերներու համար նուազ հետաքրքրական չափտի ըլլայ կարծեմ» [Տէր Կարապետեան, 1900, 1]: Հնագույն հավատալիքների յուրօրինակ անդրադարձ է «Ոսկեճանկը» հեքիաթատիպ-ավանդության գեղարվեստական մշակումը, որն ըստ Մշո Գեղամի վկայության, ասվել է չափածո՝ պարսկերէն և քրդերէն: Ավանդության հիմքում ընկած է մարդկային հոգու կերպարափոխման և քնած ժամանակ հոգին մարմնից անջատվելու նախնական հավատալիքները: Ժողովրդական պատկերացումներում մեռնելիս կամ քնի ժամանակ մարմինը թողած հոգին հիմնականում բերանից (Գեղամի մոտ քնած հովվի քթից) է դուրս գալիս և կարող է տարբեր տեսանելի կերպարանքներ ընդունել [Գեղամ, 1899, 12-24]: Բանահյուսական արժեքները ոչնչացումից փրկելու և գեղարվեստական խոսքն առօրեա ժողովրդախոսակցական բառամթերքով խտացնելու միտումով՝ արձակագիրն իր երկերում լայնօրէն օգտվել է ժողովրդական առած-ասացվածքներից, թևաւոր խոսքերից ու դարձվածքներից (Գեղամի արխիվում պահվում է ժողովրդական ասույթաբանության մի հարուստ շտեմարան, որտեղ բանահավաքի գրառումների կողքին տեղ են գտել նաև արժեքավոր նշումներ և մեկնություններ) [Մշո Գեղամի ֆոնդ, ԳԱԹ]:

Գեղամի ստեղծագործությունները մասնակիորեն ամբողջացվելով հրապարակվել են 1931 թ. Փարիզում՝ «Տարօնի աշխարհ. պատկերներ ու պամուածքներ» խորագրով, որի գրախոսականում «Սիոնի» 1932 թ. մայիսյան համարում գրախոսը, (Ն.Վ.Պ.), կարևորելով Գեղամի երկերում ամբարված բանահյուսական և ազգագրական նյութը, գրում է. «Հայ ազգագրութեան ու ռամկագիտության համար պիտանի բաւական հուսման նիւթ կը պարունակէ այս հատորը...» թվելով այդ ստեղծագործություններից մի քանիսը [Ն.Վ.Պ., 1932, 152]:

Հեքիաթ որակող «Մէկ ու ճար Շուշիկն» իր կառուցվածքում ներառում է հեքիաթի բաղադրատարրեր, որտեղ զգալի է բանահյուսությունից արտածված հոսքը, սակայն ստեղծագործությունը ժանրային խաչաձևումների արդյունք է, որտեղ առկա են ժողովրդական հեքիաթներին բնորոշ ավանդական կայուն բանաձևեր, լեզվադարձվածային կայուն կաղապարներ («ժուռ-ժամանակ»), ասույթաբանական ժանրի ինքնատիպ դրսևորումներ («Աղուէսին քառտուն առակներ կան, բոլորն էլ տանձին վրայ են», «Ուր կողովի տակ չի մնար, ոչ էլ սերը՝ սրտանոցին մէջ»), ժողովրդական լեզվամտածողությանը բնորոշ երդումներ («Թող մէկիկ Աստուածն ու սուրբերն Սիփնայ Պլեճնայ վկայ մնան», «ապրիմ քումն եմ, մնամ հողերուն...»), անեծքներ («Իսկ իմ ուրաղ չառնէ քու սիրտը», «քանզ Ադամ մերկ, քանզ օձն անօթի իյնես», «քու անկողին փուչ, քու բարձն տատաշ եղնի», աղօթքներ՝ «Եաման մուրատատուր Ս. Կարապետ, դու որ ամեն նեղածին կրեասնիս, ընծի էլ հասիր, սիրտս կոտրուկ է, թեւերս թափուկ է ...»): Գեղամը քայլ առ քայլ ներկայացնում է հմայական ծես՝ թուրթ գրելու գործընթացը, և հմայական խոսքեր,

որոնք արտաբերում է տիրացու Մկրտն: Այսպիսով, Գեղամն իր հեղինակած հեքիաթում անդրադարձել է Բլեջան լեռան շուրջ հյուսված ավանդազրույցներին, հայրենի Բուլանըխի գավառաբարբառում գոյատևած հնագույն հավատալիքների տարբեր արտահայտություններին՝ ցանկության խոսքերին (հմայական ասույթներ, անեծքներ, օրհնանքներ ու երգումներ), հեղինակային հեքիաթը վերածելով անեծքի հմայական գորությունը հավաստող ստեղծագործության, քանի որ «արդարացի անեծքն», ըստ ժողովրդական ընկալումների, իրականանում է [Պապիկեան, 1907, 117-120]:

Գեղամ Տեր-Կարապետյանի կենդանության օրոք և ավելի ուշ հրապարակված գրական ստեղծագործություններից, բանահյուսական և ազգագրական հում նյութից, ինչպես նաև ժողովրդական նյութի մշակումներից զատ, ԳԱԹ-ում և Բեյրութի (Լիբանան) Համազգայինի Մելանքթոն և Հայկ Արալանյան ճեմարանում պահպանվում է նրա անտիպ ժառանգությունը, որը դրվելով գիտական շրջանառության մեջ՝ կարող է ամբողջացնել Տարոնի ժողովրդագիտական ժողովածուները և հարստացնել պատմագագազրական այդ շրջանի մասին ունեցած մեր գիտելիքները: ԳԱԹ-ում պահվող Մշո Գեղամի ֆոնդը հարուստ և ընդգրկուն է ասույթաբանական, երգային (հարսանեկան երգեր) և վիպական բանահյուսության ստեղծագործություններով, ժողովրդական խաղերով (մանր ճիժերու խաղեր) ու զրույցներով, որոնք հաճախ կա՛մ Տարոնի Մուշ-Բուլանըխի բանահյուսական ժողովածուներում տեղ գտած ժողովրդական ստեղծագործությունների տարբերակներ են, կա՛մ բացառիկ նմուշներ: Բացառիկ է նաև Գեղամի կազմած «Աշըգնամեն», որը բովանդակում է շուրջ երեք տասնյակի հասնող աշուղների անձնանուններ ու նրանց մասին պատմող զրույցներ (Աշըղ Պաղտասար, Աշըղ Դավիթ, Աշըղ Այվազ Տիվրիցի և այլք), ինչպես նաև «Մեյմո ու Զինե» քրդական հեքիաթ-սիրավեպը: Ուշագրավ է ժողովրդական առածների և դրանց մեկնությունների շարքը, ինչպես օրինակ՝ «Ասուծ, Ասուծ է, ինչ կնիկ մարդ՝ ինչ իրիկ մարդ է», որը Գեղամը մեկնում է՝ «Քաջն քաջ է, ինչ կնիկ է, ինչ մարդ է, միննոյն բան է», կամ «Մարագ ըսաւ յարդս մի տանի, բիրիլդ պետք չէ ինձի», «Մարդ ողորմած վանքի դուռ աղքատ կանգնած»: Հարուստ է նաև Գեղամի գրառած հեքիաթաշարը, որը ժողովրդական հնագույն հավատալիքների, առասպելական մտածողության հարուստ շտեմարան է: Ուստի Գեղամ Տեր-Կարապետյանի գրեթե չուսումնասիրված ժառանգությունը հույժ կարևոր է կորուսյալ աշխարհի համապատկերը ամբողջացնելու և Գեղամ Տեր-Կարապետյան հայրենասերի գործը հանրայնացնելու համար:

SUMMARY

The almost unexplored legacy of Gegham Ter-Karapetyan is important for completing the overview of the world of Taron and is absolutely worthy of scientific examination, since the collector was the bearer and connoisseur of that material.

The handwritten legacy of Msho Gegham, the self-made dialect dictionary stored in his fund, indicate a perfect knowledge of the Mush dialect, and the recorded ethnographic and folklore material, comments and notes are extremely important for modern scientists and ethnographers. Meanwhile, the name of Gegham Ter-Karapetyan is not even mentioned alongside other Armenian folklorists, although he was a student of G. Srvandztyants and a worthy follower of his teacher.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գեղամ Տերտերին մահը // Մասիս, 1902, 51-րդ տարի, թիվ 30, էջ 484:
2. Գեղամ Շահմարան թե Շամիրամ // Բիզանդիոն, Կ. Պոլիս, 1900, Դ տարի, թիվ 999, էջ 1:
3. Գեղամ Ոսկեճանկը // Բիզանդիոն, Կ. Պոլիս, 1899, Գ տարի, թիվ 826, էջ 1:
4. Ն.Վ.Պ. Տարոնի աշխարհ. պատկերներ ու պատմածքներ // Միոն, Երուսաղեմ, տպ. Սրբոյ Յակոբեանց, հ. 2, N 5, 1932, էջ 152:
5. Պապիկեան Ն., Տարեցոյց, Կ. Պոլիս, Յ. Մատթէոսեան հրատ., 1907, Գ. տարի, 122 էջ:
6. Պետրոսյան Հ., Գեղամ Տեր-Կարապետյան // Էջմիածին, Էմիածին, Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի հրատարակչություն, 2012 հ. ԿԸ, N Ը, էջ 107-119:

7. Պետրոսյան Հ., Գեղամ Տեր-Կարապետյան, Մշո Գեղամ, Երևան, ԵՊՀ հրատ., 1983, 292 էջ:
8. Պետրոսյան Հ., Մշո Գեղամի նամակները Գարեգին Սրվանձտյանցին // Բանբեր Երևանի համալսարանի, Երևան, ԵՊՀ հրատ., 1977, 1 (31), էջ 181-196:
9. Վարուժան Դ., Յակոբ Սիրունի Յ., Նաւասարդ տարեգիրք, Կ. Պոլիս, տպ. Օ. Արզուման, 1914, 221 էջ:
10. Տէր Կարապետեան Գ., Տարօնի Աշխարհ, Պատկերներ ու Պատմութիւններ, Փարիզ, Printed in France, 1931, 340 էջ:
11. Տէր Կարապետեան Գ., Տարօնի վանքերը: Ուղեւորի հիշատակներ, Երևան, Մուղնի, 2003, 357 էջ:
12. Տէր Մինասեան Ա., Տատրակ կամ Մշոյ Գեղամ. Վերահաս աղէտի մը արթուն դիտորդը // Բագին, 2017, ԾԶ. ՏԱՐԻ, ԹԻԻ 2, էջ 70-85:
13. Տէր-Կարապետեան Գ., Մշո մուրատատուր Ս. Կարապետ. իր գրոց ու բրոց բանկիկը // Էջմիածին, Էմիածին, Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի հրատարակչություն, 2002, հ. Դ, N ԾԸ, էջ 45-56:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐՊՈՒՄՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՏԻՊԵՐԸ

Բանալի բառեր՝ երդում, երդվող, ասույթաբանություն, հմայական-կիրառական բանահյուսություն, երդմնա-բանադրական բանահյուսություն, պայմաներդում, անեծք, վկայակոչում, կենցաղավարում, գրավոր հուշարձան:

Keywords: oath, oath-taker, paremiology, magical-applied folklore, oath-curse folklore, contract oath, curse, witness, daily life, written monument.

Ժողովրդական բանահյուսության ասույթաբանական ժանրերի տարածված ու կենսունակ բանաձևային կառույցներից են երդումները:

Երդումը, հնուցիվեր հանդես գալով իբրև հմայական-կիրառական բանահյուսության տեսակ, տարածված է եղել աշխարհի բոլոր ժողովուրդների կենցաղում և ցայսօր էլ շարունակում է կենցաղավարել ժողովրդի կյանքի տարբեր բնագավառներում: Այն ընկալվել է իբրև հմայական խոսք, որից զգուշացել և որին հավատացել են ոչ միայն հայերը, այլև աշխարհի բոլոր ժողովուրդները՝ անկախ իրենց քաղաքակրթության աստիճանից:

Աշխատանքի նպատակն է բացահայտել երդումների իմաստային տիպերը՝ հիմնվելով դրանց բովանդակության, ձևի և գործառնությունների (կրոնական, սոցիալական, բարոյական և այլն) վրա, ուսումնասիրել ժողովրդական հավատալիքներն ու նրանց պաշտամունքի մասին ունեցած պատկերացումները, որոնք լայն տեղ են գրավում երդումներում և աղերսվում են բնության ու հասարակական կյանքի վերաբերյալ ժողովրդի ունեցած ընդհանուր հայացքներին:

Հոդվածում պատմահամեմատական և տիպաբանական, վերլուծական մեթոդների միջոցով, առկա տպագիր, արխիվային և մեր կողմից գրաված բանահյուսական նյութերի հիման վրա ներկայացվում են երդումներին առնչվող տարբեր խնդիրներ:

Ինչ է երդումը: Սեփական անմեղսունակությունը, իրավացիությունը, նվիրվածությունն ու հավատարմությունն ապացուցելու արարողություն [ՀՄՀ, 1977, 544]¹⁹:

«Ամեն ժամանակ և ամեն տեղ մարդկության սովորությունն ըրած է վկայ կոչել զաստուած կամ զաստուածայինս՝ ճշմարտութեան հաստատութեանը համար և այս գործը կը կոչուի երդումն» [Հացունի, 1910, 3]:

Երդումբառի բառարանային սահմանումները հիմնականում կարևորում են դրա հանդիսավոր բնույթը:

Երդումը լուրջ, հաճախ հանդիսավոր խոստում է ինչ-որ բան անելու կամ, ընդհակառակը, ինչ-որ բան չանելու [Толковый словарь Дмитриева]:

Երդումը հանդիսավոր պնդում է, հավաստիացում՝ հիմնավորված սրբազան, հեղինակավոր ինչ-որ բանի հիշատակմամբ [Ожегов, Шведова, 2009, 279]:

Արդի հայերենի բացատրական բառարանում երդումը սահմանվում է որպես հանդիսավոր հավաստում որևէ բանի՝ երդվողի համար սրբազան՝ նվիրական բան վկայակոչելով՝ հիշելով [Աղայան, 1976, 339]:

¹⁹ Հոդվածում օգտագործված են հետևյալ համառոտագրությունները. ՀՄՀ - Հայկական սովետական հանրագիտարան, ԺՀԲԲ - Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, ԷԱԺԱ - Էմինեան ազգագրական ժողովածու, հատ. Ա, ԷԱԺԶ - Էմինեան ազգագրական ժողովածու, հատ. Զ, ԱՀԶ - Ազգագրական հանդես, գիրք Զ, ՀԱԲ - Հայ ազգագրություն և բանահյուսություն, ՀՀՖ - Հիշատակարան Եվերեկ - Ֆենեւեի, ՀՄԱ - Հայ ժողովրդական ավանդույթներ:

Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում երդումը սահմանվում է որպես սովորական կամ հանդիսավոր խոստում՝ որևէ նվիրական բան վկայակոչելով [ԺՀԲԲ, 1969, 572]:

Երդումների, ինչպես նաև հմայական-բանահյուսության մյուս ենթատեսակների՝ անեծքների, օրհնանքների բանավոր հարատևումը պայմանավորված է ժողովրդական բանահյուսության հարուստ նմուշներով, որոնք ստեղծվել և պահպանվել են ժողովրդի լայն զանգվածների շրջանում, ապա սերնդեսերունդ փոխանցվել են՝ տարբեր ժամանակներում գրի առնվելով բանագետ-բանահավաքների կողմից, իսկ գրավոր հարատևումն ու ավանդումը հավաստված ու հաստատված են հնագույն, հին և ուշ միջնադարյան գրավոր հուշարձաններում (սեպագիր և վիմագիր արձանագրություններ, պայմանագրեր, կտակներ, դաշնագրեր, կալվածագրեր, ժառանգական, առևտրական պայմանագրեր, քաղաքական փաստաթղթեր և այլն):

Երդումը հիշյալ դեպքերում ընկալվել է որպես իրավական առանձին դրույթ, որի համար սահմանվել են տվյալ ժամանակաշրջանում ընդունված օրինապահպանության նորմեր և իրավական որոշակի պատիժներ:

Առանձնացվում է երդումների երկու հիմնախումբ. երդում *անեծքով և երդում վկայակոչումով*:

Հարկ է նշել, որ անեծքաերդումային կառուցվածքով բանաձևերը բնորոշվում են պայմանի և հետևության հարաբերությամբ և իմաստային կապ ունեն պայմանով անեծքների հետ, այսինքն՝ բաղկացած են որոշակի պայմանից և իրադրությունից՝ այն տարբերությամբ, որ երդման մեջ էականը պայմանն է, մինչդեռ պայմանով անեծքներում իրադրությունն է գլխավորը [Հարությունյան, 1975, 137-139]: Պայմանով անեծքներում և՛ պայմանը, և՛ անեծքը ուղղված են անիծվողին («**Էնքան ապրե՛ս**, որ ասեղը տնկես՝ հովը նստես», «**Էն օրն ընկնե՛ս**, որ շունը ձեռնիցդ հաց չառնի» և այլն [ԷԱԺԱ, 1901, 135]: Անեծքով երդման դեպքում և՛ պայմանի, և՛ անեծքի կրողը երդվողն է («**Աստուց թե հեռանամ**, պատժուիմ, քրքրուիմ» և այլն [Նույն տեղում, 134]: (Ընդգծված խոսքերը պայմաններն են)): Այսպես՝ երդումն իր հիմքում պայմանական բնույթ է ստանում, որի խախտման դեպքում գործելու է անեծքը, այսինքն՝ անեծք-երդումն ինքնաբանադրանք է, հասարակական ըմբռնմամբ պայմանավորված մի վատ ցանկություն, որին հոժարությամբ ենթարկվում է առաջադրողը: Եվ այս առանձնահատկությամբ էլ տարբերակվում է պայմանով երդումն ու պայմանով անեծքը, որոնք իրենց արտաքին կառուցվածքով նմանվում են միմյանց:

Անեծքով երդումների իմաստային հիմնական խմբերում դրսևորվում են պատժի տարբեր տեսակներ՝ սկսած ամենադաժան եղանակներով մեռնելուց, մարմնական ու հոգեկան ամենատարբեր հիվանդություններով տառապելուց մինչև սոցիալական ու կրոնաբարոյական բնույթի պատժի տեսակները: Օրինակ՝ «*Թե սուտ եմ ասում՝ քո ղանկի ռաստ գամ*» [Լ. Ղռեջանի անձն. հավ.], «*Բւ ազիզ ճամփորթի տեսքին ոչ արժանի ըլիմ, թե...*» [ԱՀ, XI, 1904, 118], «*Ծակծկվեմ, թե տեհել եմ*» [ՀԱԲ, 1999, 215], «*Դատած – բանաձս աղվսի շրլակն հըլնի, թե...*» [Լ. Ղռեջանի անձն. հավ.], «*Դժողքի փայ ըլիմ, թե...*» [Տեր-Աղեքսանդրեանց, 1885, 198] և այլն:

Մահվան ցանկությունն իր ամենատարբեր դրսևորումներով առաջնային տեղ է գտել բազմաթիվ երդումներում:

Այսպես, երդվողը կամենալով դիմացինին ապացուցել իր անմեղությունը, իրավացիությունը, ցանկանում է իրեն մահվան դատապարտված տեսնել, հետևաբար ինքնանիժման պայման է դնում՝ իրեն ամենախիստ ձևով պատժված տեսնելու: Ընդ որում, դրանք կարող են լինել ինքնաբերաբար կատարվող փորձանք-պատահարներ, մեկի կողմից իրագործվող կանխամտածված սպանություն: Օրինակ. «*Բւ փայ ըրեքնակը խվարի թա ես...*» [ԱՀԶ, 1900, 344], «*Խավարեմ, թե խաբար եմ*» [ՀԱԲ, 1999, 216], «*Գետինն անցնիմ, թե սուտ եմ ասում*» [ԷԱԺԱ, 1901, 140], «*Խեր չտեսնեմ իմ ումր ու յարեվիցն, ազեր սուտ ասեմ*» [Երեմյան, 1923, 68], «*Իրվաս թըղ չըլուսնօ*» [ՀԱԲ, 1984, 181], «*Իրվաս արիվ թըղ չը ձիթի*» [Նույն տեղում], «*Ջայել արեվիցս խեր չտեսնամ, թե տեսեր եմ*» [Լ. Ղռեջանի անձն. հավաք.], «*Շներին ու գիլվանքին փայ հըլնեմ*» [Լ. Ղռեջանի անձն. հավաք.], «*Մաղ-սալամաթ գյուղ չհասնեմ, թե խաբար եմ*» [ՀԱԲ, 1999, 216], «*Գյուլլախորով լինեմ, թե...*» [«Մեղու Հայաստանի», 1886, N 53], «*Քո ղանակի ռաստ գամ*» [Լ. Ղռեջանի անձն. հավաք.], «*Կաղդեմ թեվիս մներն ուտեմ, խլսեմ*» [Լ. Ղռեջանի անձն.

հավաք.], «Օխտը տարի մե կողի տքամ, նոր խոքիս տամ, թե խափեմ» [Լ. Ղոնջյանի անձն. հավաք.], «Գոռ չգդնեմ» [Երեմյան, 1923, 68] և այլն: Մահ փափագող նմանատիպ ձևերը տարբեր են և բազմազան: Դրանք, մեծ մասամբ լինելով բնական ու արհեստական աղետների հետևանքներ, ունեն ողբերգականության և դրամատիզմի շեշտադրումներ (ջահել, անմուրազ, որևէ փորձանքով, տառապագին հիվանդությամբ մեռնել, անգերեզման և անհիշատակ, անթաղ մնալ և այլն): Նման հանգամանքներն առավել քան ընդգծում են ցանկալի պատժի անողոք խստությունը, որը երդվողի բուն նպատակն է համարվում:

Երդումներում մահվամբ պատժվելու ցանկությունը երդվողը ոչ միայն իրեն է ուղղում, այլև իր մտերիմ հարազատներին, հատկապես զավակներին, եղբայրներին՝ դարձյալ դրանով փափագելով խստագույնս պատժել իրեն: Օրինակ, «Բալես մեռնի, թե սուտ եմ ասում» [Լ. Ղոնջյանի անձն. հավաք.], «Ախպորես խերը վե՛չ տեսնամ» [Ս. Հարությունյանի անձն. հավաքածու], «Թե ես խաբար իմ՝ գյուլեն էղնի իմ ազիզի սրտի մեջ» [Նույն տեղում], «Տղիս թաղեմ, թե...» [ՀԱԲ, 1999, 216], «Ջուջրխնես խերը թըղ չըղխնում» [ՀԱԲ, 1984, 181], «Մինուճարիս խերը չտեսնամ, թե սուտ աս» [ՀԱԲ, 1999, 216], «Մորիցս զրկվեմ, թե սուտ աս» [Նույն տեղում], «Թե ես քու վրեն գուր ու բուխտան (զրպարտություն) կենիմ, իմ աղբեր մեռնի» [ԷԱԺԶ, 1906, 337] և այլն: Դարձյալ չարամիտ ու ողբերգական տրամադրություններ, որ առաջ են գալիս սեփական զավակի, եղբոր, հարազատի մահվան ականատեսը լինելուց: Հենց այդպիսի ծանր պատժի է փափագում ենթարկվել երդվողը:

Մահապատժի ցանկությունից հետո երդումներում կարևոր տեղ է գրավում երդվողի՝ ծանր հիվանդությամբ պատժվելու փափագը: Օրինակ՝ «Ցավ ու չոռը վրես թափի, թե թողնեմ գնալու» [ԷԱԺԱ 1901, 143], «Քոռ էշիմ արևին, թա սուտ եմ ասում» [ԱՀԶ, 1900, 344], «Էջքիս քեռնա» [ՀԷՖ, 1963, 886], «Օրթումս թե սուտ աս, թո քոռանամ» [ՀԱԲ, 1999, 216], «Փողը բարձիս տակ ուտեմ, թե ճիշտ չեմ ասում» [Նույն տեղում], «Գունդ ու կծիկ ըլնեմ, թե որ տիրոջը չասեմ» [ԷԱԺԱ, 1901, 140] և այլն:

Մահվան և հիվանդության պատժի տեսակներից զատ հմայական վերոնշյալ բանաձևերի այս տեսակում նույնքան առաջնակարգ տեղ են գրավում սոցիալ-քաղաքացիական և կրոնա-բարոյական բնույթի պատժի ցանկալի ձևերը: Ժողովրդական երդումների իմաստային այս խմբում արտահայտվում է երկու տեսակ ցանկություն: Առաջին տեսակի մեջ են մտնում իրական կյանքում հանդիպող բարոյական հոռի երևույթները, որ փափագում է երդվողն իրեն՝ իբրև պատիժ: Օրինակ՝ «Անոթի շուն հըլնեմ, թե...» [Լ. Ղոնջյանի անձն. հավ.], «Աստծուց խացս կղրի» [Նույն տեղում], «Էսը խաց յոթ տուռն ինեմ ձեռքս չինի» [ՀԱԲ, 1978, 156], «Եթիմ մնամ, թե սյուր կասեմ», «Ձեռս կուշտ փորի չղնեմ, թե սուտ աս» [ՀԱԲ, 1999, 216], «Դատած-բանաձս աղվսի շլակն հլնի, թե ես խաբար եմ» [Լ. Ղոնջյանի անձն. հավաք.], «Հելաձս քիլ ու քամուն հլնի, թե...» [Նույն տեղում], «Ստի տունը...» [ՀԱԲ, 1999, 216], «Տունս քանդվի, թե ես խառնեմ էտ բանումը» [Նույն տեղում], «Անժառանգ մեռնեմ թե...» [«Մեղու Հայաստանի», 1886, N 53], «Երեսս ետես դառնա, թե պահեմ, չասեմ (անպատվություն և խռովություն)» [ԷԱԺԱ, 1901, 140], «Ծամերս վեր գա, թե...» [Տեր-Աղեքսանդրեանց, 1885, 199], «Մուրագիս չհասնեմ, թե որ» [ԷԱԺԱ, 1901, 142] և այլն:

Երկրորդ տեսակին են պատկանում գուտ կրոնական-սնահավատական ըմբռնումների ու պատկերացումների վրա հիմնված պատժի ցանկությունները, որոնք ներագրում են հավատացյալ ժողովրդի մտքի ու երևակայության վրա: Օրինակ՝ «Արքայութեան էրեսը չտեսնեմ», «Առաձս հաղորդս չարփնըջ էնե» [ՀԷՖ, 1963, 886], «Պատարագը չափմիջ ընե» [ԱՀ IX, 1902, 192], «Խաչած գերեզման չմտնեմ, թե քեզ խաբեմ» [ԷԱԺԱ, 1901, 141], «Երկնքից քար ընկնի գլխիս, թե...» [Տեր-Աղեքսանդրեանց, 1885, 198] և այլն:

Նման բովանդակությամբ երդումներում առանձնապես մեծ տեղ են գրավում հանդերձյալ կյանքում դժոխքի ու չար ոգիների տնօրինությանը դատապարտվելու պատժի զանազան ձևերը, օրինակ՝ «Դժուխկի փայ ըլիմ, թե...» [Տեր-Աղեքսանդրեանց, 1885, 198], «Թե սուտ կըսիմ իմ հոգին դժոխքի ճինատուն էղնի» [ԷԱԺԶ, 1906, 337], «Թե ես քու վրեն գուր ու բուխտան կենիմ, իմ հոգին դժոխքի կպրե կարասի մեջ ձենձոտա» [Նույն տեղում], «Բաբելական կրակին գամ, թե ուրանամ» [ԷԱԺԱ, 1901, 140], «Խոկյիս՝ սատանին տամ» [ՀԱԲ, 2007, 216] և այլն, ինչպես նաև աստծո, սրբերի, զանազան չար ու բարի ոգիների հասցրած պատիժները. «Աստծու կեծակին ռաստ

գամ...» [Լ. Ղոնջյանի անձն. հավ.], «Թող Աստուծ գլխիս քար գցե, թե...» [Տեր-Աղեքսանդրեանց, 1885, 198] «Աստված պատիժս տա, թե խաբար եմ» [ՀԱԲ, 1999, 216], «Օխտն անունը պատիժս տա, թե յետ մնամ գործիցս» [ԷԱԺԱ, 1901, 143], «Սուրբ Մեռկերիոսը խըշտը ճիկյարիս թուղ ցցվը» [Ալլահվերդյան, 1884, 132], «Քյրիստոս ուր տատաստանով վրես խոռով կենա» [ՀԱԲ, 1978, 156], «Կյապրել խրիշտըկի փողի ձենին առժան չըլեն» [Նույն տեղում], «Սատանեն հոգիս տանի, թե գիտեմ, չեմ ասի» [ԷԱԺԱ, 1901, 143], «Տիրամոր յարեն վրես դուրս գա, թե ասեմ» [Նույն տեղում] և այլն:

Այսպիսով, անեծքով երդումների իմաստային տարբեր խմբերում երդվողը փափագում է իրեն տեսնել անտեր ու թափառական, մի կտոր հացի կարոտ մուրացկան, անընտանիք ու անժառանգ, ունեցվածքից ընդմիջտ զրկված, անպատվության, աստվածային պատժի և խռովության ենթարկված:

Քանակով քիչ են այն երդումները, որոնք իրենց արտահայտած գաղափարներով չեն մտնում նշված իմաստային որևէ խմբի մեջ, այլ մասնակի բնույթ են կրում և համարվում են մարդկանց տարբեր գաղափարների ու պատկերացումների արտահայտություն: Դրանք այն երդումներն են, որոնց պայմանը, բացի սովորական անեծքից, կարող է լինել նաև սոսկական հայեցողություն, որը երբեմն սեռական բնույթ ունի, ինչպես օրինակ՝ «Ես իմ մերը..., թե տեսել եմ» [Ս. Հարությունյանի անձն. հավ.], կամ սպառնալիք՝ «Կուռս կու կտրիմ թե...» [Տեր-Աղեքսանդրեանց, 1885, 199], «Էս քինթս կու կտրիմ, թե...» [Նույն տեղում, 198] կամ էլ անպատվաբեր խոսք է՝ «Շանից ծնված ըլնեմ, թե սուտ է ասածներս», «Շան կաթ կերած ըլնեմ, թե ուղիղը չասեմ» [ԷԱԺԱ, 1901, 142] և այլն:

Վկայակոչումով երդումները, ի տարբերություն նախորդ հիմնախմբի, և՛ քանակով են շատ, և՛ ենթատեսակներով են բազմազան: Իրենց արծարծած գաղափարներով նրանք բաժանվում են երեք հիմնախմբերի՝

1. կրոնական և ծիսապաշտամունքային,
2. երկրային և երկնային մարմիններ, առարկաներ, բնական երևույթներ,
3. տնային – կենցաղային, տնտեսական օգտագործման իրեր ու առարկաներ վկայակոչող:

1. Կրոնական և ծիսապաշտամունքային հիմնախմբի քանաձևերը, լինելով կրոնական հավատալիքների արգասիք, նպատակ ունեն խոսքի հմայական գործության միջոցով ներգործելու կրոնական-հավատալիքային իրողությունների վրա և իրենց արտահայտած իմաստներով բաժանվում են մի քանի թեմատիկ խմբերի.

ա. բանաձևեր, որոնցում վկայակոչվում են քրիստոնեական կրոնի ու պաշտամունքի հետ կապված նյութական իրերը, առարկաներն ու սրբությունները: Օրինակ՝ «Էսա ժամը վկա» [ՀԺԱ, 1883, 12], «Խաչը գիդենա» [Տեր-Աղեքսանդրեանց, 1885, 199], «Էն ավետրան, էն մեռոնի շուշան», «Բաժոկ վոկո» [Ալլահվերդյան, 1884, 130], «Կանանչ մեռոն» [ԷԱԺԶ, 1906, 338], «Արենկոլոլ գեղարդը վկա, որ չեմ տարել», «Ես ըլնեմ իմ ֆոգին» [ՀԺԱ, 1883, 3805], «Դու քու դեղի հոքին» [Տեր-Աղեքսանդրեանց, 1885, 198], «Նախնիներիս գերեզմանը վկա» [Լ. Ղոնջյանի անձն. հավ.] և այլն: Այս ենթախմբում կարևոր են այն երդումները, որոնցում իբրև առհավատյալ հանդես են գալիս գերբնական պահապանները՝ Աստված, սրբերը, Քրիստոսը: Օրինակ՝ «Աստված վկա» [ԱՀ IX, 1904, 192], «Սուրբ Օհաննեսի գլուխը գիդող» [Երեմյան, 1923, 69] «Ես իմ Քրիստոս, որ քարը դու տարար», «Թուխ Մանուկ», «Մայրամ Աստվածածինը վրկա» [Ս. Հարությունյանի անձն. հավ.] այլն:

բ. Կրոնական, պաշտամունքային ծեսեր: Օրինակ՝ «Մըր տերտերի կարգը վկա» [ԷԱԺԶ, 1906, 337], «Էն պաշտում պատարաքը գիդենա» [ԱՀ, XI, 1904, 118], «Էն առեք կերեքը վկա» [Նույն տեղում]:

2. Երկնային և երկրային առարկաներ ու մարմիններ, բնական երևույթներ վկայակոչող բանաձևեր, որտեղ պահպանվել են մարդկանց հնագույն առասպելա-դիցաբանական պատկերացումների ու հավատալիքների հետքեր:

Զգալի թիվ են կազմում երկնային և երկրային մարմինների ու առարկաների վկայակոչումով երդումները, որոնցում նկատելի են՝

ա. բնության չորս տարերքների հետ աղերսվող բանաձևեր (երկինք, գետին-հող, ծով-ջուր, և այլն): Օրինակ՝ «Երկինք, գետինք, ծով, ցամաք, թե խաբար իմ» [Ս. Հարությունյանի անձն. հավ.],

«Ճող ու ջուրը վկա», «Զօրի խեղճ գինա» [Նույն տեղում], «Վկա երկինք ու գետին» [Սով. գրակ. 1965, թ.1, 25], «Երգինք գիղենա» [ԱՀ, XI, 1904, 117],

բ. երկնային լուսատուների մասին առասպելական հավատալիքներ մարմնավորող երդումներ, որոնցում առանձնապես հանդես են գալիս արևն ու աստղերը: Օրինակ՝ «Էն շղակոլոլ ըրեզնակը գիղենա» [Նույն տեղում, 118], «Արևս վկա...», «Քու կարմիր, կանաչ արև գինու», [ՀժԱ, 1883, 3805], «Կանանչ արևդ վկա...» [ԷԱԺԱ, 1901, 141], «Իմ պոծառ աստղ վկա», «Բդա աստղի լուս» [Լ. Ղեջյանի անձն. հավ.] և այլն,

գ. բնության ցիկլերի, երկնային մարմինների և մարդկային գործունեության հետ են կապված օրվա պաշտամունքի վերաբերյալ հավատալիքները: Ժողովրդական հավատալիքներում օրվա տարբեր ժամերը հաճախ կապվել են բնության և մթնոլորտային երևույթների հետ, իսկ ցերեկային լույսը միշտ գիտակցվել է իբրև երկնային բարիք: Օրինակ՝ «Էս բարի լուսը վկա» [Լ. Ղեջյանի անձն. հավ.], «Էս բարի օրը վկա» [ՀժԱ, 1883, 12], «Բդա աղոթքան» [Ս. Հարությունյանի անձն. հավ.], «Բարի օրը գիտենա, որ ինքը գիտե» [Նույն տեղում] և այլն:

3. Կենսական նշանակություն ունեցող իրեր ու առարկաներ, որոնցում վկայակոչվում են՝

ա. կենսական նշանակության, ինչպես նաև տնտեսական օգտագործման իրերն ու առարկաները (հաց, աղ, ճրագ, կրակ, լույս, օջախ, թոնիր, և այլն): Օրինակ՝ «Էս հացը գիղենա» [ԱՀ XI, 1904, 118] «Բդա աղ ու հացը» [Երեմյան, 1923, 68], «Բդա կրակի խեղ» [Ս. Հարությունյանի անձն. հավ.], «Բդա ճրագի սեր սուր լուս գինա» [Նույն տեղում], «Բդա կրակի խեղ» [Նույն տեղում], «Բդա թունդիր» [Նույն տեղում] և այլն,

բ. գյուղական առօրյային առնչվող ընտանի կենդանիները և աշխատանքային առարկաները, ինչպես օրինակ՝ «Բդա եզան հալալ վաստակ» [Ս. Հարությունյանի անձն. հավ.] «Բդա գմշու հալալ աշխատանք» [ԷԱԺԶ, 1906, 337], «Բդա գութնի խեղ» [Ս. Հարությունյանի անձն. հավ.] և այլն:

Այսպիսով, վկայակոչումով երդումների նշված հիմնախմբերում երևան են գալիս մի կողմից քրիստոնեական կրոնի, եկեղեցու հետ առնչվող աստծու ու սրբերի հավատալիքն ու պաշտամունքը, դրանց հետ կապված նյութական իրերն ու առարկաները, մյուս կողմից՝ ժողովրդական հնագույն հավատալիքներն ու առասպելական պատկերացումները, որոնք, բնականաբար, ծնվում են տվյալ երևույթի, առարկայի նկատմամբ ունեցած պաշտամունքից:

Երդումներում իր ուրույն արտացոլումն է գտել ժողովրդի՝ հմայական խոսքի հանդեպ դարերի խորքից եկող հավատքն ու գաղափարական պայքարը:

SUMMARY

The oath, like other genres of oath-related folklore (curse, blessing, wishing), has been used for magical purposes since ancient times.

We distinguish between two main groups of oaths: oath with a curse and oath with a reference to testimony.

The main thematic groups of oaths with curses reflect various types of punishment, ranging from dying in the most brutal ways, suffering from various physical and mental illnesses, to social and religious-moral consequences.

In the main categories of oaths with a reference to testimony beliefs and veneration of the Christian religion, God, and saints, as well as the material objects and items related to the church, are reflected on one hand, and ancient folk beliefs and mythical concepts emerge on the other, which, naturally, arise from the veneration of the particular phenomenon or object in question.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Толковый словарь Дмитриева [Электронный ресурс] URL: <https://rus-dmitriev-tolk-dict.slovaronline.com/> 21.11.2024.
2. Ожегов С., Шведова Н., Толковый словарь русского языка, Москва, ООО «АТЕМП» 2009, 944 с.
3. Ազգագրական հանդես, գիրք IX, Թիֆլիս, տպ. Կ. Մարտիրոսեանցի, 1902, 284 էջ:
4. Ազգագրական հանդես, գիրք XI, Թիֆլիս, տպ. Կ. Մարտիրոսեանցի, 1904, 336 էջ:

5. Ազգագրական հանդես, գիրք Զ, Թիֆլիս, տպ. Կ. Մարտիրոսեանցի, 1900, 392 էջ+40 էջ:
6. Ալլահվերդյան Հ., Ուլնիա կամ Զեյթուն, Կ.Պոլիս, տպ. Գ. Պաղտալեան, 1884, 207 էջ:
7. Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, հատ.1, Երևան, Հայաստան, 1976, 1642 էջ:
8. Երեմյան Ա., Չափարմահալի հայ ժողովրդական բանահյուսությունը, Վիեննա, Մխիթարեան տպ., 1923, 81 էջ:
9. Էմինեան ազգագրական ժողովածու, հատ. Ա, Մոսկուա-Ալեքսանդրապոլ, Լազարեան ճեմարանի արևելեան լեզուաց, 1901, 338 էջ:
10. Էմինեան ազգագրական ժողովածու, հատ. Զ, Մոսկուա-Ալեքսանդրապոլ, Լազարեան ճեմարանի արևելեան լեզուաց, 1906, 416 էջ:
11. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հատ. 1, Երևան, Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիա, 1969, 830 էջ:
12. Հայ ազգագրություն և բանահյուսություն, հատ. 16, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ, 1984, 220 էջ:
13. Հայ ազգագրություն և բանահյուսություն, հատ. 20, Երևան, Գիտություն, 1999, 270 էջ:
14. Հայ ազգագրություն և բանահյուսություն, հատ. 24, Երևան, Գիտություն, 2007, 222 էջ:
15. Հայ ազգագրություն և բանահյուսություն, հատ. 8, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ, 1978, 188 էջ:
16. Հայ ժողովրդական ավանդություններ, ժողովածու, կազմ.՝ Տիգրանայ Նալասարդեանց, գիրք առաջին, Թիֆլիս, Էմին Տեր Գրիգորեանցի տպ., 1883, 226 էջ:
17. Հայկական սովետական հանրագիտարան, հատ. 3, Երևան, Հայկական սովետական հանրագիտարան, 1977, 720 էջ:
18. Հարությունյան Ս., Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1975, 270 էջ:
19. Հարությունյան Ս., Դաշտային բանահյուսական նյութերի անձնական հավաքածու:
20. Հացունի Վ., Երդումն հին հայոց մեջ, Վենետիկ-Ս. Ղազար, 1910, 319 էջ:
21. Հիշատակարան Էվերէկ - Ֆենէսէի, Փարիզ, Կեդրոնական Վարչութիւն, 1963, 955 էջ:
22. Ղոնջյան Լ., Դաշտային բանահյուսական նյութերի անձնական հավաքածու:
23. «Մեղու Հայաստանի», շաբաթաթերթ, 1886, N 53:
24. Սովետական գրականություն, 1965, թ.1, էջ 25:
25. Տեր-Աղեքսանդրեանց Գ., Թիֆլիսեցոց մտաւոր կեանքը, մաս Ա, Թիֆլիս, Թիֆլիսի ընկ. հայ. գրքերի հրատ., 1885, 456 էջ:

**THE ARMENIAN FOUR GOSPELS OF 966 - ONE OF THE MOST
VALUABLE FOREIGN LANGUAGE MANUSCRIPTS IN THE COLLECTION
OF THE ST. ST CYRIL AND METHODIUS NATIONAL LIBRARY**

Keywords: SS Cyril and Methodius National Library, Bulgarian Historical Archives, Armenian church in Sofia, Armenian manuscript tradition, Four Gospels, foreign language manuscripts, inscriptions, man of letters, parchment, palimpsest.

In the collection “Greek and other foreign language manuscripts” of the National Library “St. St. Cyril and Methodius” is preserved one of the most valuable manuscripts related to the ecclesiastical and cultural history of Armenia and Bulgaria - an Armenian Four Gospels created in 966.



Fig. 1 Armenian Four Gospels and its decoration

Already in 1879, the Sofia Public Library was established, which was assigned the duty to collect, preserve and protect the manuscript, old printed and archival heritage that had survived until the Liberation of Bulgaria. This was also proclaimed in a special law, which determined the obligation of the Sofia Library, housed at the time in the same place as the Public Archaeological Museum. Already in the first years after the establishment of the library, the Ministry of Public Education sent its experts and voluntary collaborators to search for valuable books, manuscripts, archives, which then entered the library's collections. In this way, the state program for collecting, preserving, protecting and popularizing the valuable manuscripts, printed books, periodicals, archival documents used over the centuries on the Bulgarian lands is implemented.

During the time of the Minister of Public Education, Georgi Zhivkov, and the Director of the Sofia Public Library, Vasil Stoyanov, in 1892. actions were taken to save manuscripts, Greek and Slavic old printed

books from one of the great spiritual centers - the Bachkovo Monastery "Assumption of the Virgin Mary". In November 1892. the Ministry of Public Education sends to the Sofia Public Library 26 copies of old handwritten and printed books, mainly in Greek, forwarded by the Plovdiv District Governor. There under No. 25 is written "an ecclesiastical Armenian book written on parchment". This list also includes a Georgian copy from the 18th century. of the typicon of the Bachkovo monastery, composed by Grigoriy Bakuriani, who was an Armenian by origin, but a Chalcedonian belonging to the Georgian creed.

The Assumption Monastery is located near the village of Bachkovo, near the town of Stanimaka (now Asenovgrad) and is one of the three stauropygial monasteries in Bulgaria. The spiritual center was founded in 1083. by the brothers Grigoriy and Abazii Bakuriani (Pakuriani). Gregory Bakuriani was the great domestic of the western troops of the Byzantine emperor Alexius I Comnenus. The monastery statute (typicon), drawn up by the order of the founder, has been preserved in copies in Greek and Georgian. According to him, the secular and ecclesiastical authorities, including the Metropolitan of Philipopol (Plovdiv), have no rights to interfere in the affairs of the monastery, and access to it is closed to Greek monks, and the founders prescribed that the monastery should be an independent religious institution, providing it with economic and business base for independent functioning. Bachkovo developed initially as a center of Georgian monasticism. In the 11th-12th century, the monastery was an Iberian religious and cultural center, and among the monks, apart from Georgians, there were also Armenians. Towards the end of the 11th century a literary school was formed there, known in the sources as Petritsonska - a name originating from the original name of the neighboring fortress Petrich. Through the translation activity of the scribes working in the monastery, the connections between medieval Georgia and Byzantium were established.

Regardless of the rules of the monastery, since the end of the XVI century the Bachkovo Monastery is under the rule of the Patriarchate of Constantinople and the Greek clergy defined the status of this stauropygial monastery under Greek influence. In 1801 however, hieromonk Makarius was confirmed as abbot not by the Patriarch of Constantinople (in Istanbul), but by the Metropolitan of Plovdiv - "according to the long-established custom".

The presence of Bulgarian monks is evidenced by consecration and donation inscriptions from their relatives and fellow citizens, written on icons, on old printed Greek and Slavic books, as well as on several Slavic manuscripts. However, by 1869 a school was opened in the monastery where children from the surrounding villages learn Greek. Only at the end of 1894. at the request of the monks, the monastery passed under the authority of the Bulgarian Exarchate. It was decided to send monks from the Rila Monastery as the largest spiritual and ecclesiastical center for the creation of the Bulgarian monastic brotherhood in Bachkovo.

³⁵ «Նոր պատգամ» գրական-գեղարվեստական ամսագիրն իր շուրջը համախմբեց ժամանակի իրանահայ հայտնի գրողներին:

³⁶ 1926 թ. թերթն ունեցել է «Նոր գաղափար» անունը կրող գրական, գիտական, քաղաքական և հասարակական հանդես-հավելվածը:

ներբերված ժամանակի իրանահայության իրական կյանքը պատկերող փոքրիկ նկարները: Սուսան բաջու անվան ներքո Հ. Գարազաշը ներկայացնում էր հասարակության տարբեր խավերի ու հոսանքների բացասական, հիվանդագին, մռայլ ու տգեղ կողմերը, թերություններն ու բացերը և անաչառ քննադատության ենթարկում ու ծաղրում դրանք: Բարոյախրատական «սոհբաթներով» նա կոչ է անում հասարակությանը հնարավորինս զերծ մնալ կյանքի՝ օրավուր կլանող արատավոր երևույթներից, հարգել ընտանեկան բարքերն ու ավանդական կենցաղավարությունը: Սուսան բաջու «սոհբաթները»՝ ամփոփված մեկ հատորում, լույս տեսավ 1940 թ. Թեհրանում³⁷:

«Բոբոխի» 1930 թվականի հունվարի 3-ի թիվ 55-56-ում նշվում է ժողովրդի պահանջները փոքրիշատե բավարարելու համար թերթում նոր՝ գրական, հասարակական, կես բժշկական, հետաքրքրական և այլ բաժիններ ավելացնելու իրողության, այդ իսկ պատճառով թերթի անվան փոփոխության կամ երկու առանձին թերթերի բաժանվելու անհրաժեշտության առաջ կանգնելու, գերադասելով վերջինը՝ «Վերածնունդ» քաղաքական, հասարակական, գրական թերթի լույսընծայման արտոնությունը ձեռք բերելու և այդուհետ, որպես «Վերածնունդ» թերթի ձրի հավելված, իր նախկին դրությանը վերադառնալով՝ սոսկ զավեշտաթերթ հրատարակվելու մասին [Բոբոխ, 3 հունվարի 1930, թիվ 55-56]:

Իրանի հայ համայնքի զարթոնքի գործում մեծ դեր խաղացին Թեհրանում հրատարակվող «Նոր խոսք» (1930 թ.), «Վերածնունդ» (1930-1953 թթ.), «Ալիք» (1931 թվականից ցայսօր), «Արուսյակ» (1935-1936 թթ. և 1942 թ.) թերթերը, «Նոր հասկեր» (1935-1936 թթ.) երկշաբաթյա հանդեսը, «Նավասարդ» հանդեսը (1937-1939 թթ.), 1942-1948 թթ. ընդմիջումներով լույս տեսնող «Նոր աղբյուր» մանկապատանեկան (1944 թ. չի հրատարակվել) և «Լույս» ամսագրերը (1943-1944 թթ.), իրանահայ կյանքի արատավոր կողմերը խարազանող «Ցախավել» երգիծական պատկերազարդ երկշաբաթաթերթը³⁸ (1943-1958 թթ.) և այլ պարբերականներ՝ «Աշխատանք» (1946-1947 թթ.), «Արմենուհի» (1949-1955 թթ.), «Արփի» (1949-1956 թթ.), «Լուսաբեր» մանկապատանեկան (1949-1971 թթ.), «Պահակ» (1951-1952 թթ.), «Նոր այգ» (1951-1953 թթ.), «Ալիք» (1961-1963 թթ.)³⁹, «Ջահակիր» (1963-1990 թթ.), «Ալիք պատանեկան» (1969-1978 թթ.)⁴⁰, «Հուր» (1971-1974 թթ.), «Հեղափոխության ճամփով» (1979-1982 թթ.), «Փյունիկ» (1979-1983 թթ.), «Ծիածան» (1982-1988 թթ.), «Արաքս» (1987 թ.)⁴¹: Դրանց միջոցով իրանահայերը հաղորդակից էին դառնում երկրի ներքաղաքական կյանքին, միջազգային դրությանը, Խորհրդային Հայաստանի նվաճումներին:

Կարևոր և արժանահավատ տեղեկատվության լայն հարթակ է նաև 2007-2018 թթ. Թեհրանում հրատարակված «Հույս» երկշաբաթաթերթը: Հանրամատչելի, ոչ գաղափարախոսական, ոչ կուսակցական անկախ երկշաբաթաթերթն իր էջերում արտացոլել է իրանահայ համայնքի կարևոր իրադարձությունները և հասարակությանն ընտելացրել քննադատության և հանդուրժողականության:

Իրանի հայ համայնքում 20-րդ դարի 30-ական թվականներից մինչ օրս բացի «Ալիքից» մնայուն և տևական կյանք ունեցող թերթ չի եղել: «Ալիք» օրաթերթը սկզբնապես հրատարակվել է որպես շաբաթաթերթ, 1935 թվականի հունվարի 17-ից՝ երկօրյա թերթ, իսկ 1941 թվականից՝ օրաթերթ: Հրատարակվել է առանց դադարի: Միակ բացառությունը Իրանի իսլամական հեղափոխության հաղթանակի նախօրյակին էր: Իր մասնակցությունը բերելով համաիրանական մամուլի գործադուլին՝ 1979 թվականի հունվարից շուրջ 40 օր թերթը չհրատարակվեց [«Ալիք» օրաթերթի կայքէջ]:

³⁷ Տե՛ս Սուսան բաջու սոհբաթներից, յառաջաբան՝ բանասեր-քննադատ Արամ Երեմեանի, հրատ.՝ Լեւոն Մելիքի, 1940, Թեհրան, «Բոբոխ» տպ.:

³⁸ 1943-1944թթ. այն հրատարակվել է որպես ժողովածու (1-8-րդ համարներ):

³⁹ Նկատի ունենալ «Ալիք» ամսագիրը:

⁴⁰ Այն, որպես «Ալիք» օրաթերթի հավելված, վերահրատարակվում է 2010 թվականի մարտից:

⁴¹ Թերթը սկսել է հրատարակվել «Արագ» անվամբ, «Արաքս» է վերանվանվել 1987 թվականի 4-րդ համարից (1987 թվականի հունիս):

Թերթն ունի ՀՀԴ կուսակցության գաղափարաքաղաքական ուղղվածություն, և բովանդակության առանցքն է կազմում Հայ դատի հետապնդումը: Հայ ժողովրդի բովանդակ շահերի պաշտպանությունը, իրանահայ համայնքի հայեցի դիմագծի պահպանումը և Իրանի բարգավաճմանն ու վերելքին նպաստելը «Ալիքի» հնարավորությունների սահմաններում են: Համայնքի ներքին կյանքից բացի «Ալիքը» լուսաբանում է նաև Իրանի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի առավել կարևոր խնդիրները:

Թեհրանի հայոց թեմակալ առաջնորդ Արտակ արքեպիսկոպոս Մանուկյանը 1989 թվականի օգոստոսի 4-ին թերթի խմբագրատանն ասել է. ««Ալիքի» առավելությունն այն է, որ տներից ներս մտնելիս հայկականություն է տանում» [Մանուկյան, 2000, 49]:

«Ալիքը» նախապես ունեցել է շեշտված հակախորհրդային դիրքորոշում՝ ի նպաստ հայ ժողովրդի անկախության վերականգնման:

Հայաստանի անկախացումից հետո պաշտպանել է փոխադարձ շահերի վրա հիմնված և օրավուր զարգացող Իրան-Հայաստան կապերի ամրապնդումը:

«Ալիք» օրաթերթն ունի իր սեփական տպարանը և խմբագրատան շենքը: Հրատարակել է իրանահայ դպրոցների դասագրքեր, հայերեն ու պարսկերեն գրքեր (այդ թվում՝ մասնագիտական գրականություն), օրացույցներ և տպագրական այլազան պատվերներ կատարել: «Ալիքի» խմբագրատունը 1998 թ. փոխադրվեց նոր շենք, իսկ 2006 թ. այնտեղ տեղափոխվեց տպարանը [«Ալիք» օրաթերթի կայքէջ]:

Ներկայում օրաթերթը լույս է տեսնում 4350 տպաքանակով, բաժանորդներ ունի Իրանի հայահոծ քաղաքներում և այլ երկրների հայ համայնքներում: «Ալիքն» ունի սեփական կայքէջ: 2001 թվականի հունվարի 23-ից թերթը տեղադրվում է համացանցում [Նույն տեղում]:

Իրանի հայ համայնքում այժմ էլ իր գործունեությունն է շարունակում «Արաքս» թերթը: Անդրադառնալով իրանական և իրանահայ կյանքին, Հայաստանում, ոչ վաղ անցյալում նաև Արցախում տեղի ունեցող իրադարձություններին՝ թերթը կարևորում է երկու հարևան ժողովուրդների միջև տեղեկատվական կամուրջ հանդիսանալու դերը՝ տրամադրելով հուսալի և ճշտորոշված տեղեկատվություն, պարսիկ ընթերցողին ծանոթացնում պարսկերենով հրապարակվող Հայկական հարցին ու հայոց պատմությանը վերաբերող նյութերին:

Իրանահայ տարեգրքերը՝ տեղեկատու փարոս

Հայկ Գարագաշը մեծ գոհողության գնով 1927, 1929 և 1930 թվականներին հրատարակել է «Պարսկահայ տարեցույցի» երեք մեծադիր հատորները, որոնք Իրանի հայ համայնքի պատմության ուսումնասիրությամբ զբաղվողների համար սկզբնաղբյուրի նշանակություն ունեն:

«Պարսկահայ տարեցույցի» հույժ արժեքավոր այս երեք հատորներն ունեն տեղեկագրական, գրական-գեղարվեստական, կես բժշկական, կենսագրական, հետաքրքրական և զավեշտական անվանումներն ստացած բաժիններ: Բաժիններից յուրաքանչյուրն աչքի է ընկնում տեղեկատվական նյութի առատությամբ: Չսահմանափակվելով միայն Պարսկաստանի և պարսկահայերի վերաբերյալ տեղեկությունների հաղորդմամբ՝ «Պարսկահայ տարեցույցի» հատորները բովանդակում են նաև այլ երկրների ու ժողովուրդների մշակույթի նշանավոր գործիչների բացահայտմանն ուղղված հազեցած նյութ: «Պարսկահայ տարեցույցի» յուրաքանչյուր գրքում առկա է տվյալ տարվա օրացույցը՝ տոների, տաղավարների և տարեդարձերի վերաբերյալ իրազեկող նյութի ընդգրկմամբ [«Պարսկահայ տարեցույց», 1927, 1929, 1930]:

1969, 1970 և 1984 թվականներին Թեհրանում լույս տեսան «Բաֆֆի» տարեգիրքի երեք հատորները: Տարեգրքի հիմնադիր և խմբագիր Տաճատ Պողոսյանը հրատարակեց տարեգրքի առաջին և երկրորդ հատորները, իսկ երրորդ հատորը 1971 թ., թերի լինելու պատճառով, հնարավոր չեղավ լույս ընծայել: Այն ոչ լրացված ձևով հրատարակվեց 1984 թ. արդեն հանգուցյալ Տ. Պողոսյանի դստեր՝ Արմինե Պողոսյանի կողմից:

Տարեգրքի հատորներում ներկայացված են իրանահայության առօրյան, Խորհրդային Հայաստանի տնտեսական դրությունը, քաղաքական իրավիճակը, սփյուռքահայ և խորհրդահայ զգալի թվով գրողների, հրապարակախոսների, պատմաբանների արժեքավոր

ստեղծագործությունները, գաղթօջախներում և հայրենիքում տեղի ունեցած մշակութային կարևոր իրադարձությունների, հոբելյանների վերաբերյալ նյութեր: Հրապարակվել են վավերագրեր, հուշեր, որոնք կարող են օժանդակ աղբյուր հանդիսանալ Սփյուռքի պատմության ուսումնասիրման համար: Տարեգիրքն անդրադարձել է Հայաստան-Իրան միջպետական հարաբերություններին, իսկ առանձին բաժնով զետեղել հայ եկեղեցու ազգային-կրոնական և Իրանի պետական-կրոնական տոների ժամանակացույցները [«Բաֆֆի» տարեգիրք, 1969, 1970, 1984]:

Իրանահայ Մեպուհ Ամիրխանյանը, շարունակելով տարեգրքի հրատարակման ավանդույթը, 2004, 2008 և 2010 թվականներին Թեհրանում լույս ընծայեց «Նաիրի» տարեգրքի երեք ստվարածավալ հատորները:

Իրանահայ օրացույցները՝ պատմության խոսուն վկաներ

Օրացույցի հրատարակումն իրանահայոց մեջ դարավոր անցյալ ունի: Իրանահայ առաջին օրացույցի հրատարակման պատիվը պատկանում է ջուղայեցի քահանա Դիոնիսիոս Տեր-Եղիազարյանին: Օրացույցը տպագրվեց 1863 թ. Նոր Ջուղայում: Այն պարունակում է տոմարական և այլ տեղեկություններ:

Հայկական օրացույցներ են հրատարակվել Նոր Ջուղայում, Թավրիզում և Թեհրանում: Այսօր էլ իրենց գոյությունը պահպանում են Թեհրանում հրատարակվող «Բաֆֆի» (հրատարակվում է 1942 թվականից, հիմնադիր՝ Տաճատ Պողոսյան), «Նաիրի» (հրատարակվում է 1954 թվականից, հիմնադիր՝ Սամուել Սարուխանյան) և այլ օրացույցներ:

Մեր դարի առաջին քսանամյակում ծնունդ առան և իրենց գործունեության կարճատև կյանքն այդ ժամանակահատվածում ամփոփեցին «Մերունդ» (կազմող՝ Ժոզեֆ Գրիգորյան), «Ընտանիքի օրացույց» (կազմողներ՝ Անահիտ Հովսեփյան և Կարինե Զոհրաբյան) և այլ օրացույցներ:

Իրանահայ գրիչը իսլամական հանրապետության վերահսկող աչքի ներքո

Իրանում հայ տպագիր մամուլը վերահսկողության է ենթարկվում Իրանի Իսլամական Հանրապետության (այսուհետև՝ ԻԻՀ) մշակույթի և իսլամական առաջնորդության նախարարության կողմից:

ԻԻՀ սահմանադրության 24-րդ հոդվածը սահմանում է. «Մամուլը և հրատարակչությունը ազատորեն կարող են արտահայտել իրենց տեսակետները, եթե դրանք չեն հակասում իսլամի սկզբունքներին և չեն խախտում հանրության իրավունքները: Այդ խնդրին առնչվող մանրամասները որոշվում են օրենքի կողմից» [Իրանի Իսլամական Հանրապետության Սահմանադրություն (Հիմնական օրենք), 2005, 44]: Ի լրացումն դրա՝ 1979 թվականի օգոստոսի 6-ին ԻԻՀ-ում ընդունվել է մամուլի մասին օրենք: Իսկ 1984 թ. ուժի մեջ մտավ մի նոր օրենք, որով ցայսօր կարգավորվում է մամուլի բնագավառի գործունեությունը: Ըստ այդ օրենքի՝ երկրի բոլոր կրոնական փոքրամասնությունների կողմից հրատարակվող մամուլը, գրքերը, առհասարակ, ցանկացած հրատարակություն հսկողության և գրաքննության է ենթարկվում ԻԻՀ մշակույթի և իսլամական առաջնորդության նախարարության կրոնական փոքրամասնությունների հարցերի գրասենյակի կողմից: Այդ գրասենյակի միջոցով է իրականացվում կրոնական փոքրամասնությունների կողմից կամ նրանց մասին գրքերի հրատարակության և ամբողջ մամուլի վերահսկումը, ինչպես նաև օտարերկրյա քարոզիչների էլումուտը երկիր և այլն: Հայաստանի պատմության, իրանահայերի պատմության, Իրանի քրիստոնյաների պատմության մասին բոլոր աշխատանքները, անկախ հեղինակի ազգային պատկանելությունից, գրաքննության են ենթարկվում վերոհիշյալ կառույցի կողմից և ապա միայն ստանում տպագրության թույլտվություն [Բայբուրդյան, 2013, 123]: Հատկապես մանրագին գրաքննության են ենթարկվում պատմական կամ քաղաքական բովանդակություն ունեցող, դրանց շարքում՝ հայ կուսակցությունների և քաղաքական խմբակցությունների պատմությանն ու գործունեությանը

նվիրված աշխատանքները: Անհրաժեշտության դեպքում դրանք վերանայվում են, համապատասխան ուղղումներ արվում և դրանից հետո միայն տպագրվում: Կարող է նաև արգելվել գրասենյակի կողմից:

Թերթ հրատարակելու համար ևս կրոնական փոքրամասնությունները պետք է դիմեն նշված գրասենյակի մամուլի բաժին և միայն համապատասխան փաստաթղթային ձևակերպումներից հետո ստանան տպագրության թույլտվություն:

Եզրակացություն

Իրանահայ տպագրությունն ու մամուլն ազգային ինքնության պահպանման և մշակութային արժեքների տարածման միջոցներ են: Տպագրական արտադրանքը օգնում է պահպանել և նոր սերունդներին փոխանցել հայոց լեզուն, մշակույթը և պատմությունը:

Իրանահայ տպագրությունն ու մամուլը, ստանձնելով կրթադաստիարակչական դեր, հայ երեխաներին և երիտասարդներին մղում են հայերենի ուսուցման, մատուցում հայկական մշակույթին ու պատմությանը վերաբերող նյութեր:

Իրականացնելով մշակույթի հանրահռչակման առաքելություն՝ իրանահայ մամուլն ընթերցող լայն շրջանակներին ծանոթացնում է հայ գրականության ու արվեստի գոհարներին:

Իրանահայ մամուլն ապահովում է համայնքային միասնություն՝ տեղի հասարակական գործիչներին ու կազմակերպություններին համախմբելով համայնքային կարևոր խնդիրների շուրջ:

Իրանահայ մամուլը երբեք չի սահմանափակվել համայնքային կյանքի լուսաբանմամբ. այն արձագանքել է Իրանի ներքին քաղաքական և միջազգային զարգացումներին, հաճախ շեշտել հայ համայնքի դիրքորոշումները և մտահոգությունները՝ այդպիսով հարստացնելով հանրային քննարկումները:

SUMMARY

The study of the Iranian-Armenian printing and periodicals is important for the completion of Armenian studies and the total unfolding of Armenians' potential. Throughout many centuries living outside their homeland, Iranian Armenians were the bearers and enrichers of the Armenian language, culture and rich traditions. Based on valuable sources, periodical coverage and public research, the study presents the birth and emergence of the Iranian-Armenian press in an unbiased, comprehensive and inclusive manner, and portrays the role and significance of the Iranian-Armenian periodicals in cultural heritage promotion. This article covers the role of the Iranian-Armenian printing and periodicals from 1638 to the present.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Ալիք», 18 հոկտեմբերի 1969, թիվ 232 (9343):
2. «Ալիք» օրաթերթի կայքէջ, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <http://armnational.am/en/c/alik-daily-tehran>, 11.09.2024:
3. «Այգ», 23 հոկտեմբերի 1969, թիվ 5023:
4. Բայբուրդյան Վ., Իրանի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, Երևան, «Լուսակն», 2013, 211 էջ:
5. «Բոբոխ», 3 հունվարի 1930, թիվ 55-56:
6. Գեորգեան Կ., Ամենուն տարեգիրքը 1958, Ե տարի, Պէրոյթ, «Մշակ», 1957, 720 էջ:
7. Իրանի Իսլամական Հանրապետության Սահմանադրություն (Հիմնական օրենք), թարգմանեց՝ Գառնիկ Բադալյանը (Ոչ պաշտոնական թարգմանություն), Թեհրան, «Նաիրի» հրատ., 2005, 124 էջ:
8. Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 465 (Փաստաթղթերի հավաքածու իրանահայ գաղթավայրերի վերաբերյալ), ց. 3, գ. 38:
9. «Հայրենիքի ձայն», 3 դեկտեմբերի 1969, թիվ 49 (228):

10. Մանուկյան Մ., Իրանահայ գաղթօջախի առօրյան, Երևան, ա. հ., 2000, 74 էջ:
11. Մինասեան Լ. Գ., Իրանահայ պարբերական մամուլը 1894-1994, Նոր Զուղա, Սբ. Ամենափրկիչ Վանքի տպ., 1994, 104 էջ:
12. Մինասեան Լ. Գ., Նոր Զուղայի տպարանն ու իր տպագրած գրքերը (1636-1972), Նոր-Զուղա, «Ս. Ամենափրկիչ» Վանքի տպ., 1972, 175 էջ:
13. Մինասեան Լ. Գ., Նոր-Զուղայում 1641 թուին տպագրուած «Խորհրդատետր»ը // «Սիոն», Երուսաղէմ, 1966, յուլիս, թիւ 7, էջ 357-358:
14. «Պարսկահայ տարեցոյց», առաջին տարի, Թեհրան, «Փարոս», 1927, 276 էջ:
15. «Պարսկահայ տարեցոյց», երկրորդ տարի, Թեհրան, «Փարոս», 1929, 443 էջ:
16. «Պարսկահայ տարեցոյց», երրորդ տարի, Թեհրան, «Փարոս», 1930, 375 էջ:
17. Սպահանի հայոց թեմի կայքէջ, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://www.norjugha.ir/u-a-vanp/տպարան>, 06.09.2024:
18. Սուսան քաջու սօհրաթներից, յառաջաբան՝ քանասէր-քննադատ Արամ Երեմեանի, հրատ.՝ Լեւոն Մելիքի, 1940, Թեհրան, «Բոքոխ» տպ., 202 էջ:
19. «Բաֆֆի» տարեգիրք, Ա տարի, Թեհրան, «Մոդերն», 1969, 583 էջ:
20. «Բաֆֆի» տարեգիրք, Բ տարի, Թեհրան, «Մոդերն», 1970, 687 էջ:
21. «Բաֆֆի» տարեգիրք, Գ տարի, Թեհրան, «Մոդերն», 1984, 263 էջ:

«ԳԵՂԱՐԴ» ՍՈՒՐԻԱԶԱՅ ՏԱՐԵԳԻՐՔԻ
ՊԱՏՄԱԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵԻՈՐՈՒՄԸ

Բանալի բառեր՝ բարեկամություն, ստեղծագործություն, համայնք, պատմություն, Սուրիոյ, Ճեպեճեան գրադարան, մատենագիտական յանձնախումբ:

Keywords: friendship, creativity, community, history, Syria, Jebejian Library, bibliographic committee.

Ներածություն

Առաջին աշխարհամարտի օրերուն Հալէպ քաղաքը վերընծիւղուած հայու համար ապաստարան, գաղթական փրկութեան օճախ հանդիսացած էր, սակայն մտաւորական շարժում ստեղծելու համար չկար այն ենթահողը, որով սկզբնաւորուէր (ձեւաւորուէր) մշակութային աշխոյժ կեանք:

1918 թ.-էն առաջ լրագրական եւ տպագրական կեանք գոյութիւն չէ ունեցած, բայց եղած են անհատներ, որոնք աշխատակցած են Պոլսոյ եւ Իզմիրի մամուլին, կամ անհատական նախաձեռնութեամբ հրատարակութիւններ կատարած են: Վերապրողներու մէջ մեծ թիւ կը կազմէր ընտրանի այն դասակարգը, որ գաղթած էր Պոլիսէն եւ արուարձաններէն, Կիլիկիայէն, Արեւմտահայաստանի ներքին գաւառներէն, որոնց մէկտեղումը պիտի նպաստէր մշակութային կեանքի ծաղկման ու պարարտ հող պիտի ստեղծէր սուրիահայ մամուլի սկզբնաւորումին [Տէր Խաչատուրեան, 1972, 197-199]:

1920-1940 թթ., Հալէպ դարձած էր Սփիւռքի մշակութային կարեւոր կեդրոններէն, ուր սկսած էին գործել շարք մը տպարաններ, ուրկէ պիտի հրապարակուէին տարբերոյթ պարբերականներ: Այս թեմայի վերաբերեալ բժախնդրօրէն հետազօտական աշխատանք կատարած են Հայկ Պարիկեանն ու Յովնան Վարժապետեանը «Պատմութիւն Սուրիոյ հայ տպարաններու» աշխատութեամբ: Հեղինակներու նպատակը անփութութեան պատճառով օրէ օր կորուստի մատնուած եւ վերանալու եզրին հասած տեղեկատուներու փրկութիւնն էր, որոնք կրնային հում նիւթ հայթայթել համայնքի տարբեր բնագաւառներու, նաեւ Սփիւռքի այլ համայնքներու պատմութիւնը հետազօտողին, [Պարիկեան, Վարժապետեան, 1973, 5]:

1920 թ. երկրորդ կէսէն սկսեալ մինչեւ 40-ական թուականներ Հալէպի մէջ ծնունդ կ'առնեն եւ անհատական, եւ միութենական նախաձեռնութեամբ տարեգիրքեր. յիշատակութեան արժանի է Բերիոյ թեմի նախկին առաջնորդ Արտաւազդ վրդ. Սիրմէլեանի (հետագային՝ արքեպիսկոպոս) «Տաթեւ» տարեգիրքերու շարքը (1925-1930 թթ.), որ համայնապատկերն էր Սուրիոյ հայութեան տարբեր բնագաւառներու պատմութեան ուսումնասիրութեան: Սակայն, կարճատեւ կ'ըլլայ անոնց հրապարակումը: [Տէր Խաչատուրեան, 1972, 202, 205-215]:

Յանդուգն քայլ էր Անդրանիկ Ծառուկեանի «Նայիրի» գրական ամսագիրի հրատարակութիւնը 1941 թ. Հալէպի մէջ: 1941 թ. Նոյեմբերին «Նայիրի»ն իբրեւ գրականութեան եւ արուեստի պարբերագիրք լոյս կը տեսնէ մինչեւ 1942 թ.: Ընդմիջումով, 1945-էն ետք ամսագիրը կը տպագրուի համանուն տպարանին մէջ, որու տէրն ու տնօրէնը Անդրանիկ Ծառուկեանն էր: Ա. Ծառուկեանի «Նայիրի»ն ո՛չ միայն նպաստեց գրականութեան ծաղկումին ու զարգացումին, այլեւ իր շուրջ համախմբեց Սփիւռքի գրասէր հասարակութիւնը, տարբեր գաղափարի եւ յաճախ իրարամերժ նոր սերունդի արժեքաւոր գրողները, որոնք սկսած էին իրենց գրական առաջին փորձերը կատարել արտասահմանի այլ թերթերուն մէջ:

Սուրիահայ մամուլի հետաւոգութեամբ զբաղած են՝ Հայկ Պարիկեան եւ Յովնան Վարժապետեան, Արտաշէն Տէր Խաչատուրեանը, Ժիրայր Դանիէլեանը, Միհրան Մինասեանն ու Յակոբ Զոլաքեանը [Պարիկեան, Վարժապետեան, 1973; Տէր Խաչատուրեան, 1972, 195-230;

Դանիելեան, 1984, 183; Դանիելեան, 1977-1978, Մինասեան, 1981, 295-304; Զոլաքեան, 1978]: Վերոնշեալ հեղինակներու աշխատութիւնները առաւել մատենագիտական բնոյթ կը կրէին, իսկ բովանդակային առումով՝ պատմական, բանասիրական, հնագիտական, համայնքային, լեզուական եւ այլ արժեւորում չէր կատարուած, այլ խօսքով՝ սուրիահայ մամուլի ամբողջական պատմութիւնը առ այսօր խորութեամբ չէ ուսումնասիրուած:

Յօդուածին նպատակն է ուսումնասիրել Հալէպի մէջ անցեալ դարու եօթանասունական թուականներէն սկսեալ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Մատենագիտական Յանձնախումբի (յետայսու՝ ՀԲԸՄ ՄՅ) հրատարակութեամբ՝ «Գեղարդ» սուրիահայ տարեգիրքի պատմագիտական եւ լեզուական առանձնայատկութիւնները եւ արժեւորել զանոնք:

1960-1970-ական թուականներու Սուրիոյ հայ համայնքի պատմութեան առնչուող յօդուածներ սկսած էին լոյս տեսնել սփիւռքահայ տարբեր մամուլի էջերուն: Հալէպը, որ գրչութեան կեդրոն հանդիսացած էր, վերոնշեալ թուականներու հրապարակի վրայ չունէր համայնքային կեանքը արտացոլող լրատու: Ուստի «Գեղարդ»-ի լոյսընծայումը 1970-ական թուականներուն անկիւնադարձային եղաւ եւ դրական անդրադարձ ունեցաւ համայնքային կեանքին:

Սուրիահայ համայնքի եւ դպրոցներու պատմութեան մասին գրուած են բազմաթիւ մենագրութիւններ, յօդուածներ, սակայն հեղինակներու տեսադաշտէն դուրս մնացած են 1960-ական թուականներէն ետք սուրիահայ գրատպութեան պատմութեան առնչուող հիմնահարցեր, որոնք համակողմանի հետազօտման արժանացած են սոյն յօդուածին մէջ: Առաջին անգամ ամբողջական տեսքով փորձանք ենք ներկայացնել խնդրոյ առարկայ ժամանակաշրջանի «Գեղարդ» տարեգիրքի մէջ ընդգրուած նիւթերու առկայութիւնն ու լուսաբանումը, որոնք սկզբնաղբիւրի դերով հանդէս կու գան տուեալ համայնքի պատմութեան ուսումնասիրութեան համար:

Յօդուածի թեման արդիական է. Սուրիահայ մամուլը իր քաղաքական ու գաղափարակ ուղղուածութեամբ հայ ինքնութեան պահպանման ու մշակոյթի տարածման հարթակ հանդիսացած էր այն օրերուն երբ հայը Սուրիոյ մէջ կանգնած էր սեփական լեզուն կորսնցնելու վտանգին առջեւ: Սուրիահայ մամուլի իւրաքանչիւր անուն մատենագիտական ցանկերուն մէջ իր որոյն տեղը ունեցած է. ուստի անոր ուսումնասիրութիւնը, ինչպիսին «Գեղարդ»ը, պիտի արժեւորէ մամուլի դերն ու նշանակութիւնը ոչ միայն հալէպահայ, այլեւ սփիւռքահայ եւ հայ մամուլի պատմութեան մէջ:

Թեմայի ուսումնասիրութեան գծով մեր առջեւ դրուած խնդիրները ընդգրուած են աշխատութեան մէջ.

ա) Ներկայացնել 1960-ականէն ետք, Սուրիոյ, Հալէպի մէջ պարբերական հրատարակութիւններու սկզբնաւորման եւ սուրիահայ գրատպութեան պատմութեան առնչուող հիմնահարցեր, որոնք համակողմանի հետազօտման արժանացած են յօդուածին մէջ:

բ) ներկայացնել խնդրոյ առարկայ ժամանակաշրջանի «Գեղարդ» տարեգիրքի մէջ ընդգրուած նիւթերու առկայութիւնն ու լուսաբանումը, որոնք առաջին անգամ ամբողջական տեսքով եւ սկզբնաղբիւրի դերով հանդէս կու գան տուեալ համայնքի եւ այլ համայնքներու պատմութեան ուսումնասիրութեան համար: (համառօտ).

գ) «Գեղարդ» սուրիահայ տարեգիրքի արժեւորում՝

Գիտական նորոյթի առումով կը կարելորենք նաեւ տարատեսակ սկզբնաղբիւրներու յայտնաբերումը, որոնք գիտական շրջանառութեան մէջ կը դրուին մեր կողմէ:

Սոյն հետազօտութիւնը ունի գործնական նշանակութիւն եւ կրնայ օգտակար ըլլալ հայկական գրահրատարակչութեան եւ Բերիոյ թեմի, յարանուանութիւններու, կրթամշակութային կեանքի, հայրենիք-սփիւռք համագործակցութեան, հայ-արաբ դարաւոր պատմութեանց ուսումնասիրութեան աղբիւր:

**Սուրիոյ հայ համայնքի եւ պարբերական
մամուլի պատմութեան համառոտ ակնարկ**

ա) Համայնքային կեանք

Քառասունական թուականի կէսերուն Սուրիոյ անկախութեան համար մղուած պայքարի օրերուն, հակառակ երկիրէն ներս տիրող անախորժ դէպքերու, համայնքը մշակութապէս վերելք կ'ապրի. ծնունդ կ'առնեն ոչ միայն կազմակերպութիւններ, այլեւ անոնց ձայնը հասարակութեան լսելի դարձնող պարբերականներ: Դպրոցական եւ միութենական պարբերականներու հրապարակի վրայ յայտնուիլը կը բացատրուի անով, որ 1949-1954 ժամանակահատուածին, բացի ռազմական յեղաշրջումներէն, քաղաքական անբարենպաստ պայմաններէն, կ'արգիլուին նաեւ հայերէն թերթերու եւ պարբերականներու հրատարակութիւնը: Աւելին, կ'արգիլուին հայերէնով կատարուող դպրոցական միջոցառումները եւ կը սահմանափակուին հայերէն լեզուի դասաժամերը [Ֆիշենկճեան, 2018, 88]:

1952 թ. Մարտ 17-ին Սուրիոյ զինուորական նոր իշխանութիւնը կը հրապարակէ կանոնադրական հրամանագիր՝ յատուկ մասնաւոր եւ համայնքային վարժարաններու ներկայացուցիչներուն, որու կէտերէն մէկը առաւել կը մտահոգէր համայնքի ղեկավարութիւնը: Այդ կանոնադրութեան երկրորդ կէտով կը սահմանափակուէր հայերէն լեզուի ուսուցումը, որովհետեւ արաբերէնէն բացի միւս բոլոր լեզուները «օտար լեզու» կը հռչակուէին [Ֆիշենկճեան, 2018, 202]: Սահմանուած օրէնքը կը միտէր որոշ սահմանափակումներով համայնքային վարժարաններու փակում, երկսեռ կրթութեան արգելում, դասանիւթերու ճշդում եւ արաբերէն լեզուի պարտադիր ուսուցում: Բացի այդ կ'արգիլուի մշակութային կեանքի գործունէութիւնը:

1952 թ. ամրան, թիւ 175 հրամանագիր օրէնքին համաձայն Սուրիոյ վարժարանները նոր արտօնագիր կը ստանան. «այս հրամանագիրի մէկ յօդուածի համաձայն, հայերէնը օտար լեզու չէր նկատուէր, այլ տեղւոյն մէկ համայնքի գործնական լեզուն, որով կ'աղօթեն անոնք» [ԲԹ ԱԱԱ, դարան Դ., գ. 69, 2]:

1955 թ. հրապարակուած հրամանագիրով կը թոյլատրուի կարգ մը թերթերու հրատարակութիւնը [Ֆիշենկճեան, 2018, 258]:

Տուեալ ժամանակահատուածին Սուրիոյ, յատկապէս Հալէպի մէջ կը շարունակէին լոյս տեսնել օրաթերթեր, շաբաթաթերթեր՝ «Սուրիա»ն, «Արեւելք»ը, «Արեւելք մարգաշխարհ»ն. դպրոցական պարբերաթերթեր ու տարեգիրքեր՝ «Բուրաստան»ը, ՀԲԸ Միութեան «Բարձունք» տարեգիրքն ու Հայ Երիտասարդաց Ընկերակցութեան «ՀԵԸ-ի Ձայն»ը, Ազգային Քարէն Եփփէ Ճեմարանի «Բամբի»ը, աւելի ուշ «Ծիլեր» պարբերաթերթը եւ այլն [Ֆիշենկճեան, 2018, 249-260]:

1963-ը շրջադարձային թուական կ'ըլլայ Սուրիոյ ներքաղաքական կեանքին: Մարտի 8-ի յեղաշրջումին հետեւանքով երկիրի մէջ իշխանութիւնը կ'անցնի «Պաաս» (Արաբական ընկերվարական վերածնունդ) կուսակցութեան: Նոր իշխանութեան կողմէ հրապարակուած սահմանափակումներու կողքին, պետական հրամանագիրով Սուրիոյ մէջ կը դադրին բոլոր թերթերը, երկիրէն ներս մէկ պետական թերթ հրատարակելու նպատակով: Այսպիսով համայնքը չ'ունենար իր օրաթերթը. հայ հասարակութիւնը կը գրկուի իր մտաւոր սնունդէն, բայց փոխարինելու կու գան Լիբանանի հայկական օրաթերթերը՝ «Ազդակ», «Զարթօնք», «Արարատ», ուր Սուրիոյ հայոց կրթական, հոգեւոր, մարզական եւ մշակութային կեանքի մասին թղթակցութիւններ տեղ կը գտնէին վերոյիշեալ թերթերու սիւնակներուն մէջ: Անոնք մեծ դժուարութեամբ կը հասնէին հայ համայնքին: Բայց երկար չի տւել: Լիբանանի հայկական մամուլը, որ սկսած էր փոխարինել տեղականին, նոյն թուականի երկրորդ կիսուն կ'արգիլուի մուտքը Սուրիա: Աշխատանք կը տարուի ներքին՝ դպրոցական, մարզական, միութենական եւ այլ տեղեկատու-լրատուի եւ պարբերականներու ծնունդին: Նախակրթարաններն ու երկրորդական վարժարանները պարբերաբար կը սկսին հրատարակել աշակերտական կեանքը ցոլացնող գրութիւններ: Այդ պարբերականները կ'ըլլան այն դաշտը, ուր մեծաթիւ գրողներ գրական առաջին նախափորձերը պիտի կատարէին [Ֆիշենկճեան, 2018, 107]:

Արդ, Սուրիոյ հայութիւնը 1960-1970-ական թուականներու կէսը գրական եւ լրագրողական առումով լճացման շրջան մը կ'ապրէր: Որոշ ժամանակ համայնքային կեանքէն ներս

աշխուժություն կը նկատուի պարբերաթերթերու, լրատուներու եւ տեղեկատուներու լոյս ընծայումով:

բ) ՀԲԸՄ մատենագիտական յանձնախումբն ու «Գեղարդ» տարեգիրքի ծնունդը

Պետական սահմանափակումները, երկրէն ներս տիրող ընկերային, տնտեսական ու մանաւանդ քաղաքական իրադրությունը գլխաւոր պատճառ կը հանդիսանայ 1960-ական թուականներու կէսերուն արտագաղթի նոր ալիքի՝ դէպի Արեւմուտք եւ Ծոցի երկիրներ. միաժամանակ՝ ներգաղթը դէպի Հայաստան: Այս բոլորը չէին կրնար ու չկրցան կասեցնել գիր ու գրականութեան հանդէպ ու մամուլի նկատմամբ մարդոց հետաքրքրութիւնն ու սէրը:

Յարանուանութիւնները փոքրածաւալ տեղեկատու թերթիկներով կը փորձէին համայնքի զաւակները իրազէկ պահել իրենց գործունէութեան եւ կատարուելիք նախաձեռնութիւններու մասին: Շաբաթական կամ ամսական հերթականութեամբ «Տեղեկատու»ն կամ «Լրատու»ն կը հրատարակուէր ու կիրակնօրեայ ժամերգութեան ընթացքին ձրիօրէն կը մատուցուէր հաւատացեալներուն: Ասոնց առջինէնը Հալէպի Հայ աւետարանական Էմմանուէլ եկեղեցւոյ «Լրատու»ն է, որ 1964-էն անխափան սկսած էր լոյս տեսնել: «Պարբերաթերթ Հայ Ծերանոցի» (1952), «Պարբերաթերթ Հայ կաթողիկէ առաջնորդարանի» (1960) կը շարունակէն լոյս տեսնել տպագիր: Կարճատեւ կեանք ունեցող շարք մը միութենական, սկաւտական եւ դպրոցական մեքենագիր խմորատիպ պարբերաթերթեր ալ կը սկսին լոյս տեսնել, որոնցմէ ամենահետեւողականը Հալէպի Քարէն Եփփէ Ազգային Ճեմարանի աշակերտական «Ծիւեր» պարբերաթերթն էր, որ 1972 թ.-էն սկսած էր տարեկան մէկ-երկու թիւով լոյս տեսնել (1990-էն ետք՝ տպագիր): Կարելոր իրագործում էր նաեւ ՀԲԸՄ-ի հրատարակութեամբ եւ Բիւզանդ Մինասեանի խմբագրութեամբ «Նոր Ապրիլ» տպագիր պարբերաթերթի (1980-1981՝ 5 թիւ) հրապարակումը:

Թեմական լուրերը ծանուցելու առաջադրանքէն թելադրուած, 1978-ին Հալէպի մէջ կը սկսի հրապարակուիլ Բերիոյ թեմի «Ազգային առաջնորդարանի պարբերաթերթ»ը, որ հետագային պիտի դառնար «Օշական» ամսաթերթ, իսկ 1980-էն ետք՝ «Գանձասար» շաբաթաթերթ՝ իր լրատուական, տեղեկատուական, գրական-մշակութային եւ մանկական «ԿԿու» էջերով ու տարեկան բացառիկ թիւով պիտի հանդիսանար Սուրիոյ հայ համայնքի կարելոր ու հիմնական թերթը [Զոլաքեան, 2021]:

1967 թ. կիսուն, քաղաքական նոր իրավիճակը կրթական նոր օրէնքներ կը պարտադրէր բոլոր դպրոցներու տնօրէններու, որով Սուրիոյ կրթական տնօրէնութեան յանձնարարագիրերով կը պահանջուէր «կրթական նախարարութեան նախօրօք հրապարակուած օրէնքին կարգ մը տրամադրութիւններուն անյապաղ իրագործումը»: Նոր յանձնարարագիրերով կը միտէին «միօրինակութիւն հաստատել մասնաւոր եւ պետական դպրոցներուն միջեւ ուսումնական ծրագրի, ժամանակացոյցի, պաշտօնէութեան որակի, մակարդակի, վարձատրութեան եւ այլ կրթական երեւոյթներու տեսակէտէն» [ՄՏԿԿ ԲԺԱ, հաւաքածոյ 3, ցուցակ 1, թղթածրար 107, 1968, 13-19]: Առաքուած յանձնարարագիրով Կրթական նախարարութիւնը կը հաստատէր պետական տնօրէններու նշանակումը սեփականատէր տնօրէնութեան կողքին եւ հայերէն լեզուի դասապահներու առաւել նուազումը [«Զարթօնք», թիւ 8970, 1967] (թիւ 127 օրէնք-հրամանագիր՝ «մերսում»-ի հրապարակումը նոր իրաւակարգի կը դնէ հայկական դպրոցներու պետերը):

Ահա այդ օրերուն էր, որ կը վերակազմակերպուէին Սփիւրքահայ մշակութային միութիւնները կամ նորերը ծնունդ կ'առնէին:

1967-էն առաջ հալէպահայ բժշ. Ռոպերտ Ճեպեճեանի գլխաւորութեամբ գոյութիւն ունէր վերոնշեալ գործին նպաստող անձերէ կազմուած մարմին մը՝ Հայկ Պարիկեան, Զաւէն Գրիգորեան, Մարի Սեմերճեան եւ Ազնիւ Արապեան [Արեւ, օրաթերթ, 1977, թիւ 17.708]:

Աշխատանքի հրատապ անհրաժեշտութիւնը կ'ընդլայնէր աշխատողներու շրջանակը: 1967-ին Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան (յետայսու՝ ՀԲԸՄ) Շրջանակային Յանձնաժողովի հովանաւորութեամբ կը հիմնուի ՀԲԸՄ-ի Մատենագիտական յանձնախումբը, որուն գլխաւոր առաքելութիւնն էր մէկտեղել հնատիպ եւ արժէքաւոր գիրքերը, զբաղիլ պատմական յուշարձաններու հետազօտութեամբ, լուսագրական վաւերաթուղթերու

հաւաքումով [Արեւ, օրաթերթ, 1977, թիւ 17.708]: «Այս յանձնախումբը լծուած է մատենագիտական եւ տպագրական արժէք ներկայացնող գիրքերու հաւաքման եւ հայրենիքի մատենադարաններ փոխադրելու գործին» [Պերդուտեան, 1975, 488] եւ վերջապէս աշխատանք տանիլ հայ եւ արաբ մշակոյթի սերտացման եւ այլն:

Հայ-արաբ մշակութային կապերու սերտաճի իւրայատուկ հարթակ էր նաեւ բժշկ. Ռոպերտ Ճեպեճեանի բնակարան-ակնաբուժարանը, ուր պարբերաբար կը մէկտեղուէին հայ եւ արաբ մտաւորականներն ու կը քննարկուէր մշակութային, տնտեսական, գիտական բնոյթի հարցեր [Զոլաքեան, 2021]:

Յանձնախումբի կարեւորագոյն նախաձեռնութիւնը կ'ըլլայ Վիոլէթ Ճեպեճեան գրադարանի հիմնադրութիւնը:

1971-ին Հալէպի մէջ մեծ շուքով կը տօնուի բժշկ. Ռոպերտ Ճեպեճեանի բժշկական ասպարէզի 40 ամեակը. նոյն տարին կը ստեղծուի «Վիոլէթ Ճեպեճեան» ֆոնտը [Նոր Օր, շաբաթաթերթ, 2012, թիւ 15, 8]: 13 Յուլիս 1971-ին բժշկ. Ռոպերտ Ճեպեճեան Հալէպի մէջ կը հիմնէ «Վիոլէթ Ճեպեճեան» գրադարանը ի յիշատակ հանգուցեալ կնոջ Վիոլէթ Մանիսաճեանի: Գրադարանի եւ ՀԲԸՄ մատենագիտական յանձնախումբի շնորհիւ «Գեղարդ» Սուրիահայ Տարեգիրքի լոյս ընծայումը մեծ պարգէւ էր ոչ միայն հայ համայնքին, այլ Սփիւռքի գրասէր հասարակութեան, որովհետեւ քննարկուող ժամանակահատուածին Սփիւռքի մէջ դժուարացած էր գրիչ շարժելը, գիրք հրատարակելը, երբ հայահոծ Հալէպի մէջ դժուար էր գրաշար ճարելը: Այլ խօսքով սուրիահայ համայնքը ամբողջովին զրկուած էր սեփական մամուլ ունենալէ: Թորանեան կը գրէ. «... վերջին երկու տարիներուն ծանօթ պատճառները մեր մշակոյթի ճակատին վրայ անապատ մը ստեղծած էին, «Գեղարդ» այդ անապատին Ուվասիսը եղաւ» [Թորանեան, 1976, 69]:

Ճեպեճեան գրադարանն ու «Գեղարդ» սուրիահայ տարեգիրքը անհատական նախաձեռնութիւն մը ըլլալով հանդերձ՝ դարձաւ հայ-արաբ մտաւորականներու հանդիպման վայր, ուր կը քննարկուէին համայնքի եւ սուրիական հայրենիքի յուզող հարցերը, նոր սկիզբ կը դրուէր հայ արաբ համատեղ մշակութային կապերու ստեղծման ու ամրապնդման, որոնց արձագանքը կը տեսնենք «Գեղարդ» Զ.-ի մէջ: Գրադարանը հիւրընկալած է հայրենի եւ օտար գիտնականներ, մտաւորականներ, որոնց ներգրաւուածութիւնը նպաստած է Հայրենիք-Սփիւռք ճանաչման եւ փոխհամագործակցութեան:

Բժշկ. Ճեպեճեան նաեւ ՀԲԸՄ-ի Մատենագիտական յանձնախումբի ատենապետը ըլլալով՝ նոյն տեղը կը ղեկավարէր Հայկ Պարիկեանի խմբագրութեամբ լոյս տեսնող «Գեղարդ» սուրիահայ տարեգիրքի աշխատանքները, իր գրական, բանասիրական, գեղարուեստական, պատմական եւ մահագրական բաժիններով (1975-2000, վեց գիրք): Յանձնախումբը բժշկ. Ճեպեճեանի միջոցաւ համագործակցութեան հրաւեր կ'ուղղէ հայրենի եւ արտասահմանեան հայագիտական կարեւոր շարք մը կեդրոններու մտաւորականներուն, գիտնականներուն [Ճեպեճեան, 1999, 446]: Տարեգիրքի մեծագոյն արգասիքը սուրիահայ համայնքի (գաղութի) պատմութեան հետազոտութիւնն ու նիւթերու հաւաքագրումն էր:

2 Յունուար 1975 թ. Սուրիական Արաբական Հանրապետութեան Տեղեկատուութեան նախարարութեան թիւ 5423 հրամանագիրով, կ'արտօնուի «Գեղարդ» սուրիահայ տարեգիրքի հրատարակութիւնը: Թէեւ Ա. գիրքի տիտղոսաթերթի վրայ հրատարակութեան տարեթիւ գրուած է 1975 թ., բայց տպագրութիւնը կ'աւարտի 1976 թ. Մարտին: Լոյս կը տեսնէ Հալէպի «Արեւելք» տպարանէն, խորհրդապատկերներու գծագրութեան հեղինակը՝ Վիգէն Պերթիզլեան էր, իսկ խմբագիրը՝ Հայկ Պարիկեանը:

Ա. գիրքի ներածականի մէջ խմբագիրը կը բացատրէ, թէ ինչու տարեգիրքը «Գեղարդ» անուանուած է. «Գեղարդ կոչեցինք մեր տարեգիրքը, որովհետեւ հաւատացած ենք որ առհաւական մեր ճառագայթումներուն տեսիլքը պերճօրէն մարմնացած է ոգեղէն այդ հնաւանդ կառոյցին արտաքին պարզութեան եւ ներքին գեղեցկութեան մէջ» [Գեղարդ սուրիահայ տարեգիրք, 1975, 2]:

«Գեղարդ» տարեգիրքի հրապարակումը Սուրիահայ համայնքի նորագոյն պատմութեան տարեգրութեանց մէջ լուսաւոր էջ մըն էր: Սակայն նիւթականի կարիքը եւ մասնագէտ յօդուածագիրներու բացակայութիւնը միշտ ալ խոչընդոտած է անոր ազատ հրապարակումը:

«Գեղարդ»ի Ա. գիրքը, բաղկացած 548 էջէ, կը բովանդակէ գրական, բանասիրական, գեղարուեստական եւ պատմական հարուստ նիւթեր, կը հանդիպինք հայրենի եւ ազգութեամբ օտար գրողներու ստեղծագործութիւններուն: «Ակնարկ Սուրիոյ հնագիտութեան վրայ» Պատմական-հնագիտական աշխատութիւնը, կը խօսի տարածաշրջանային այն քաղաքակրթութեան մասին, որով դարեր շարունակ սրած էր մեծ տէրութիւններուն ախորժակը: Սուրիան, այսօր եւս, 20-21-րդ դարուն, դարձած է կռուախնձոր Արեւելքի եւ Արեւմուտքի մեծ տէրութիւններու միջեւ իր ունեցած հնագիտական, ընդերքային հարստութեամբ:

Ա. գիրքի հրապարակումէն ետք կը նախաձեռնուի Բ. գիրքի նիւթերու հաւաքագրումը, խմբագրումն ու հրապարակումը: 1976-1978 թթ. միացեալ թիւը լոյս կը տեսնէ 1979-ին [Պարսկունի, Արեւ օրաթերթ, թիւ 18.704, 1980, 3]: Հրատարակման տարեթիւէն կարելի էր եզրակացնել, որ «Գեղարդ»ը դադրած էր տարեգիրք ըլլալէ ու վերածուած պարբերագիրքի. «...թերեւս այն պարզ պատճառով, որ խմբագիրն ու հրատարակիչը չէին կրցած տոկալ ձեռնարկին պահանջած յոգնութիւններուն ու մեծղի ծախքերուն» [Շառոյեան, Բագին, 1997, թիւ 1, 141]: Եւ այսպէս, 1985ին լոյս կը տեսնէ Գ. գիրքը, 1991ին Դ.-ն, 1996ին՝ Ե. գիրքը, իսկ 2000 թուականին լոյս կը տեսնէ «Գեղարդ»ի Զ.գիրքը:

«Գեղարդ»ի Բ. -ը իր ենթաբաժիններով յար եւ նման է Ա. -ին: Բնչպէս Ա. գիրքը, Բ. գիրքը եւս ունի հարուստ բովանդակութիւն, կ'ընդգրկէ գրական, գեղարուեստական, պատմագրական-բանասիրական-կրթական-մարզական, յոբելենական եւ մահագրական ստորաբաժանումներ [Յուշարար, թիւ 6, Մարտ 15, 1980, 3]: Բ. գիրքի ուշացումը, մեր կարծիքով, հսկայածաւալ նիւթականի բացակայութիւնը չէր սուկ, այլ խմբագրական կազմի բժախնդիր աշխատանքը: Կազմը նպատակադրած էր տարեգիրքին, բացի քանակէն, որակ ապահովել, ուստի «Գեղարդ»ի մէջ հրապարակուած յօդուածները պատահականութեան արդիւնք չէին, այլ խորը ուսումնասիրուած թեմաներ, որոնք առաջին անգամ հեղինակներու կողմէ շրջանառութեան մէջ կը դրուէին: Պատմահետազօտական աշխատասիրութիւնները բացի գաղթականներու տեղակայման հիմնախնդիրներէն, կ'առչուէին Սուրիոյ տարածքին ձեւաւորուած շարք մը հայկական համայնքներու պատմութեան, հայ տարրի ներգրաւուածութեան երկրի տնտեսութեան, ընկերաքաղաքական կեանքի եւ արհեստագործութեան մէջ: Օրինակ Բ. գիրքի «Մեքենագործութիւնը Հալէպի մէջ եւ առաջին հայ վարպետը» վերտարութեամբ Յ. Զառիկեանի յօդուածը կ'անդրադառնայ, ընդհանրապէս չուսումնասիրուած թեմայի, ուր մանրամասն անդրադարձ կայ պետական կառոյցներու մէջ հայ տարրի գոյութեան եւ անհրաժեշտութեան մասին: Գիրքի մէջ կը խօսուի նաեւ մշակութային, բարեսիրական հաստատութիւններու գործունէութեանց, որոնք համայնքի ձեւաւորման առաջին օրէն իսկ իրենց լուսնային ներդրած էին գաղթականներու կայացման: «Գեղարդ»ի իւրաքանչիւր համարի մէջ մենք կ'ընթերցենք հայրենի մտաւորականներու ստեղծագործութիւնները, որոնք նոր լոյս կը ներշնչեն սփիւռքահայուն դէպի հայրենիք տուն դարձի երազանքին:

Հոս կարելորենք այն, որ անհնար է յօդուածի սահմանուած էջերով մանրամասն խօսիլ «Գեղարդ»ի իւրաքանչիւր համարի մէջ արձանագրուած նիւթերու մասին: «Գեղարդ» տարեգիրքի վեց գիրքերու բովանդակութիւնները ուսումնասիրողը կը հաստատէ, «Գեղարդ»-ի ուղին, նպատակը, հետեւողական ծրագիրը:

«Գեղարդ»ի Պատմական-պատմագրական յօդուածները կը վերաբերին Սուրիոյ, յատկապէս Հալէպ հասնող հայ գաղթականներու տեղաւորման աշխատանքներուն, արհեստագործութեան, հնագիտական արժէքներու, մարզական, մշակութային միութիւններու ծննդոցին, հայերու նպաստը Սուրիական Արաբական Հանրապետութեան տնտեսական, հասարակական ոլորտէն ներս, պետական հայ պաշտօնէութեան կենսագրական տուեալներ, որբերու ապաստարան՝ որբանոցի մասին, Մխիթարեան միաբանութեան գործունէութեան ու բերած նպաստին համայնքի կրթական կեանքին, որոնք բոլորն ալ նիւթ կը հայթայթեն հետազօտողին: Անդրանիկ Տաքէսեան կ'ողջունէ «Գեղարդ» Բ. գիրքի լոյս ընծայումը, կը խօսի բովանդակութեան եւ բացթողումներուն մասին, ապա ընթերցողին ուշադրութիւնը կը հրաւիրէ հատորի լոյսընծայման դժուարութիւններուն, որոնք գլխաւոր պատճառը «նիւթ»ն էր. «Պր. Արամ Շորվոլեան եւ Տոքթ. Ռ.

Ճեպեճեան կը պտտին ու կը գոյացնեն պէտք եղած գումարը» [Տագէսեան, «Զարթօնք», թիւ 4 (13.023), 1980, 2]:

Բայց եւ այնպէս նիւթականը պատճառ չդարձաւ, որ կանգ առնէ «Գեղարդ»ի հրատարակութիւնը եւ ուղիղ մէկ տասնամեակ անց, 1985 թ. Պէյրութի «Ալթափրես» տպարանէն, Հայկ Պարիկեանի խմբագրութեամբ եւ ՀԲԸՄ յանձնախումբի հովանավորութեամբ լոյս կը տեսնէ «Գեղարդ»ի Գ. գիրքը 523 էջէն բաղկացած [Պարսկունի, Արեւ օրաթերթ, թիւ 20660, 1987, 3]:

«Գեղարդ» Գ.ն իր բովանդակութեամբ յաջողած էր լրացնել այն բացթողումը, զոր նկատած էինք «Գեղարդ» Բ.-ի մէջ. այն էր, որ խմբագրական կազմը, ոչ դիտաւորեալ, առաւել ուշադրութիւն կեդրոնացուցած էր արաբական աշխարհի եւ Պոլսոյ գրողներու վրայ. այս հատորը համալրումն էր նախորդ երկուքին:

Երեք հատորներու մէջ զգալի է «Գեղարդ»ի յառաջընթացը. պարզ սովորական պարբերաթերթի տպաւորութիւն ձգած «Գեղարդ»ը, Երրորդ համարին մէջ առաւել կատարելագործուած կը գտնենք: Գիրքը իր բովանդակութեամբ բազմազան է. հարուստ պատմական նիւթ տրամադրուած է Հալէպի արուարձաններու մասին, ուր հայերը բնակութեան հաստատած եւ իրենց սեփական միջոցներով փորձած էին կառուցել եկեղեցի ու կրթօճախը, ուրկէ շրջանաւարտ պիտի դառնային հազարաւոր հայորդիներ: Ընդհանուր ակնարկով կը ներկայացուի Արաբ Բունարի (Քոպանիի - Ա. Ֆ.) համայնքի ազգային կրթական, մշակութային, մարզական միութիւններու գործունէութիւնը: Հայ երգարուեստը իր զանազան դրսեւորումով միշտ ալ նպաստած է ինքնութեան պահպանման որպէս ազգակ եւ հայ երաժշտութեան տարածման. այս մասին անդրադարձ կայ Գեղարդ Գ.-ի էջերուն վրայ: Հայակերտման նպաստող ազդակներ էին Համազգային հայ կրթական մշակութային միութեան գործունէութիւնը Հալէպի մէջ, միջ-սկաուտական շարժումը, Հայ մարմնակրթական միութեան ծնունդն ու գործունէութիւնը եւ այլ նիւթեր, որոնք թէւ գիտական հիմունքներով չէին գրուած, բայց հարուստ նիւթ կը հայթայթէին հետազօտողին:

Ա.-Գ. գիրքերու մէջ խմբագիրն ու աշխատակիցները տեղ տալով գեղարուեստական գրականութեան, ընթերցողին իրազեկ կը դարձնէին հայրենի եւ սփիւռքահայ գրողներու ստեղծագործութիւններուն, գրական լեզուի երկու ճիւղերու առանձնայատկութիւններուն, պատմական այնպիսի յօդուածներու, որոնք իրենց բնոյթով յուշագրութիւններ եւ դարաշրջանը ապրող ականատես հայ մարդու խօսքն էր փոխանցուած գիտական ոլորտին:

Գահիրէի «Արեւ» օրաթերթը արձագանգելով Գ. գիրքի լոյս ընծայման, կը հաստատէ, որ հատորի զգալի մասը նուիրուած է «համամարդկային, համահայկական եւ գաղութային» թեմաներուն, որ «մեծապէս դաստիարակիչ է ամէն մէկ հայու համար, անկախ իր միջավայրի պատկանելութեանը...», եւ կը ստեղծէ գրական համայնապատկեր [Պարսկունի, Արեւ օրաթերթ, թիւ 20660, 1987, 3]:

«Գեղարդ» Դ. գիրքի լոյս ընծայումը այնքան ալ հեշտ ընթացք չէ ունեցած: Խմբագրական կազմը Ճեպեճեանի հետ համատեղ ծրագրած է սոյն հատորը նուիրել Սուրիոյ (Հալէպի) մարմնակրթական շարժումի սկզբնաւորման պատմութեան: Խմբագրական կազմի կոչերը նիւթ փաստաթուղթեր եւ յօդուածներ տրամադրելու առումով, գրեթէ անպատասխան մնացած են: Ուստի Ճեպեճեան գրադարանի հարուստ պարբերականները, տարեգիրքերը, յուշագրութիւններն ու յօդուածները մատենաները ծառայած են այս հատորի համալրացման ու հրատարակութեան [«Գեղարդ» սուրիահայ տարեգիրք, Դ. գիրք, 1991, 10]: Ողջ հատորը համապարփակ նուիրելով համայնքի մարմնամարզական շարժումին 1910-1960 թթ., հիմնական նպատակը ոչ միայն դաշտային աշխատանքն ու հաւաքագրելն եղած էր, այլ՝ կորուստէ փրկել զայն. «... ամփոս պիտի ըլլայ բաց թողուլ այդպիսի փառաւոր էջ մը մեր անցեալէն» [«Գեղարդ» սուրիահայ տարեգիրք, Դ. գիրք, 1991, 9]:

Դ. գիրքի վերջաւորութեան կան արաբերէն յօդուածներ նուիրուած քանի մը ականաւոր դէմքերու, որոնք իրենց բեղուն գործունէութեան կողքին մեծ ներդրում ունեցած են Սուրիոյ եւ շրջաններու մէջ Սկաուտական շարժման սկզբնաւորման ու յարատեւումին [«Գեղարդ» սուրիահայ տարեգիրք, Դ. գիրք, 1991, 253-256]:

1995 թ. Ճեպեճեան գրադարանը Սուրիոյ Տեղեկատւութեան նախարարութեան կողմէ պաշտօնապէս կը ճանչցուի «հրատարակչատան տուն», [Ճեպեճեան, 1999, 338]:

1996 թ. լոյս կը տեսնէ «Գեղարդ» սուրիահայ տարեգիրքի Ե. գիրքը: Գիրքը նուիրուած է «Սուրիահայ մայր գաղութի» պատմութեան: Ե. գիրքի խմբագիրը՝ բժշկ. Ռոպերտ Ճեպեճեան հատորը կը նուիրէ Սուրիահայ համայնքի, մամուլի, գրատպութեան պատմութեան: Խմբագիրը ներածականին մէջ առաւել կ'անդրադառնայ Հայաստանի յետանկախացման տարիներուն հայրենի բնօրրանի դիմագրաւուելիք դժուարութիւններուն:

«Գեղարդ»ի այս հատորը առանձին բաժիններով կը ցուցնէ Սուրիոյ համայնքի պատմական հարուստ անցեալը, Ռամկավար Ազատական կուսակցութեան «Եփրատ» թերթի համարներէն կը պեղէ Սուրիոյ գաւառային շրջաններուն մէջ տարագիր հայութեան տեղաւորման բաժինները. Յուշագրութիւններ, Կազմակերպութիւններու մասին մանրամասնութիւններ, «Հարեւան գաղութներու» Իրաք, Յորդանան, Վերաբերող գրութիւններ, Վիճակագրութիւն, մամուլ, անձնաւորութիւններ, գիտական, սուրիահայ կապալառուներու, երեսփոխաններու համայնքի ներդրումը առողջապահութեան ոլորտէն ներս եւ այլ յօդուածներ, որոնք կրնան ուղեցոյց հանդիսանալ ապագայ հետազոտողին:

Բժշկ. Ճեպեճեան Մեծ Հայրենադարձութեան օրերուն Ներգաղթի կոմիտէի անդամ ըլլալով սակաւ տեղեկութիւններ կը փոխանցէ ներհամայնքային եւ ներքաղաքական պայքարի մասին: Արխիւային փաստարկներ չենք գտներ, նոյնիսկ ներգաղթի կազմակերպչական աշխատանքներուն վերաբերեալ, յստակ թուապատկեր չենք գտներ Սուրիայէն գաղթողներուն վերաբերեալ եւ այլն: Այդ թեմայի շրջանակներուն տեղ յատկացուցած է Հալէպի մէջ եւ այլուր ձեւաւորուած «Հայրենիքի բարեկամ» յորջորջումով մէկէ աւելի կազմակերպութիւններու եւ միութիւններու, որոնց հիմնական նպատակը նախապատրաստական քարոզչութիւններ էր հայու դարաւոր երազանքին՝ մեծ հայրենադարձութեան, իրականացման:

Դրուատանքի արժանի բաժին մըն է Հալէպի հայկական երկրորդական ձեւաբաններու նուիրուած բաժինը, Սուրիայէն Երեւանի համալսարան ընդունուած հայ սաներու վերաբերեալ ու այլ թեմաներու շուրջ կատարուած հետազոտական աշխատանքը:

2000 թ. լոյս կը տեսնէ «Գեղարդ»ի Զ. հատորը, Հալէպի մէջ, նուիրուած ասպնջական արաբ ժողովուրդի հետ հայ համայնքի սերտաձին, Յարութիւն Սիմոնեանի մեկենասութեամբ: Զ. հատորը իր բովանդակութեամբ կը բնութագրէր «Հայ փոքրամասնութեան յաջող սերտաճը Սուրիոյ մէջ», Հատորը «հակապատկերն է էթնիկական սաստիկ հակասութիւններու, որոնք կը բնորոշեն 20-րդ դարու ընկերային համակարգը» [«Գեղարդ» սուրիահայ տարեգիրք, Զ. գիրք, 2000, 3]: Այս հատորի հիմնական նպատակն է արաբ հասարակութեան փոխանցել եղբայրական երախտիքի խօսքը: Կան Հալէպի եւ Սուրիոյ հայերու մասին արաբ մտաւորականութեան կողմէ ուսումնասիրութիւններ, որոնք կը վկայեն հայ տարրի առկայութիւնը Սուրիոյ հողին վրայ: Անդրադարձ կայ հայ արաբ համագործակցութեան եւ որպէս արդիւնք յուշարձանի մտայղացումն ու տեղադրումը Երեւանի Երեւանեան լիճի ափին:

Անառարկելի փաստ է, որ «Գեղարդ» տարեգիրքին բոլոր հատորները դարձան մնայուն գործեր, մասնաւորաբար սուրիահայ գաղթավայրի, համայնքի պատմութեան ուսումնասիրութեան համար: Հոն խմբուեցան համայնքի անցեալ եւ ներկայի կեանքին առնչուող բազմաթիւ նիւթեր, որոնք կարելոր ատաղձ դարձան աշխարհագրական այս գօտիին պատմութիւնը ուսումնասիրող ապագայ հետազոտողին:

Ա.-էն Զ.-ը հատորները եղան Սուրիահայ Տարեգիրք իր բնոյթով, ծնունդով, խմբագիրով, մատենագիտական նիւթերու հայթայթումով, աշխատակիցներով, որոնց մեծ մասը սուրիահայեր էին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

«Գեղարդ» Սուրիահայ տարեգիրքը իր տիտղոսաթերթին վրայ կրեց տարեգիրք բառը, բայց նիւթերու ընտրութիւնն ու յօդուածագիրներուն նիւթի հայթայթումը դժուար ընթանալով՝ վերածուեցաւ պարբերագիրքի:

Սուրիոյ հայ համայնքի պատմութեան վերաբերեալ ընտրուած թեմաները չունեցան շարունակականութիւն, այլ ընդհակառակը միայն սկիզբ մըն էին հետազօտողին:

«Գեղարդ»-ը եւ Ճեպեճեան գրադարանը Թումանեանական վերնատան պատկերը կը ներկայացնէին, ուր հայ, արաբ եւ օտար գրողներու, մտքեր փոխանակելու գլխաւոր կեդրոն դարձած էր եւ այդպէս ալ շարունակուեցաւ մինչեւ փակուիլը:

«Գեղարդ»-ը առանձին բաժիններով ջանաց ցոյացնել համայնքի պատմական հարուստ անցեալը եւ ճշդորոշել դերը հայ համայնքին՝ սուրիական հայրենիքի ծաղկման, բարգաւաճման եւ տնտեսական վերելքին մէջ: «Գեղարդ»ը չդաւաճանեց իր որդեգրած սկզբունքներուն: Մնաց միշտ հայկական, բայց խօսեցաւ համարաբական եւ համահայկական հիմնահարցերու, որոնք բոլոր ժամանակներու համար այժմեական կը մնան ու կը ստիպեն, որ զանոնք առնչենք այլ աղբիւրներու հետ հաստատելու անոնց վաւերականութիւնը:

Մեր ուսումնասիրութեան ժամանակհատուածին բազմիցս խնդրեցինք «Գեղարդ»ի արխիւներուն ծանօթանալ, որպէսզի առաւել հիմնաւորուած եւ գիտական ըլլար մեր յօդուածը: Այդպէս ալ չտրամադրուեցաւ. ուստի մեր գնահատականը կը հիմնաւորենք հատորներու ուսումնասիրութեան եւ շարք մը հեղինակներու խօսոյթներու հիման վրայ:

«Գեղարդ»-ի նման ծաւալուն հատորները, իրենց ընդգրկած բովանդակութեամբ, պարզ է, որ պիտի ունենային թերութիւններ.

- Ամէն ինչ կորուստէ փրկելու միտքը միշտ հետապնդած է կազմը եւ այդ պատճառ հանդիսացած է, որ պատմական դրուագներու մէջ տեղի տուած են պակասաւոր տեղեկութիւններ, անճիշդ արձանագրութիւններ, վրիպակներ եւ այլն:
- Ճեպեճեան տիրապետելով արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի, յաճախ նկատած ենք լեզուամտածողութեան այլ կառուցուածքի դրսեւորում, ուղղագրական սայթաքումներ եւ այլն:
- Արխիւներու բացակայութիւնը պատճառ հանդիսացած է, որ արձանագրենք «Գեղարդ»ի միօրինակ ուղղութիւններ չգոյութեան մասին:
- Պարբերագիրքը առաւել խօսնակը դարձած է Հալէպի հայ համայնքի պատմութեան, զանց առնելով Սուրիոյ հայաբնակ միւս շրջաններու՝ հիւսիս-արեւելեան բնակավայրերու՝ Ճեզիրէի հայ համայնքի, պատմութեան ուսումնասիրութիւնը, որոնք մինչ օրս պատշաճ կերպով չեն ուսումնասիրուած:

Այս բոլորը չեն խանգարեր, որ Գեղարդ Սուրիահայ տարեգիրքը համարուի սկզբնաղբիւր Սուրիոյ եւ Մերձաւոր Արեւելքի հայկական համայնքներու պատմութեան ուսումնասիրութեան համար:

SUMMARY

In the 1920s, during the early days of community organization, the national and religious structures of the Armenian community in Syria were established with a strong emphasis on writing in Armenian as a vital means of self-organisation and preservation. Alongside the construction of schools and churches, the Armenian community published informational, historical, scientific, literary, and religious daily newspapers, as well as yearbooks, annual reviews, and children's magazines. These publications nourished the Armenian mind, instilling knowledge and contributing significantly to the historical and cultural life of the community.

After Syria gained independence, particularly following the coup of March 8, 1963, a new state decree mandated that only one state newspaper could be published, effectively halting the production of all other newspapers. As a result, many Armenian intellectuals were forced to leave the country.

With the reform movement of 1970, some freedoms were gradually restored, including the reprinting of the press. This allowed for the revival of Armenian print media.

The article refers specifically to the Syrian-Armenian “Geghard” yearbook (1975-2000), which was published by the initiative of the Bibliographic Commission of the Armenian General Benevolent Union in Aleppo during the last quarter of the 20th century. It highlights the significant historical and linguistic heritage found within its pages.

The publication of “Geghard” acted as a spark that awakened the Armenian mind from a deep stupor and directed it toward the world of knowledge.

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

1. «Զարթոնք», թիվ 8970, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության հրատ., 22 Հոկտեմբեր 1967, Պեյրուք, 4 էջ:
2. Չոլաքեան Յ., Կոչնակներուն խորացող արձագանգը, 2021, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://kessabheritage.blogspot.com/2021/>.
3. Արեւ օրաթերթ, 63-րդ տարի, թիվ 17.708, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության հրատ., Գահիրե, 10 Յունիս 1977, 4 էջ:
4. Բերիոյ Թեմի Ազգային Առաջնորդարանի Արխիւ, (ԲԹ ԱԱԱ), դարան Դ., գ. 69, թ. 2), 1955-1956:
5. Դանիէլեան Ժ., Հայ նոր պարբերական մամուլը-1967-1981, /Imprimerie Altapress/, Պեյրուք. 1984, 183 էջ:
6. Դանիէլեան Ժ., Հայ պարբերական մամուլի հարցեր, Հայկազեան հայագիտական հանդէս, Զ. տարի, Հայկազեան գոլէճի հայագիտական ամբիոնի հրատ., Պեյրուք, 1977-1978, 368 էջ:
7. Թորանեան Թ., Գիրքեր, Պարբերաթերթ հայ կաթողիկէ առաջնորդարանի, թիւ /1-12/, Հալէպի հայ կաթողիկէ թեմի հրատ., Հալէպ, 1976, էջ 66-71, 86 էջ:
8. «Գեղարդ» սուրիահայ տարեգիրք, Դ. գիրք, Հ.Բ.Ը.Միության մատենագիտական յանձնախումբի հրատ., Հալէպ, 1991, 256 էջ:
9. Ճեպեճեան Ռ., Ինքնակենսագրութիւն Յուշեր եւ գործունէութիւն, Վիոլետ Ճեպեճեան գրադարանի հրատ., 1999, Հալէպ, 518 էջ:
10. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն Բերիոյ Թեմի Արխիւ (ՄՏԿԿ ԲԹԱ), հաւաքածոյ 3, ցուցակ 1, թղթածրար 107, թերթ 13-19, Պեյրուք, անտիպ, 27 թերթ. 5/2/1968:
11. Մինասեան Մ., Հայ պարբերական մամուլի նորայայտ անուններ // Հայկազեան հայագիտական հանդէս, հատոր Թ., Հայկազեան գոլէճի հայագիտական ամբիոնի հրատ., Պեյրուք, 1981, 367 էջ:
12. Յուշարար, 67-րդ տարի, թիւ 6, Մարտ 15, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության հրատ., Նիւ Եորք, 1980, 32 էջ:
13. Ահարոնեան Ա., Տոքթ. Ռոպերթ Ճեպեճեան, Նոր Օր, շաբաթաթերթ, 12 Ապրիլ 2012, 90-րդ տարի, թիւ 15, Ֆրեզնո, Ռամկավար Ազատական կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի հրատ., 16 էջ, էջ 8:
14. Շառոյեան Լ., «Գեղարդ» Սուրիահայ տարեգիրք - Ե. հատոր, Բագին, 1997, թիւ 1, ՀՅԴ քիւրդի եւ Համազգային մշակութային միութեան կեդրոնական վարչութեան հրատ., Պեյրուք, 162 էջ:
15. Չոլաքեան Յ., Հալէպի պարբերական մամուլի համառօտ նկարագրութիւն, Քարէն Եփփէ ազգային ճեմարանի հրատ., Հալէպ, 1978, 64 թերթ:
16. Պարիկեան Հ., Վարժապետեան Յ., Պատմութիւն Սուրիոյ հայ տպարաններու, Հալէպ, ՀԲԸՄ-ի մատենագիտական յանձնախումբի հրատ., 1973, 264 էջ:
17. Պարսկունի Յովհ., Արեւ օրաթերթ, թիւ 18704, 1980, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության հրատ., Գահիրե, 4 էջ:
18. Պարսկունի Յովհ., Արեւ օրաթերթ, թիւ 20660, 1987, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության հրատ., Գահիրե, 4 էջ:

19. Պերդուտեան Լ., Ուրուագիծ Սուրիոյ Հ.Բ.Ը.Միութեան պատմութեան, «Գեղարդ» սուրիահայ տարեգիրք, Ա. գիրք, Հ.Բ.Ը.Միութեան մատենագիտական յանձնախումբի հրատ., 1975, 500 էջ:
20. Տաքէսեան Ա., «Գեղարդ» Սուրիահայ տարեգիրք 1976-1978, Բ. գիրք, «Զարթօնք», Խդ. տարի, թիւ 4 (13.023), 30 Սեպտեմբեր 1980, Ռամկավար Ազատական Կութասկցութեան հրատ., 4 էջ:
21. Տէր Խաչատուրեան Ա., Սուրիահայ մամուլի պատմութիւն //Հայկազեան հայագիտական հանդէս, հատոր Գ., Հայկազեան գոլէճի հայագիտական ամբիոնի հրատ., Պէրոյ, 1972, 326 էջ:
22. Ֆիշենկճեան Ա., Սուրիոյ հայ համայնքի պատմութիւնը, հեղինակային հրատ., տպ. «Ասողիկ», Երեւան, 2018, 344 էջ:

<https://doi.org/10.52027/18294685-samz.2-11>

ԱՐԲԱՆԱԳԻՏԱՆԱԿԱՆ ՄԻՐՈՒՆ

Գեղարքունիք գյուղի միջնակարգ դպրոցի գրադարան

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԱՇԽԱՏԱՎԱՅՐԻՑ ՆԵՐՄ

Բանալի բառեր՝ գրադարան, մասնագիտական զարգացում, գրադարանավար, ընթերցանություն, նորարարություն, համագործակցություն, սպորտ-գրադարան, թվայնացում:

Keywords: library, professional development, librarian, reading, innovation, cooperation, sport library, digitization.

Ցանկացած մասնագիտության պարագայում կարևոր է հիմք ընդունել ձևավորված հարաբերությունները, արդեն իսկ առկա աշխատանքային փորձն ու հմտությունները, սակայն, այդ ամենով հանդերձ, չպետք է գոհանալ եղածով, ընդհակառակը՝ պետք է ուղիներ փնտրել առաջ գնալու, կատարելագործվելու՝ նոր և առաջավոր փորձը տեղայնացնելու ուղղությամբ աշխատանք տանելով: Այս ամենն էլ ավելի է կարևորվում, երբ խոսքը վերաբերում է գրադարանային ոլորտին, քանի որ մարտահրավերները այս բնագավառում բազմաթիվ են՝ հաշվի առնելով նոր տեխնոլոգիաների զարգացումը, արհեստական բանականության առկայությունը, որոնց պարագայում տպագիր գիրք կարդալը մոլորում է երկրորդ պլան: Գրադարանները, թվայնացնելով իրենց հավաքածուները, ստեղծում են էլեկտրոնային տեղեկատվական ռեսուրսներ, իսկ տվյալների բազաները, որտեղ պահվում են գրքերը, հանդես են գալիս որպես անսահմանափակ աղբյուրներ, որոնք էլ կիրառվում են հասարակության կողմից: Այս ամենով հանդերձ՝ մենք՝ գրադարանավարներս, քաջատեղյակ ենք, որ ոչ մի տեխնոլոգիա չի փոխարինի գրքի և մարդու շփմանը, չէ՞ որ հենց գիրք կարդալով է զարգանում մարդու միտքը, ձևավորվում առաքինի պահվածքը: Ընթերցանությունը նպաստում է ճիշտ կարծիք ձևավորելուն, ճիշտ խոսքի կառուցմանը, նպաստում է ծանոթացմանը ուրիշ ազգերի մշակույթներին, սովորեցնում է առօրյա հարաբերություններում նաև հաշվի առնել ուրիշների կենսափորձը: Լավ և վատ գրքերը խորհելու առիթ են տալիս և ուղղորդում զարգացմանն ու առաջընթացին, ճիշտ վարվելաձևի մշակմանը: Ի վերջո՝ սովորելը միշտ էլ արդիական է և անհրաժեշտ՝ անկախ տարիքից ու սեռից. միմիայն այդ դեպքում է մարդու մոտ զարգանում ստեղծագործական միտքը, իսկ գիտելիքների հսկայական պաշարների ամբարումը կարող է կատարվել նաև ընթերցանության շնորհիվ:

Կարևոր է առանձնացնել այն անձնային հատկանիշները, որոնք պետք է ունենա մեզանից յուրաքանչյուրը, առանց որոնց դժվար է պատկերացնել արդյունավետ աշխատանքը: Նշեմ դրանցից մի քանիսը.

- Իր գործին տիրապետելը, քաջատեղյակությունը:
- Համառ աշխատանքը, սրտացավ վերաբերմունքը, պատասխանատվությունը:
- Մերը ընտրած մասնագիտության հանդեպ:
- Նորարար և ստեղծագործական մոտեցումները:

Իսկ աշխատանքում՝ գրադարանային առօրյայում, մասնագիտական զարգացումը ես բաժանել եմ մի քանի ուղղությունների, որոնց կանդրադառնամ առանձին-առանձին՝ կցելով իմ մասնագիտական գործունեությունը, որպեսզի խոսքս վերացական չլինի:

1. Գիրք-ընթերցող հարաբերությունը (այն ամենակարևորն է):
2. Նորարար նախաձեռնությունները, սեփական տեսլականի ձևավորումը:

3. Համագործակցությունը տարբեր գրադարանների ու գրադարանավարների միջև:
4. Մասնակցությունը միջոցառումներին, ինչպես նաև միջոցառումների կազմակերպումը, աշխատանքի հանրայնացումը՝ ներկայացումը լրատվամիջոցներով, հենց թեկուզ ֆեյսբուքյան էջերով:
5. Անդրադարձը գլոբալ մարտահրավերներին՝ կլիմայական փոփոխություններին, համացանցային գոեհկաբանությանը, ապատեղեկատվության դեմ պայքարին և այլն:
6. Գրադարանավարների վերապատրաստումների կազմակերպումը, թվային տեխնոլոգիաների կիրառման անհրաժեշտության կարևորության գիտակցումը:
7. Փոխադարձ այցելությունների կազմակերպումը, մրցակցային միջավայրի ստեղծումը, փորձի փոխանակման կարևորության գիտակցումը:

Անդրադարձ գիրք-ընթերցող հարաբերությանը

Մեր աշխատանքային փորձը ցույց է տալիս, որ ում սիրում են, սովորում են նրանից. այս փաստը շատ կարևոր է: Ըստ այդմ էլ՝ ցանկացած գրադարանավար պետք է նախևառաջ այնպես անի, որ արժանանա ընթերցողների սիրուն ու վստահությանը, կարողանա ծանոթանալ ընթերցողի ներաշխարհին, պատկերացում ունենա նրա հետաքրքրությունների, նախասիրությունների, ցանկությունների, խառնվածքի ու սովորությունների մասին:

Ընթերցողի նկատմամբ ազնիվ վերաբերմունքը, արդարացի մոտեցումները, նրա վրա ներգործելու անհրաժեշտ կարողունակությունը և շատ կարևոր է ու, ես կասեի, պարտադիր պայման:

Կիրթ ու գրագետ խոսքը ևս իր ազդեցությունն ունի ընթերցող-գրադարանավար հարաբերություններում, այլ կերպ ասած, եթե գրադարանավարը կարդացած չէ, չի տիրապետում անձնային վերոնշյալ հատկանիշներին, միանշանակ կտապալի ընթերցանության խթանման գործընթացը:

Հմուտ գրադարանավարի առանձնահատուկ դերը ընթերցողին ուսումնասիրելու, նրա անհատական ձգտումները պարզելու, հետաքրքրությունների մտահորիզոնը ընդլայնելու ուղղությամբ շատ կարևոր է: Գիրքը ընթերցողին՝ մասնավորապես երեխային, ստիպում է զգալ և ընկալել շրջապատի գեղեցկությունը, մայրենի լեզվի ճոխությունը, այդ իսկ պատճառով էլ հատկապես կարևորվում է դպրոցական գրադարանավարների գործունեությունը, որովհետև եթե երեխան մանկուց է վարժվում գիրք կարդալուն, այն ամբողջ կյանքում դառնում է նրա անբաժան ուղեկիցը: Ընթերցանության միջոցով է դեռևս փոքր տարիքից ձևավորվում գեղագիտական ընկալման հիմքը, որը դրվում է յուրահատուկ տպավորություններ արտահայտող գրքերի ընթերցման միջոցով: Իսկ մասնագիտական կրթություն ունենալու փնտրտուքի ճանապարհին արվեստի տարբեր ուղղություններին վերաբերող գրքերը իրենց ազդեցությունն են թողնում:

Գրադարանավարի աշխատանքը ստեղծագործական մոտեցում է պահանջում աշխատակցի ամենօրյա գործելառճում: Տվյալ դեպքում ընթերցանության ղեկավարումը դառնում է գերակա նպատակ՝ այն զուգորդելով երեխաների նկատմամբ սիրով, գրքի նկատմամբ սերը երեխային փոխանցելով և օգնելով, որպեսզի երեխան կողմնորոշվի գրքերի աշխարհում:

Ընթերցողների հետ աշխատելու մեթոդները պետք է հնարավորինս թարմացվեն ու նորացվեն՝ համապատասխանեցնելու ժամանակակից պահանջներին: Հաշվի առնելով սեփական աշխատանքային փորձը՝ ստորև ներկայացնում եմ այն հատկանիշները, որոնք պետք է նկատի առնվեն մասնագիտական զարգացման ճանապարհին՝ ընթերցանության խթանումը, գրքերի ընտրության խորհրդատվության կազմակերպումը, ընթերցողների ներգրավումը ընթերցանության մեջ:

1. Տարիքային առանձնահատկությունները հաշվի առնելը շատ կարևոր է ընթերցողների սպասարկման ժամանակ. այն հանդիսանում է գրադարանային աշխատանքի հիմքը:
2. Ընթերցողների հետ անմիջական շփման միջոցով հետաքրքրությունների շրջանակի պարզումը. նրանց ցանկությունների ու հակումների բացահայտումը հենակետային նշանակություն ունեն ընթերցանության խթանման համատեքստում:

3. Ջերմ ու բարյացակամ վերաբերմունքը դեպի ընթերցողը նպաստում է գրադարաններ այցելությունների հաճախակիացմանը:
 4. Գրադարանավարի անձնական որակները՝ մարդասիրությունը, ազնվությունը, իր մասնագիտության նկատմամբ հարգանքը, դիմացինին օգնելու, ճիշտ խորհուրդներ տալու կարողունակությունը, սերը դեպի երեխաները և նրանց հետ աշխատելու հմտությունների տիրապետումը, մեծապես նպաստում է ընթերցողների հետաքրքրությունների ճշտմանը և ընդլայնմանը:
 5. Գրադարաններում պետք է ստեղծվեն համապատասխան պայմաններ՝ գրույցներ, գրքի քննարկումներ, բարձրաձայն ընթերցանություններ կազմակերպելու, տարաբնույթ միջոցառումներ նախաձեռնելու ուղղությամբ, որպեսզի ավելի շատ ընթերցողների ներգրավեն տարբեր աշխատանքներում: Այդ բոլորը պետք է միտված լինեն ժամանակակից մարտահրավերները բացահայտելուն, արհեստական բանականության գործիքները կիրառելուն, գրադարանի գործառնությունները ընդլայնելուն՝ հաշվի առնելով տեխնոլոգիական զարգացման արագ տեմպերը:
 6. Հատուկ հարցաթերթիկների կազմումը, ցանկությունների պարզումը ևս պետք է իրենց դերն ունենան ընթերցանության ճիշտ ղեկավարման գործընթացում:
 7. Այս ամենով հանդերձ՝ չպետք է անտեսվի գրադարանավարի շարունակական ինքնակրթության ու ինքնակատարելագործման, մանկավարժահոգեբանական գիտելիքների տիրապետման անհրաժեշտությունը, ինչպես նաև գիտակցումը՝ ընթերցողի անհատականությունը ինքնուրույնությունից զրկելու անթույլատրելիության մասին:
- Երբ երեխան զգում է, որ իրեն սպասում են գրադարանում, կապվում է գրադարանի հետ: Նպատակ դնելով երեխային ընդգրկել ընթերցանության մեջ, շարունակաբար ուսումնասիրելով ընթերցողներին, կարողանալով ղեկավարել ընթերցանությունը՝ հնարավորություն է ստեղծվում ավելի գործուն միջոցներ գտնել գրադարանային աշխատանքի արդյունավետության բարձրացման համար՝ միաժամանակ աշխատանք տանելով ընթերցողի ուսումնասիրումն ու ընթերցանության ղեկավարումը միմյանց միաձուլելու ուղղությամբ:

Անդրադարձը նորարար նախաձեռնություններին, սեփական տեսլականի ձևավորմանը

Նորարար նախաձեռնություններից են գրադարանի «Աջակիցների խորհրդի» ստեղծումը, որի կազմի մեջ մտնում են ակտիվ աշակերտներ՝ տարբեր դասարաններից, ինչպես նաև մի քանի ուսուցիչներ: «Աջակիցների խորհրդի» անդամների հետ միասին դաշտ ենք բարձրացել, դեղաբույսեր հավաքել, փաթեթավորել, ծնողների միջոցով վաճառել՝ ստացված գումարով նոր տպագրված գրքեր գնել գրադարանի համար: Այս հետաքրքիր նախաձեռնության շնորհիվ մենք՝ կոնկրետ այս տարի, ունեցել ենք 14 անուն հրաշալի գրականություն, որի մեջ մտնում են օրինակ՝ Պարույր Սևակի «Պոեմները», «Միրերգությունը», «Ընտիր Էջերը», Համո Սահյանի «Ընտրանին», Հովհաննես Թումանյանի «Ընտրանին», «Պոեմները», «Պատմվածքները», Հովհաննես Բլազյանի «Իլիականը», Հովհ. Շիրազի «Հուշարձան մայրիկիս»-ը և այլն:


Այս նախաձեռնության արդյունքում մենք ունենում ենք

- Գրքային ֆոնդի համալրում, ինչը նպաստում է ընթերցանության խթանմանը:
- Առողջ կենսակերպի ապահովում՝ դաշտում լինելով և դեղաբույսերի օգտագործումը խրաբուսելով:
- Նպատակ դնելու և դրան հասնելու կարողունակության ձևավորում:
- Համագործակցության և փոխադարձ օգնության կարևորության գիտակցում աշխատանքի ընթացքում:
- Համերաշխ կոլեկտիվի ձևավորում:

Մեր նորարար նախաձեռնություններից հաջորդը «Գրադարան-սպորտ» համագործակցությունն է, որի շրջանակներում իրականացված աշխատանքների շնորհիվ գրադարանի լավագույն ընթերցողներից են դարձել նաև տղաները:

«Գրադարան-սպորտ» համագործակցությունը մեծ ակտիվություն է բերել գրադարան ու այն դարձրել երեխաների համար ամենահաճելի վայրը: Այս համագործակցության շրջանակներում մեր կատարած աշխատանքներից են.

- Գրադարանում սպորտային անկյան ստեղծումը՝ երեխաների սիրած մարզիկների լուսանկարներով, տարբեր մրցույթներում դպրոցականների հաղթանակների շնորհիվ ձեռք բերված գավաթներով, մեդալներով ու պատվոգրերով ձևավորված:
- Ընթերցասրահում հաճախ կազմակերպվող նախամրցումային և հետմրցումային քննարկումների, պարզևատրման արարողությունների, մարզիկների կյանքին ու հաջողություններին նվիրված միջոցառումների, զրույցների, դպրոցում ֆուտբոլային հուշամրցաշարերի անցկացումը:
- Ընթերցասրահում՝ ֆիլմ դիտելու հատվածում, լավագույն ֆուտբոլային գոլերի ու դրվագների ցուցադրությունների իրականացումը, իհարկե, մարզիչի բացատրություններով ուղեկցվող:



«Գրադարան-սպորտ» համագործակցության շրջանակներում կատարված աշխատանքներից, որոնք իրականացվել են մեր դպրոցում, կարելի է տեսնել Գեղարքունիք գյուղի միջնակարգ դպրոցի գրադարանի ֆեյսբուքյան էջում:

«Մասնագիտական զարգացումը աշխատավայրից ներս» թեման չի կարող լիարժեք լինել, առանց մասնագիտական կրթության և շարունակական վերապատրաստումների ու կատարելագործման:

ՀՀ-ում գրադարանային մասնագետներ պատրաստվում են ԵՊՄՀ-ի «Գրադարանավարություն և մատենագիտություն» բաժնում, սակայն հարկ է նշել, որ այժմ՝ ոչ գրավիչ և ցածր վարձատրվող մասնագիտություն լինելու պատճառով, համապատասխան բաժնում դիմորդներ չկան. փաստը ցավալի է և խորհելու առիթ է տալիս, իսկ համապատասխան ղեկավար գերատեսչություններին՝ հստակ ուղերձ:

Այս ամենի ֆոնին էլ ավելի է կարևորվում գրադարանային կադրերի վերապատրաստումների դերը, որոնք իրականացվում են տարբեր գրադարաններում՝ լավագույն մասնագետների կողմից, իսկ Հայաստանի ազգային գրադարանում իրականացվող գրադարանավարների վերապատրաստման դասընթացները հիմնվում են գործնական հմտությունների ու կարողունակությունների զարգացման վրա՝ մեծ դեր հատկացնելով նաև ժամանակակից ծրագրային նյութերի ուսուցմանն ու յուրացմանը:

Աշխատավայրից ներս շարունակական մասնագիտական զարգացմանը նպաստում են մասնակցությունը գիտաժողովների, մրցույթների, վերապատրաստման դասընթացների, տարբեր քննարկումների, միջոցառումների:

Մեր դեպքում մասնակցությունն էր 2022 թ. և 2024 թ. Հայաստանի ազգային գրադարանում կազմակերպված «Ժառանգության պահպանություն՝ հանուն կայուն ապագայի» միջազգային գիտաժողովներին: Մասնագիտական զարգացումը հնարավոր է արտերկրյա գրադարանների գրադարանավարների հետ ակտիվ համագործակցության շնորհիվ: Այս համատեքստում մենք համագործակցում ենք մեր գյուղի գրադարանում Նիդերլանդներից՝ Լեյդենի համալսարանից հյուր եկած Մատտար Աննա Մարիայի, Լոս-Անջելեսի Կալիֆորնիայի համալսարանի գրադարանի գրադարանավար, արխիվագետ, Մերձավոր Արևելքի գրադարանավարների ասոցիացիայի ակտիվ անդամ, հայ գրադարանավարների և արխիվագետների միջազգային ասոցիացիայի (IALA) հիմնադիր և գործադիր խորհրդի անդամ Նորա Ավետյանի, ԱՄՆ, Գլենդելի դպրոցական գրադարանի գրադարանավարուհի Սեդա Այկանյան Մաթեվոսյանի հետ:

Շատ ենք կարևորում համագործակցությունը Հայաստանում. դրա շրջանակում համագործակցում ենք հետևյալ ուղղություններով.



Մասնագիտական զարգացմանը նպաստում են նաև փոխադարձ այցելությունները և գրադարանային աշխատանքի ներկայացումը.

- Մասնակցել ենք «Գավառը երիտասարդական մայրաքաղաք», «Քաղաքացու օրը», «Հովվի փառատոն», «Փախլավայի փառատոն», «Ֆեստիվալը Գավառում» միջոցառումներին:
- Եղել ենք «Ապաչի» գործարանում, «Դիլիջան» ազգային պարկում:
- Հրավիրվել ենք Հայաստանի հանրային հեռուստաընկերություն:

Մասնագիտական զարգացումն աշխատավայրում շատ թերի կլինի՝ առանց գրադարանային առօրյայի ներկայացման: Մեր գրադարանում իրականացվում են հեքիաթների

բեմականացումներ, միջոցառումներ՝ նվիրված տարբեր նշանավոր անձանց հոբելյաններին: Օրինակ՝ «Մեր անմահ մեծերը» խորագրով գրադարանում անցկացրինք «Հովհաննես Թումանյան -155» միջոցառումը:

- Գրադարանում աջակցում ենք դասընթացների և խմբակների, նախագծային աշխատանքների կազմակերպմանը: Մենք համոզված ենք, որ գրադարանները ոչ միայն պետք է տրամադրեն դպրոցական նյութեր գրքեր, հոդվածներ, ուսումնական ձեռնարկներ, այլև նպաստեն խորացված թեմաների ուսումնասիրմանը, նախագծային աշխատանքների կազմմանը, քննությունների պատրաստման հմտությունների զարգացմանը:
- Տեսադասերն ու քննարկումները բազմաթիվ են մեզ մոտ, իսկ ցուցահանդեսներից և մրցանակաբաշխություններից ես կառանձնացնեի «Լավագույն ընթերցող» մրցանակաբաշխությունը, լուսանկարչական ցուցահանդեսը՝ «Ես և իմ հայրենի բնաշխարհը» թեմայով:
- Մեր ամենամեծ ցանկությունն է ստեղծել միջգրադարանային համագործակցություն այլ երկրների գրադարանների և մեր գրադարանի միջև, որպեսզի կատարվեն փոխադարձ այցելություններ. դրա արդյունքը անփոխարինելի կլինեի, իսկ տպավորությունները՝ անջնջելի: Ժողովրդական մի խոսք կա՝ ավելի լավ է մեկ անգամ տեսնել, քան հարյուր անգամ լսել:

Ամփոփելով՝ ուզում եմ նշել, որ մասնագիտական զարգացումը շարունակական գործընթաց է, որտեղ նորարարություններն ու տեխնոլոգիաները միշտ էլ ունեն իրենց դերը, իսկ գրադարանների գործունեության արդյունավետությունն ու հասանելիությունը պետք է բավարարեն անընդհատ կատարելագործվող կրթական պահանջներին:

Ինչքան էլ կարևոր են թվանագումը, նոր տեխնոլոգիաների կիրառումը, խելացի ռոբոտների օգտագործումը՝ մենք չենք կարող ժխտել գրադարանների դերը առողջ հասարակության ձևավորման մեջ՝ որպես կրթական, մշակութային, սոցիալական հմտությունների ձևավորման օջախի:

Անշուշտ, հենց գրադարաններում պետք է համատեղվեն ուսուցումն ու համագործակցությունը, ինչպես նաև հետազոտություններին, ժամանցային ծրագրերին, սոցիալական զարգացմանը, անհատական մոտեցումներին նպաստող աշխատանքների անցկացումը: Իսկ գրադարանների արդյունավետ աշխատանքը ապահովելու համար գրադարանավարները պետք է մասնակցեն վերապատրաստման դասընթացներին, սովորեն տարբեր ծրագրեր՝ տեխնոլոգիաների օգտագործման, կառավարման մեթոդների ու հմտությունների ձեռքբերման, գրադարանային ծառայությունների կատարելագործման մասին:

SUMMARY

To summarize, it is important to note that professional development is a continuous process where innovations and technologies play a crucial role. The effectiveness and accessibility of library operations must align with ever-evolving educational needs.

While digitalization, new technologies, and smart robots are vital, we cannot overlook the role of libraries in shaping a healthy society by serving as centers for the development of educational, cultural, and social skills.

Libraries must integrate teaching, collaboration, social development programmes, and activities that encourage individualized approaches.

To ensure the efficient functioning of libraries, librarians should engage in training courses, familiarize themselves with various technological programmes, develop management methods, acquire new skills, and work to improve library services.

ԱՐՑԱԽԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԸ

Բանալի բառեր՝ Պատմական Հայաստան, Արցախ, թանգարան, տեղեկատվական մշակույթ, մշակութային ժառանգություն, հոգևոր արժեք, ազատագրական պայքար:

Keywords: Historical Armenia, Artsakh, museum, informational culture, cultural heritage, spiritual value, liberation struggle.

Պատմական Հայաստանի նահանգների կամ աշխարհների շարքում Արցախը մեկն է նրանցից, որ շատ են արժանացել հին ու նոր, օտար ու հայրենի հեղինակների ուշադրությանը: Հիշենք թեկուզ հենց այն անունները, որոնցով այդ նահանգը կոչվել է տարբեր պատմաշրջաններում, իր քաղաքական կյանքի տարբեր հանգամանքներում: «Աղախ», «Արձախ», «Ծաղեից աշխարհ», «Ծաղեք»՝ սեպագրերի մեջ ու միջնադարյան հեղինակների երկերում, «Խաչեն», «Արեւելք», «Աղուանից կողմանք», նույնիսկ «Աղուանք»՝ հաջորդ շրջանի պատմագրության մեջ եւ, վերջապես, «Ղարաբաղ»՝ սկսած XIV դ. վերջից [Ուլուբաբյան, 1994, 7]:

Տեղեկատվական մշակույթի և սոցիալական հաղորդակցությունների զարգացման համակարգերում առանձնահատուկ նշանակություն ունեն գրադարաններն ու թանգարանները: Թեև թանգարանների և թանգարանային գործի մասին ուսումնասիրությունները սկսվել են անցյալ դարերում, սակայն թանգարանագիտությունը, որպես ուսումնագիտական առարկա, Հայաստանում լուրջ հիմքերի վրա դրվեց XXI դարի սկզբից՝ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի «Գրականագիտության և մատենագիտության» ամբիոնում՝ «Թանգարանային գործ և հուշարձանների պահպանություն» բաժնի ստեղծումով (2001 թ.):

Թանգարանագիտական գրականության մեջ կամ ուսումնական հաստատություններում թանգարանի մասին տրվել են բավական շատ սահմանումներ, որոնք կարելի է համարել դրական երևույթ՝ կապված տվյալ գիտության և պրակտիկայի զարգացումների հետ: Այսպես՝ թանգարանների խորհրդի միջազգային կանոնադրության մեջ թանգարանը ներկայացված է ոչ առևտրային հիմնարկություն, որը ծառայում է ժողովրդին՝ հոգևոր և նյութական արժեքները հավաքելու, պահպանելու, ուսումնասիրելու և հասարակությանը ներկայացնելու համար: Մեկ այլ բնորոշում. ըստ Ն.Ֆ. Ֆեդոտովի «Թանգարանը ոչ միայն իրերի հավաքածու է, այլև անձերի (դեմքերի) եկեղեցի (տաճար)»: Կարելի է ավելի լայն առումով թանգարանը բնութագրել որպես սոցիալական հիշողության պահոց՝ ներառելով մարդկության պատմության ընթացքում ստեղծված մշակութային հարուստ ժառանգությունը [Սուքիասյան, 2021, 3, 8, 9, 14]:

Արցախի Հանրապետությունում կան տարբեր ուղղվածության բազմաթիվ թանգարաններ, այդպիսիներից են Տիգրանակերտի հնագիտական, Արցախի պետական (Ստեփանակերտում), Ասկերանի, Շուշիի, Մարտունիի, Մարտակերտի, Քաշաթաղի, Հաղարծնի՝ Արթուր Մկրտչյանի անվան, Քարվաճառի պատմաերկրագիտական, Զոհված ազատամարտիկների և Անհետ կորած ազատամարտիկների (երկուսն էլ՝ Ստեփանակերտում), Մարտունիի շրջանի Բերդաշեն գյուղի Մարտական փառքի թանգարանները, Հաղարծնի շրջանի Մեծ Թաղեր գյուղում՝ ԽՍՀՄ ավիացիայի մարշալ Արմենակ Խանփեդյանցի (Խուլյակով), Մարտունիի շրջանի Կոլխոզաշեն գյուղում՝ գեներալ, Խորհրդային Միության հերոս Միքայել Պարսեղովի, Ասկերանի շրջանի Ծաղկաշատ գյուղում՝ հայ ազգային ազատագրական շարժման գործիչ Նիկոլ Դումանի, Մարտունիի շրջանի Ննգի գյուղում՝ քաղաքական գործիչ Բոգդան Կունյանցի, Մարտակերտի շրջանի Կուսապատ գյուղում՝ ուսումնական և պետական գործիչ Ալեքսանդր Բեկզադյանի տուն-թանգարանները և այլն [Վիթիպեդիա: Արցախի հանրապետության թանգարանները]:

Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանը երկրամասի գիտական, մշակութային, ազգագրական կարևոր օջախներից է: Այն հիմնադրվել է 1938 թվականին: Թանգարանի ցուցասրահներում և ֆոնդերում պահվում են հայ ժողովրդի և նրա արցախյան հատվածի նյութական և հոգևոր մշակույթի թվով 35 հազար պատմական արժեքներ՝ սկսած

վաղնջական ժամանակներից մինչև մեր օրերը: Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանի ազգագրության բաժնում ցուցադրված են 19-րդ դարի և 20-րդ դարի սկզբին պատկանող գորգեր, մաֆրաշներ (անկողնապարկ), աղաման, ձիու չուլ, արցախցի կանանց ձեռքերով պատրաստած, գունային երանգների և զարդապատկերների բազմազանությամբ աչքի ընկնող ասեղնագործ իրեր: 1997 թ. թանգարանի որոշ ցուցանմուշներ, հատկապես բարձրարժեք ձեռագործ գորգերը, ցուցադրվել են Փարիզում, Մարսելում, Լիոնում: Այսպիսով, փաստերն ու մեկնաբանությունները վկայում են, որ 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբներին արցախահայ մշակույթը առաջընթաց քայլ է կատարում՝ իր մեջ ներառելով ժամանակաշրջանի առաջնային գաղափարները, հիմքում ունենալով ազգայինը: Թանգարանն իր մասնաճյուղերն ունեցել է Շուշիում, Մարտունիում, Բերդաշենում, Հաղորթում, Ասկերանում, Մարտակերտում և Բերձորում, որտեղ գործում էր նաև լավ կահավորված պատկերասրահ: Իրենցից մեծ հետաքրքրություն էին ներկայացնում Մեծ Թաղլարի օդային ուժերի մարշալ Արմենակ Խանփերյանցի (Մերգեյ Խուդյակով), Կոլխոզաշենի հրետանու գեներալ-գնդապետ Միքայել Պարսեղովի և Ծաղկաշատի Նիկոլ Դումանի տուն-թանգարանները [Բալայան, 2011, 219, 283]:

Մեկ այլ աշխատության մեջ Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանի մասին այսպիսի տվյալներ կան, որ այն միակ օջախն է, որտեղ ներկայացվում է Արցախի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև մեր մեր օրերը: Իր հիմնադրման պահից՝ 1939 թ. թանգարանը կարողացել է ոչ միայն գոյատևել, այլ նաև հավաքագրել ու պահպանել ազգի դիմագիծը ներկայացնող նյութական և հոգևոր արժեքներ: Հավաքածուն կազմում է 50.000 թանգարանային առարկա: Հիմնական ցուցադրությունը սկսվում է Արցախի բնաշխարհը պատկերող տեսարաններով, որին հաջորդում է հնագիտության բաժինը: Այստեղ ցուցադրված են քարեդարյան գործիքներ, բրոնզի դարաշրջանի իրեր, ուրարտական ժամանակների կավանդակներ, արծաթե ու պղնձե հին դրամներ և այլն: Գրիգոր Լուսավորիչն Արցախում հիմնարկել է Ամարասը, որի լուսանկարի ու քարտեզի ցուցադրությամբ սկսվում է թանգարանի միջնադարյան բաժինը: Ազգագրության բաժնում ցուցադրված է արցախցու նահապետական ընտանիքը, գորգագործական հին դագափ, 18-20-րդ դդ. արցախյան ձեռագործ աշխատանքներ: Նոր և նորագույն բաժինները պատմում են արցախահայության մղած ազգային ազատագրական պայքարը Ադրբեջանի դեմ՝ 1918-21 թթ., 1920 թ. Շուշիի ողբերգական դեպքերը և Լեռնային Ղարաբաղի բռնակցումը Խորհրդային Ադրբեջանին: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում արցախյան համազգային շարժման, Ղարաբաղյան ազգային ազատագրական պատերազմի մասին պատմող բաժինները:

Գրիգոր Գաբրիելյանցի անվան երկրաբանության պետական թանգարանը հիմնադրվել է 2014 թ., որի ստեղծման նախապատմությունը պրոֆեսոր Գրիգորի Գաբրիելյանցինն է: Նա թանգարան ստեղծելու նպատակով Արցախին է նվիրել հանքաքարերի, լեռնային ապարների և օրգանական բրածո մնացորդների իր անձնական հավաքածուն: Թանգարանը տեղակայված էր 18-րդ դարում կառուցված շինությունում, որը խորհրդային տարիներին ծառայել է իբրև դեղատուն (Կանաչ դեղատուն): Ենթադրվում է, որ շենքի հիմնադիրը Փանահ խանն է և այն ծառայել է իբրև գրադարան, մեկ այլ վարկածի համաձայն՝ որպես մահմեդական դպրոց: Թանգարանում պահվում էր աշխարհի 40 երկրներից (Կանադա, Չեխիա, ԱՄՆ, Բրազիլիա, Պերու, Մարոկկո, Չինաստան, Հնդկաստան և այլն) ու ՌԴ-ի 20 մարզերից հավաքագրված 381 թանգարանային առարկա: Հիմնական ցուցադրությունը ներառում է լյումինեսցենցային սրահը, որտեղ տեղադրված են երկարալիք ու կարճալիք ուլտրամանուշակագույն ճառագայթներ արձակող 2 սաքսավորումներ, որոնց օգնությամբ այցելուները կարող էին դիտել հանքաքարերի լուսարձակումը: Կերպարվեստի պետական թանգարանը բացվել է 2013 թ.՝ պրոֆեսոր Գրիգոր Գաբրիելյանցի նախաձեռնությամբ և օգնությամբ: Թանգարանի հավաքածուն կազմված էր բացառապես նվիրատվություններից: Թանգարանի շենքը կառուցվել է Շուշիի նախկին Իջևանատան հիմքի վրա՝ պահպանելով վերջինիս ճարտարապետական առանձնահատկությունները: Հավաքածուն ընդգրկում է ավելի քան 580 թանգարանային առարկա: Հիմնական ցուցադրության առանձնահատկությունները է ներկայացվող աշխատանքների լայն աշխարհագրությունը. Արցախ, Հայաստան, Վրաստան, ՌԴ, ԱՄՆ,

Ֆրանսիա, Եթովպիա, Ինդոնեզիա, Մադագասկար և այլն: Մեծ արժեք էին ներկայացնում հատկապես թանգարանին նվիրաբերած նշանավոր արվեստագետների աշխատանքները (Մ. Սարյան, Գառու, Է. Շահին, Ժանսեմ, Հ. Հակոբյան, Դ. Բուրյուկ, Ա. Սաֆոխին, Դ. Պլավինսկի և այլք):

Հաղորդի Արթուր Մկրտչյանի անվան հայրենագիտական թանգարանը հիմնադրվել է 1984 թ.: 1986-1991 թթ. թանգարանի տնօրենն էր, հետագայում՝ արդեն ԼՂ Գերագույն խորհրդի նախագահ Արթուր Մկրտչյանը: Թանգարանը նախ կոչվել է «Դիզակ», ապա Ա. Մկրտչյանի եղերական մահից տարիներ անց, վերանվանվել է Արթուր Մկրտչյանի անվան հայրենագիտական թանգարան: Հավաքածուն ընդգրկում է ավելի քան 7.670 թանգարանային առարկա: Հիմնական ցուցադրությունը ներկայացված է նախամուտքում և վեց սրահներում: Մուտքում տեղադրված է Հաղորդի շրջանի վարչատարածքային քարտեզ-մանրակերտը: Ցուցադրվում են Դիզակ աշխարհի պատմությունը: Առանձին վահանակներով ցուցադրված են Մարտական խաչի ասպետների և անհայտ կորած ազատամարտիկների լուսանկարները, ինչպես նաև՝ Արթուր Մկրտչյանի անցած ուղին:

Շուշի քաղաքի պատմության թանգարանը գործում է 1992 թ.՝ 19-րդ դարի կեսերին կառուցված առանձնատանը, որը խորհրդային տարիներին եղել է ծննդատուն, այնուհետև արևելյան գորգերի թանգարան: Հավաքածուն կազմում է ավելի քան 4.500 թանգարանային առարկա: Հիմնական ցուցադրությունը ներկայացնում է Շուշիի տարածաշրջանից գտնված հեյլենիստական ժամանակաշրջանի հարուստ հնագիտական առարկաներ, 19-րդ դ. կենցաղի առարկաներ և այլ փաստավավերագրեր, որոնք լուսաբանում են Շուշիի պատմությունը: Վերականգնված էր 19-րդ դ. Շուշեցի մեծահարուստ Թադեոս Թամիրյանի բնակարանի ներքին տեսքը: Առանձնահատուկ ներկայացված էր 1992 թ. մայիսի 8-ին Շուշիի ազատագրման ռազմական գործողությունը: Այստեղ տեղադրված էր մարտերի պատմությունը լուսային էֆեկտներով ուղեկցող՝ «Հարսանիք լեռներում» ռազմագործողության մանրակերտը:

Մարտունու պատմաեթնոգիտական թանգարանը հիմնադրվել է 1981 թ.: Թանգարանն իր հիմնադրման օրվանից տարիանվել է 5 անգամ (վերջինը՝ անդարձ): Հավաքածուն ընդգրկում է 2.116 թանգարանային առարկա՝ բնության, հնագիտական, միջնադարյան, նոր և նորագույն շրջանների, ազգագրական և այլ բնույթի նմուշներ: Հիմնական ցուցադրությունը բաղկացած է 2 սրահից, որտեղ տարածաշրջանի պատմությունը ներկայացված էր հնագիտական, ազգագրական, միջին դարերի և նորագույն շրջանի նմուշների միջոցով [Հայաստանի և Արցախի թանգարանները, 2016, 236-256]:

Մարտունու շրջանի ճարտարի «Սևակ Ղուկասյանի անվան մարզամշակութային պալատ» ՊՈԱԿ-ում գործում էր պատմաեթնոգիտական համայնքային գրադարան: Այն հիմնադրվել է 2001 թ. հունիսին՝ Արցախյան առաջին գոյապայքարից տարիներ անց: Թանգարանն իր հիմնադրման օրվանից տեղակայված էր մարզամշակութային պալատի շենքում, որը կառուցվել և շահագործման է հանձնվել 1962 թ. փետրվարին: Այն բոլոր ժամանակներում էլ ծառայել է որպես մշակութային տուն և հանդիսացել Երևանի Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի շենքի մանրակերտը: Համայնքի բնակիչների նվիրատվության շնորհիվ թանգարանն ուներ 400 ցուցանմուշ: Մեկ ընդարձակ սրահում ցուցադրված էր ճարտարի պատմությունը (նախնադարյան, բրոնզե դար, միջնադար, նախահեղափոխական տարիներ, խորհրդային կարգեր, Հայոց Մեծ եղեռն, Հայրենական Մեծ պատերազմ, Արցախյան պատերազմներ): Կենտրոնական հատվածում լեգենդար գորահրամանատար Ավոյի լուսանկարն էր, որի ներքո թշնամու գնդակից խոցված իր բաճկոնն էր՝ անվա (հողաթաթաղ, սուրբ արյան հետքերով), որին հաջորդում էր Արցախյան պատերազմների ժամանակ ճարտարի գոհված ու անհայտ կորած քաջորդիների լուսանկարները՝ անցած մարտական ուղիներով: Հանդիպակաց պատին՝ համայնքի սոցիալիստական աշխատանքի հինգ հերոսների լուսանկարներն էր (Ադամյան Մուրեն, Առստամյան Մադաթ, Ավանեսյան Ղուկաս, Բաղդասարյան Դանիել, Մարգարյան Թևոս): Թանգարանում ցուցադրված էր նաև ճարտարի ամենաերկարակյաց բնակչի՝ Ազիզյով տատիկի (104 տարեկան) լուսանկարը և հանդերձանքը՝ խլեղը (ըստ իմ հիշողությունների):

Թանգարանը ստեղծվել է 2004 թ. Նիկոլ Դումանի մահվան 90-ամյակի առթիվ: «Ազգային ժառանգություն» հիմնադրամը՝ ամերիկահայ բարերար Ժամեն Բոնիաթյանի աջակցությամբ, հայտնաբերել է Նիկոլ Դումանի տունը և վերածել թանգարանի: Հավաքածուն ընդգրկում է ավելի քան 300 թանգարանային առարկա: Հիմնական ցուցադրությունը բաղկացած է չորս բաժիններից: Սրահներից մեկը նվիրված է Նիկոլ Դումանի կյանքին ու գործունեությանը: Այստեղ ցուցադրվում են քարտեզներ, հայերի ազատագրական շարժումը լուսաբանող գծագրեր, լուսանկարներ, զենքեր, անձնական իրեր: Առանձին ցուցափեղկում ներկայացված է 1905-1906 թթ. Բաքվում հայ-թաթարական ընդհարումների վերաբերյալ փաստաթղթեր ու առարկաներ: Կենցաղային սրահում ցուցադրվող առարկաները՝ խնոցի, իլիկ, խեցեղեն, աշխատանքային գործիքներ և այլն, ներկայացնում են 19-րդ դ. Ղարաբաղյան կենցաղը: Պահպանված է տան ներքին կահավորանքը: Ուշագրավ է, հատկապես, ավանդական թոնրատունը, որտեղ կազմակերպվում են հաց թխելու արարողություններ:

Տիգրանակերտի հնագիտական թանգարանը գործում էր Տիգրան Մեծի հիմնադրած Տիգրանակերտ քաղաքի տարածքում (մ.թ.ա. I դ.) և տեղակայված էր 18-րդ դ. թվագրվող ամրոցում: Ամրոցը 19-րդ դ. ծառայել է որպես ռուսական զինանոց: ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արցախի արշավախումբը 2005 թ. հայտնաբերել է Հայոց արքա Տրգրան Բ Մեծի (Ք.ա. 95-55 թթ.) Արցախում հիմնած Տիգրանակերտ քաղաքը: Այն Տիգրանի անունը կրող միակ բնակավայրն էր, որի տեղը ճշգրտորեն պարզված էր, և որը ենթարկվում էր հնագիտական հետազոտության: Թանգարանի հավաքածուն ընդգրկում է շուրջ 600 թանգարանային առարկա: Հիմնական ցուցադրությունը ներկայացնում է Տիգրանակերտի պեղումները:

Շուշիի արվեստի կենտրոն. Գորգի թանգարանի շենքը եղել է 1827 թ. շվեյցարացի ավետարանական քարոզիչների Շուշիում հիմնադրած՝ Հայաստանում երկրորդ տպարանը, որի գործունեությունն ընդհատվել է 1920 թ., երբ Շուշին փոխանցվել է Ադրբեջանին: Շենքը հրդեհվել է, գույքը՝ թալանվել: 2007 թ. Արցախի կառավարության որոշմամբ՝ շենքը տրվել է արմատներով արցախցի, մոսկվաբնակ Սարգսյանների ընտանիքին՝ վերականգնելու նպատակով: 2013 թ. տեղի է ունեցել պաշտոնական բացումը՝ որպես Շուշիի արվեստի կենտրոն: 2013 թ. Արվեստի կենտրոնի բացումից հետո, Շուշիի գորգի թանգարանի մի մասը տեղափոխվել է այստեղ: Այն գործում էր որպես առանձին թանգարան՝ ներառելով 17-20-րդ դդ. 50-ից ավելի գորգ և 300-ից ավելի հնագիտական առարկա: Հիմնական ցուցադրությունը ներկայացնում է ավելի քան 80 գորգ, ինչպես նաև ժամանակագրական սկզբունքով հերկայացնում էր հնագիտական առարկաներ՝ խեցեղեն, դրամներ, զարդեր, բրոնզե դարի այլ իրեր [Հայաստանի և Արցախի թանգարանները, 2016, 236-256]:

SUMMARY

The informational role of museums in the development of education and social communications is of great significance. Based on the results of scientific research, as well as my own studies, I have been able to provide an overview of the museums of Artsakh. However, this information, while systematic, remains incomplete. A comprehensive account is unattainable, as cultural genocide and acts of vandalism were committed in Artsakh on three occasions between the 1990s and 2023, the evidence of which continues to be examined.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բալայան Վ., Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը / Խմբ. Գ.Մ. Գեղամյան, Երկրորդ լրամշակված հրատ, Երևան, «Զանգակ-97», 2011, 336 էջ + 32 էջ ներդիր:
2. Հայաստանի և Արցախի թանգարանները: Տեղեկագիրք, Երևան, Առեղիտ, 2016, 258 էջ:
3. Ուլուբաբյան Բ., Արցախի պատմությունը, Երևան, Մ. Վարանդեան, 1994, 378 էջ:
4. Սուքիասյան Գ., Թանգարանագիտության հիմնահարցեր, Երևան, Հեղինակային հրատ., 2021, 64 էջ:
5. Վիքիպեդիա: Արցախի հանրապետության թանգարանները, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <http://surli.li/ffpscvcv>, 16.12.2024:

ԻՐԱՆԻ ՀԱՅ ՄԱՍՈՒԼԸ

Բանալի բառեր՝ Հայ-իրանական առնչություններ, Իրանի հայ համայնք, Իրանի հայ մամուլ, սփյուռքահայ տպագիր-մշակութային ժառանգություն, իրանահայ տպագրություն, հայագիտական-իրանագիտական հանդես:

Keywords: Armenian-Iranian relations, the Armenian community of Iran, the Armenian press of Iran, printed-cultural heritage of Armenian Diaspora, Iranian-Armenian printing, the Armenian-Iranian journal.

Իրանի հայ համայնքը

Հայ-իրանական առնչություններն սկզբնավորվել են դեռևս մ.թ.ա. առաջին հազարամյակում և ներառել ռազմաքաղաքական, տնտեսական և մշակութային ոլորտներ: Իրանում հայերի ներկայության մասին առաջին հավաստի վկայությունները վերաբերում են այստեղ զինվորական ծառայություն անցած հայկական զորամասերին և թվագրվում մ.թ.ա. VII-VI դդ.: Վկայություններ կան նաև հայ արհեստավորների և առևտրականների փոքր գաղութների առկայության մասին: Ժամանակակից Իրանի հյուսիս-արևմտյան հատվածը կազմում են պատմական Հայաստանի Պարսկահայք աշխարհը: Ներկայում Իրանում բնակվում է շուրջ 80 հզ. հայ: Համայնքը խիստ շերտավորված է: Կան մեծ թվով արհեստավորներ, արդյունաբերության տարբեր ճյուղերում աշխատող բանվորներ, զգալի թվով գյուղացիներ, մտավորականներ: Իրանահայ համայնքի ներքին խնդիրների կարգավորումը հիմնված է կրոնակեղեցական ինքնավարության վրա: Մինչև XX դ. կեսը Իրանում եղել է երկու թեմ՝ Ատրպատականի և Իրանա-Հնդկաստանի (նախկինում՝ Նոր Ջուղայի) [Հայ սփյուռք հանրագիտարան, 2003, 236]:

Իրանի հայկական տպագրությունը սկզբնավորվել է 1638 թ.՝ Խաչատուր Կեսարացու և մի խումբ հայ գործիչների ջանքերով Նոր Ջուղայում հայկական տպարանի հիմնադրումով, որն առաջինն էր ոչ միայն Իրանում, այլև Միջին Արևելքում: Իրանահայ տպագրության 2-րդ կենտրոնը Թավրիզն է [Հայ գրատպություն և գրքարվեստ: Հանրագիտարան, 2015, 445]:

Իրանում առաջին հայերեն պարբերականը՝ «Շավիղը», 1894 թ. Թեհրանում հիմնադրել և առաջին խմբագիրն է եղել Հովհաննես խան Մասեհյանը: Մինչև օրս հրատարակվել է ավելի քան 80 անուն հայերեն պարբերական: Ներկայումս լույս են տեսնում «Ալիք», «Լույս», «Արաքս», «Ապագա», «Պայման» պարբերականները [Հայ սփյուռք հանրագիտարան, 2003, 263]:

«Ալիք», ՀՀԴ կուսակցության հասարակական-քաղաքական, գրական-գեղարվեստական պաշտոնաթերթ: Լույս է տեսնում 1931 թ.-ից, Թեհրանում՝ նախ՝ որպես շաբաթաթերթ, ապա՝ կիսաշաբաթաթերթ, 1935 թ. հունվարից՝ երկօրյա, այնուհետև՝ երեկոյան օրաթերթ: Թերթի արտոնատերերն են եղել Ա. Միքայելյանը, Ա. Բաբայանը, Ռ. Ստեփանյանը, 1989 թ.-ից՝ Ս. Աճեմյանը, խմբագիրներ՝ Հ. Հովհաննիսյանը, Տ. Պողոսյանը, Բ. Մինասյանը, Ն. Պահլավունին, Հ. Խալաթյանը, Է. Երիցյանը, Ն. Էլսայանը (1985 թ.-ից): Անդրադառնում է համաիրանական լուրերին, իրանահայ կյանքին, սփյուռքի և Հայաստանի իրադարձություններին, ՀՀԴ գաղափարախոսության հարցերին:

«Ալիք պատանեկան», պատկերազարդ երկշաբաթաթերթ, Թեհրանի հայ պատանեկան միության պաշտոնաթերթ: Հրատարակվել է 1969-1978 թթ., Թեհրանում՝ «Ալիք» օրաթերթի «Պատանեկան» էջի փոխարեն: Արտոնատեր՝ Ռ. Ստեփանյան, խմբագիր՝ Ժ. Ղարիբյան, հետագայում՝ խմբագրական կոլեգիա: Լույս է տեսել 187 համար⁴²:

⁴² Տե՛ս Հայաստանի ազգային գրադարանի «Հայ մամուլ» շտեմարան, URL: <https://is.gd/cmUMIV>, 20.12.2024.

«Այգ», հանրամատչելի շաբաթաթերթ, ապա՝ հասարակական-քաղաքական եռօրյա, այնուհետև՝ երկօրյա թերթ: Հրատարակվել է 1914-22 թթ., Թավրիզում: Խմբագիրներ՝ Մ. Սահակյան, Գ. Հակոբյան⁴³:

«Ապագա», հայագիտական-իրանագիտական եռամսյա հանդես, առաջին և երկրորդ միացյալ համարները լույս են տեսել 2000-ի ամռանը, Թեհրանում՝ հայերեն, պարսկերեն և անգլերեն: Արտոնատեր և գլխավոր խմբագիր՝ Էդիկ Բաղդասարյան ⁴⁴:

«Արարատ», ամսագիր: Հայ մշակութային «Արարատ» միության հրատարակություն: Լույս է տեսել 1959-60 թթ., Թեհրանում: Խմբագիր՝ Մ. Սազիկյան: Հետագայում՝ 1979-1980 թթ., Թեհրանում շարունակել է հրատարակվել որպես Հայ մարզական «Արարատ» կազմակերպության նույնանուն տեղեկատու ամսագիր⁴⁵:

«Արաքս», գրական, մշակութային, հասարակական ամսագիր: Առաջին երկլեզվյա (հայերեն-պարսկերեն) ամսագիրը: Լույս է տեսնում 1987 թ.-ից, Թեհրանում: Արտոնատերեր՝ Հ. Գրիգորյան և Ա. Եսայան: Խմբագիր՝ Մովսես Քեշիշյան: Թերթի առանցքային խնդիրը Հայկական հարցն է: Անդրադառնում է իրանական, իրանահայ կյանքին, Հայաստանում և Արցախում տեղի ունեցող իրադարձություններին: Յուրաքանչյուր համարում ավելի քան 10 էջ հատկացվում է պարսկերեն նյութերի հրատարակմանը: Թերթն ունեցել է մանկապատանեկան, մարզական, առողջապահական հավելվածներ: Պարսիկ ընթերցողին ծանոթացնում է Հայկական հարցին ու հայ ժողովրդի պատմությանը: Թերթի գլխավոր հոդվածները քաղաքական, հասարակական վերլուծական բովանդակություն ունեն⁴⁶:

«Արևելք», հասարակական-քաղաքական, գրական շաբաթաթերթ: Լույս է տեսել 1943-46 թթ., 1945 թ.-ից՝ եռօրյա, Թավրիզում: Հրատարակվել է «Հակաֆաշիստական թերթիկ» (1943-44), «Հակաֆաշիստական թերթ» (1944), «Հակաֆաշիստ» (1944-45) անուններով: Խմբագիր՝ Դ. Գևորգյան: Լուսաբանել է Հայրենական պատերազմի (1941-45) ընթացքը, տպագրել հաղորդագրություններ և ակնարկներ հայ ռազմիկների քաջագործությունների մասին, ինչպես նաև բանաստեղծություններ, պատմվածքներ, Հայաստանի տնտեսական, գիտական ու մշակութային կյանքը պատկերող նյութեր⁴⁷:

«Արմենուխի», գրական-մշակութային և պատմագիտական ամսօրյա հանդես: Հրատարակվել է 1949-1955 թթ., Թեհրանում: Արտոնատեր՝ Ա. Տեր-Օհանյան: Խմբագրական մարմին՝ Ա. Անտոնյան (Արմանտ), Ա. Մամյան, Ս. Խաչիկյան: Տպագրել է գրական, պատմական, գիտաառողջապահական, արվեստաբանական հոդվածներ, նաև հայ և համաշխարհային գրականության դասականների, ինչպես նաև իրանցի և իրանահայ սկսնակ գրողների գործեր: Պարբերաբար տեղեկություններ է հաղորդել իրանահայ կրթական և մշակութային կյանքի մասին⁴⁸:

«Արուսյակ», հասարակական-քաղաքական, գրական, տնտեսական և իրավագիտական անկախ թերթ, երկօրյա, ապա՝ օրաթերթ: Հրատարակվել է 1935-36 թթ. և 1942 թ., Թեհրանում: Արտոնատեր-խմբագիր՝ Ա. Նազարյան⁴⁹:

«Արփի», գրական, գիտական, հասարակական ամսագիր: Հրատարակվել է 1949-56 թթ., Թեհրանում: Հրատարակիչ-խմբագիր՝ Հ. Թադևոսյան: 1950-53 թթ. ունեցել է մանկական «Արփի» հավելվածը: Տպագրել է գրական-գեղարվեստական, արվեստաբանական նյութեր, թարգմանություններ եվրոպական և հատկապես ռուս գրականությունից, մեծ տեղ է հատկացրել Հայաստանի գրողների ստեղծագործություններին: Անդրադարձել է նաև հայության կյանքի

⁴³ Տե՛ս Հայաստանի ազգային գրադարանի «Հայ մամուլ» շտեմարան, URL: <https://is.gd/lieMPE>, 20.12.2024.

⁴⁴ Տե՛ս Հայաստանի ազգային գրադարանի «Հայ մամուլ» շտեմարան, URL: <https://is.gd/d5cvOr>, 20.12.2024.

⁴⁵ Տե՛ս Հայաստանի ազգային գրադարանի «Հայ մամուլ» շտեմարան, URL: <https://is.gd/aOTCZpm>, 20.12.2024.

⁴⁶ Տե՛ս Հայաստանի ազգային գրադարանի «Հայ մամուլ» շտեմարան, URL: <https://is.gd/6YmtiD>, 20.12.2024.

⁴⁷ Տե՛ս Հայաստանի ազգային գրադարանի «Հայ մամուլ» շտեմարան, URL: <https://is.gd/w1qrcH>, 20.12.2024.

⁴⁸ Տե՛ս Հայաստանի ազգային գրադարանի «Հայ մամուլ» շտեմարան, URL: <https://is.gd/kIVX4O>, 20.12.2024.

⁴⁹ Տե՛ս Հայաստանի ազգային գրադարանի «Հայ մամուլ» շտեմարան, URL: <https://surl.li/egmwbx>, 20.12.2024.

իրադարձություններին և միջազգային քաղաքական նորություններին: Մանկական «Արփի» հավելվածում տպագրվել են բանաստեղծություններ, հեքիաթներ, մանկական խաղեր⁵⁰:

«**Բոբոխ**», հասարակական երգիծազավեշտական երկշաբաթաթերթ, ապա՝ շաբաթաթերթ: Հրատարակվել է 1920-33 թթ., Թեհրանում: Արտոնատեր՝ Ա. Աղասյան, խմբագիր՝ Հ. Գարազա: 1933 թ. ունեցել է «Մանկական բոբոխ» էջը: 1930 թ.-ից լույս է տեսել որպես «Վերածնունդ» հասարակական-քաղաքական և գրական լրագրի հավելված: Խարազանել է հայ հասարակական կյանքի սովերոտ կողմերը, պատկերել ժամանակի իրանահայ կյանքը, արտացոլել հասարակական հոսանքների ձգտումներն ու տրամադրությունները⁵¹:

«**Գաղափար**», հասարակական-քաղաքական, գրական եռօրյա թերթ: Լույս է տեսել 1925-27 թթ., Թեհրանում: Արտոնատեր՝ Ա. Բեգյան, խմբագիր՝ Ա. Ղազարյան: Ձգտել է սփյուռքը կապել մայր հայրենիքին, ջատագովել է հայիավաքման գաղափարը՝ աջակցելով Խորհրդային Հայաստանի կառավարության միջացառումներին: Մեծ տեղ է հատկացրել Հայաստանի տնտեսական ու մշակութային կյանքին: Տպագրել է գիտագրական և գեղարվեստական նյութեր, թարգմանություններ: Պարբերականին կից 1926-27 թթ. լույս է տեսել «Նոր գաղափար» եռամսյա հավելվածը⁵²:

«**Դեպի երկիր**», ամսագիր: ՀՀԴ «Ռուբեն» երիտասարդական կազմակերպության պաշտոնաթերթ: Հրատարակվել է 1980-85 թթ., Նոր Զուլայում⁵³:

«**Զանգ**», հասարակական-քաղաքական, տնտեսական և գրական շաբաթաթերթ: Հնչակյան կուսակցության հրատարակություն: Լույս է տեսել 1910-22 թթ., Թավրիզում: Արտոնատեր՝ Ա. Պատմագրյան, հիմնադիր-խմբագիր՝ Ա. Տեր-Վարդանյան, ապա՝ Վ. Մարայան⁵⁴:

«**Լույս**», մշակութային և հասարակական երկշաբաթաթերթ (հայերեն և պարսկերեն բաժիններով): Լույս է տեսնում 2000 թվականի մարտից, Թեհրանում: Անդրադառնում է իրանահայ գաղութի կյանքի հրատապ հարցերին, Հայաստանի, Արցախի և սփյուռքի իրադարձություններին: Արտոնատերն ու գլխավոր խմբագիրն է Էդիկ Բաղդասարյանը⁵⁵:

«**Լուսաբեր**», մանկապատանեկան, գրական-գեղարվեստական, մանկավարժական պատկերազարդ ամսագիր: Լույս է տեսել 1949-71 թթ., Թեհրանում: Արտոնատեր-խմբագիր՝ Ա. Մուրադխանյան, հետագայում խմբագրել է Ա. Գառնեն (Ա. Տեր-Բաղդասարյան): Տպագրել է հայ և օտար դասականների ստեղծագործություններ, արձակ և չափածո գործեր, պիեսներ, երգեր: Ներկայացրել է գրականության և արվեստի նշանավոր գործիչների՝ Կոմիտաս, Պ. Աղամյան, Ա. Բսահակյան, Ա. Զորյան և ուրիշների կյանքն ու գործունեությունը, ծանոթացրել Հայաստանի պատմական հուշարձաններին, երեխաներին ուսուցանել վարվելակերպի կանոններ⁵⁶:

«**Օիածան**», գրական, մշակութային և հասարակական ամսագիր: Իրանահայ ազգային և մշակութային միության պաշտոնաթերթ: Հրատարակվել է 1982-88 թթ., Թեհրանում: Արտոնատեր՝ Կ. Օհանջանյան: Անդրադարձել է երկրի քաղաքական կարևորագույն իրադարձություններին, ներկայացրել իրանահայ ազգային և մշակութային կյանքը, արտատպություններ կատարել հայկական մամուլից⁵⁷:

«**Հանդես**», գրական-գեղարվեստական եռամսյա պարբերական: Լույս է տեսնում 2001 թ. դեկտեմբերից, Թեհրանում: Արտոնատեր և խմբագիր՝ Վարուժ Սուրենյան:

«**Հեղափոխության ճամփով**», ամսագիր, ՀՀԴ «Ռոստոմ» երիտասարդական միության պաշտոնաթերթ: Հրատարակվել է 1979-82 թթ.: Ունեցել է պարսկերեն էջեր: Փորձել է ՀՀԴ

⁵⁰ Տե՛ս Հայաստանի ազգային գրադարանի «Հայ մամուլ» շտեմարան, URL: <https://is.gd/rU00bK>, 20.12.2024.

⁵¹ Տե՛ս Հայաստանի ազգային գրադարանի «Հայ մամուլ» շտեմարան, URL: <https://is.gd/ZwAH0j>, 20.12.2024.

⁵² Տե՛ս Հայաստանի ազգային գրադարանի «Հայ մամուլ» շտեմարան, URL: <https://is.gd/r45HwF>, 20.12.2024.

⁵³ Տե՛ս Հայաստանի ազգային գրադարանի «Հայ մամուլ» շտեմարան, URL: <https://is.gd/wDU6jJ>, 20.12.2024.

⁵⁴ Տե՛ս Հայաստանի ազգային գրադարանի «Հայ մամուլ» շտեմարան, URL: <https://surl.li/ygvizx>, 20.12.2024.

⁵⁵ Տե՛ս Հայաստանի ազգային գրադարանի «Հայ մամուլ» շտեմարան, URL: <https://surl.li/lwskom>, 20.12.2024.

⁵⁶ Տե՛ս Հայաստանի ազգային գրադարանի «Հայ մամուլ» շտեմարան, URL: <https://is.gd/J80CIY>, 20.12.2024.

⁵⁷ Տե՛ս Հայաստանի ազգային գրադարանի «Հայ մամուլ» շտեմարան, URL: (<https://is.gd/cGwFo6>), 20.12.2024.

գաղափարախոսությունը մատուցել երիտասարդությանը նորացված եղանակով: Արժարձել է այսպես կոչված «ընկերային անարդարության» հարցեր⁵⁸:

«**Հուր**», գրական, գիտական և հասարակական ամսագիր: Լույս է տեսել 1971-76 թթ., Թեհրանում՝ հայերեն և պարսկերեն: Խմբագիր՝ Գ. Հովակիմյան: Տպագրել է հայ և պարսիկ ժողովուրդների պատմական կապերն ու փոխհարաբերությունները լուսաբանող հոդվածներ, ուսումնասիրություններ, բանասիրական գործեր: Ներկայացրել է իրանահայ մշակութային կյանքը, պարսիկ ընթերցողին ծանոթացրել դասական և ժամանակակից հայ գրողների ստեղծագործություններին: Ամսագրում տեղ են գտել նաև գիտական, մատենագիտական, մանկավարժական ուսումնասիրություններ⁵⁹:

«**Միտք**», հասարակական-քաղաքական, գրական շաբաթաթերթ: Հրատարակվել է 1912-17 թթ., Թավրիզում: Տնօրեն՝ Մ. Բաղդասարյան, խմբագիր-հրատարակիչ՝ Ա. Տեր-Վարդանյան: Անդրադարձել է իրանահայ գաղութի կյանքին, Հայաստանի և հայ ժողովրդի պատմական ճակատագրին, տպագրել իրանահայ գրողների ստեղծագործությունները, գրախոսականներ, մշակութային լուրեր⁶⁰:

«**Նոր աղբյուր**», մանկապատանեկան ամսագիր: Հրատարակվել է ընդհատումներով՝ 1942-48 թթ., Թեհրանում: Խմբագիր՝ Ա. Տեր-Օհանյան: Մեծ ուշադրություն է դարձրել իրանահայ երիտասարդության կրթության, բարոյական և գեղագիտական դաստիարակության հարցերին: Տպագրել է իրանահայ գրողների և համաշխարհային գրականության դասականների գործեր, բնագիտությանը, արվեստին ու պատմությանը նվիրված հոդվածներ⁶¹:

«**Նոր էջ**», գրական ժողովածու: Լույս է տեսել 1935-43 թթ., 1958-72 թթ., Թեհրանում՝ իրանահայ երիտասարդ ստեղծագործողների նախաձեռնությամբ: Խմբագիրներ՝ Զ. Միրզայան, Գ. Խանենց: Տպագրել է իրանահայ արձակագիրների ու բանաստեղծների ստեղծագործություններ: Երկարատև ընդմիջումից հետո 1999 թ. Երևանում լույս է տեսել ժողովածուի 24-րդ համարը⁶²:

«**Նոր կյանք**», հասարակական-քաղաքական և գրական շաբաթաթերթ, հետագայում՝ եռօրյա: Հրատարակվել է 1922-27 թթ., Թեհրանում: Արտոնատեր՝ Մ. Խանբաբյան, ապա՝ Վ. Հովհաննիսյան, խմբագիր՝ Օ. Մխիթարյան⁶³:

«**Նոր Զուղայի լրաբեր**», ամսաթերթ: Նոր Զուղայի ազգային հոգաբարձության հրատարակություն: Լույս է տեսել 1904-08 թթ., Նոր Զուղայում: Խմբագիր՝ Ի. Վարդազարյան: Տպագրել է հոգաբարձության և առաջնորդարանի տեղեկագրերն ու հաշվետվությունները, տեղեկություններ ազգային, կրթական և բարեգործական հաստատությունների գործունեության վերաբերյալ: Ծանոթացրել է Պարսկաստանի հայ գաղթավայրերի և Հայաստանի կյանքին, տպագրել պարսկահայ գրողների ստեղծագործություններ, ռուս և եվրոպական գրականության նմուշներ⁶⁴:

«**Շավիղ**», գրական և քաղաքական շաբաթաթերթ: Իրանահայ առաջին պարբերականը: Հրատարակվել է 1894-97 թթ., Թեհրանում: Արտոնատեր ու հրատարակիչ (նաև անվանական խմբագիր)՝ Ա. Բեկնազարյան: Խմբագիրներ՝ Հովհաննես Մասեհյան, Վ. Փափագյան: Մեծ տեղ է հատկացրել իրանահայ աշխատավորության, հատկապես գյուղացիության սոցիալ-տնտեսական, իրավական և կենցաղային վիճակին, բարձրացրել լուսավորության հարցեր: Ունեցել է գրական հարուստ բաժին, ներկայացրել եվրոպական, ռուս և պարսիկ գրողների⁶⁵:

⁵⁸ Տե՛ս Հայաստանի ազգային գրադարանի «Հայ մամուլ» շտեմարան, URL: <https://is.gd/SkkHwX>, 20.12.2024.

⁵⁹ Տե՛ս Հայաստանի ազգային գրադարանի «Հայ մամուլ» շտեմարան, URL: <https://is.gd/22II4y>, 20.12.2024.

⁶⁰ Տե՛ս Հայաստանի ազգային գրադարանի «Հայ մամուլ» շտեմարան, URL: <https://surl.li/nbasxl>, 20.12.2024.

⁶¹ Տե՛ս Հայաստանի ազգային գրադարանի «Հայ մամուլ» շտեմարան, URL: <https://surl.li/gutjer>, 20.12.2024.

⁶² Տե՛ս Հայաստանի ազգային գրադարանի «Հայ մամուլ» շտեմարան, URL: <https://is.gd/eSZ6T9>, 20.12.2024.

⁶³ Տե՛ս Հայաստանի ազգային գրադարանի «Հայ մամուլ» շտեմարան, URL: <https://surl.li/usrpro>, 20.12.2024.

⁶⁴ Տե՛ս Հայաստանի ազգային գրադարանի «Հայ մամուլ» շտեմարան, URL: <https://is.gd/2FiXDD>, 20.12.2024.

⁶⁵ Տե՛ս Հայաստանի ազգային գրադարանի «Հայ մամուլ» շտեմարան, URL: <https://is.gd/rqYFSp>, 20.12.2024.

«Ջահակիր», հոգևոր, բարոյագիտական, առողջապահական և տեղեկատու պարբերական (ամսաթերթ): Լույս է տեսել 1963-90 թթ., Թեհրանում: Խմբագիր՝ Հ. Սալաքյան⁶⁶:

«Վերածնունդ», հասարակական-քաղաքական, գրական լրագիր: Լույս է տեսել 1930-53 թթ., Թեհրանում՝ տարբեր պարբերականությամբ (օրաթերթ, երկօրյա, եռօրյա): Խմբագիր-արտոնատեր՝ Հ. Գարազաշ: Լուսաբանել է իրանահայ համայնքի առօրյան, հանդես եկել հանուն նրա միասնության: Հայնորեն ներկայացրել է Հայաստանի տնտեսության, գիտության ու մշակույթի առաջընթացը, սփյուռքահայության գոյատևման նախապայման համարել սերտ կապը հայրենիքի հետ: Հայրենական պատերազմի տարիներին անդրադարձել է ռազմաճակատի իրադարձություններին, հայ ռազմիկների սխրանքներին: Հետպատերազմյան շրջանում սատարել է հայրենադարձությանը: Ունեցել է գրական բաժին, որտեղ հայ գրողների գործերից բացի ներկայացրել է պարսկական գրականությունը: Տպագրել է նաև գիտության ու մշակույթի տարբեր բնագավառներին նվիրված հոդվածներ: 1930-ական թթ. հրատարակել է նաև «Բորոխ» հավելվածը⁶⁷:

«Ցախավել», երգիծական պատկերազարդ երկշաբաթաթերթ: Լույս է տեսել 1943-58 թթ., Թեհրանում: Խմբագիր՝ Ե. Բազեն (Միրզոյան): 1943-44 թթ. հրատարակվել է որպես ժողովածու (1-8 համար): Խարազանել է իրանահայ կյանքի արատավոր կողմերը⁶⁸:

«Փյունիկ», գրական, հասարակական-քաղաքական շաբաթաթերթ: Լույս է տեսել 1979-83 թթ., Թեհրանում: Արտոնատեր՝ Ժ. Համբարչյան, խմբագիր՝ Հ. Հախվերդյան: Հանդես է եկել իրանական հեղափոխությանը սպառնացող ուժերի, միջազգային իմպերիալիզմի դավերի դեմ, ծանոթացրել ԽՍՀՄ կյանքին և միութենական հանրապետությունների իրավունքներին: «Կռունկ խաբրիկ մը չունիս» խորագրով պատմել է Հայաստանի առօրյայի մասին [Լույս տեղում, 2003, 263-267]⁶⁹:

SUMMARY

The article examines the Armenian press published by the Armenian diaspora in Iran. Due to various historical factors, Armenians have settled in different countries worldwide, forming diaspora communities. The Armenian community in Iran constitutes a significant part of this diaspora and is recognized as an important center for Armenian printing outside the homeland. According to relevant encyclopedic sources, over eighty Armenian periodicals are currently published in Iran. The Armenian press in Iran is regarded as an integral component of the printed heritage of the Armenian diaspora.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայ սփյուռք հանրագիտարան / Խմբ. հանձնաժողով՝ Հ. Այվազյան և ուրիշ., Երևան, Հայկական հանրագիտարան հրատ., 2003, 731 էջ:
2. Հայ գրատպություն և գրքարվեստ: Հանրագիտարան: ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Երևան, Հայկական հանրագիտարան հրատ., 2015, 1120 էջ:

⁶⁶ Տե՛ս Հայաստանի ազգային գրադարանի «Հայ մամուլ» շտեմարան, URL: <https://surl.li/lzapny>, 20.12.2024.

⁶⁷ Տե՛ս Հայաստանի ազգային գրադարանի «Հայ մամուլ» շտեմարան, URL: <https://is.gd/fxeSQg>, 20.12.2024.

⁶⁸ Տե՛ս Հայաստանի ազգային գրադարանի «Հայ մամուլ» շտեմարան, URL: <https://is.gd/rnVxW0>, 20.12.2024.

⁶⁹ Տե՛ս Հայաստանի ազգային գրադարանի «Հայ մամուլ» շտեմարան, URL: (<https://is.gd/k7BgLj>, 20.12.2024.

MARC 21 ՁԵՎԱԶՍԺ. ՈՉ ԳՐՔԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐ

Բանալի բառեր՝ Marc 21 ձևաչափ, գրացուցակ, ոչ գրքային հրատարակություններ, էլեկտրոնային շտեմարաններ, ինֆորմացիոն կրիչներ, մատենագիտական գրառումներ:

Key words: Marc 21 format, catalogue, non-book publications, electronic databases, computer storage media, bibliographic records.

Յուրաքանչյուր գրադարան իրականացնում է իրեն հատուկ գործառնություններ, իսկ գրադարանավարների առաջնահերթ խնդիրն է կազմակերպել իրենց գրադարանում առկա գրականության վերաբերյալ տեղեկատվության մատչելիություն և հասանելիություն՝ ընթերցողներին լավագույնս սպասարկելու նպատակով: Ուստի՝ անհրաժեշտ է սպասարկելի դարձնել գրադարանի գրքային և ոչ գրքային հավաքածուները:

Գաղտնիք չէ, որ ներկայում խոշոր գրադարաններում կիրառվող էլեկտրոնային գրացուցակների հիմքը հանդիսանում է MARC 21 ստանդարտը (MARC / Machine Readable Cataloguing = ՄԵԸՔ / Մեքենարնթեռնելի քարտագրում), որը հայտնի է ISO 2709 “Format for Bibliographic Information Interchange on Magnetic Tape” անվանումով [International Standard ISO 2709, 1981, 3]:

Այն օգտագործվում է մատենագիտական, հեղինակային, թեմատիկ և այլ տարաբնույթ տվյալների գրառման և դասակարգման համար: Կիրառվում է բազմաքանակ ֆոնդեր ունեցող գրադարաններում՝ համահավաք գրացուցակներ ու շտեմարաններ ստեղծելու նպատակով:

Տարաբնույթ էլեկտրոնային շտեմարաններում մուտքագրվում են գրադարաններ մուտք գործած գրքերը, պարբերական հրատարակությունները, ատենախոսությունները, սեղմագրերը, ոչ գրքային հրատարակությունները, այդ թվում CD, DVD և այլ ինֆորմացիոն կրիչները՝ անկախ լեզվական պատկանելությունից:

MARC ձևաչափով մուտքագրված գրառումը կազմված է 3 մասից՝ առաջատար, գրառման բառարան և տվյալների դաշտեր [American Archivist, 1986, vol. 49, no. I, 25]: Այն հնարավորություն է ընձեռում համակարգչում մատենագիտական տվյալներ մուտքագրելու՝ դարձնելով գրառումը մատչելի և փնտրելի օգտվողների տարբեր խմբերի համար:

Ձևաչափը կազմված է 0XX - 9XX դաշտերից և a-z ենթադաշտերից [MARC 21 Bibliographic, 2006]:

Յուրաքանչյուր դաշտ ունի իր նշանակությունը: Բոլոր այն երկրների գրադարանները, որոնք իրենց գրառումները կատարում են MARC ստանդարտներին համապատասխան՝ դաշտերի և ենթադաշտերի նշանակությունը նույնն են: Արդյունքում, ստեղծվում է միասնական շտեմարան, որը բաղկացած է համապատասխան նշանակության դաշտերից:

Ոչ գրքային հրատարակությունների մուտքագրումը խնդրահարույց է մի շարք գրադարաններում, քանի որ MARC 21 ձևաչափը պահանջում է մանրամասն տեղեկություն՝ նկարագրվող նյութի մասին: Գրքային հրատարակությունների դեպքում այդ խնդիրը գրեթե լուծված է, իսկ ոչ գրքային նյութերի մուտքագրման ժամանակ առաջանում են բազմաթիվ խնդիրներ:

Այսօր գրադարանային ֆոնդերը զարգացման մեկ այլ փուլում են, որն ուղեկցվում է էլեկտրոնային միջավայրի ակտիվ ազդեցությամբ:

Հայաստանի ազգային գրադարանը հայաստանյան գրադարանների հետ միասին 2006 թվականից ձևավորում է Հայաստանում ամենամեծ էլեկտրոնային համահավաք գրացուցակը, որտեղ արտացոլվում են հայերեն, ռուսերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն և աշխարհի այլ լեզուներով Հայաստանի գրադարաններում պահվող նյութերը:

Գրադարանային ֆոնդերում պահպանվում են հետևյալ ոչ գրքային հրատարակությունները՝ քարտեզներ, ատլասներ, պլակատներ, հրավիրատոմսեր, փոստային բացիկներ, օրացույցներ, ազդագրեր, բուկլետներ, լուսանկարներ, նկարներ, էջանիշներ, նոտաներ, կրծքանշաններ, պատվոգրեր, աֆիշներ, նամականիշներ, մետաղադրամներ, արձանիկներ, արդյունաբերական գրաֆիկա (պիտակներ, ներդիրներ), էլեկտրոնային կրիչներ (CD, DVD, ֆլեշ, միկրոֆիլմ, միկրոֆիշ, ձայներիզ, ձայնապնակ, տեսաերիզ՝ կասետային, ժապավենային նյութեր, ձկուն սկավառակներ (Floppy Disk)) և այլն:

Վերջիններիս մասին տեղեկատվությունը ընթերցող հասարակությանը հասանելի դարձնելու նպատակով դրանք ոչ միայն պետք է թվայնացվեն, այլ նաև մուտքագրվեն էլեկտրոնային շտեմարաններում: Մի շարք գրադարաններում, սակայն, ոչ գրքային հրատարակությունները մուտքագրելիս ոչ միշտ է, որ կատարվում են ըստ նյութի տեսակի համապատասխան դաշտերի և ենթադաշտերի ճիշտ ընտրություն, ինչի պատճառով նկարագրությունը դառնում է թերի կամ ոչ լիարժեք: ՀԱԳ-ում ներդրված փորձից ելնելով ցանկանում ենք նշել այն ամենակարևոր դաշտերն ու ենթադաշտերը, որոնց ճիշտ լրացնելը կլուծի մի շարք խնդիրներ:

MARC 21 ձևաչափում ամենակարևոր տեղեկատվությունը բոլոր ոչ գրքային հրատարակությունների համար տրվում են՝

- 000 դաշտում - Leader,
- 007 դաշտում - Physical Description Fixed Field - General Information,
- 008 դաշտում - Fixed Length Data Elements - General Information,
- Settings-ում՝ կարգավորումների ճիշտ ընտրություն,
- 942 դաշտի c ենթադաշտում նյութի տեսակի ճիշտ ընտրություն:

Այս դաշտերը լրացնելը բոլոր ոչ գրքային հրատարակությունների համար պարտադիր է: Յուրաքանչյուր ոչ գրքային հրատարակություն ունի իր առանձնահատկությունները և վերը նշված դաշտերից բացի լրացվում են նաև տվյալ նյութին բնորոշ այլ դաշտեր և ենթադաշտեր⁷⁰:

Ցանկացած անուն նոր մուտքագրելիս անհրաժեշտ է ճիշտ և գրագետ լրացնել յուրաքանչյուր դաշտը: Մասնավորապես առաջատար (000 - Leader) դաշտում ոչ ճիշտ ընտրված նյութի տեսակը կհանգեցնի այլ դաշտերում թերի կամ ոչ լիարժեք տվյալների մուտքագրման:

Առաջատար 000 (LDR): Հաստատուն երկարությամբ, չկրկնվող դաշտ է: Չունի ցուցիչներ (indicators): Համաձայն ISO 2709 ստանդարտի պահանջների՝ այս դաշտի երկարությունը պետք է հավասար լինի 24 նիշի: Պարունակում է տեղեկություն՝ մատենագիտական գրառման երկարության, տեսակի, մատենագիտական նկարագրության վերաբերյալ [NC Cardinal Support and Staff Education, MARC LDR and 008 Fixed Fields, 2023]:

(LDR 0-4) - Գրառման երկարությունն է, հաշվարկվում է համակարգչի կոդմիջ և լրացվում է ավտոմատ:

(LDR 5) - Այս դաշտի միջոցով տեղեկանում ենք տվյալ գրառման հետևյալ մանրամասներին.

- a – գրառման մեջ ավելացումներ են կատարվել,
- c – խմբագրված գրառում է,
- d – ջնջվել են տվյալներ,
- n – նոր գրառում է:

(LDR 6) – Բացահայտում է գրառման տեսակը: Սա անչափ կարևոր ենթադաշտ է: Գրառման տեսակն այստեղ ընտրելուց հետո, հարկավոր է ճիշտ ընտրել նաև Settings-ը /կարգավորումները/, 942 դաշտը և Item-ում նյութի տեսակը (վերջին երեքը պետք է միատեսակ լինեն):

Ստորև նշված աղյուսակում մանրամասն ներկայացված են, թե տվյալ ենթակետը ընտրելիս ինչ կարգավորումներ պետք է ընտրել՝ ըստ նյութի տեսակի:

⁷⁰ Տե՛ս Հայաստանի ազգային գրադարան, Հայաստանի գրադարանների համահավաք գրացուցակ: MARC 21, Երևան, 2024, 53-67

Աղյուսակի բացատրություն.

1. Աղյուսակի առաջին տողում նշված են առաջատար (LDR) 000 դաշտի 6-րդ ենթադաշտի ընտրման տարբերակները՝ ըստ MARC 21 ձևաչափով էլեկտրոնային գրացուցակների (Type of Record):
 2. Երկրորդ տողում նշված է, թե գրառվող նյութի ինչ տեսակի դեպքում կարելի է ընտրել այդ ենթադաշտը:
 3. Աղյուսակի երրորդ տողում նշվում է, թե նկարագրվող նյութը տպագիր է, թե ձեռագիր, երաժշտական նյութ է, թե ոչ երաժշտական, հավաքածու է, թե ոչ:
 4. Հաջորդ տողում պարզ նկարագրված է, թե տվյալ ենթադաշտը ընտրելիս ինչ տեսակի կարգավորումներ (Settings) կարելի է ընտրել:
 5. Հինգերորդ տողում բացատրություն է ներկայացված [Հայաստանի ազգային գրադարան, Հայաստանի գրադարանների համահավաք գրացուցակ: MARC 21, Երևան, 2024, 5-7]:
- Օրինակ՝
1. Եթե մուտքագրվում է ֆիլմ, տեսանյութ՝ DVD տարբերակի կամ ֆլեշի վրա, ապա 000 դաշտի 6-րդ ենթադաշտում պետք է ընտրել g (Projected Medium), Settings-ում, 942 դաշտի c ենթադաշտում և Item-ի դաշտում պետք է ընտրել Computer Files:
 2. Եթե մուտքագրվում է ֆիլմ, տեսանյութ՝ տեսաերիզի վրա (կասետային, ժապավենային նյութեր), ապա 000 դաշտի 6-րդ ենթադաշտում պետք է ընտրել g (Projected Medium), Settings-ում, 942 դաշտի c ենթադաշտում և Item-ի դաշտում պետք է ընտրել Video Records, քանի որ կասետային, ժապավենային կրիչները համակարգչային ֆայլեր չեն:

Աղ. 1

000 դաշտի 6-րդ ենթադաշտ				
Ենթակետեր	Գրառման տեսակը	Նյութի տեսակը	Settings /կարգավորումներ/	Ֆիզիկական նկարագիր
a /Language Material/	տեքստային նյութեր	տպագիր	1.Books, 2.Continuing Resources, 3.Journals, 4. Newspapers, 5.Rare Books, 6.Dissertation, Theses	
c /Notated Music/	նոտա	տպագիր	1.Music Scores	
d /Manuscript Notated Music/	նոտա	ձեռագիր	1.Music Scores	
e /Cartographic Material/	քարտեզային նյութեր	տպագիր	1.Maps	
f /Manuscript Cartographic Material/	քարտեզային նյութեր	ձեռագիր	1.Maps	
g /Projected Medium/	Ֆիլմեր, տեսանյութեր		1.Computer Files, 2. Video Records	1. DVD, ֆլեշ, 2. տեսաերիզ /կասետային,

				Ժապավենային նյութեր/
I /Nonmusical Sound Recording/	ձայնագրություններ	ոչ երաժշտական	1.Sound Records, 2.Computer Files	1.Ձայներիզ, ձայնապնակ /կասետային նյութեր/, 2.CD, ֆլեշ
j /Musical Sound Recording/	ձայնագրություններ	երաժշտական	1.Sound Records, 2.Computer Files	1.Ձայներիզ, ձայնապնակ, կասետային նյութեր 2. CD, DVD, ֆլեշ
k /Two dimensional non Projectable Graphic/	նկարներ, գրաֆիկական պատկերներ		1.Visual Materials /ոչ գրքային հրատ. /, 2.Computer Files 3.Posters, Afisha	1. Օրացույցներ՝ նկարի տեսքով, լուսանկարներ, նկարներ, գծապատկերներ, կոլաժներ, ֆոտոնեգատիվներ, բացիկներ, ուսումնական փորագրություններ, տեխնիկական գծագրեր 2. Համակարգչային ֆայլեր՝ նկարներ, համակարգչային գրաֆիկա, թվային պատկերներ, ֆլեշ քարտեր, համակարգչային ֆոտոմեխանիկական վերարտադրումներ 3. Պլակատներ, պաստառներ, աֆիշաներ՝ նկարի կամ գրաֆիկական պատկերի տեսքով:
m /Computer File/	համակարգչային ֆայլ		1.Computer Files	Էլեկտրոնային կրիչ՝ ձկուն սկավառակ /floppy disk/

o /kit/	տարբեր տեսակի միավորների թեմատիկ հավաքածու	հավաքածու	1.Mixed Materials, 2.Computer Files, 3.Maps, 4.Visual Materials /ոչ գրքային հրատ.	1. Իրեր՝ պայուսակով, փաթեթով, առարկաների հավաքածու, 2.Ֆիլմ, փաստաթղթեր, ձայնային նյութեր և այլն՝ բոլորը միասին նույն թեմայով, կամ թվայնացված ֆայլեր, 3. թեմատիկ քարտեզների հավաքածու, 4. Ոչ գրքային նյութերի հավաքածու / ուսումնական ծրագրի փաթեթ (գրքեր, աշխատանքային տետրեր, ձեռնարկներ, վարժություններ և այլն) կամ ուսումնական թեստային փաթեթներ (թեստեր, պատասխանների թերթիկներ, նշագրման ուղեցույցներ, նշանների թերթիկներ, բացատրական ձեռնարկներ) և այլն/
p /Mixed Materials/	խառը նյութեր՝ տարբեր տեսակի միավորներ	ոչ հավաքածու	1.Mixed Materials, 2.Visual Materials /ոչ գրքային հրատ./	1.Խառը նյութերի հավաքածու, 2.ոչ գրքային հրատ. հավաքածու
r /Three-Dimensional Artifact or Naturally	առարկաներ, 3D չնախագծված գրաֆիկա		1. Mixed Materials	Ներառում է տեխնաձին առարկաներ, ինչպիսիք են մոդելները,

Accurring Object/				դիորամաները, խաղերը, արձանիկները, մեդալները, շքանշանները, քանդակները և արվեստի այլ եռաչափ գործեր, ինչպես նաև էքսպոնատներ, մեքենաներ, հագուստ, խաղալիքներ և ասեղնագործություն: Նաև ներառում է բնական ծագման առարկաներ, ինչպիսիք են մանրադիտակային նմուշները (կամ դրանց պատկերները) և դիտման համար տեղադրված այլ նմուշներ:
t /Manuscript Language Material/	տեքստային նյութեր	ձեռագիր	1.Manuscripts	

(LDR 7) - Բացահայտում է մատենագիտական գրառումն ամբողջական է, թե առանձնատիպ է (քաղվածք),

- a - մենագրության մաս է,
- b - պարբերական հրատարակության մաս է,
- c - հավաքածու է,
- d - ենթամաս է,
- i - էլեկտրոնային պաշար է,
- m - մենագրություն է,
- s - պարբերական հրատարակություն է:

LDR դաշտի մյուս ենթադաշտերը ընտրվում են՝ ինչպես գրքային նկարագրության ժամանակ:

007 - Պարունակում է տեղեկություններ ընտրված գրառման տեսակի վերաբերյալ: Առավել հաճախ է օգտագործվում ոչ գրքային հրատարակությունների ժամանակ: Ընտրել նույն գրառման տեսակը, որն ընտրել էք 006-ի 6-րդ ենթադաշտում:

008 - Մուտքագրվող նյութի նկարագրության մասին ամփոփ տեղեկությո է պարունակում: 008 դաշտում նյութի տեսակն ավտոմատ է ընտրվում, եթե 000 դաշտում տեսակը ճիշտ է նշվել:

008 դաշտում նյութի տեսակները

BKS - Գրքեր (Books), CF - համակարգչային ֆայլեր (Computer Files), CR - շարունակվող հրատարակություններ (Continuing Resources), MP - քարտեզներ (Maps), MU - երաժշտական նյութեր (Music), MX - խառը նյութեր (Mixed Materials), VM - տեսողական նյութեր (Visual Materials):

008 դաշտի 00-17 և 35-39 նշումները նույնն են նյութի բոլոր տեսակների համար, սակայն 18-34 ենթադաշտերում՝ տարբեր են:

008 դաշտի 18-34 նշումների բացատրություն.

Համակարգչային ֆայլ

- 18-21 - Սահմանված չէ
- 22 - Նշել, որ թիրախային հատվածի համար է նախատեսված
- 23 - Նշել էլեկտրոնային հրատարակություն է, թե ոչ
- 24-25 - Սահմանված չէ
- 26 - Ընտրել նկարագրվող նյութի տեսակը՝ համակարգչային խաղ է, թե ձայնային նյութ, փաստաթուղթ է, թե ինտերակտիվ մուլտիմեդիա և այլն:
- 27 - Սահմանված չէ
- 28 - Կառավարական հրապարակման տեսակն ընտրել
- 29-34 - Սահմանված չէ

Քարտեզ

- 18-21 - /ավտոմատ է ընտրվում/
- 22-23 - Պրոյեկցիա
- 24 - Սահմանված չէ
- 25 - Նշել քարտեզագրական նյութի տեսակը
- 26-27 - Սահմանված չէ
- 28 - Կառավարական հրապարակման տեսակն ընտրել
- 29 - Նյութի տեսակը, որն ընտրվում է նաև Item-ում
- 30 - Սահմանված չէ
- 31 - Նշել բովանդակությունը, եթե առկա է
- 32 - Սահմանված չէ
- 33-34 - Նշել հատուկ ձևաչափի առանձնահատկությունները

Երաժշտական

- 18-19 - /ավտոմատ է ընտրվում/
- 20 - Երաժշտության ձևաչափ /ընտրել օր.՝ դաշնամուր է, թե ձայնային ստեղծագործություն է.../
- 21 - Երաժշտական ստեղծագործության մասերն ընտրել
- 22 - Որ թիրախային հատվածի համար է նախատեսված
- 23 - Նշել նյութի տեսակը, որն ընտրվում է նաև Item-ում
- 24-29 - Ուղեկցող գործը նշել, եթե առկա է
- 30-31 - Նշել գրական տեքստ է ձայնագրությունների համար, թե ոչ

Խառը նյութեր

- 18-22 - Սահմանված չէ
- 23 - Նյութի տեսակը, որն ընտրվում է նաև Item-ում
- 24-34 - Սահմանված չէ

Տեսողական նյութեր

- 18-20 - /ավտոմատ է ընտրվում/
- 21 - Սահմանված չէ
- 22 - Որ թիրախային հատվածի համար է նախատեսված
- 23-27 - Սահմանված չէ
- 28 - Կառավարական հրապարակման տեսակն ընտրել
- 29 - Ընտրել նյութի տեսակը, որն ընտրվում է նաև Item-ում
- 30-32 - Սահմանված չէ
- 33 - Նշել տեսողական նյութի տեսակը
- 34 - Տեխնիկան:

Settings-ում, 942 դաշտի c ենթադաշտում և Item Type-ում՝ կարգավորումների ընտրության տարբերակներն են.

գրքեր (Books), համակարգչային ֆայլեր (Computer Files), շարունակվող հրատարակություններ (Continuing Resources), ատենախոսություններ, թեզեր (Dissertation, Theses),

ամսագրեր (Journals), թերթեր (Newspapers), ձեռագրեր (Manuscripts), քարտեզներ (Maps), խառը նյութեր (Mixed Materials), երաժշտական նյութեր (Music scores), պաստառներ, ազդագրեր (Posters, Afisha), հնատիպ գրքեր (Rare books), ձայնային նյութեր (Sound Records), տեսանյութեր (Video Records), տեսողական նյութեր / ոչ գրքային հրատարակություններ (Visual Materials) [Library of Congress, Marc 21 format for bibliographic data, 1999]: Այս տարբերակների ընտրության հնարավորություն են տալիս MARC 21 ձևաչափով գրառվող էլեկտրոնային գրացուցակները:

Կարգավորումների ճիշտ ընտրությունը ներկայացված է աղյուսակ 1-ում: Հոդվածում ներկայացված են այն դաշտերը, որոնք ոչ գրքային հրատարակությունների համար միատեսակ են, մնացած դաշտերը նկարագրվում են ըստ տիտղոսաթերթի և նյութի տեսակի:

Համառոտ նկարագիր.

1XX խումբ: Հիմնական դաշտեր

Հեղինակային նկարագրման դաշտ է: Պարունակում է տվյալներ նյութը պատրաստող հեղինակների, պատասխանատու կազմակերպությունների և նրանց աջակցողների մասին:

2XX խումբ: Վերնագիր, վերնագրի տեսակներ, պատասխանատուներ, հրատարակչական տվյալներ

200-ական դաշտերն արտացոլում են տիտղոսաթերթը: Բոլոր դաշտերը նշել՝ ըստ տիտղոսաթերթի:

3XX խումբ: Ֆիզիկական նկարագրիչներ

4XX խումբ: Մատենաշար

5XX խումբ: Ծանոթագրություններ և նշումներ

6XX խումբ: Առարկայական խորագրերի խումբ

7XX խումբ: Պատասխանատուներ և լրացուցիչ փնտրելու հնարավորություն

Պատասխանատուներ, փոփոխված վերնագրերի մասին տեղեկություններ:

8XX խումբ: Մատենաշար, էլեկտրոնային հասանելիություն

9XX խումբ: Տեղային օգտագործման համար է նախատեսված:

Ոչ գրքային հրատարակությունների օրինակների և համառոտ նկարագրված ոչ ընդհանրական խմբերի և դաշտերի մասին առավել մանրամասն կարելի է ծանոթանալ Հայաստանի գրադարանների համահավաք գրացուցակ. MARC 21 ուղեցույցի միջոցով [Հայաստանի գրադարանների համահավաք գրացուցակ: MARC 21, 2024]:

SUMMARY

Thus, the article presents a comprehensive overview of information on the non-book publications of the National Library of Armenia (NLA), including their processing, availability, and the types of non-book materials preserved, as well as electronic resources, both computer and non-computer files. The most important and mandatory fields for non-book publications in the MARC format are also presented.

In conclusion, it can be observed that the entry of non-book publications in electronic format presents challenges for a number of libraries. However, article demonstrates the capabilities of the MARC format for non-book publications, detailing the relevant fields and record types.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. International Standard ISO 2709, Bern, International Organization for Standardization, 1981, 8 pp.
2. Library of Congress, Marc 21 format for bibliographic data, 1999 [Electronic Publication] URL: <https://www.loc.gov/marc/bibliographic/> 26.09.2024.
3. MARC 21 Bibliographic, 2006 [Electronic Publication] URL: <https://www.loc.gov/marc/bibliographic/bdintro.html>, 26.09.2024.
4. NC Cardinal Support and Staff Education, MARC LDR and 008 Fixed Fields, 2023 [Electronic Publication] URL: <https://nccardinalsupport.org/index.php?pg=kb.page&id=70>, 26.09.2024.
5. The American Archivist, Chicago, Ill., The Society of American Archivists, 1986, vol. 49, no. I, 95 pp.
6. Հայաստանի ազգային գրադարան, Հայաստանի գրադարանների համահավաք գրացուցակ: MARC 21, Երևան, 2024, 118 էջ [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://dspace.nla.am/items/514a961d-f7c1-4d59-8b03-9ff5ab02d9f3> 26.09.2024:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԲԱԼԱՍԱՆ

Հայաստանի ազգային գրադարանի Գրատպության թանգարան

ՀԱՅ ԳՐԱՏՊՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՀՈՉԱԿՈՒՄԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՄ (AEPM, IZI TRAVEL)

Բանալի բառեր՝ Գրատպության թանգարան, թանգարանների ռազմավարական նախաձեռնություններ, Եվրոպական գրատպության թանգարանների ասոցիացիա (AEPM), Google Arts and Culture, izi travel, տպագրական ժառանգության ցանց, պատմամշակութային ժառանգություն, հեռախոսային աուդիոգիդ:

Keywords: the Printing museum, strategic initiatives of museums, Association of European Printing Museums (AEPM), Google Arts and Culture, izi travel, print heritage network, historical and cultural heritage, handheld audio guide.

Գրքագիտության և հայ գրքի հանրահռչակման տեսանկյունից առանձնակի դերակատարում ունի Հայաստանի ազգային գրադարանի Գրատպության թանգարանը, որը ներկայացնում է հայ գրքի ավելի քան 510-ամյա պատմությունը:

Թանգարանների ռազմավարական նախաձեռնությունների մեջ է մտնում հայկական մշակութային ժառանգությունը միջազգային հարթակներում հանրահռչակելու հարցը: Գրատպության թանգարանի առաքելություններից մեկն էլ հայ գիրքն ու գրատպությունը միջազգային հարթակներում, մասնավորապես Google Arts and Culture [Google Arts and Culture: the Museum of Printing], Եվրոպական գրատպության թանգարանների ասոցիացիայի (AEPM) և izi travel-ի հարթակներում հանրահռչակելն է: Այս հարթակները հնարավորություն են ընձեռում հայ տպագիր ժառանգությունն ըստ արժանվույն ներկայացնել հանրությանը: Այս հոդվածում ներկայացնելու ենք Եվրոպական գրատպության թանգարանների ասոցիացիան (AEPM) և izi travel հարթակը:

AEPM-Ի ԾԱԳՈՒՄԸ

2018 թվականից Գրատպության թանգարանը դարձել է Եվրոպական գրատպության թանգարանների ասոցիացիայի անդամ:

Եվրոպական գրատպության թանգարանների ասոցիացիան (AEPM) հիմնադրվել է Գրենմահերում (Լյուքսեմբուրգ) 2003 թվականի փետրվարին՝ Եվրոպական գրատպության թանգարանների միջև համագործակցությունը խրախուսելու և տպագիր ժառանգությունը հանրահռչակելու նպատակով՝ որպես Եվրոպական մշակութային ժառանգության կարևոր մաս: Այն ի սկզբանե ստեղծել էր «Պատմական տպագրական հմտությունների պահպանում» ծրագրի շուրջ ձևավորված ոչ ֆորմալ խումբ, որի նպատակն էր հավաքել թանգարանային ոլորտի մասնագետներին՝ պահպանելու գրատպության ավանդական հմտությունները և տեխնիկան, չնայած Եվրոպական շատ տպագրական թանգարաններ և արհեստանոցներ արդեն իսկ ունեին անհրաժեշտ գիտելիք և հմտություններ դա կատարելու համար, զգացվում էր, որ կա թանգարաններում աշխատելու համար հատուկ պատրաստված անձնակազմի պակաս:

Ակնհայտ դարձավ, որ տպագրությունն ու հարակից թանգարանները չեն գործում ամբողջության մեջ: Դրանք, բնականաբար, համագործակցում են՝ բազմաթիվ հավաքածուների և ժառանգության արհեստանոցների հետ, որոնք կարևոր դեր են խաղում ինչպես մեքենաների, այնպես էլ տպագրության հմտությունների պահպանման գործում: 2012 թվականի սեպտեմբերին AEPM-ը որոշեց իր անդամակցությունը բացել տպագիր ժառանգության բնագավառում գործող կազմակերպությունների համար: 2014 թվականի փետրվարին AEPM-ը պաշտոնապես բացվեց որպես շահույթ չհետապնդող միություն, որը գրանցված է Բրյուսելում: 2015 թվականի

հոկտեմբերին այն պաշտոնապես բացեց իր անդամակցությունը շահագրգիռ կազմակերպությունների և անհատների համար: Որպես թանգարանների համագործակցության լայն ցանց՝ AEPM-ի գործունեությունը կենտրոնացած է տեղեկատվության, փորձի և գիտելիքների փոխանակման, մասնագետների պատրաստման, նոր տեխնիկայի մշակման գործընթացների վրա:

AEPM-ի նպատակն է խթանել գրաֆիկական արվեստի բոլոր բնագավառներում գիտելիքների, փորձի, նախաձեռնությունների և ռեսուրսների փոխանակումը, քանի որ դրանք գործել են Յոհան Գուտենբերգի ժամանակներից մինչ օրս: Սկզբնապես հիմնադրվել է որպես եվրոպական գրատպության թանգարանների ասոցիացիա. այն աստիճանաբար ընդլայնվել է՝ ընդգրկելով տպագիր ժառանգությամբ հետաքրքրված կազմակերպությունների և անհատների լայն շրջանակ ինչպես Եվրոպայում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Անդամակցությունը բաց է գրատպության ոլորտի բոլոր թանգարանների և կազմակերպությունների համար, որոնք ակտիվորեն ներգրավված են տպագիր ժառանգության պահպանման գործում:

Այսօր կան մեծ թվով գրատպության թանգարաններ, տպարանային արհեստանոցներ, մասնավոր հավաքածուներ և գրաֆիկական արվեստի բաժիններ, որոնք պահպանում են հին մեքենաներ, փայտե և պղնձե փորագրություններ, թանաքը թղթի վրա դնելու, հարդարելու և տեղադրելու տարբեր գործիքներ:

Չնայած թանգարանները, արհեստանոցներն ու հավաքածուները ստեղծողներից յուրաքանչյուրն ունի իր մոտեցումը, բոլորն էլ ունեն ընդհանուր նպատակ՝ գրատպության և գրաֆիկական արվեստի բազմաթիվ եղանակների պահպանումը, փոխանցումը և մեկնաբանումը, որոնք նպաստել են տեղեկատվության և գիտելիքների տարածմանը և հասարակության առաջընթացին:

Ովքե՞ր կարող են անդամակցել

Եվրոպական գրատպության թանգարանների ասոցիացիան տպագրական ժառանգության ցանց է, անդամակցությունը բաց է:

Ասոցիացիան ներառում է՝

Բելգիայի, Կոլումբիայի, Էստոնիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Հունաստանի, Իտալիայի, Նիդերլանդների, Նորվեգիայի, Հյուսիսային և Հարավային Կորեաների, Իսպանիայի, Մեծ Բրիտանիայի, Շվեյցարիայի գրատպության թանգարանները, արհեստանոցները, տպարանները, գրադարանները և արխիվները, որոնք ակտիվորեն ներգրավված են տպագիր ժառանգության պահպանման և փոխանցման գործում:

AEPM-ի անդամ կազմակերպությունները նշվում են մանուշակագույնով: Սեղմելով կայքի հասցեին՝ տեսնում ենք AEPM-ի անդամների ամբողջական ցանկը, տեսակավորված՝ ըստ երկրների [Եվրոպական գրատպության թանգարանների ասոցիացիա (AEPM)]:

IZI TRAVEL

2011 թվականին Նիդերլանդներում բնակվող նորարարների մի թիվ, որի անդամները հիմնականում բաղկացած են նախկին Խորհրդային Միության քաղաքացիներից, իրենց առջև նպատակ դրեցին բոլոր ճանապարհորդներին մարդկության պատմամշակութային ժառանգությանը ավելի մոտ դարձնելու նպատակով ստեղծել գլոբալ, բաց և անվճար համակարգ աշխարհի բոլոր պատմությունները մեկ տեղ հավաքելու համար: Չնայած այն հանգամանքին, որ գաղափարը նոր չէր, դեռ ոչ ոք չէր փորձել այն իրականացնել նման գլոբալ և հավակնոտ մասշտաբով:

Գաղափարի հեղինակը Ալեքս Տուրսկին է, որը երկար տարիներ առաջնորդել է izi.travel-ը: Եվ շատերը հենց իրենից են առաջին անգամ լսել, որ կա մի անվճար հարթակ, որտեղ ցանկացած թանգարան հնարավորություն ունի ստեղծելու իր պատմությունը և տրամադրել այն այցելուին հեռախոսային աուդիոգիդի միջոցով:

Հարթակի անվանումն էլ պատահական չէր ընտրված՝ izi.travel, թեև գրելու ձևը տարբերվում է անգլերեն **հեշտ** նշանակությամբ բառից, բայց իր հնչողությամբ և իմաստով նշանակում է հենց դա՝ **հեշտ ճամփորդել**:

Հայաստանում izi.travel-ն սկսել է գործել 2013 թվականից: Նախագիծն իրականացվել է izi.travel-ի հայաստանյան ներկայացուցչի աջակցությամբ և, լինելով առաջինը Հայաստանում, առաջացրել բավականին մեծ հետաքրքրություն: Դրանից հետո բազմաթիվ թանգարաններ միացել են izi.travel հարթակին:

Քանի որ նախագիծը միջազգային է, այն շատ լայն տարածում է ստացել ամբողջ աշխարհով մեկ, հատկապես ավանդական տուրիստական երկրներում, օրինակ՝ Իտալիա, Հունաստան և այլն: Ներկայացված է ակտիվ գործող 3500 թանգարան, 12 500 աուդիոտուր, որոնք հասանելի են ամբողջ աշխարհում: Այս ուղեցույցները ներառում են վայրերի լայն շրջանակ, ներառյալ քաղաքները, թանգարանները, պատմական տեսարժան վայրերը և այլն: Հարթակը շարունակաբար ընդլայնվում է, նոր ուղեցույցները պարբերաբար ավելացվում են ինչպես մասնագետների, այնպես էլ տեղական ներդրողների կողմից: Օրական ավելանում է 50 նոր քաղաքային աուդիոտուր, շաբաթական 5-10 թանգարան: Հարթակի օգտատերերն ամսական լսում են 1.5-2 միլիոն աուդիոպատմություն: Կարելի է տեղադրել նաև վճարովի նյութեր, ստեղծել պատմություններ ավելի քան 50 լեզուներով:

Ռուսաստանը ներկայացված է ծրագրի հնարավորության ամբողջ բազմազանությամբ, կան հատուկ մանկական տուրեր/թանգարանային պատմություններ, քվեստեր, գնացքում լսելու համար նախատեսված տուրեր և այլն: Ի դեպ, Ռուսաստանի պետական (քաղաքային) մարմինները շատ հաճախ ֆինանսավորում կամ հենց պատվիրում են քաղաքային տուրեր՝ գիտակցելով, որ դա խթանում է զբոսաշրջությանը:

Այսօրվա դրությամբ ներկայացված են մի շարք թանգարաններ և զբոսատուրեր ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում:

izi.travel հարթակում Գրատպության թանգարանը հրապարակել է 21 անգլերեն և 29 ռուսերեն աուդիոպատմություն [izi.travel: the Museum of Printing]: Առաջիկայում նախատեսվում է աուդիոպատմությունները ներկայացնել նաև գերմաներենով, ֆրանսերենով և արևմտահայերենով:


Գրատպության թանգարանի վիճակագրական որոշ տվյալներ izi.travel հարթակում




Գրաֆիկական պատկեր 1

Այցելությունների վիճակագրություն


(Օգոստոսի 27-սեպտեմբերի 25)



Գրաֆիկական պատկեր 2
 Աուդիոպատմությունների լսումներն ըստ բովանդակության՝
 Աուդիո՝ 69,2 %
 Թանգարան՝ 23,1%
 Ցուցանմուշ՝ 7,7 %




Գրաֆիկական պատկեր 3
 Աուդիոպատմությունների լսումներն ըստ միացման եղանակի՝
 Հաջորդաբար՝ 38,5 %
 Անհայտ՝ 30,8 %
 Ընտրովի՝ 30,7 %




Գրաֆիկական պատկեր 4
 Աուդիոպատմությունների լսումներն ըստ լեզուների՝
 Ռուսերեն՝ 90,0 %
 Անգլերեն՝ 10,0 %



Գրաֆիկական պատկեր 5
 Աուդիոպատմությունների լսումներն ըստ երկրների՝
 ՌԴ՝ 87,4 %
 ՀՀ՝ 10,9 %
 Այլ՝ 1,7 %



Գրաֆիկական պատկեր 6
 Աուդիոպատմությունների լսումներն ըստ օգտվելու եղանակի՝
 API՝ 86,7 %
 WEB՝ 8,9 %
 ONLINE՝ 4,4 %



Գրաֆիկական պատկեր 7

Առողիոպատմությունների լսումներն ըստ օպերացիոն համակարգերի՝

Անհայտ՝ 86,4 %

Android՝ 3,7 %

IOS՝ 5,5 %

Windows՝ 2,2 %

Այլ՝ 2,2 %

Հարկ է նշել, որ յուրաքանչյուր ցուցանմուշ ունի իր QR-կոդը:

QR կոդ (անգլ.՝ Quick Response Code՝ արագ արձագանքի կոդ, կրճատ՝ *QR Code*): QR կոդը մեքենայական ընթերցվող օպտիկական պիտակ է, որը պարունակում է տեղեկություններ նրա մասին, ինչին կցված է: Գործնականում QR կոդերը հաճախ մատնանշում են կայք կամ հավելված: QR կոդերը կարող են օգտագործվել տարբեր բջջային սարքերի օպերացիոն համակարգերում: IOS 11-ով և ավելի բարձր օպերացիոն համակարգով աշխատող iPhone-ները և որոշ Android սարքեր կարող են ինքնուրույն սկանավորել QR կոդերը՝ առանց արտաքին հավելված ներբեռնելու: Տեսախցիկի հավելվածը կարող է սկանավորել և ցուցադրել QR կոդի տեսակը հղումի հետ միասին (և՛ Android-ում, և՛ iPhone-ում):

Հույս ունենք, որ այս հարթակի միջոցով հետաքրքիր և տպավորիչ կլինեն այցելությունները թանգարան. այն որպես ծառայություն ունի աճի մեծ ներուժ:

SUMMARY

The Printing Museum of the National Library of Armenia plays a special role from the point of view of bibliography and promotion of more than 510-year history of the Armenian book.

The issue of promotion of Armenian cultural heritage in international platforms is among the strategic initiatives of the museums. One of the tasks of the Printing Museum is to raise awareness of Armenian books and printing through the international platforms worldwide, in particular Google Arts and Culture, the Association of European Museums of Printing (AEPM) and Izi Travel.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Google Arts and Culture: the Museum of Printing [Electronic Resource] URL: https://artsandculture.google.com/partner/the-museum-of-printing_ 16.11.2024.
2. izi.travel: the Museum of Printing [Electronic Resource] URL: <https://izi.travel/ru/6358-muzey-knigopachataniya-nacionalnoy-biblioteki-armenii/ru> 16.11.2024.
3. Եվրոպական գրատպության թանգարանների ասոցիացիա (AEPM), [Էլեկտրոնային աղբյուր] URL: <https://www.aepm.eu/member/printing-museum-armenia/> 16.11.2024:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԹՎԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ**

Բանալի բառեր՝ գրադարան, թվայնացում, թվային հեղափոխություն, շտեմարան, նիշերի օպտիկական ճանաչում, տեքստային փաստաթուղթ, որոնելիություն, արհեստական բանականություն:

Keywords: library, digitization, digital revolution, database, optical character recognition (OCR), text document, searchability, artificial intelligence (AI).

Թվային հեղափոխությունը ուղեկցվում է տեղեկատվական տեխնոլոգիաների, վիրտուալ իրականության, արհեստական բանականության և բազմաթիվ այլ ոլորտներում գրանցվող նվաճումներով: Արդի դարաշրջանում, երբ յուրաքանչյուր օր տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման արդյունքում փոխվում է մեզ շրջապատող վիրտուալ իրականությունը, մենք բախվում ենք նոր մարտահրավերների, որոնց լուծումները դառնում են առաջնահերթություններ՝ աշխատանքը ճիշտ կազմակերպելու համար: Որպես տեղեկատվական տեխնոլոգիաների անընդմեջ զարգացման հետևանք՝ թվայնացումը ներխուժում է գիտության, տնտեսության և մշակույթի ամենատարբեր ոլորտներ՝ ստիպելով վերանայել նախկին գործառույթներն ու պահանջները: Թվային հեղափոխությունը էական ազդեցություն է ունենում նաև գրադարանների գործունեության վրա: 20-րդ դարի վերջին քառորդից սկսած տեղեկատվական նոր տեխնոլոգիաները և ավտոմատացման համակարգերը անընդհատ ընդարձակում են գրքի պահպանության, խնամքի, հաջորդ սերունդներին փոխանցելու հնարավորությունները: Մա բնական է, քանի որ մշակույթը զարգացնելու և մշակութային արժեքների հանրահռչակման լավագույն միջոցներն են:

Հայաստանի ազգային գրադարանի տպագիր ժառանգությունը յուրահատուկ մտավոր արժեք է: Այն հայերեն տպագիր ժառանգության խոշորագույն պահոցն է աշխարհում: Սույն հետազոտության նպատակն է ներկայացնել տեղեկատվական տեխնոլոգիաների, վիրտուալ իրականության, արհեստական բանականության և բազմաթիվ այլ ոլորտների զարգացման ազդեցությունը գրադարանների՝ Հայաստանի ազգային գրադարանի մասնավոր օրինակի վրա: Առաջնային համարելով տպագիր ժառանգության պահպանության, պահպանման և վերականգնման խնդիրը՝ գրադարանը որդեգրել է թվայնացնելու և նշաճանաչման համակարգերի կիրառմամբ այն ընթերցողին հասանելի դարձնելու առաքելությունը: Անդրադառնալու ենք նաև գրադարանի թվային փոխակերպման, ազգային տպագիր ժառանգության թվայնացման առաջնահերթության, շտեմարանների միջոցով թվային տարբերակների հասանելիության ապահովման և նշաճանաչման գործընթացին:

Հայաստանի ազգային գրադարանի առաջնային նպատակը և ռազմավարությունը

Հայաստանի ազգային գրադարանի առաջնային նպատակն է պահպանել տպագիր ժառանգությունը և ապահովել դրա հասանելիությունը թվայնացման միջոցով: «Ապահովել» տերմինը ենթադրում է.

- Ազգային ժառանգության հասանելիություն հանրության լայն շրջանակներին,
- Հայերեն լեզվի ինտեգրում կիբերտիրություն,
- Գրադարանի ծառայությունների և շտեմարանների հասանելիություն հատուկ կարիքներով անձանց համար [Զուլյան, 2023]:

Այս ամենն իրականացնելու համար ցանկացած ծառայություն, ծրագիր պետք է լինի հասանելի, մատչելի ու կիրառելի:

Թվային փոխակերպումը գրադարանի ռազմավարական կարևոր ուղղություններից է: Դա ենթադրում է տպագիր ժառանգության թվայնացում, մշակում, շտեմարաններում տեղադրում և նշանակում: Այս ամենը ընձեռում է ազգային ժառանգության հետ հաղորդակցվելու հնարավորություն, նաև արդյունավետ հնարավորություններ գիտական հանրայնության աշխատանքներում և գիտական արդյունքի հանրայնացման գործում: Թվանշային գրադարանը տեղեկատվական համակարգ է, որը թույլ է տալիս հուսալիորեն պահպանել և արդյունավետ կերպով օգտագործել էլեկտրոնային պաշարները՝ խթանելով հասարակության թվային մտածելակերպը, գիտելիքները, հմտություններն ու կարողությունները: Թվայնացման առաջնահերթություններից է թվայնացվող հավաքածուի ճիշտ ընտրությունը, որը աշխատանքի հաջողության գրավականն է: Դա հնարավորություն է տալիս մարդկային և տեխնիկական սահմանափակ ռեսուրսների ողջամիտ ու թիրախային օգտագործում՝ առավել կարևորություն ներկայացնող հավաքածուի թվայնացման համար: Հավաքածուն ընտրելիս հաշվի են առնվում հետևյալ ցուցանիշները. թվայնացվող հավաքածուի բացառիկությունը, հետազոտական համայնքի կողմից ուսումնասիրման թիրախում գտնվելը, պահանջվածությունը, պատմական կամ աշխարհագրական ընդգրկումը, ֆիզիկական վիճակը, ամբողջականությունը (հատկապես պարբերականների պարագայում), այլ հաստատությունների կողմից արդեն թվայնացված լինելու փաստերը, հեղինակային իրավունքի խնդիրները: Անհրաժեշտ է հստակ պատկերացնել՝ ի՞նչը պահպանել, ինչպե՞ս պահպանել, ո՞ր ժամանակահատվածին ուշադրություն դարձնել:

Հայ տպագրության մեջ տպագրական արվեստով, բարդությամբ, հիշատակարաններով առավել կարևորվում են հնատիպ և վաղ շրջանի հրատարակությունները, որոնք ունեն արժեքավոր հիշատակություններ, ինքնագրեր, ընծայագրեր, յուրահատուկ են տպագրարվեստի տեսանկյունից: Թվային պատկերների չափորոշիչների սահմանումը և դրանց խստորեն պահպանումը հավաքածուի թվայնացման կարևոր պայման է: ՀԱԳ-ում Թվային փոխակերպման (թվայնացում, մշակում, շտեմարաններում դրանց տեղադրում) առաջնահերթություններն են՝

1. Ամբողջական ներկայացնել հայ գրքի և մամուլի պատմությունը՝ տեսանելի դարձնելով պատմության հարցականները և օրինաչափ զարգացման պատկերը:
2. Հավաքել աշխարհով մեկ սփռված հայերեն կամ հայերեն հատվածներ պարունակող օտարալեզու գրականությունը՝ ապագայում կորուստներից խուսափելու նպատակով:
3. Ճշտել աշխարհով մեկ սփռված գրքերի և պարբերականների աշխարհագրական տարածքները՝ նշելով յուրաքանչյուր միավորի գտնվելու վայրը, ինչպես նաև ֆիզիկական վիճակը:
4. Պահպանելով հեղինակային իրավունքի նորմերը՝ թվայնացնել գրքերը և մամուլը՝ ընթերցողական լայն լսարանին տրամադրելու նպատակով:
5. Հավաքածուների երկարաժամկետ պահպանություն:
6. Հավաքածուների թվային պատճեններով սպասարկում:

ՀԱԳ շտեմարաններն ու նիշերի օպտիկական ճանաչման համակարգը

Իրենց ընդգրկվածությամբ, ամբողջականությամբ Հայաստանի ազգային գրադարանում ստեղծված տարաբնույթ էլեկտրոնային շտեմարանների շարքում առանձնանում են «Հայ գիրք» և «Հայ մամուլ» շտեմարանները: Երկու շտեմարաններում էլ սկզբունքը մեկն է՝ հայատառությունը:

- «Հայ գիրք» շտեմարանը⁷¹, որը ներառում է 1512 թվականից մինչև մեր օրերը աշխարհի տարբեր ծագերում տպագրված հայերեն, հայատառ, ինչպես նաև հայերեն ելից տվյալներ պարունակող հայկական բովանդակությամբ, և հայերեն ելից տվյալներ պարունակող ու հայ հեղինակների կողմից ստեղծված այլալեզու գրքերը: Ներառված են աստվասներ, քարտեզներ, ժողովածուներ, հմայիլներ, կատալոգներ, պատկերագրքեր, բառարաններ, պատմական, գեղարվեստական, կրոնական, քաղաքական, մասնագիտական տարաբնույթ գրքեր՝ **շուրջ 130.796 գրառում**: Թվայնացված գրքերը դիտելու համար հարկավոր է փնտրման տողում

⁷¹ Տե՛ս «Հայ գիրք» շտեմարան, URL:(<http://haygirk.nla.am/>).

ընտրել «Գրադարանի քարտարան» (Library Catalogue) և մուտք անել «**կարդալ առցանց**» արտահայտությունը, փնտրման արդյունքում կստանաք շուրջ **35.238 անուն**:

- «Հայ մամուլ շտեմարանը» (<http://tert.nla.am>), որը ներառում է 1794 թվականից մինչև մեր օրերը աշխարհի տարբեր ծագերում հրատարակված հայատառ պարբերականները: Այստեղ ներառված են նաև էլեկտրոնային, այլալեզու, ինչպես նաև երկլեզվյան ու բազմալեզվյան մամուլի այն անվանումները, որոնց բնագրի լեզուներից մեկը հայերենն է, ինչպես նաև էլեկտրոնային պարբերականներ՝ **շուրջ 6635 գրառում**: Թվայնացված պարբերականները դիտելու համար հարկավոր է փնտրման տողում ընտրել «Գրադարանի քարտարան» (Library Catalogue) և մուտք անել «**կարդալ առցանց**» արտահայտությունը, փնտրման արդյունքում կստանաք շուրջ **3390 անուն**:
- «ՀԱԳ թվային պահոց»⁷², որը բաղկացած հետևյալ բաժիններից՝ ատենախոսություններ և սեղմագրեր, ՀԱԳ հրատարակություններ, Հայագիտական հավաքածու, Ոչ գրքային հրատարակություններ, Արցախի (Լեռնային Ղարաբաղ) վտանգված ժառանգություն և Միջազգային ԶԼՄ-ները Արցախի մասին: Այս պահի դրությամբ ՀԱԳ թվային պահոցում տեղադրված է 10515 հանրահասանելի նյութ:

Այս շտեմարաններն ունեն որոնողական ճկուն համակարգ: Մատենագիտական ճիշտ նկարագրությունների դեպքում, ընտրելով համապատասխան դաշտը, նյութը հնարավոր է որոնել ըստ հեղինակի, վերնագրի, տպագրության վայրի, տարեթվի կամ ժամանակաշրջանի, լեզվի և այլն: Մեր օրերում հայերենը բախվում է տեխնոլոգիական մարտահրավերների. թվային տիրույթում տպագիր ժառանգության հասանելիությունը սահմանափակվում է հայերենի նշաճանաչման խնդրի առկայությամբ: Նիշերի օպտիկական ճանաչման համակարգերը կամ OCR համակարգերը (Optical Character Recognition) նախատեսված են փաստաթղթերն ավտոմատ կերպով համակարգիչ մուտքագրելու համար: Դա կարող է լինել գրքի էջ, ամսագիր, բառարան, ինչ-որ փաստաթուղթ՝ այն ամենը, ինչ արդեն տպագրվել է և պետք է նորից վերածվի էլեկտրոնային ձևի: Նիշերի օպտիկական ճանաչման հիմնական գաղափարը տեքստի պատրաստումն է: Արդյունքում՝ մենք ունենում ենք որոնելի, խմբագրելի մի փաստաթուղթ, որը հետագայում կարող ենք ձևափոխել այլ նյութերի: Եղած ծրագրային համակարգերը (Abby FineReader, simple software, expert-pdf և այլն) նշաճանաչման բարձր որակ են ապահովում բացառապես թվածին նյութերի պարագայում: Հայ գրատպության փաստաթղթերն իրենց բնույթով, տառատեսակներով, տեքստերի խտությամբ ու այլ հատկանիշներով բազմազան են, ինչը բարդացնում է թվայնացված նյութի նշաճանաչման գործընթացը: Հայաստանի ազգային գրադարանի հավաքածուների թվայնացման աշխատանքները մեկնարկել են 2012 թվականից: Ներկայումս հաշվվում է գրքերի և պարբերականների ավելի քան 13 միլիոն թվայնացված էջ: Ինչպես նշվեց, թվայնացված նյութերն ավելի ամբողջական ներկայացված են «Հայ գիրք», «Հայ մամուլ» և «ՀԱԳ թվային պահոց» շտեմարաններում:

2021 թ. «Փորթմայնդ» հայաստանյան ընկերությունը ստեղծել է հայերենի համար նշաճանաչման ծրագրային ապահովում: Այս ծրագիրը շուրջ ութ ամիս փորձարկվել է ՀԱԳ-ի Թվայնացման և հրատարակման բաժնի աշխատակիցների կողմից: «Փորթմայնդ Էյ Էմ»-ի գործընկերների հետ անցկացվել են բազմաթիվ քննարկումներ, դասընթաց և մասնագիտական քննարկումներ: Հայերեն տառերի ճանաչելիության խնդիրը մեծ է, օրինակ թղթի գույնը, տառերի ուրվագծերի խեղաթյուրված լինելը, տառերի ձևաչափերի բազմազանությունը: Մեր գործընկերների հետ համատեղ աշխատանքի արդյունքում մենք ստացել ենք հնարավորինս լավ տարբերակ, որը նախագծվել է կոնկրետ հայերեն տառերի համար, երբ փաստաթղթերի տառաձևերը և թղթի գույները բարդ են կամ, ասենք, նյութը սյունակազմի է:

2022 թ. ՀԱԳ-ը և «Փորթմայնդ» ընկերությունը կնքեցին համագործակցության հուշագիր, որի շրջանակում Գրադարանին հայերեն տպագիր նյութերի թվայնացված տարբերակները նշաճանաչելու հնարավորություն ընձեռվեց՝ նյութերի տեքստային տարբերակները հանրությանը

⁷² Տե՛ս «ՀԱԳ թվային պահոց», URL: <http://dspace.nla.am/>

հասանելի դարձնելու նպատակով : Նկարված տեքստը վերածել փնտրովի տեքստի, բարձրացնել Ազգային գրադարանի շտեմարաններում որոնելիության մակարդակը, ներդնել նոր, արդյունավետ հնարավորություններ գիտական հանրության որոնողական աշխատանքներում և գիտական արդյունքի հանրայնացման գործում, կանխել գիտական առաջընթացը խոչընդոտող գրագողությունը, հետևել հետազոտությունների կառավարման և հանրահասանելի գիտության բնագավառում համաշխարհային փորձին՝ գործընթացի կազմակերպման, առաջնահերթությունների որոշման և այլ հարցերում:

Նշաճանաչման գործընթացը սկսվել է «Հայ մամուլ» շտեմարանից: 1794 թվականից ի վեր Հայաստանում և աշխարհի տարբեր երկրներում լույս է տեսել ավելի քան 6.500 պարբերական: Ներկայում պարբերականների թղթային հրատարակությունները, ճիշտ է, իրենց տեղը աստիճանաբար զիջում են էլեկտրոնային համարժեքներին, գործարկվում են լրատվական կայքեր, որոնք շուրջօրյա տեղեկատվություն են փոխանցում իրենց բաժանորդներին, սակայն տպագիր մամուլը (հատկապես մինչև 20-րդ դարի 90-ականների մամուլը) հետազոտողների համար չի կորցրել արդիականությունը: Սրան ավելանում է նաև մամուլի ողջամնացության ապահովման խնդիրը: Նշաճանաչմամբ հետազոտողներին հասանելի ենք դարձնում մամուլի լրակազմերի թվային պատճենները՝ նկարված տեքստը վերածելով փնտրովի տեքստի՝ արդեն դրանով իսկ մեծապես օժանդակելով հայ մամուլի եզակի նմուշների առցանց և բաց ձևաչափով հասանելիությանը: Բնականաբար, նույնը կարող ենք ասել «Հայ գիրք» և «ՀԱԳ Թվային պահոց» շտեմարանների համար, որտեղ ևս սկսվել է OCR գործընթացը:

Նիշերի օպտիկական ճանաչման համակարգի կիրառման արդյունքները ՀԱԳ-ում

«Հայ մամուլ» շտեմարանում «Կարդալ առցանց» հղման ներքո դրված pdf-ները փոխարինվել են ocr.pdf-ով, քանակը՝ 637 անուն: Կատարվել են հետևյալ աշխատանքները՝ լրացվել են բացակայող էջերը, համարները, շտկվել են անհամապատասխանությունները, նշված անունները բերվել են պատշաճ տեսքի: Այս պահի դրությամբ [#armocr](#) [#նշաճանաչում](#) է ստացել շուրջ 255 744 pdf կամ 2 796 325 էջ՝ թերթ, ամսագիր, սեղմագիր, ՀԱԳ հրատարակություն, որից 227 818 pdf կամ 2 083 436 էջ՝ թերթ և ամսագիր: OCR-ն օգնում է պատկերը վերածել տեքստային փաստաթղթի, որի բովանդակությունը պահվում է որպես տեքստային տվյալներ: Ինչպես նշվեց, հայերեն տառերի ճանաչելիության խնդիրը մեծ է, օրինակ թղթի գույնը, տառերի ուրվագծերի խեղաթյուրված լինելը, շրիֆտների բազմազանությունը, տեքստերի խտությունը և այլն: Ներկայացնում մի քանի օրինակ OCR-ի կիրառումից⁷³.


Մշակ: Գրականական և քաղաքական շաբաթաթերթ: Թիֆլիս 1872-1921թթ., 1872



Հասարակութեան բարձր դասին պատկա
նող անձից (մարդ թէ կին) այսքան էլ չէր
պահանջվում նորանից պահանջ-
վում էր միայն մեր հին պատմութենից
քանի մի նշանաւոր անուններ գիտենալ,
որ նա ժամանակ առ ժամանակ ուրիշների
առաջ անգիր էր ասում, պահանջվում էր
որ նա գուցէ լեզուն էլ չիմանալով, տարվա
յայն ինչ տօներին եկեղեցի գնար,
Նա պարծենում էր իր ազգի պատմութեամբ.
բայց աշխատում էր իր երեխաների հետ


⁷³ Կարմիրով նշվել է սխալը, փակագծերում՝ ինչպես պետք է լիներ, դեղինով՝ բաց թողնված տառերը

Ալիք: Ազգային, հասարակական, քաղաքական օրաթերթ, Թեհրան, 1932#12՝
https://tert.nla.am/archive/NLA%20TERT/Alig%20Tehran/1932/12_ocr.pdf



Բայց ազգային բնագոյը, որքան էլ զօրեղ լինի մի ժողովրդի, մի ցեղի, մի հասարակութեան մէջ, այնուամենայնիւ նա ամէնը չէ՛, (:) Անհրաժեշտ է, որ հասարակական լայն խաւերը գ(գ)ինուած լինեն իրենց քաղաքացիական իրաւունքների ու պարտականութիւնների պարզ գիտակցութեամբ, որ լինեն հասարակականօրէն դաստիա+(-) րակուած ու վարժուած հաւաքական աշխատանքների համար, որ ամբողջական հոգեբանութիւնը տեղի տայ քաղաքացիական բարձր գիտակցութեան առջև, Մի խօսքով պիտի ստեղծել նպաստաւոր հասարակական միջավայր:

Մասիս: Պէրոյք: տպ. Արամազդ, 1947#1՝
https://tert.nla.am/archive/NLA%20TERT/Masis2005/1947/1_ocr.pdf



Մ. Քահանայապետը, որուն Ծննդեան պատ, (-) գած(մ)ները պատերազմի տարիներուն միջազգային նոր հորիզոններ բացին տեւական խաղաղութիւն մը ստեղծելու պայմաններուն շուրջ(ջ), այս տարիալ խօսեցաւ աշխարհի կոչ ուղղելով որ վերջնական խաղաղութիւնը կնքուի: Կուտանք այդ յուզիչ պատգամին համառօտութիւնը, որուն տիեզերական մամուլը արձագանգ տուաւ:

Մենք իջել էինք ամբողջովին կեչիներով ծածկված մի հովիտ, որի միջով երկաթյա ծոմոված լինգի նման անցնում էր ճանապարհը: Մեքենայի լուսարձակներով լուսավորված, կանգնել էին կեչիները Ումբելա գետի վարարած ջրերի մեջ. անհավատալիորեն ճերմակ ու բարեձև, բների վրա տեղտեղ սև շրջանակներով, սքողված անմեղության թափանցիկ շղարշով: Մենք երկար կանգնեցինք այդպես, հետևելով, թե ինչպես է նրանց ոտքերի մոտ կայծկլտում ջուրը ոսկեգույն բռնկումներով: Տեսարանն այնքան անակնկալ էր, անկրկնելի, որ երկար ժամանակ երեքս էլ լուռ էինք: Այնքան շահեղություն կար այդ հովտում, այնպիսի մաքրություն, որ նայելով այդ ամենին, մարդ լցվում էր հույսով, որ իր կյանքը դեռ առջևում է, որ կիրականանա այն ամենը, ինչ երազել են: Շարունակելով նայել մարդկանց աչքից հեռու, անհայտության մեջ, աստղերի դեմ ապրող կեչիների այդ աշխարհին, մարդ դուրս է գալիս ժամանակի սահմաններից, թափառում հալիտենության մեջ, մոտենում անվախճանականին. ինչպես կեչիների այս պուրակը, ինչպես տայգան...

Մենք իջել էինք ամբողջովին կեչիներով ծածկված մի հովիտ, որի միջով երկաթյա ծոմոված լինգի նման անցնում էր ճանապարհը: Մեքենայի լուսարձակներով լուսավորված, կանգնել էին կեչիները Ումբելա գետի վարարած ջրերի մեջ. անհավատալիորեն ճերմակ ու բարեձև, բների վրա տեղտեղ սև շրջանակներով, սքողված անմեղության թափանցիկ շղարշով: Մենք երկար կանգնեցինք այդպես, հետևելով, թե ինչպես է նրանց ոտքերի մոտ կայծկլտում ջուրը ոսկեգույն բռնկումներով: Տեսարանն այնքան անակնկալ էր, անկրկնելի, որ երկար ժամանակ երեքս էլ լուռ էինք:

Առձեռն ճարտասանություն: Ի Վենետիկ: Ի Սուրբն Ղազար, 1839

Վասն որոյ մի՛ ոք մեղադրեացէ զմեզ իբր
 օտարին վատաւոց յափշտակող, աւսանելով ի
 սմա բազում ինչ յերկուց առաջնոցն մերոց
 Հռետորաց ժողովեալ, քանզի մեզէն իսկ
 խոստովանիմք, զի գրեթէ զնոյն նոցին բանս
 հոգացաք համառօտել, և զքերթողականին
 իսկ կանոնս ի գաղղիական քերականէն ի կիր
 առեալ, որ նախ առաջին զայնցանէ գրեաց:
 Զի ոչ ինչ ամօթ համարիմք զհոգեկցորդե
 ղուսումնակց եղբարցն մերոց և զվարժաստե
 րաց ճոխութիւնս ի կիր առնուլ, զմատենա
 գրի անուան ոչ թեկն անելով:

Վասն որոյ մի՛ ոք մեղադրե՛սցէ զմեզ իբր
 օտարին վատաւոց յափշտակող, տե
 սանելով ի
 սմա բազում ինչ յերկուց առաջնոցն մերոց
 հռետորաց ժողովեալ, քանզի մեզէն իսկ
 խոստովանիմք, զի գրեթէ զնոյն նոցին բանս
 հոգացաք համառօտել. և զքերթողականին
 իսկ կանոնս չի գաղղիական քերականէն չի
 կիր
 առեալ, որ նախ առաջին զայնցանէ գրեաց

Նյութեր մասսայական գրադարանների աշխատողների սեմինար պարապմունքների: Երևան, 1968

Սեմինարի ղեկավարը պետք է այս խորհուրդները նկատի
 ունենալով, կոնկրետ հանձնարարություններ տա գրադարա
 նավարներին, որպեսզի նրանք տեղերը վերադառնալուն պես
 կոնկրետ գործի ձեռնամուխ լինեն:
 Սեմինարում հատուկ ուշադրություն պետք է նվիրել ցու
 ղահանդեսների կազմակերպմանը: Անհնար է նման մի ան
 ընդդրկելի թեմայի վերաբերյալ մի ցուցահանդեսով գործը
 ավարտված համարել: Դրա համար պետք է պատրաստել ոչ
 մեծ, բայց կոնկրետ թեմաներով ցուցահանդեսներ: Դա կլինի
 ոչ թե մեկ ցուցահանդես, այլ ցուցահանդեսների մի ամբողջ
 ցիկլ և, ինչ խոսք արդյունքն էլ հիմնադրի կլինի:

Սեմինարի ղեկավարը պետք է այս խորհուրդները նկատի
 ունենալով, կոնկրետ հանձնարարություններ տա գրադարա
 նավարներին, որպեսզի նրանք տեղերը վերադառնալուն պես
 կոնկրետ գործի ձեռնամուխ լինեն:
 Սեմինարում հատուկ ուշադրություն պետք է նվիրել ցու
 ցահանդեսների կազմակերպմանը: Անհնար է նման մի ան
 ընդգրկելի թեմայի վերաբերյալ մի ցուցահանդեսով գործը
 ավարտված համարել: Դրա համար պետք է պատրաստել ոչ
 մեծ, բայց կոնկրետ թեմաներով ցուցահանդեսներ: Դա կլինի
 ոչ թե մեկ ցուցահանդես, այլ ցուցահանդեսների մի ամբողջ
 ցիկլ և, ինչ խոսք արդյունքն էլ հիմնադրի կլինի:

Մեկ այլ գործընկերոջ հետ սկսվել են Հայագիտական օտարալեզու գրքերի նշաճանաչման աշխատանքները, արդեն իսկ **#armocr** **#նշաճանաչում** է ստացել շուրջ 245 անուն գիրք: Աշխարհում OCR-նիշերի օպտիկական ճանաչման հնարավորությունները ընդլայնվում են: Ստեղծվում են համակարգեր, որոնք նշաճանաչում են՝ ձեռագրերը, միկրոֆիլմերը, ստեղծվում են տպագիր և ձեռագիր մատյանների քարտարանի թվային տարբերակներ:

Արհեստական բանականություն-Հայաստանի ազգային գրադարան

Մյուս կարևոր խնդիրը Հայաստանի ազգային գրադարանի համար արհեստական բանականության գործիքակազմի ճիշտ օգտագործումն է: Արհեստական բանականությունը կարող է աշխատել միայն այն դեպքում, եթե հստակեցված են նպատակն ու խնդիրը [Վիդալ-Գորեն]: Ամեն դեպքում, գրադարանավարը միշտ գործընթացի կենտրոնում է, քանի որ նա է որոշում գործողությունների հերթականությունն ու բովանդակությունը: Արհեստական բանականության ներդրումը նախևառաջ համագործակցություն է գրադարանավարի և տեխնիկական անձնակազմի մեջ ու քանի որ մարդը համակարգչից ավելի գիտակ է, հասկանում է, թե տեքստը ինչպես պետք է ճանաչի, հետևաբար մենք պետք է համակարգին ասենք տեքստի ճանաչման ձևը: Անհրաժեշտ է ձևակերպել տվյալներն ու առաջադրանքները, որոնք կկատարեն մեր պահանջները: **Արհեստական բանականությունը** տեխնիկական կամ ծրագրային համակարգ է, որը կարող է լուծել իր առջև դրված տարբեր ոլորտներին առնչվող ստեղծագործական խնդիրները: AI համակարգեր տարբերվում են իրենց գործարկման առանձնահատկություններով և հարմարվողականության մակարդակով [Зельдина]: Ավելի պարզ ասած՝ **արհեստական բանականություն** կամ **արհեստական ինտելեկտ** տերմինները կիրառվում են, երբ մեքենան իրականացնում է «ճանաչողական» գործառնություններ, ինչպես օրինակ «սովորելը» և «խնդիր լուծելը», որոնց մարդիկ սովորաբար ասոցացնում են «խելքի» հետ: Արհեստական բանականությունը դարձել է տարբեր ոլորտների հիմնական հասկացություններից մեկը՝ համակարգչային համակարգեր, կենսատեխնոլոգիա, արդյունաբերություն, գիտություն և կրթություն [Понятный гайд по ИИ]: Դրա տարածումն արդեն հանգեցրել է զգալի տեխնոլոգիական առաջընթացի և աշխատանքի արդյունավետության բարձրացման: Նման համակարգերն ունակ են սովորել տվյալներից և դրանց հիման վրա որոշումներ կամ կանխատեսումներ կատարել: Գրադարանը կրթական գործընթացի անբաժանելի մասն է, հետևաբար նաև անհրաժեշտություն է առաջացել ներկայիս պայմաններում փոփոխություններ կատարել իր աշխատանքում: Ժամանակակից գրադարանն այլևս պարզապես գրքերի շտեմարան չէ, այլ կոլեկտիվ և անհատական աշխատանքի տարածք և ինտելեկտուալ ու ստեղծագործական հանգույց: Հայաստանի ազգային գրադարանի համար սա նոր ուղղություն է, որը գտնվում է ուսումնասիրման փուլում:

Գրադարանի ծառայությունների և շտեմարանների հասանելիություն հատուկ կարիքներով անձանց համար

Հատուկ կարիքներով անձանց հետ աշխատանքի նրբությունները հաշվի են առնվել նաև Գրադարանի նոր կայքը նախագծելիս: Կայքում առանձնացվել է կառուցվածք, նոր սխեմա թույլ տեսողությամբ մարդկանց համար աջակից գործիքակազմով: 2023 թ. [Զուլյան, 2023] Գրադարանը դարձել է Մատչելի գրքերի կոնսորցիումի (Accessible Books Consortium) անդամ, ինչը հնարավորություն է ընձեռել իրականացնել Համաշխարհային մտավոր սեփականության կազմակերպության (WIPO) ծրագրերից մեկը՝ տպագիր գրքերը փոխակերպել մատչելի ձևաչափերի և հասանելի դարձնել հատուկ կարիքներով անձանց համար: Մատչելի ձևաչափերի փոխակերպման ծրագրին տիրապետելու համար Գրադարանի մասնագետները նախագծի շրջանակում վերապատրաստվել են: Նախագծի շրջանակում ստեղծվում են EPUB3, DAISY տեքստեր, DAISY աուդիո (սինթե-

տիկ խոսք), DAISY աուդիո (մարդկային շարադրանք), Բրայլի պատրաստի ֆայլեր (BRF), լայնա-
ֆորմատ ֆայլեր /EPUB3, DAISY text, DAISY audio (synthetic speech) և այլն: Առաջիկայում
կներկայացնենք մատչելի ձևաչափով գրքերի ստեղծման արդյունքները:

SUMMARY

The aim of the publication is to highlight the impact of information technology, virtual reality, artificial intelligence and the achievements in many other fields on libraries in general and, in particular, on the activities of the National Library of Armenia in the face of contemporary challenges. Prioritising the preservation of printed heritage, the library embarked on the mission of digitising its collections and making them accessible to users through Optical Character Recognition (OCR) systems. To achieve the aim, the following objectives have been set: presenting the process of digital transformation of the library, discussing priorities for the digitisation of the national printed heritage, providing access to digital versions in the repositories, outlining the recognition process.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Зельдина, М. М. «Искусственный интеллект в издательском деле», организованный командой Elpub. [Электронный ресурс] URL: <https://is.gd/vnhe7W>, 14.11.2024.
2. Понятный гайд по ИИ: сравниваем традиционный и генеративный искусственный интеллект: [Электронный ресурс] URL: <https://habr.com/ru/companies/itglobalcom/articles/752150/>, 14.11.2024.
3. Չուլյան Ա., Հայաստանի ազգային գրադարանի կայուն զարգացման հեռանկարը // Բանբեր Հայաստանի գրադարանների / Bulletin of Armenian Libraries, Երևան, «Գիրք» հրատարակչություն, 2023. № 2. Էջ 23-28, [Էլեկտրոնային հրատարակչություն] URL: [https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/banbergrad/2023\(2\).pdf](https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/banbergrad/2023(2).pdf); 14.11.2024:
4. Վիդալ-Գորեն Շ., Գրադարաններ և արհեստական բանականություն (AI): Օգտագործել AI-ն հայկական հաւաքածուները զարգացնելու համար, [Էլեկտրոնային հրատարակչություն] URL: <https://is.gd/scZnNe>, 14.11.2024:

ՀՈՒՆԱՍՏԱՆՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՀԱՅ ՄԱՍՈՒԼԻ ԴԵՐՆ Ու ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Բանալի բառեր՝ Հայ-հունական կապեր, Հունաստանի հայ համայնք, հայ մամուլ, Հունաստանի հայ մամուլ, սփյուռքահայ տպագիր-մշակութային ժառանգություն:

Keywords: Armenian-Greek relations, the Armenian community of Greece, the Armenian press, the Armenian press of Greece, printed cultural heritage of the Armenian Diaspora.

Սույն հոդվածի նպատակն է լուսաբանել ու արժևորել Հունաստանի հայ մամուլը, դրա դերն ու առաքելությունը, հունահայ համայնքի կյանքում արծարծված թեմաները և հարակից այլ հարցեր: Պատմական անդրադարձ է կատարվել նաև նշյալ երկրի հայ համայնքին: Հոդվածում առաջադրված խնդիրներն են հունահայ մամուլի ազգապահպան դերի և նշանակության կարևորումը հայոց ինքնության, լեզվի, մշակույթի և պատմության, ինչպես նաև այդ համայնքի ու Մայր հայրենիքի միջև առնչությունների ու փոխգործակցության տեսանկյունից:

Հայ-հունական հարաբերություններ

Հայերի համար մեծ հետաքրքրություն ու արժեք է ներկայացնում հայ ժողովրդի մեծ բարեկամ ու նրա դատի ջերմ պաշտպան, Սալոնիկի համալսարանի պրոֆեսոր անվանի պատմաբան Յաննիս Խասիոտիսի զեկուցումը, որը վերնագրված էր «Երկուստեք պատրանքներ. հույն-հայկական համագործակցությունը Փոքր Ասիայում և Կովկասում (1917-1922)»՝ գրված գլխավորապես արխիվային փաստաթղթերի հիման վրա, ընդարձակ գրականության (այդ թվում և հայալեզու) օգտագործմամբ [Հունական արխիվային փաստաթղթեր հայ-հունական հարաբերությունների մասին առաջին հանրապետության շրջանում: (1918-1920), 1998, 5]:

Հունաստանի արտաքին գործերի նախարարության արխիվում 1917-1922 թթ. հայ-հունական հարաբերություններին վերաբերող հսկայական քանակությամբ արժեքավոր փաստաթղթեր կան: Այդպիսիք կան և Բենակիսի թանգարանի արխիվում (Աթենք) [Նույն տեղում, 12]:

Հայաստանը սերտ բարիդրացիական հարաբերություններ է հաստատել Հունաստանի հետ: 1991-2000 թթ. Հունաստանի և Հայաստանի միջև ստորագրվել են մեկ տասնյակից ավելի պայմանագրեր՝ տնտեսական համագործակցության, մշակութային կապերի ամրապնդման վերաբերյալ, ռազմական բնույթի և այլն: Հայաստանը Հունաստանի հետ իր հարաբերությունները կարգավորում էր նաև Հայաստան-Հունաստան-Իրան եռակողմ համագործակցության շրջանակներում [Մինասյան, 2013, 369-370]:

1996 թ. Հունաստանի խորհրդարանը ճանաչել է Թուրքիայում հայերի ցեղասպանության փաստը [Հունաստանի խորհրդարանը դատապարտում է Հայոց ցեղասպանությունը, 1997, 39]:

2000 թ. Աթենքում բացվել է Հայոց ցեղասպանության նահատակների հիշատակը հավերժացնող հուշակոթող, իսկ հրապարակներից մեկը անվանվել Արմենիա [Հայ սփյուռք հանրագիտարան, 2003, 371]:

Հայ սփյուռք. Հունաստանի հայ համայնքը

Հայաստանը գտնվելով Եվրոպայի և Ասիայի սահմանագծում՝ վաղուց ի վեր եղել է բազում զավթիչների ավերիչ ասպատակությունների ահեղ ռազմադաշտ [Մելիքսեթյան, 1985, 3]:

Դարերի ընթացքում հայերի, ինչպես և այլ ժողովուրդների արտագաղթը հայրենիքից պայմանավորված է եղել երեք հիմնական գործոններով՝ տնտեսական, կրոնական և

քաղաքական, որոնք ինքնուրույն պետականության բացակայության պայմաններում մշտապես ուղեկցվել են օտարազգի իշխանությունների կողմից իրականացվող բռնաճնշումներով և հալածանքներով [Հայ սփյուռք հանրագիտարան, 2003, 7]:

Հայ գաղթօջախները դարավոր պատմություն ունեն, որոնց առաջացումը սետորեն կապված է հայ ժողովրդի պատմական ճակատագրի հետ: Հանրահայտ ճշմարտություն է, որ հայ ժողովուրդը համաշխարհային նշանակություն ունեցող մշակութային արժեքներ է ստեղծել ոչ միայն իր Մայր հայրենիքում, այլև նրա սահմաններից դուրս, աշխարհի գրեթե բոլոր երկրներում [Գասպարյան, 1962, 3]: Հայ հունական առնչությունները սկիզբ են առել վաղնջական ժամանակներից: Հույն պատմագիրներից շատերի (Հերոդոտոս, Քսենոփոն և ուրիշներ) երկերում արժեքավոր տեղեկություններ կան Հայաստանի և հայերի մասին [Հայ սփյուռք հանրագիտարան, 2003, 369]:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ մինչև մեր օրերն էլ պահպանվել են հունական բազմաթիվ քաղաքների, գյուղերի, գետերի ու լեռների արմեն-արմենական արմատից ծագող անունները, որոնք և տեղ են գտել հունական հանրագիտարանում [Կոկինոս, 1965, 5]:

Հունական հանրագիտարանը հիշատակում է Հին Հունաստանի մի շարք հայկական բնակավայրի անուններ՝ Արմենոս, Արմենիոն, Արմենո, Արմենոխորիոն, Արմենսկու, Արմենտա և այլն [Հայ սփյուռք հանրագիտարան, 2003, 369]:

Հայերը Հունաստանում սկսել են բնակություն հաստատել V-VI դդ.: Հայկական պետականության անկման և պարսկա-բյուզանդական պատերազմների պատճառով շատ հայեր ապաստանել են Հունաստանում [Նույն տեղում]:

Հայաշատ կենտրոններ են եղել ոչ միայն Հունաստանում, այլև Բյուզանդիայում (Կոնստանդնուպոլիս, Ադրիանապոլիս): Բյուզանդիայի (որի մասն է կազմել Հունաստանը) կայսրերը պետության սահմաններն ապահովելու նպատակով VI-VII դդ. շուրջ 30 հազար հայերի գաղթեցրել և բնակեցրել են Թրակիայում և Մակեդոնիայում [Կոկինոս, 1965, 5-7]:

Հայկական նոր գաղթօջախներ Թրակիայում և Մակեդոնիայում ստեղծվել են թուրքական տիրապետության շրջանում: Թրակիան և Մակեդոնիան մտնում էին թուրքական տիրապետության եվրոպական հատվածի մեջ, որը կոչվում էր Ռումելի [Աբրահամյան, 1967, 100]:

Հունաստանի հին գաղթօջախի մասին արժեքավոր տվյալներ է տալիս նաև Էջմիածնի Աբրահամ կաթողիկոսը՝ 1737 թ. «Թեքիրտաղու առաջնորդությանն ուղարկած հայրապետական կոնդակում, ուր հիշատակվում են Թրակիայի և Մակեդոնիայի հայկական մի շարք գաղթօջախների անուններ» [Կոկինոս, 1965, 9]:

Հունահայ գաղթօջախը կրկին բազմամարդ է դարձել XVI-XVIII դդ.՝ թուրքական բռնատիրությունից փախած հայերի հաշվին [Կոկինոս, 1965, 369-370]:

Զանգվածային ամենից խոշոր գաղթականությունը Թուրքիայից Հունաստան է եկել 1895-1896 թվականներին՝ Համիդյան ջարդերից հետո: Ոչ լրիվ տվյալներով, այդ տարիներին Հունաստան է եկել ավելի քան հազար հայ գաղթական: Հույն ժողովուրդը հայ գաղթականությանն ընդունել է եղբայրական սիրով [Աբրահամյան, 1967, 103]: Հայ գաղթականության հոսանքները Թուրքիայից Հունաստան էին գալիս XX դարի առաջին քառորդում ևս: Հայ գաղթականություն է եկել Հունաստան Ադանայի 1909 թվականի կոտորածներից հետո [Աբրահամյան, 1967, 140]:

1915 թ. Թուրքիայում ապրող հայերի կոտորածների հետևանքով հայեր են արտագաղթել Հունաստան [Կոկինոս, 1965, 15]:

Տնտեսական և քաղաքական անբարենպաստ պայմանների պատճառով հայերի մեծ մասը 1920-ական թվականներին թողնում է Հունաստանը և բնակություն հաստատում Ֆրանսիայում, Հյուսիսային և Հարավային Ամերիկայում, մասամբ նաև Սիրիայում և Լիբանանում: 1946 թվականի հայրենադարձության նախօրյակին Հունաստանում ապրում էր 30 հազար հայ, որոնցից 20 հազարը 1946-1947 թթ. ներգաղթել է Սովետական Հայաստան [Գասպարյան, 1962, 198]:

Ըստ համապատասխան հանրագիտարանի տվյալների, Հունաստանում բնակվում է շուրջ 45 հազար հայ (նրանցից 30-ը՝ նորեկ հայաստանցիներ): Հայերը հիմնականում կենտրոնացված են Աթենք, Սալոնիկ, Կրետե, Ալեքսանդրուպոլիս, Քսանթի, Կավալա, Օրեստիադա, Դիդիմոտիկո

քաղաքներում և կղզիներում: Հունահայ համայնքում գործում են նաև հայկական եկեղեցիներ՝ Աթենքի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, Կոկինիայի Ս. Հակոբ եկեղեցին, Սալոնիկի Ս. Աստվածածին եկեղեցին, Կավալայի Ս. Խաչ եկեղեցին, Կոմոտինիի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին [Հայ սփյուռք հանրագիտարան, 2003, 370-372]:

1915-1917 թթ. ժամանակաշրջանում հունահայ գաղութում սկսվում է հավաքական կյանքի որոշ աշխուժացում. արդեն ստեղծվում են տեղական մի քանի համայնքներ՝ իրենց թաղական խորհուրդներով, դպրոցներով, եկեղեցիներով և այլն: Այսպես ձևավորվում է Սալոնիկի համայնքը, որը կապ է հաստատում հունական իշխանությունների կողմից արդեն պաշտոնապես ճանաչված Աթենքի հայ թեմի հետ [Կոկինոս, 1965, 15]:

Համայնքում գործում են 4 ամենօրյա վարժարաններ, մի քանի կիրակնօրյա դպրոցներ և մեկ մանկապարտեզ: Նշենք Զավարյան վարժարանը, Գալփալյան վարժարանը, Սոֆի և Լևոն Հակոբյան վարժարանը, Ա. և Ժ. Ճենազյան միջնակարգ վարժարանը, Մալաքյան-Գասպարյան ծաղկոց նախակրթարանը, Տարոնյան վարժարանը [Հայ սփյուռք հանրագիտարան, 2003, 373]:

Հունահայ համայնքում զարգացած են գիտությունը, մշակույթը, գրականությունը, թատրոնը և երաժշտությունը: Հայտնի են «Մետմյան» «Տավոռիկ», «Արտավազդ», «Քնար» «Ադամյան», «Սողոմոն Թեփլերյան» թատերախմբերը: Երաժշտության բնագավառի աչքի ընկնող դեմքերից է հունահայ երգչուհի Արտա Սնդիկյանը: Կատարողական բարձր արվեստով աշխարհի մի շարք երկրներում հանդես է եկել կիթառահար Հրաչ Ղուկասյանը: Հայաստանում ելույթներ են ունեցել կիթառահար Հակոբ Քոլանյանը և դաշնակահար Անդրանիկ Ներսիսյանը: Շնորհալի դաշնակահարներից է նաև Քրիստին Թոքասյանը [Հայ սփյուռք հանրագիտարան, 2003, 376-377]:

Հունահայության ազգային կյանքը կազմակերպող համայնքային գլխավոր կառույցներ են Ազգային առաջնորդարանը և Ազգային վարչությունը: Նշենք մի քանիսը. Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Հունաստանի կենտրոնական մասնաժողով, Հայ մարմնակրթական ընդհանուր միության (ՀՄԸՄ) Հունաստանի շրջանային վարչություն, Համազգային մշակութային միություն, «Արարատ» մշակութային-մարզական միություն, «Արաքս» մշակութային միություն, Հայ մշակութային միություն, Հայաստանի երկրաշարժի աղետյալների օգնության հանձնաժողով, Հայ-հունական լիգա [Հայ սփյուռք հանրագիտարան, 2003, 373-376]:

Հունահայ համայնքում գործում են նաև հայ ազգային կուսակցություններ [Հայ սփյուռք հանրագիտարան, 2003, 374]: Հունաստանի հայ գաղթօջախի 1920-ական թվականների պատմությանն է նվիրված Պ. Կոկինոսի «Հունահայ գաղութի պատմությունից (1918-1927)» աշխատությունը [Մելիքսեթյան, 1985, 17]:

Հայրենիքի և սփյուռքի միջև կապերը զարգացնելու, ինչպես նաև հայրենադարձությունն իրականացնելու գործում որոշակի դրական դեր է կատարել Հայաստանի օգնության կոմիտեն (ՀՕԿ): Հունաստանի հայ աշխատավորները առաջիններից մեկը հիմնեցին ՀՕԿ-ի տեղական մասնաճյուղեր [Մելիքսեթյան, 1985, 152-155]:

Հունաստանի հայ մամուլը

Հայոց պարբերական մամուլն արտացոլում է հայ ժողովրդի բազմադարյա պատմական ուղին [Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794-1967): Համահավաք ցանկ, 1970, 5]:

Աթենքում 1890-ական թթ. վերջերից գործել են «Հայկական ազատ» տպարանը, որտեղ տպագրվել են Ա. Նազարբեկի (Լեոնեց) «Փախստականը» (1891), «Աւագակը» (1892), «Մարտում» (1893) պոեմները, Ակնյանցի «Հայերն Ամերիկայում» (1893), Լ. Ֆերդինանդի «Մահմանադրութեան էութեան մասին» (1893), «Բռնութեան դէմ, Գաղատիայի դատավարութիւնը» (1894) և այլ երկեր: «Միություն» տպարանում լուս է ընծայվել «Նուագներ» (1898) չափածո ժողովածուն [Հայ գրատպություն և գրքարվեստ: Հանրագիտարան, 2015, 648]:

«Յունաստանի տարածքին հայերէն թերթերու հրատարակութիւնը կը կազմէ կարեւոր գլուխ մը հայ ժողովուրդի՝ տպագրութեան եւ լրագրութեան բերած նպաստի պատմութեան մէջ-երկարատեւ ու բաւական տպաւորիչ» [Հայ մամուլը Յունաստանի մէջ: Հետազոտութիւն Արմենիքա, 2009, 10]:

«Յունահայ մամուլի բուռն զարգացումը պիտի նշուեր 1922-1923-ին ետք, երբ բազմատասնեակ հազարաւոր գաղթական հայեր հաստատուեցան Յունաստան՝ հետեւելով իրենց հելլէն բախտակիցներուն: Յունաստան հրատարակուած գրեթէ բոլոր հայերէն թերթերը կը բովանդակէն տարբեր՝ մեր երկրի հայութեան տուեալ պահու կրօնական թէ ընկերատնտեսական ու մշակութային կացութեան մասին» [Հայ մամուլը Յունաստանի մէջ: Հետազոտութիւն Արմենիքա, 2009, 11]:

«Յունաստանի մէջ հայ մամուլի պատմութիւնը անմիջական կապ ունի յունահայ համայնքի բնակչագրական հոլովոյթին հետ. հայ տարրը, իր աւելի քան մէկ դարու պատմութեան մէջ, հոն երբեմն աճեցաւ, բայց աւելի յաճախ նուազեցաւ: Յունահայ մամուլի պատմութիւնը կրնանք բաժանել երկու գլխաւոր ժամանակահատուածներու. առաջինը կը սկսի 1890 ականներու սկիզբին, եւ յատկապէս՝ 1894-1896 թթ. հայկական մեծ ջարդերու պահուն եւ անմիջապէս ետք, երբ համիտեան Թուրքիայէն Յունաստան՝ Աթէնք, Փիլեա եւ Կրետէ ապաստանեցան քանի մը հարիւր հայ գաղթականներ: Երկրորդ ժամանակաշրջանը կը համապատասխանէ փոքրասիական յոյն ճակատի 1921-1922 ի փլուզումին, երբ շուրջ 80 000 հայ գաղթականներէ Արեւելեան Թրակիայէն, յոնիական շրջաններէն եւ Կիլիկիայէն՝ իրենց կարգին ապաստանեցան Յունաստան» [Նույն տեղում, 2009, 13]:

Հունաստանում առաջին հայ պարբերականը՝ **«Ասպարէզը»**, լոյս է տեսել 1890 թ., Աթէնքում: Յայտօր Հունաստանում հրատարակվել են շուրջ 67 անուն հայերէն օրաթերթեր և ամսագրեր, որոնց զգալի մասը կարճատև կյանք է ունեցել [Հայ գրատպւոյթուն և գրքարվեստ: Հանրագիտարան, 2015, 648]:

«1895-96ին, լոյս տեսած են նաեւ երկու թրքալեզու թերթեր, **«Վաթան»** (Հայրենիք) եւ **«Հաքիքաթ»** (Ճշմարտութիւն), երկունքն ալ՝ հայատառ թրքերէն: **«Երկունք»** թերթը, որ 1922ին հրատարակուած է կովկասահայ Յարութիւն Գասպարեանի կողմէ. տեսած է հազիւ ութ ամիս: Աւելի ուշ, հրատարակուած է **«Նոր Օր»**ը (1923), եւ **«Արարատ»**ը (1924), որ լոյս պիտի տեսնէր մօտ վեց ամիս: 1923ին, Սելանիկի մէջ, կարճ ժամանակի համար, հրատարակուած է երգիծական շաբաթաթերթ **«Մեղու»**-ն: Հրատարակուած են նաեւ **«Յաղթանակ»**ը (1926-1927) եւ **«Արձագանգ»**ը (1928-30): Այս թերթերուն կեանքը կարճատև է եղած, հրատարակուել են նաեւ ուրիշ օրաթերթեր կամ շաբաթաթերթեր, ինչպէս **«Ժողովուրդի Ձայն»**, **«Շիրակ»**, **«Նոր Շարժում»**, **«Մեւան»**, **«Վերելք»** թերթեր՝ որոնց կեանքը նոյնպէս երկար պիտի չտեսէր: 1926 թ. հրատարակուած է թրքախօս հայերու ուղղուող հայատառ թրքերէն **«Թելեֆոն»** օրաթերթը: Նոյն ժամանակաշրջանին հրատարակուած են նաեւ հետեւեալ պարբերաթերթերը. **«Լուսադրիւր»**-ը (1925 թ.), **«Խիկար»** երգիծաթերթը (1925 թ., ապա 1928-1929 թթ.), **«Քնար»** գրական պարբերաթերթը (1926 թ. լոյս տեսած՝ միակ թիւ մը), **«Հրագդան»** երկամսեան (1929 թ. վերահրատարակուած), **«Նշդրակ»** երգիծաթերթը (1930 թ.), **«Այգեստան»** գրական պարբերաթերթը (1932 թ.), **«Վերելք-Ծալվար»** երգիծաթերթը (1932 թ.), **«Փունջ»** գրական պարբերաթերթը (1933 թ.), եւ **«Արամագդ»** անկախ օրաթերթը (1934-1935 թթ.), ինչպէս եւ **«Նայիրի»** գրական պարբերաթերթը (1936-1937 թթ.): Միքայէլ Բարթիկեանի նախաձեռնութեամբ 1936 թ. հրատարակուեցաւ **«Ամբոց»** քաղաքական եւ գրական շաբաթաթերթը քանի մը ամիս տեւողութեամբ միայն: 1937 թ. Գէորգ Կառավարենց եւ Միհրան Փափազեան կարճ պահ մը հրատարակեցին **«Փասաթեմպօ»** երգիծաթերթը, 1937էն մինչեւ 1940, հրատարակուեցաւ դէռ **«Վերածնունդ»** քաղաքական եւ գրական օրաթերթը, 1938էն 1940՝ ժողովրդական **«Երեւան»** թերթը» [Հայ մամուլը Յունաստանի մէջ: Հետազոտութիւն Արմենիքա, 2009, 15-29]:

Կարևոր պարբերականներից են՝

«Ազատ օր»՝ ազգային, քաղաքական, գրական, հասարակագիտական օրաթերթ, լոյս է տեսնում 1945 թ.-ից, Աթէնքում: Տպագրում է հիմնականում քաղաքական բնույթի հոդվածներ, միջազգային և հայաստանյան լուրեր, արտատպում հոդվածներ Հայաստանի և սփյուռքի մամուլից, լուսաբանում հունահայ համայնքի ազգային կյանքը⁷⁴:

⁷⁴ Տե՛ս Հայաստանի ազգային գրադարանի «Հայ մամուլ» շտեմարան, URL: <https://is.gd/hPte48>, 20.12.2024.

«Արմենիկա խրոնիկա»՝ «Ազատ օր»-ի երկամսյա հունարեն, գունավոր հավելվածն է, ՀՀԴ Հայ դատի հանձնախմբի պարբերաբերը: «Ազատ օր» թերթի կարևոր նյութերի հունարեն ամփոփումն է՝ նախատեսված հունախոս հայերի և հույն ընթերցողների համար:

«Արևազայ»՝ գրականության և արվեստի պարբերաբերը: Լույս է տեսել 1937-1939 թթ., Աթենքում: Տպագրել է հայ և օտար հեղինակների ստեղծագործություններ, գրականագիտական, բանասիրական հանդեսներ: Լուսաբանել է հունահայ համայնքի ազգային և մշակութային կյանքը⁷⁵:

«Արևելք»՝ հասարակական-քաղաքական օրաբերը: Լույս է տեսել 1930-1936 թթ., Սալոնիկում: 1934 թ.-ից՝ ՌԱԿ պաշտոնաբերը: Տպագրել է միջազգային լուրեր, լուսաբանել սփյուռքահայության, մասնավորապես՝ հունահայ գաղութի հասարակական կյանքը:

«Դրոշակ»՝ կիսամսյա, ապա՝ ամսաբերը, ՀՀԴ պաշտոնաբերը: Լույս է տեսնում 1891 թ.-ից՝ ընդհատումներով (Ժնևում՝ 1891-1914 թթ., Փարիզում՝ 1925-1934 թթ., Բեյրութում՝ 1969-1985 թթ., Աթենքում՝ 1986-1998 թթ.), 1999 թ.-ից հրատարակվում է Երևանում: Հրապարակել է ՀՀԴ բյուրոյի կոչերն ու հայտարարությունները, ՀՀԴ ընդհանուր ժողովների նյութերը, մեկնաբանել կուսակցության քաղաքականությունը Հայ դատի կապակցությամբ:

«Երիտասարդական կանչ»՝ Կոմոտինիի Հայ ուսանողական միության պարբերաբերը: Լույս է տեսնում 1995 թ.-ից՝ հայերեն և հունարեն:

«Երկիր»՝ քաղաքական և գրական շաբաթաբերը: ՌԱԿ պաշտոնաբերը: Հրատարակվել է 1957-1968 թթ., Աթենքում: Լուսաբանել է Հունաստանի հայ համայնքի, ինչպես նաև սփյուռքի հասարակական-մշակութային կյանքը, հայրենադարձության հարցեր⁷⁶:

«Էլլինո Արմենիկա»՝ եռամսյա հանդես (հունարեն): Լույս է տեսնում 1991 թ.-ից, Աթենքում: Տպագրում է Հայ դատի, հայ ժողովրդի պատմության, արվեստի, գրականության, քաղաքականության հարցերին նվիրված նյութեր: Հայտնի է հունական միջավայրում, հատկապես մտավորականների և քաղաքագետների շրջանակներում:

«Հայաստան»՝ հասարակական-քաղաքական, մշակութային ամսաբերը: Լույս է տեսնում 2001 թ.-ից, Աթենքում: Լուսաբանում է հունահայության ազգային կյանքը, անդրադառնում Հայաստանից եկած հայրենակիցների հասարակական, կրթական և մշակութային խնդիրներին⁷⁷:

«Նոր ալիք»՝ հասարակական-քաղաքական օրաբերը: Լույս է տեսել 1924-1928 թթ., Սալոնիկում: Տպագրել է նյութեր հայ մշակույթի, գրականության ու պատմության վերաբերյալ, անդրադարձել ՀՕԿ-ի և այլ հասարակական կազմակերպությունների գործունեությանը, աջակցել ներգաղթին: Ներկայացրել է միջազգային քաղաքական կացությունը, հրատարակել նմուշներ հայ և օտար գեղարվեստական գրականությունից⁷⁸:

«Նոր աշխարհ»՝ ազգային, մշակութային, հասարակական շաբաթաբերը, ՌԱԿ Հունաստանի շրջանային վարչության պաշտոնաբերը: Լույս է տեսնում 1968 թ.-ից, Աթենքում: 1980 թ.-ից հրատարակվում է նաև հունարեն հավելվածով: Հիմնականում նյութերը ՌԱԿ-ի մամուլից արտատպություններ են, անդրադառնում է նաև մշակութային կյանքին, հայաստանյան իրադարձություններին⁷⁹:

«Նոր շարժում»՝ քաղաքական, աշխատավորական շաբաթաբերը: Լույս է տեսել 1931-1934 թթ., Աթենքում: Լուսաբանել է ՀՕԿ-ի հունահայ կազմակերպությունների աշխատանքները, հրատարակել Խորհրդային Միության և Հայաստանի պետական, կուսակցական գործիչների հայտարարություններ, ելույթներ, տպագրել հայ հեղինակների արձակ և չափածո գործեր⁸⁰:

«Նոր սերունդ»՝ մարզական պատկերազարդ ամսագիր: Լույս է տեսել 1926-1929 թթ., Աթենքում: Շարունակել է հունահայ մարզական պարբերականների ավանդույթները,

⁷⁵ Տե՛ս Հայաստանի ազգային գրադարանի «Հայ մամուլ» շտեմարան, URL: <https://is.gd/SfSTCU>, 20.12.2024.

⁷⁶ Տե՛ս Հայաստանի ազգային գրադարանի «Հայ մամուլ» շտեմարան, URL: <https://is.gd/pcDzwX>, 20.12.2024.

⁷⁷ Տե՛ս Հայաստանի ազգային գրադարանի «Հայ մամուլ» շտեմարան, URL: <https://is.gd/dEOVaU>, 20.12.2024.

⁷⁸ Տե՛ս Հայաստանի ազգային գրադարանի «Հայ մամուլ» շտեմարան, URL: <https://is.gd/PA48Ze>, 20.12.2024.

⁷⁹ Տե՛ս Հայաստանի ազգային գրադարանի «Հայ մամուլ» շտեմարան, URL: <https://is.gd/y4e3BU>, 20.12.2024.

⁸⁰ Տե՛ս Հայաստանի ազգային գրադարանի «Հայ մամուլ» շտեմարան, URL: <https://is.gd/dTcnng>, 20.12.2024.

լուսաբանել Հունաստանի և այլ երկրների մարզական կյանքը, ներկայացրել հայ անվանի մարզիկներին: Տպագրել է անվանի բժիշկների ու մանկավարժների հոդվածներ:

«**Շողակաթ**» Արևելյան Մակեդոնիայի և Թրակիայի հայ հոգևոր հովվության պարբերաթերթ: Լույս է տեսնում 1990 թ.-ից, Կոմոտինիում, ունի կրոնադաստիարակչական բնույթ:

«**Օլիմպոս**» բժշկաառողջապահական և գրական ամսաթերթ: Լույս է տեսել 1926-1928 թթ., Մալոնիկում, ապա՝ Աթենքում: Տպագրել է առողջապահական և բնագիտական նյութեր, ինչպես նաև գրական-գեղարվեստական գործեր, մանկավարժական հոդվածներ, գեղարվեստական ստեղծագործություններ⁸¹ [Հայ սփյուռք հանրագիտարան, 2003, 377-378]:

Այժմ ներկայացնենք վերոնշյալ երկրում տպագրված հայ մամուլից որոշ արժեքավոր նյութեր և հոդվածներ:

«**Ազատ օր**» թերթում (Աթենք, 2001, համար 17077) տպագրված է «Առնօ Պապաճանեանի 80-ամեակին նուիրում փառատօն» վերնագրով հոդվածը⁸²:

«**Ազատ օր**» թերթում (Աթենք, 2003, համար 17583) տպագրված է «Նիկոլ Աղբալեան հայ գիրի մասին «Հայ այբուբենը գլուխ գործոց է» վերնագրով հոդվածը: Նույն համարում տպագրված է նաև «Ն. Աղբալեան Սայաթ Նովայի մասին» վերնագրով հոդվածը⁸³:

«**Նոր աշխարհ**» թերթում (Աթենք, 2016, համար 1-2) տպագրված է «Իրանի Հայկական Սուրբ Ստեփանոսը Աշխարհի Ամենագեղեցիկ Եկեղեցիներէն է» վերնագրով հոդվածը⁸⁴:

«**Նոր աշխարհ**» թերթում (Աթենք, 2016, համար 1-2) տպագրված է Արամ Մեփեթճեանի հեղինակած «Արեւմտայերէնի Պարտադիր Գոյամարտը Սփիւռքի Տարածքին» վերնագրով հոդվածը (Արեւմտահայերէնի՝ աշխարհում գործածվող վտանգված լեզուների ցանկում գտնվելու մասին)⁸⁵:

«**Նոր աշխարհ**» թերթում (Աթենք, 2016, համար 41-42) տպագրված է «Պատմական Անին Կ'ընդգրկուր Համաշխարհային Մշակութային Ժառանգութեան Յանկի Մէջ» վերնագրով հոդվածը⁸⁶:

«**Նոր աշխարհ**» թերթում (Աթենք, 2017, համար 9) տպագրված է «Այվազովսկիի «Կոստանդնուպոլսոյ և Բոսֆորի Նեղուցի Տեսարանը» Ամենաթանկ Կտաներու Շարքին» վերնագրով հոդվածը⁸⁷:

«**Նոր աշխարհ**» թերթում (Աթենք, 2019, համար 43) տպագրված է Զաւէն Գ. Գրիգորեանի հեղինակած «Կոմիտաս մարդը: Հանճար Անմահ Կոմիտաս Վարդապետ Ծննդեան 150-ամեակին Առթիւ» վերնագրով հոդվածը (Հուշագրություններ Կոմիտաս Վարդապետի մասին): Նույն համարում տպագրված է նաև Դոկտ. Զաւէն Ա. քննյ. Արզումանեանի հեղինակած «150-ամեակ Ծննդեան Կարապետ Արքեպիսկոպոս Մազլըմեան (1870-1951) Յունահայ Գաղութը 30 դարոցներ, 35 Պարբերականներ, 5 Համայնքներ» վերնագրով հոդվածը (Հունահայ թեմի առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոս Մազլըմյանի ջանքերով հունահայ համայնքում 30 հայկական դպրոց հիմնվելու, 35 պարբերական հրատարակվելու, հայկական եկեղեցիներ կառուցվելու, մշակութային մարզական կյանքը ծաղկելու մասին)⁸⁸:

«**Նոր աշխարհ**» թերթում (Աթենք, 2020, համար 30) տպագրված է «Սուրբ Սոփիայի տաճարին մէջ հայկական հետքեր» վերնագրով հոդվածը (Սուրբ Սոփիայի տաճարի մուտքերից մեկը «Դուռն

⁸¹ Տե՛ս Հայաստանի ազգային գրադարանի «Հայ մամուլ» շտեմարան, URL: <https://is.gd/XHAIKx>, 20.12.2024.

⁸² Տե՛ս Հայաստանի ազգային գրադարանի «Հայ մամուլ» շտեմարան, URL: <https://is.gd/hPte48>, 20.12.2024.

⁸³ Տե՛ս Հայաստանի ազգային գրադարանի «Հայ մամուլ» շտեմարան, URL: <https://is.gd/fqRPjK>, 20.12.2024.

⁸⁴ Տե՛ս Հայաստանի ազգային գրադարանի «Հայ մամուլ» շտեմարան, URL: <https://is.gd/rqln7v>, 20.12.2024.

⁸⁵ Տե՛ս Հայաստանի ազգային գրադարանի «Հայ մամուլ» շտեմարան, URL: <https://is.gd/rqln7v>, 20.12.2024.

⁸⁶ Տե՛ս Հայաստանի ազգային գրադարանի «Հայ մամուլ» շտեմարան, URL: <https://is.gd/qfY1rs>, 20.12.2024.

⁸⁷ Տե՛ս Հայաստանի ազգային գրադարանի «Հայ մամուլ» շտեմարան, URL: <https://is.gd/ArAMeQ>, 20.12.2024.

⁸⁸ Տե՛ս Հայաստանի ազգային գրադարանի «Հայ մամուլ» շտեմարան, URL: <https://is.gd/2I69e7>, 20.12.2024.

Հայոց» անվանվելու, տաճարում Անիի մայր տաճարի ճարտարապետ Տրդատի անունը հանդիպելու մասին)»⁸⁹:

SUMMARY

We touched upon the Armenian-Greek relations, the Armenian community, and the Armenian press in Greece. Due to historical and political circumstances, Armenians also settled in Greece. They created their own community structures, published the Armenian press and so on. The Armenian press of Greece touches on various issues: community life, Homeland-Diaspora relations, highlights the problems of the Armenian community of Greece, etc. The Armenian press in Greece plays a major role in preserving the Armenian identity within the Greek-Armenian community, especially among the younger generation, and contributes to the preservation of the Armenian language, traditions and customs.

Among the databases on the website of the National Library of Armenia, the Armenian Press database is also important, where the main bibliographic data of periodicals with serial numbers are entered. Digital copies of periodicals are posted under the “read online” link.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբրահամյան Ա., Գիրք Բ / Խմբ.՝ Ե. Սարգսյան, Երևան, «Հայաստան» հրատ., 1967, 424 էջ:
2. Գասպարյան Ս., Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր: Մշակութային կյանքի ուրվագիծ, Երևան, Հայպետհրատ, 1962, 248 էջ:
3. Կոկինոս Պ., Հունահայ գաղութի պատմությունից (1918-1927) \ Խմբ.՝ Մ.Կ. Մարտիկյան, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1965, 266 էջ:
4. Հայ գրատպություն և գրքարվեստ: Հանրագիտարան, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Երևան, Հայկական հանրագիտարան հրատ., 2015, 1120 էջ:
5. Հայ մամուլը Յունաստանի մեջ = Ο αρμενικός Τύπος στην Ελλάδα: Հետազոտություն Արմենիքա: Գրություններ՝ Յովհաննես-Սարգիս Աղապատեան / Հայ. թարգմ.՝ Յ. Քիրքճեան, առաջաբանը՝ Ի. Խասիդիսի, հրատ. պատրաստություն՝ Մայք Չիլինկիրեան, Աթենք, հրատարակություն «Արմենիքա» պարբերաբերթի, 2009, 65 էջ:
6. Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794-1967): Համահավաք ցանկ / Կազմ.՝ Ա. Կիրակոսյան, խմբ. և առաջաբ.՝ Հ. Կոստիկյան, Հ. Սիլվանյան, ՀՍՍՀ Կուլտուրայի մինիստրություն, Երևան, ՀՍՍՀ Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարանի կոմպլեկտավորման բաժին, 1970, 621 էջ:
7. Հայ սփյուռք հանրագիտարան / Խմբ. հանձնաժողով՝ Հ. Այվազյան և ուրիշ., Երևան, Հայկական հանրագիտարան հրատ., 2003, 731 էջ:
8. Հայաստանի ազգային գրադարանի կայքի «Հայ մամուլ շտեմարան» [Էլեկտրոնային աղբյուր] URL: <https://is.gd/CJN5i1>, 22.07.2024:
9. Հունական արխիվային փաստաթղթեր հայ-հունական հարաբերությունների մասին առաջին հանրապետության շրջանում: (1918-1920) / Թարգմ. հունարենից՝ Հ.Մ. Բարթիկյան, Երևան, 1998, 137 էջ:
10. Հունաստանի Խորհրդարանը դատապարտում է Հայոց ցեղասպանությունը: ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա, Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 1997, 40 էջ:
11. Մելիքսեթյան Հ., Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը: (1920-1980 թթ.), Երևան, Երևանի համալս. հրատ., 1985, 475 էջ:
12. Մինասյան Է., Հայաստանի երրորդ Հանրապետության պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2013, 624 էջ:

⁸⁹ Տե՛ս Հայաստանի ազգային գրադարանի «Հայ մամուլ» շտեմարան, URL: <https://is.gd/q9aE4j>, 20.12.2024.

ՀԱՅ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ.
ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՏ

Բանալի բառեր՝ թարգմանական գրականություն, մատենագիտություն, լեզուներ, գեղարվեստական գրականություն, ժողովածուներ, արտասահմանյան գրականություն, մատենագիտական նկարագրություններ:

Keywords: translation literature, bibliography, languages, fiction, collections, foreign literature, bibliographic descriptions.

Հայաստանում դեռ նախագրային շրջանում բանավոր թարգմանությունները կատարվում էին ասորերենից և հունարենից: «Երբ երանելի Մեսրոպն ուսուցանում էր,- գրել է Խորենացին,- ոչ փոքր նեղություն էր կրում, որովհետև ինքն էր թե կարդացողը, և թե թարգմանողը, և եթե մի ուրիշն էր կարդում, երբ ինքն այնտեղ չէր լինում, ժողովրդին անհասկանալի էր մնում՝ թարգմանիչ չլինելու պատճառով: Ուստի նա միտքը դրեց մի հնար գտնել, հայոց լեզվի համար տառեր ստեղծել...» [Մարտիրոսյան, 1964, 452]:

5-րդ դարում, տառերի ստեղծումից անմիջապես հետո, «ս. Սահակ և ս. Մեսրոպ, անբաժանելի զույգը, հայ մտքի լուսավորիչները, հայ գիրերու հնարիչները ու Աստվածաշունչի աննման թարգմանիչները, մեր եկեղեցվո հայացման առաջին ռահվիրանները» ձեռնամուխ եղան «Աստվածաշունչի» թարգմանությանը [Սիոն արքեպ. Մանուկյան, 1973, 34]: Ասորերենից կատարված թարգմանությունը անգնահատելի նշանակություն ունեցավ ձևավորվող գրական հայերենի համար, որը փայլում էր թե իր բարձր գեղարվեստականությամբ և թե լեզվի անարատությամբ:

Միջնադարյան Հայաստանում թարգմանական գրքերը համարվել են ազգային մշակույթի սեփականություն և համարժեք դիտվել ոչ թարգմանական գրքերի կողքին: Ազգային մշակույթի զարգացման համար թարգմանիչների գործունեության բացառիկ նշանակությունը լիովին գիտակցվեց արդեն 5-րդ դարում, երբ թարգմանիչները սրբադասվեցին և սահմանվեց թարգմանչաց տոնը: Հայ գրականության պատմությունը ցույց է տալիս, որ հին և միջին դարերում կատարված բազմաթիվ թարգմանություններ մեծապես օգնել են հայ ժողովրդին դիմագրավելու վտանգը, պաշտպանելու և զարգացնելու ազգային մշակույթը: Տիրապետելով մի շարք լեզուների, միջնադարյան հայ մշակույթի գործիչները հնարավորություն ունեին անմիջապես բնագրով հաղորդակցվելու այլ ազգային գրականությունների նվաճումներին: Նրանք կարդում էին ասորերեն, հունարեն, լատիներեն, պարսկերեն, իսկ ավելի ուշ՝ արաբերեն և ֆրանսերեն ձեռագրեր:

Թարգմանիչների մասին հետաքրքրական տեղեկություններ ենք գտնում հայ վարքագրություններում: XI-XII դարերի թարգմանությունների հիշատակարաններից և ժամանակակիցների վկայություններից մեզ է հասել Գրիգոր Վկայասերի անունը. «Նա նորից լուսավորեց ու պայծառացրեց հայոց եկեղեցին սուրբ Լուսավորչի և Սահակ ու Մեսրոպ թարգմանիչների նման, քանզի թարգմանության շնորհք ունենալով, միշտ քննում էր բոլոր ազգերի գրքերը, և պիտանիները, որոնք պակասում էին մեր լեզվում, ջանասիրաբար թարգմանում էր անձամբ, կամ այլ հմուտ մարդկանց օգնությամբ» [Տեր-Պետրոսյան, 1984, 29]: Այստեղ նշված է նաև, որ «թարգմանչական սկզբունքը եղել է բնագրի հարազատ, բայց ոչ ստրկական վերարտադրությունը, որ հնարավորություն էր տալիս առանց մեղանչելու հայոց լեզվի օրինաչափությունների դեմ, ճշգրիտ կերպով արտահայտել բնագրի բովանդակությունը և իմաստային երանգները» [Նույն տեղում, 10]: Եվ զարմանալի չէ, որ շատ թարգմանություններ հնչում էին որպես ինքնուրույն երկեր՝ մաքուր և զորեղ: Ավելին, հենց թարգմանիչներն են եղել հայ

առաջին գրողները: Աստվածաշնչի (հատկապես Սողոմոնի առակների և սաղմոսների), ինչպես և հունական ու ասորական հոգևոր բանաստեղծության ազդեցությամբ նրանք ստեղծեցին իրենց սեփական երկերը:

Թարգմանական ստեղծագործությունները միայն այն ժամանակ են ներգործության ուժ ստանում, երբ դրանց անհրաժեշտությունը զգացվում է: Թարգմանվող գրքերի համար ազգային գրականության մեջ միշտ էլ ազատ տեղ է լինում: Աշխարհի բոլոր գրականություններում նման ազատ տեղ անպայման կա Հոմերոսի, Դանթեի, Շեքսպիրի, Նարեկացու, Ռուսթավելու, Քուչակի, Նիզամու, Պուշկինի, Տոլստոյի, Դոստոևսկու և բոլոր մեծ գրողների համար:

Խորհրդային միության տարիներին թարգմանությունները կատարվում էին աշխարհի տարբեր լեզուներից և՛ հակառակը, հիմնականում գերակշիռ մասը թարգմանվում էր ռուսերենով: Սակայն հայերեն թարգմանություններ կատարվել են շուրջ յոթանասուն լեզվից: Աշխարհի դասական և ժամանակակից գրականության գոհար հանդիսացող հազարավոր թարգմանված գրքեր ունեցել են բազմաթիվ հրատարակություններ: Վերջիններիս մատենագիտական տվյալները հավաքագրված են մի շարք ժողովածուներում, որոնք հայ թարգմանիչների սխրանքի վառ վկայությունն են:

Կազմված նմանատիպ մատենագիտությունների շարքում, Հայաստանի ազգային գրապալատը, իսկ հետագայում Հայաստանի ազգային գրադարանը նույնպես հրատարակել են հայ թարգմանական գրականության մատենագիտություններ, որոնք իրենց մեջ ներառում են ինչպես գեղարվեստական, այնպես էլ տարբեր բնագավառներին վերաբերող գրքեր: Ըստ հրատարակման ժամանակագրության վերջիններս լույս են տեսել հետևյալ հաջորդականությամբ՝

1. Սովետահայ թարգմանական գեղարվեստական գրականություն (1920-1980). Մատենագիտություն, Երևան, ՀՍՍՀ պետական գրապալատ, 1983, 778 էջ:
2. Հայ թարգմանական գեղարվեստական գրականություն (1981-2010). Մատենագիտություն, Երևան, Հայաստանի ազգային գրապալատ, 2011, 216 էջ:
3. Հայ թարգմանական գրականություն. Մատենագիտություն 1920-2010: Գիրք Ա. 1920-1970. Երևան, Հայաստանի ազգային գրապալատ, 2013, 600 էջ:
4. Հայ թարգմանական գրականություն. Մատենագիտություն 1920-2010. Գիրք Բ. 1971-2010, Երևան, Հայաստանի ազգային գրապալատ, 2014, 468 էջ:
5. Հայ թարգմանական գրականություն. Մատենագիտություն 2011-2020. Գիրք Գ, Երևան, Հայաստանի ազգային գրադարան, 2021, 252 էջ:

«Սովետահայ թարգմանական գեղարվեստական գրականություն (1920-1980). Մատենագիտություն»-ը կազմվել և հրատարակվել է Հայաստանի ազգային գրապալատում 1983 թ., կազմողներ՝ Գ.Գ. Հակոբյան, Գ.Ս. Միրիջանյան, Լ.Ս. Ջաբլյան, խմբագիրներ՝ Գ.Գ. Հակոբյան, Գ.Ս. Գրիգորյան: Այն ընդգրկում է 1920-1980 թթ. Խորհրդային Հայաստանում, ինչպես նաև ԽՍՀՄ տարբեր քաղաքներում հայերեն լեզվով լույս տեսած գեղարվեստական թարգմանական գրքերի մատենագիտական նկարագրությունները ըստ երկրների: Գիրքը սկսվում է պրոֆ. Լևոն Մկրտչյանի ներածականով, ով սկսել է իր շարադրանքը «...Իմանալ զբանս հանճարոյ» հայերեն թարգմանված առաջին նախադասությամբ: Մատենագիտությունը կազմված է հետևյալ հաջորդականությամբ.

- Աշխարհի ժողովուրդների գրականություն,
- ՄՍՀՄ ժողովուրդների գրականություն,
- ՄՍՀՄ առանձին ժողովուրդների գրականություն (ռուս գրականություն, այնուհետև մնացած ազգերինը՝ այբբենական կարգով),
- Արտասահմանյան երկրների ժողովուրդների գրականության ժողովածուներ,
- Արտասահմանյան առանձին երկրների գրականություն (այբբենական կարգով):

Ժողովածուում ընդգրկված է նաև «Նախասովետական շրջանի թարգմանական գեղարվեստական գրականություն» հավելվածը, ուր ներկայացված են 19-20-րդ դարերում աշխարհի տարբեր երկրներում հրատարակված թարգմանված գրքերը՝ Ալեքսանդրապոլ, Ախալցխա, Բաթում, Բաքու, Երուսաղեմ, Թիֆլիս, Կոստանդնուպոլիս, Ժնև, Մոսկվա, Նոր

Նախիջևան, Շուշի, Պետերբուրգ, Ռոստով-Դոն, Սամարդանդ, Վաղարշապատ, Վենետիկ, Փարիզ: Երևանում տպագրված գրքերը շատ քիչ մաս են կազմել: Ամենաշատ թարգմանված հեղինակներից են Օսկար Ուայլդը, Լև Տոլստոյը, Ալֆոնս Դոդեն, Զարլզ Դիկենսը, Գյոթեն, Էդմոնդո դե Ամիչիսը, Հանս Քրիստիան Անդերսենը և այլն:

Մատենագիտական ժողովածուն ունի բոլոր անհրաժեշտ ցանկերը, որոնք դյուրացնում են ընթերցողի աշխատանքը, փնտրելու հեղինակին, գիրքը, թարգմանչին ու երկիրը: Իսկ նյութերը մեկ անգամ ևս վկայում են համաշխարհային գրականության հետ հայ գրականության խոր և տևական կապերի մասին: Սույն ժողովածուն հիմնականում կազմվել է ՀՍՍՀ պետական գրապալատի գրքային ֆոնդի հիման վրա, դրանք համեմատելով Մոսկվայի պետական գրադարանի և Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարանի քարտարանների հետ: Օգտագործվել են նաև մատենագիտական բազմաթիվ աղբյուրներ: Գրքերի նկարագրությունները կատարվել են մատենագիտության մեջ կիրառվող պետական ստանդարտի պահանջներին համապատասխան: Նկարագրությունների վերջում բացվել են բոլոր գրքերի բովանդակությունները՝ պատմվածքներ, բանաստեղծություններ, վիպակներ, ինչպես նաև տարբեր հեղինակների կամ երկրների ժողովածուները նկարագրելիս գրվել է համապատասխան երկրի անունն ու հեղինակի տվյալները: Գիրքն ունի հետևյալ ցանկերը՝ հեղինակների, թարգմանիչների, կազմողների, խմբագիրների, առաջաբանների և վերջաբանների հեղինակների, վերնագրերի և հրատարակման վայրերի: 1920-1980 թթ. ամենաշատ թարգմանված հեղինակներից են Բոնչ-Բրունիչը, Բրյուսովը, Լերմոնտովը, Շերեթելին, Հյուգոն, Պուշկինը, Օմար Խայամին:



[Advanced search](#) | [Authority search](#) | [Tag cloud](#)

☒ Normal view
 ☐ MARC view
 ☐ ISBD view



Սովետահայ թարգմանական գեղարվեստական գրականություն (1920-1980) : Մատենագիտություն = Армянская советская переводная художественная литература (1920-1980) : Библиография /

by [Հակոբյան, Գ.Գ \[com\]](#); [Միրիջանյան, Գ.Ս \[com\]](#); [Զաբյան, Լ.Ս \[com\]](#); [Հակոբյան, Գ.Գ \[edt\]](#); [Գրիգորյան, Գ.Ս \[edt\]](#); [Հրատարակչությունների, պոլիգրաֆիայի գրքի առևտրի գործերի պետական կոմիտե ՀՍՍՀ;](#) [Հայաստանի ազգային գրապալատ.](#)

Type: ☒ Book

Publisher: Երևան : [ՀՍՍՀ պետական գրապալատ](#), 1983

Description: 783 էջ : 22 սմ.

Subject(s): [Սովետական գրականություն -- Հայերեն թարգմանություններ -- Մատենագիտություն](#) | [Հայ մատենագիտություն](#) | [ՀԱԳ](#)

Online resources: [Կարդալ առցանց](#)

Tags from this library:

No tags from this library for this title.

★★★★★ average rating: 0.0 (0 votes)


No physical items for this record

Հայ թարգմանական գեղարվեստական գրականություն (1981-2010). Մատենագիտությունը նախորդ ժողովածուի շարունակությունն է, որի մեջ ընդգրկված է 1981-2010 թվականներին Հայաստանի Հանրապետությունում լույս տեսած գեղարվեստական թարգմանական գրականությունը: Հրատարակվել է 2011 թվականին Հայաստանի ազգային գրապալատում:

Գիրքը կազմել են հետադարձ մատենագիտության բաժնի մատենագետները (Հակոբջանյան Մ., Սինանյան Թ., Ներսեսյան Ա., Սարաֆյան Ռ., Ասատրյան Կ.) [Հայ թարգմանական գեղարվեստական գրականություն (1981-2010), 2011]: Սույն ժողովածուն ունի հետևյալ հաջորդականությունը՝ նախ ընդգրկված են արտասահմանյան երկրների ժողովուրդների գրականության ժողովածուները, հետո՝ արտասահմանյան առանձին երկրների գրականությունը՝ դասավորված այբբենական կարգով: Վերջում առանձնացված են քրդական, անտիկ և հին արևելքի թարգմանված գրականությունը: Ժողովածուն հիմնականում կազմվել է Հայաստանի ազգային գրապալատի, Հայաստանի ազգային գրադարանի, Խնկո Ապոբ անվան ազգային մանկանան և այլ գրադարանների գրքային ֆոնդերի հիման վրա, ինչպես նաև օգտագործվել են այլ մատենագիտական աղբյուրներ: Ելնելով այդ տարիների պատմական առանձնահատկություններից, հիմնականում ԱՊՀ երկրների գեղարվեստական գրքերի թարգմանությունները արվել են ռուսերենից, իսկ մյուս երկրների թարգմանությունները՝ բնագրերից (անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն, պորտուգալերեն, բուլղարերեն, գերմաներեն, դանիերեն, թուրքերեն, պարսկերեն, արաբերեն, լեհերեն, հունարեն, նորվեգերեն, շվեդերեն, չեխերեն, ռումիներեն, սերբերեն, վրացերեն, ուկրաիներեն և այլն): Բոլոր գրառումները համարակալվել են և ամփոփվել ցանկերում ըստ աճման հաջորդականության:


Եթե տվյալ հեղինակից թարգմանված է մի քանի գիրք, ապա դրանք դասավորվել են սզբում՝ երկերի ժողովածուները, այնուհետև՝ առանձին երկերը այբբենական կարգով: Իսկ եթե նույն հեղինակի նույն գիրքը հրատարակվել է մի քանի անգամ, ապա տվյալ հրատարակությունները դասավորվել են ժամանակագրական կարգով: Եթե հեղինակը կրկնվել է երկու կամ ավելի անգամ, նրա անուն-ազգանուն-հայրանունը ամբողջությամբ գրվել է միայն առաջին գրանցման ժամանակ, մնացած բոլոր դեպքերում ազգանվան հետ գրվել է միայն անվան և հայրանվան սկզբնատառերը: Յուրաքանչյուր գրքի նկարագրություն ունի իր ռուսերեն թարգմանությունը:

Ինչպես նախորդ ժողովածուն, սա նույնպես ընդգրկում է բոլոր անհրաժեշտ և օժանդակ ցանկերը: Մատենագիտական գրառումները կատարվել են Հայաստանի ազգային գրապալատի կողմից հաստատված պայմանական կրճատումներով: Այս ժողովածուում նույնպես բացված են գրքերի բովանդակությունները: Որպես պետական մատենագիտության պարտադիր պայման, մատենագիտական նկարագրություններում առկա է նաև համապատասխան գրքի չափերը, գինը և տպաքանակը, իսկ որոշակի տարեթվից հետո գրվել է նաև ISBN կոդը, որը տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման զուգընթաց ավելի է դյուրացնում ցանկացած գրքի որոնումը էլեկտրոնային տարբերակով:



Հաջորդ երեք գրքերը ծավալով և բովանդակությամբ ամբողջովին տարբերվում են նախորդ ժողովածուներից: Այստեղ ընդգրկված են ոչ միայն գեղարվեստական թարգմանական գրականությունը, այլ բոլոր բնագավառներին վերաբերող թարգմանված գրքերը:

1. Հայ թարգմանական գրականություն. Մատենագիտություն 1920-2010: Գիրք Ա. 1920-1970, Երևան, Հայաստանի ազգային գրապալատ, 2013, 600 էջ:
2. Հայ թարգմանական գրականություն. Մատենագիտություն 1920-2010. Գիրք Բ. 1971-2010, Երևան, Հայաստանի ազգային գրապալատ, 2014, 468 էջ:
3. Հայ թարգմանական գրականություն. Մատենագիտություն 2011-2020. Գիրք Գ. Երևան, Հայաստանի ազգային գրադարան, 2021, 252 էջ:



Գիրք Ա-ն և գիրք Բ-ն ընդգրկում են 1920-2010 թթ. թարգմանված գրականությունը: Հաշվի առնելով գրառումների մեծ քանակը, որոնք հավաքվել են իննսուն տարավա ընթացքում, այն թողարկվել է երկու գրքով՝ Գիրք Ա-ն ընդգրկում է 1920-1970 թթ., իսկ Գիրք Բ-ն 1971-2010 թթ.: Առաջին գրքում՝ 1920-1970 թթ. պատմական անցյալից ելնելով՝ գերակշռում են Վ. Լենինի, Ն. Բուխարինի, Ֆ. Էնգելսի, Կ. Մարքսի, Ի. Ստալինի աշխատությունների և երկերի թարգմանությունները: Թարգմանիչների ցանկում ամենաշատը հանդիպում են Ս. Զորյանի, Խնկո Ապր, Հ. Թումանյանի, Ա. Խոնդկարյանի, Հ. Հայրապետյանի, Հ. Հարությունյանի, Հ. Մազմանյանի, Վ. Միքայելյանի, Հ. Ջաղերյանի անունները: Հիմնականում գրքերը հրատարակվել են Երևանում «Հայպետհրատ» հրատարակչությունում: Կան նաև թարգմանություններ հրատարակված Մոսկվայում, Ռոստով-Դոնում, Թիֆլիսում, Էջմիածնում, Ղարաբաղի խայտում, Մարտունավանում:

Սույն ժողովածուն խիստ տարբերվում է նախորդներից: Այստեղ ընդգրկված են բոլոր բնագավառներին և գիտություններին վերաբերող թարգմանված գրքեր, ուստի դրանց տեղաբաշխումը կատարված է ըստ համընդհանուր տասնորդական դասակարգման (УДК) կրկին այբբենական կարգով: Գիրք Ա-ն հրատարակվել է 2013 թ., իսկ Գիրք Բ-ն 2014 թ., Հայաստանի ազգային գրապալատում: Առաջին գիրքը ընդգրկում է հիսուն տարվա ընթացքում թարգմանված գրքերի մատենագիտական նկարագրությունները և կազմված է 600 էջից, իսկ երկրորդը՝ քառասուն տարվա ընթացքում և կազմված է 468 էջից:

Search Library catalog Go Cart Lists

Advanced search | Authority search | Tag cloud

Normal view MARC view ISBD view

**Հայ թարգմանական գրականություն :
Մատենագիտություն 1920-2010: Գիրք Ա.1920-1970 /**
**by Սինանյան, Թ. Վ. [com]; Ներսեսյան, Ա. Ա. [com];
Ասատրյան, Կ. Մ. [com]; Հակոբջանյան, Մ. Ս. [edt];
Հայաստանի ազգային գրապալատ.**

Type: Book
Publisher: Երևան : Հայաստանի ազգային գրապալատի հրատարակչություն, 2013
Description: 600 էջ.
ISBN: 978-99930-50-35-3 .
Subject(s): Համաշխարհային գրականություն -- Հայերեն թարգմանություններ -- Մատենագիտություն | Հայերեն թարգմանություններ -- Մատենագիտություն 1920-1970 | ՀԱԳ
Online resources: Կարդալ առցանց
Tags from this library:
No tags from this library for this title.

Browse results
Previous Back to result
Print
Add to your cart
Unhighlight
Search for this title in:
Other Libraries (WorldCat)
Other Databases (Google Sc)
Online Stores (Bookfinder.cc)
Open Library (openlibrary.org)

Գիրք Բ-ի հիմնական մասը կազմում է գեղարվեստական թարգմանական գրականությունը: Այս ժամանակահատվածում (1971-2010 թթ.) սկսել են թարգմանել արտասահմանյան գրողների և օտարալեզու հայ գրողների գործերը՝ Շ. Ազնավուր, Ջ. Բայրոն, Շ. Բոդլեր, Գրիմ Եղբայներ, Գ. Մարկես, Շ. Պերո, Վ. Սարոյան, Լ.-Ջ. Սյուրմեյան, Օմար Խայամ, Ֆիրդուսի և այլն:

Մատենաշարային հրատարակչություններից գերակշռում են «Համաշխարհային պոեզիա», «Կարդում ենք երեխաների համար», «Ռուս դասականների գրադարան», «Ուսանողի գրադարան», «Օգնություն դասախոսին» մատենաշարերը: Այս ժողովածուում ընդգրկված բոլոր գրքերը ունեն իրենց հերթական համարները, որոնք հեշտացնում են տվյալ գրքի հեղինակի, թարգմանչի, կազմողների, նկարիչների, վերնագրի կամ հրատարակման վայրի մասին տեղեկությունները փնտրել ցանկերում:

Հայ թարգմանական գրականություն. Մատենագիտություն 2011-2020. Գիրք Գ.-ն Հայաստանի ազգային գրապալատի վերամիավորումից հետո հրատարակվել է Հայաստանի ազգային գրադարանում 2021 թվականին: Քանի որ այն 2013 թ. թողարկված նույնանուն գրքի շարունակությունն է, խմբագրական խորհուրդը որոշել է այն վերնագրել Գիրք Գ. (2011-2020): Բաղկացած է 252 էջից, ինչպես նաև պահպանվել են այն բոլոր ձևաչափերն ու չափորոշիչները, որով թողարկվել են նախորդ Ա. և Բ. գրքերը:

Գրքի ծանրակշիռ մասը կազմում է գեղարվեստական թարգմանական գրականությունը: Թարգմանիչները հիմնականում աշխատել են հենց բնագրերի հետ: Գիրք Գ.-ում հանդիպում ենք նոր մատենաշարերի, ինչպիսիք են «Արգելված գրքեր», «Գեղ arm» հանդես, «Էվրիկա, Էվրիկա», «Ժամանակակից ֆրանսալեզու գրականություն», «Ինչու և ինչպես», «Լիակատար Շեքսպիր 39 գրքով», «Կարդում ենք երեխաների համար», «Նոբելյան մրցանակակիրներ», «Պարտադիր ընթերցանություն», «XXI դարի արձակ», «XXI դարի քրեական», «Օտարագիր»:

Գիրք Գ.-ում հրատարակման վայրերի աշխարհագրությունը ավելի ընդարձակ է: Բացի Երևանից և այլ քաղաքներից թարգմանվել և հրատարակվել են գրքեր Ստեփանակերտում, Թեհրանում, Հալեպում, Ժնևում, Բելգրադում, Գլենդելում:

Վերը նշված ժողովածուները անչափ կարևոր նշանակություն ունեն թարգմանական գրականությամբ զբաղվողների, թարգմանիչների, գրողների, գրականագետների, բանասերների, մատենագետների համար: Որպես վիճակագրական տեղեկատվություն հայ թարգմանական գրականության մատենագիտական ժողովածուները որոշակի պատկերացում են տալիս ինչպես նախաստվետական շրջանում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում 1920-2020 թթ., այլ երկրներում և վերջին տարիներին նաև Արցախում հրատարակված թարգմանական գրականության վերաբերյալ:

SUMMARY

The article focuses on foreign-language translated books published in Armenia in 1920-2020. The latter were combined and published as a three-volume bibliographic collection: volume A (1920-1970), volume B (1971-2010), volume C (2011-2020).

The bibliographic collection was compiled mainly on basis of the book collection of the National Book Chamber of Armenia. After the merger the Book Chamber with the National Library of Armenia in 2017 the collection of library and other sources were used as well. In accordance with the standards, the bibliographic description compilation has been observed, and appropriate abbreviations and acronyms have been used and organized by UDC.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայ թարգմանական գեղարվեստական գրականություն (1981-2010): Մատենագիտություն / Армянская переводная художественная литература (1981-2010): Библиография, Երևան, Հայաստանի ազգային գրապալատ, 2011, 216 էջ:
2. Մարտիրոսյան Ա., Գրերի գյուտի շարժառիթների հարցի շուրջը // Բանբեր Մատենադարանի, Երևան, Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ «Մատենադարան», 1964, № 7, էջ 77-95:
3. Սիոն արքեպ. Մանուկյան, Շնորհալի մեծ Հայրապետը // Էջմիածին, Ս. Էջմիածին, Հայրապետական աթոռոյ Ս. Էջմիածնի, 1973, ԺԲ, Լ տարի, № 3, էջ 32-35:
4. Տեր-Պետրոսյան Լ., Հայ հին թարգմանական գրականություն, Երևան, Սովետական գրող, 1984, 60 էջ:

ՆՈՐ ԲԱՌԵՐԻ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ (ՀԱՅԵՐԵՆ-ՌՈՒՍԵՐԵՆ-ԱՆԳԼԵՐԵՆ) ԱՌՑԱՆՑ ԲԱՌԱՐԱՆԻ
ՍՏԵՂԾՈՒՄ. ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Բանալի բառեր՝ առցանց, օտարաբանություն, նորաբանություն, հայերեն, ռուսերեն, անգլերեն, բառարան, թարգմանություն, ձևաբանական նկարագիր:

Keywords: online, barbarism, neologism, Armenian, Russian, English, dictionary, translation, morphological description.

Հայտնի է, որ բառարանների դերն անգնահատելի է ինչպես լեզվական որևէ քննություն կատարելու տեսանկյունից, այնպես էլ հաղորդակցական գործընթացներում առհասարակ: Կարևոր են ինչպես միալեզվյան տարաբնույթ և տարատեսակ բառարանները, այնպես էլ թարգմանական՝ երկլեզվյան կամ բազմալեզվյան բառարանները: Գաղտնիք չէ, որ արդի ժամանակներում բառարաններից օգտվելու հրաշալի հնարավորություն է ընձեռում համացանցը, որում առցանց բառարաններին զուգահեռ՝ թվային տարբերակով առկա են հայերենին առնչվող միալեզվյան և թարգմանական գրեթե բոլոր հիմնարար բառարանները, որոնք հիմնականում ներբեռնված են nayiri.com էլեկտրոնային շտեմարանում: Արդյունավետ թարգմանական գործիքներ են Google Translate առցանց հարթակը, «Հայերեն օնլայն բառարանը», Վիքիբառարանը: Սակայն որքան էլ շատ են դրանք ներկայացված համացանցում, այնուամենայնիվ, բավարար չեն, և, կարծում ենք, անհրաժեշտություն կա նորանոր բառարանների ստեղծման և դրանց թվայնացման: Ստորև կներկայացնենք հայերեն նոր բառերի թարգմանական առցանց բառարանի ստեղծման անհրաժեշտությունն ու խնդիրները:

Լեզուն, ինչպես հայտնի է, անընդհատ փոփոխվում ու զարգանում է: Այդ փոփոխություններն առաջին հերթին վերաբերում են բառապաշարին, քանզի գիտության և տեխնիկայի զարգացումն իր հետ բերում է նոր եզրույթներ, արտահայտություններ, որոնք սովորաբար փոխառվում են այլ լեզուներից: Դրանք աննկատ մտնում են լեզվի բառային կազմ և հիմնականում դառնում համագործածական: Բնականաբար ժամանակի ընթացքում դրանց մի մասը թարգմանվում է հայերեն և, եթե հաջող է, փոխարինում է օտար բառին: Բազմաթիվ օտար բառեր իրենց հայերեն համարժեքներն ունեցան անկախության վերջին երեսուն տարում, և այսօր էլ մեր լեզուն, օրեցօր մաքրվելով անհարկի օտար բառերից, ավելի գեղեցկանում և հարստանում է նորակազմ բազմաթիվ բառերով: Ինչպես նկատում է Խաչիկ Բաղիկյանը, «...բոլորովին վերջերս դիսերտացիան դարձավ *ատենախոսություն*, ավտոռեֆերատը՝ *սեղմագիր*, ռեյտինգը՝ *վարկանիշ*, լեզվաբանը՝ *օրինական*, մենեջմենտը՝ *կառավարում*, ինվեստիցիան՝ *ներդրում*, կոռուպցիան՝ *կաշառատվություն* և հարյուրավոր այլ բառեր» [Բաղիկյան, 2012, 60]:

Օտար բառերի գործածությունը, բնականաբար, չի խրախուսվում, եթե դրանք ունեն իրենց հայերեն համարժեքները: Անհրաժեշտ է արդյոք բոլոր օտար բառերն ու եզրույթները թարգմանել հայերեն, դա այլ հարց է, որին անդրադառնալը սույն ուսումնասիրության խնդիրը չէ, և որին տարբեր ժամանակներում անդրադարձել են բազմաթիվ լեզվաբաններ: Նրանցից մի քանիսի արտահայտած տեսակետներն այդ առիթով ներկայացված են մեր՝ համահեղինակությամբ տպագրված հոդվածներից մեկում ևս, և մեր հիմնական մոտեցումն այն է, որ չպետք է ծայրահեղությունների մեջ ընկնել այս հարցում⁹⁰: Սակայն ինչպիսի՞ն կլինեն գրական հայերենն

⁹⁰Հմմտ. Վ. Ներսիսյան, Թ. Բատիկյան, Օտարաբանությունների և փոխառությունների գնահատման հարցը Էդուարդ Աղայանի «Հայ լեզվաբանության պատմություն» աշխատության էջերում, «Հայոց լեզվի ուսումնասիրության և ուսուցման արդի խնդիրներ» միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2023, էջ 197-205:

այսօր, եթե շարունակեինք գործածել, օրինակ, *ռեկլամ, կոմպյուտեր, կոնդիցիոներ* և այլ բառեր՝ *գովազդ, համակարգիչ, օդորակիչ* նորակազմությունների փոխարեն: Անշուշտ, ոչ միայն գեղեցիկ և ականջահաճո են հայերեն տարբերակները, այլև խոստուն են բովանդակային առումով: Այդ առումով թերևս կարելի է հիշատակել բժշկական որոշ եզրույթներ (տերմիններ) ևս, ինչպես՝ *սրտաբան, ուռուցքաբան* ևն: Ի վերջո, օտար բառերի հայերենացումը ինչ-որ չափով նաև ազգային անվտանգության խնդիր է լուծում: Թերևս այս հարցում տեղին է մեջբերել Հովհաննես Զաքարյանի մոտեցումը. «Հայերենը պետք է զարգանա՝ համալրվի ու կատարելագործվի իր սեփական միջոցներով ու դրանց հիման վրա: Փոխառություններ կարող են կատարվել միայն ծայրահեղ դեպքերում և ժամանակավորապես:

Սա կարող ենք կոչել լեզվաշինական ինքնաբավ քաղաքականություն: Դա խիստ սկզբունքային նշանակություն ունի աշխարհասփյուռ հայության համար միասնական ազգային լեզու ունենալու հեռանկարի տեսակետից: Խնդիրն այն է, որ հայերը ցրված են մշակութային ազդեցության տարբեր ոլորտներում: Օտար լեզուների նկատմամբ կողմնորոշումները կարող են առավել մասնատել հայերենը: Միասնական ինքնաբավ քաղաքականությունը դրա միակ հակամիջոցն է» [Զաքարյան, 2010, 124]:

Համակարգչային եզրույթներն անգլերենից հայերեն թարգմանած և դրանց համապատասխան մի շարք հայերեն համարժեքները մշակած Խաչիկ Գրիգորյանը գրում է. «Թվում է, թե համակարգչային տեխնիկայի և ինտերնետի բուռն զարգացման պայմաններում բոլոր ազգերը պետք է դիմեին հիմնական համակարգչային եզրերի համատարած փոխառության անգլերենից: Սակայն ինչպես ցույց են տալիս դիտարկումները, նույնիսկ անգլերենին ցեղակից լեզուներում այդպիսի զանգվածային փոխառություններ չկան, այլ յուրաքանչյուր երկրում փորձում են ստեղծել համակարգչային եզրերի այս կամ այն աստիճանի ինքնուրույն համակարգ» [Գրիգորյան, 2004, 5]:

Մեր լեզվի ներքին միջոցները, բարեբախտաբար, թույլ են տալիս ստեղծելու բարեհունչ և բովանդակային առումով հասկանալի նոր բառեր, որոնք հաջողությամբ գործածվում են՝ հարստացնելով և կատարելագործելով գրական հայերենը: Երբեմն նույնիսկ մեկ օտար բառի համար առաջարկվում են մի քանի տարբերակներ: Սակայն հաճախ նորաստեղծ հայերեն բառերը ևս այլ լեզուներով թարգմանելու, իսկ երբեմն էլ հենց հայերեն բառի բացատրությունը տալու անհրաժեշտություն է առաջանում, և միշտ չէ, որ դա անելը դյուրին է թեկուզ մասնագետների շրջանում՝ պայմանավորված օտար բառին շատ սովոր լինելու հանգամանքով: Դա անհրաժեշտ է ոչ միայն օտարալեզու խոսք կառուցելիս, այլև գրական հայերենի տարբեր դրսևորումներում սովյալ բառը տեղին և ըստ էության գործածելիս:

Անհրաժեշտության դեպքում, իհարկե, օգտվում ենք առաջին հերթին ռուս-հայերեն, անգլերեն-հայերեն թարգմանական տարբեր բառարաններից, ինչպես նաև հայերեն՝ օտար բառերի բացատրական բառարաններից, որոնք հիմնականում ներբերված են համացանցում: Ներկայացնենք նորակազմ մի քանի հայերեն բառ՝ համապատասխան օտար տարբերակներով, որոնցում, թերևս, երկրորդ տարբերակն ավելի տարածված է:

Առաքելություն-միսիա
Բացառիկ, արտասովոր- ֆենոմենալ
Բեռնախցիկ-բազմնիկ
Զտիչ- ֆիլտր
Զրուցարան-չաթ
Զուգորդել-ասոցացնել
Ձևաթուղթ-բլանկ
Մաշկաբան-դերմատոլոգ
Կաթոցիկ- պիպետկա
Կոճգամ-կնոպկա
Չափանիշ-կրիտերիա
Համաձայնություն-կոնսենսուս

Հավակնոտ-ամբիցիոզ
 Համախմբում-կոնսոլիդացիա
 Մալուխ-կաբել
 Մանրակերտ- մակետ
 Մեկնաբանություն- քումենթ
 Մրցատյան-ժյուրի
 Նույնականացում-իդենտիֆիկացիա
 Շնորհանդես- պրեզենտացիա
 Չափանիշ- պարամետր
 Չափանմուշ-էտալոն
 Պաշտոնական-օֆիցիալ
 Վերջնաժամկետ-դեդլայն
 Ուրվանկար-էսքիզ
 Ցուցապաստառ-բաններ

Հրապարակի վրա, անշուշտ, կան բազմաթիվ բառարաններ, ձեռնարկներ, որոնք վերաբերում են օտարաբանություններին և նրանց հայերեն համարժեքներին⁹¹: Ուշագրավ բառարան է Խաչիկ Գրիգորյանի «Անգլերեն-հայերեն համակարգչային եզրերի բառարանը» (Երևան, 2004), որում ներկայացված են համակարգչային ոլորտին առնչվող օտար բառերի բացատրությունն ու դրանց հայերեն համարժեքների մշակումը: Օրինակ՝ **processor** բառը մեկնաբանվում է որպես **մշակիչ** սարքակազմային կամ ծրագրավորման սարք, որն ի վիճակի է կառավարելու կամ ձևափոխելու տվյալները՝ համաձայն հրահանգների, **array processor**՝ **զանգվածի մշակիչ** համակարգիչ, որը կարող է աշխատել տվյալների մի քանի զանգվածների հետ միաժամանակ.... [Գրիգորյան, 2004, 265]: Նույն բառահոդվածում ներկայացվում են նաև մի շարք բառակապակցություններ՝ հայերեն համարժեքներով, ինչպես **associative processor** - **գուգորդական մշակիչ**, **attached processor** - **կցված մշակիչ**, **auxiliary processor** - **օժանդակ մշակիչ**, **distributed processor** - **բաշխված մշակիչ**.... ևն [Նույն տեղում]: Օգտակար է բառարանին կցված հայերեն-անգլերեն համակարգչային եզրերի բառարանը, որը հեշտացնում է անգլերեն բառերի բացատրությունը: Մինչդեռ, օրինակ, **Google Translate** հավելվածում **մշակիչ** բառի անգլերեն թարգմանությունն է՝ **developer**: Վերջին տարիներին հրատարակվել և շարունակում են հրատարակվել նաև նորաբանությունների, նոր բառերի բառարաններ ⁹² : Այդ առումով գնահատելի աշխատանք է կատարում ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բառարանագրության բաժնի աշխատակազմը, որ գրեթե յուրաքանչյուր տարի տպագրության է ներկայացնում արդի հայերենի նոր բառերի մեկ պրակ⁹³: Կան նաև հայ-ռուսերեն, հայ-անգլերեն և նմանատիպ այլ թարգմանական բառարաններ՝ հայերենից օտար լեզուներ: Ուշագրավ և արժեքավոր աշխատություն է Պ. Բեդիրյանի և այլոց հեղինակած «Հայ-ռուսերեն գործնական բառարանը», որը պարունակում է շուրջ 23000 բառ և 4550 դարձվածային արտահայտություն և հիմք է ընդունել նույն հեղինակ-կազմողների «Ռուս-հայերեն, հայ-ռուսերեն բառարանը (Ե, 1987, 1988): Բառարանում «... իրենց արտացոլումն են գտել վերջին 20 տարիներին մեջտեղ եկած տնտեսական, քաղաքական, սոցիալ-մշակութային նոր երևույթները և հասկացությունները՝ իրենց լեզվական արտահայտություններով» [Բեդիրյան և այլք, 2010, 3]: Օրինակ՝ **սահիկ-слайд** [Նույն տեղում, 314]: Նկատենք, որ նրանից բաղադրված և գործուն բառապաշար մտած **սահիկաշար, սահիկահանդես** բառերը ներկայացված չեն նշված աշխատության մեջ:

⁹¹Հմմտ. Հայրապետյան Ա. Օտար բառերի բառարան, Երևան, 2011: Խ. Բադիկյան, Ճիշտ խոսենք հայերեն. Օտար բառերի բառարան, Երևան, 2012: Հայերեն օնլայն բառարան/ <https://bararanonline.com/>:

⁹²Հմմտ. Էլոյան Ս. Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Երևան, 2002: Ռ. Սաքապետոյան, Նոր և նորակազմ բառեր, Երևան, 2014:

⁹³Նոր բառեր, Ա-Զ պրակներ, ԳԱԱ ԼԻ, Երևան, 2015, 2016, 2017, 2018, 2020, 2021, 2022:

Որքան էլ շատ են օտարաբանություններին և նորակազմ հայերեն բառերին առնչվող բառարանները, միննույն է, դրանք բավարար չեն: Երբեմն նորակազմ հայերեն բառի օտար տարբերակները հնարավոր չի լինում գտնել ոչ միայն թղթային, այլև առցանց կամ թվայնացված որևէ բառարանում, որովհետև վերջիններում ներառված բառերը դուրս են բերվում ավելի վաղ հրատարակված և համացանցում ներբեռնված բառարաններից: Օրինակ՝ «**Հայերեն օնլայն բառարանը**» ներառում է հետևյալ բառարանները՝ **Է.Բ. Աղայան, «Արդի հայերենի բացատրական բառարան», Ա.Մ. Սուքիասյան, «Հայոց լեզվի հոմանիշների բառարան», Ե.Ն. Գալստյան, «Հայ-ռուսերեն բառարան», «Հականիշների բառարան»** (միավորված մի քանի աղբյուրներից), «**Հայերեն-անգլերեն բառարան**», **Ա. Ս. Ղարիբյան, «Ռուս-հայերեն բառարան»**⁹⁴:

Բացի այդ, պետք է հաշվի առնել բառերի իմաստային բազմազանությունը: Երբեմն լեզվում վաղուց գործածական բառերը ժամանակի ընթացքում ձեռք են բերում նոր իմաստներ, որոնք կարող են արձանագրված չլինել առկա բառարաններում: Այսպես՝ գիտակրթական տարբեր միջոցառումների, ներկայացումների ընթացքում հաճախ է գործածվում «**սահիկ**» բառը, որը փոխարինում է **slide** օտար բառին, սակայն մեր դիտարկած բառարաններում նշված իմաստով այն ընդգրկված չէ: Բացառություն է Պ. Բեդիրյանի «Հայ-ռուսերեն բառարանը», որը թվային տարբերակով առկա չէ համացանցում, և որոնելիս հիշյալ իմաստով տեղեկույթ չի ստացվում: Համապատասխան բառահոդվածում հետևյալ իմաստներն են նշված՝ 1. ածական՝ «սահուն» իմաստով, 2. տե՛ս շարժակ (բացատրությունն է՝ գոյական, զանազան մեխանիզմների՝ սարքերի մեջ՝ առանցքի երկարությամբ շարժական սահող մանրակ): Հոմանիշն է՝ **սահիկ**, իսկ ռուսերեն և անգլերեն տարբերակները չեն նշվում [Հայերեն օնլայն բառարան]: Մինչդեռ վերջին շրջանում հատկապես գիտաժողովների աշխատանքային հարթակներում գործածվում է նաև բառի **ցուցադրույթ** տարբերակը:

Կարծում ենք, որ անհրաժեշտ է ոչ միայն աշխատանքներ տանել թղթային բոլոր աղբյուրները թվայնացնելու ուղղությամբ, այլև ստեղծել հայերեն նորակազմ և նորիմաստային ոչ մեկանգամյա գործածածություն ունեցող, գեղարվեստական գրականությունից քաղված, այլ գոնե համագործածական բառերի առնվազն եռալեզու թարգմանական ևս մեկ բառարան, որը պետք է ձևավորվի նախապես մշակված համացանցային ծրագրով, ինչը հնարավորություն կտա ինչպես կազմելու, այնպես էլ հրնթացս այն լրացնելու, կատարելագործելու: Բառարանում բառահոդվածները կպարունակեն հայերեն բառերի բացատրական, ձևաբանական և ձևակազմական հիմնական նկարագրերը, ինչպես սովորաբար լինում է, և երկլեզու թարգմանությունը:

Օրինակ՝

ԱՆՎԱՆԱԿԱՐԳ – (գոյական, **հ** հոլովում, **-էք** հոգնակերտ) «1. անվանում, անվանակարգ, 2. կարգ, որով գնահատվում են մրցույթում ներկայացվող աշխատանքները, օրինակ՝ տարվա լավագույն դերասանը են»- <НОМИНАЦИЯ<nominatio< NOMINATION⁹⁵:

ԱՆՎԱՆԱՔԱՐՏ – (գոյական, **հ** հոլովում, **-էք** հոգնակերտ) «բաճկոնին ենին ամրացված որևէ կազմակերպության աշխատակցի քարտ՝ ժողովի մասնակցի ենի անձնական տվյալներով նշան» <БЕЙДЖ<BADGE⁹⁶:

Բառարանի ստեղծումը, անշուշտ, ենթադրում է թիմային աշխատանք՝ ոչ միայն հայերենի և օտար լեզուների, այլև թվային տեխնոլոգիաների մասնագետների մասնակցությամբ:

⁹⁴ Հմմտ. Հայերեն օնլայն բառարան, <https://bararanonline.com/26.09.24>:

⁹⁵ Հմմտ. Ա. Հայրապետյան, Օտար բառերի բառարան, Երևան, 2011, էջ 392:

⁹⁶ Հմմտ. նույն տեղում, էջ 90:

SUMMARY

It is known that the creation of dictionaries requires years of diligent and consistent work, which in turn creates grounds for the creation of new words, new meaning usage of existing words that cannot be included in the given dictionary. Sometimes it is not possible to find foreign versions of a new Armenian word in any paper or online dictionary, because the words included in them are taken from dictionaries downloaded on the Internet, but published earlier. Because of this, in modern times, writing a dictionary only on paper, in the traditional version, may be out of date even at the time of printing. In the article, an attempt was made to show that the effective option is the creation of a new online dictionary, which will be regularly updated by the compilers.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բաղիկյան Խ., Ճիշտ խոսենք հայերեն. Օտարալեզու բառերի բառարան, Երևան, «Լույս» հրատ., 2012, 199 էջ:
2. Բեդիրյան Պ., Հայ-ռուսերեն գործնական բառարան, Երևան, «Անկյունաքար» հրատ., 2010, 577 էջ:
3. Գրիգորյան Խ., Անգլերեն-հայերեն համակարգչային եզրերի բառարան, Երևան, «Անկյունաքար» հրատ., 2004, 338 էջ:
4. Զաքարյան Հ., Փոխառության և նորակազմության խնդրի շուրջ // «Ջահուկյանական ընթերցումներ», Երևան, ԳԱԱ ԼԻ, 2010, էջ 115-125:
5. Հայերեն օնլայն բառարան, [Էլեկտրոնային աղբյուր] <https://bararanonline.com/>, 26.09.24:
6. Հայրապետյան Ա., Օտար բառերի բառարան, Երևան, Հեղինակային հրատ., 2011, 643 էջ:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Բանալի բառեր՝ մասնագիտական զարգացում, շարունակական ուսուցում, ուսուցում աշխատավայրում, գրադարանային ոլորտ, գրադարանավար, մասնագիտական արդիականացում, նորագույն տեխնոլոգիաներ:

Keywords: professional development, continuous education, workplace training, library field, librarian, professional updating, new technologies.

Մասնագիտական զարգացումը մեր օրերում չափազանց կարևոր նշանակություն ունի ինչպես անհատների, այնպես էլ ամենատարբեր կազմակերպությունների (մեծ և փոքր, պետական և ոչ պետական /ՀԿ-ներ/, միջազգային, կրթական, առևտրային և այլն) գործունեության կարգավորման տեսանկյունից: Արդի տեղեկատվահաղորդակցային ենթակառուցվածքների, գիտության և տեխնոլոգիաների զարգացման մակարդակներն ու տեմպերը մարդկության առջև դրեցին հիմնավորապես այլ գործելակերպ որդեգրելու անհրաժեշտություն: Այնպիսի արագությամբ, ինչպես տեղի են ունենում այս գործընթացները, այլ ելք չեն թողնում անհատին, քան հարմարվելու և շուտափույթ դիրքավորվելու ճիշտ ժամանակին և ճիշտ տեղում՝ մշտապես զինվելով նոր գիտելիքներով և հմտություններով: Տրամաբանական է, որ նորագույն տեխնոլոգիաների կիրառության պահանջները տարածվում են մարդկային կենսագործունեության բոլոր ոլորտների վրա, ինչից անմասն չի մնում գրադարանային ոլորտի գործունեությունը: Առհասարակ, մասնագիտական զարգացման շարունակականությունը գիտելիքները թարմացնելու, հմտությունները կատարելագործելու, նոր աշխատանքային պահանջներին համապատասխանելու նպատակ ունի: «Այսօր գիտելիքները և տեղեկությունը հասարակության զարգացման կարևորագույն գործոններ են: Տեղեկությունը օպերատիվ կերպով գտնելու, այն գնահատելու և իր շահերին ծառայեցնելու կարողությունը յուրաքանչյուր մարդու համար դառնում է անհրաժեշտ հմտություն: Իրենից տեղեկությունների վիրտուալ պահոց ներկայացնող ինտերնետի ներդրումը էական փոփոխություններ է մտցրել նաև գրադարանի աշխատանքում: Գրադարանավարի կարևոր դերը՝ միջնորդ հանդիսանալով տեղեկատվական միջոցի և օգտվողի միջև, նոր խնդիր է դրել՝ ինֆորմացիոն ընդարձակ տարածության մեջ դառնալ նորարար, ով ընդունակ է թեթևացնել և արագացնել տեղաշարժումը վիրտուալ ցանցում, օգնել ընթերցողին գնահատել ստացված տեղեկությունը» [Էլեկտրոնային տեղեկատվական աղբյուրների օգտագործումը, 2009, 41]: Տեխնոլոգիաների արագ զարգացումը, մարդկային պահանջների փոփոխությունը, համաշխարհայնացման գործընթացները լի են ոչ միայն նոր հնարավորություններով, այլև մի շարք մարտահրավերներ են պարունակում: Ուստի, ժամանակի հրամայականով պայմանավորված պահանջ է առաջանում անընդմեջ ինքնակրթվելու, սովորելու և ինքնազարգանալու: Հոդվածում անդրադարձել ենք մասնագիտական զարգացման ժամանակակից պահանջներին, խոսել ենք գրադարանի հասարակական պատ գործունեության, գրադարաններում կիբեռանվտանգության նշանակության և մի շարք այլ հարցերի մասին՝ փորձելով ընդգծել հիմնական ուղղություններն և մեթոդները:

Աշխարհի գրադարանային համայնքը շարունակաբար զարգանում և կատարելագործվում է, հետևաբար, անհրաժեշտություն է առաջանում պատրաստ լինել կիրառելու նոր մեթոդներ, գործիքակազմ և գաղափարներ՝ մշտապես գործունակ և զարգացման ռիթմին համահունչ մնալու համար: Այս զարգացումն իրենից ենթադրում է, որ գրադարանավարները պետք է ավելի հմուտ կերպով կարողանան սպասարկել ընթերցողներին, քանի որ գրադարանում հենց իրենք են հանդիսանում տեղեկատվություն փոխանցողի և կառավարողի կարևորագույն դերակատարը:

Գրադարանավարները նաև հստակ պետք է տիրապետեն և տեղեկացված լինեն մի շարք հարցերում, ինչպիսիք են հեղինակային իրավունքների մասին օրենքները, տվյալների պաշտպանությանն առնչվող հարցերը, իրավաբանական մի շարք հարցեր, որոնք տարածվում են գրադարանային ոլորտի վրա: Այս ամենը ոչ միայն կարող է նպաստել գրադարանի բնականոն աշխատանքին, այլ հենց առաջին հերթին անձի տեղեկացվածության մասին փաստել, քանի որ 21-րդ դարում այն չափազանց կարևոր է: Մասնագիտական զարգացումն օգնում է գրադարանավարին ավելի բարելավել իրենց կապը ընթերցողների հետ: Գրադարանավարների մասնագիտական զարգացումն աշխատավայրում ոչ միայն բարելավում է գրադարանի աշխատանքի արդյունավետությանը, այլև նպաստում է մշակութային, տեխնոլոգիական, կրթական և մի շարք այլ ոլորտների արդյունավետ աշխատանքին: Գրադարանները կրթությանն ու մշակույթին աջակցող կարևորագույն կառույցներ են հանդիսանում: Երբ խոսում ենք գրադարանային ոլորտի զարգացման մասին, հարկ է նկատել, որ գրադարանային գործի վերաբերյալ ուսումնասիրություններն ու բառամթերքի գործածումը անգամ նույնը չեն մասնագիտական գրականության մեջ: Համեմատելով սովետական և հետսովետական ժամանակաշրջանի հետազոտությունները, կարող ենք փաստել, որ սկսած լեզվամտածողության առանձնահատկություններից ընդհուպ մինչև կիրառվող գործիքակազմ, այն կրել է բազմաթիվ փոփոխություններ: Օրինակ, գրադարանապետ բառը մեկնաբանվում է հետևյալ կերպ. «Գրադարանապետը և օգնականները անձնապես պատասխանատու են այն գրքերի, ձեռագրերի, էստամպների և այլ առարկաների անաղարտության համար, որ գտնվում են իրենց խնամքին հանձնված բաժանմունքում» [Հայաստանի ազգային գրադարանի պատմության ուրվագծեր, 2007, 132]: Մինչդեռ այսօր, գրադարանապետ բառը դուրս է եկել գործածությունից: Սակայն հետաքրքրական է հիշատակել մատենադարանապետ բառը, որն ավելի լայն գործածություն ունի հատկապես սփյուռքի գրադարաններում կամ մատենադարաններում: Օրինակ՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության «Կիլիկիա» Մատենադարանի մատենադարանապետ [Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության «Կիլիկիա» Մատենադարան] և այլն: Փոխարենը, այսօր մեծ գործածության մեջ են մտել «Էլեկտրոնային գրադարան», «թվային գրադարան» հասկացությունները:

«Բոլորը խոսում են գրադարանների փոխակերպման մասին: Եթե գրադարանը ցանկանում է հավաքագրել վաղվա տեղեկատվության մասնագետներին, այն պետք է ներկայում ակտիվ լինի այդ ոլորտում: Միևնույն ժամանակ, դիմորդները պետք է գիտակցեն, որ ժամանակակից գրադարանային աշխատանքի պահանջները ներառում են թվային հմտություններ» [Why Libraries Have to be Permanently Active on Social Media]:

• **Տեխնիկական, թվային, առցանց տիրույթներում մասնագիտական հմտությունների կատարելագործում:** Մա հատկապես կարևոր է ընթերցողների հետ աշխատելու, թվային ռեսուրսների կառավարման, վերահսկման, պաշտպանության, նոր տեխնիկական հմտությունների տիրապետման տեսանկյունից: Օրինակ՝ ընթերցողների պահանջներն արագ են փոփոխվում մի շարք հանգամանքներով պայմանավորված. տեխնոլոգիական առաջընթաց/էլեկտրոնային գրքեր, առհասարակ առցանց ռեսուրսներ/, տեղեկատվության հասանելիության փոփոխություններ /տեղեկատվությունը արագ տրվում է ընթերցողին՝ անկախ նրա գտնվելու վայրից, ժամային հանգամանքից/, հետազոտման և ուսուցման պահանջները, որն անընդհատ փոփոխվում է և դառնում ավելի առաջադեմ՝ նորագույն տեխնոլոգիաների զարգացմամբ պայմանավորված: Խոսելով մասնագիտական զարգացման, կարողությունների և հմտությունների կատարելագործման, նորագույն տեխնոլոգիաներին և միջազգային փորձին լավատեղյակ լինելու մասին, նշենք մի քանի էական հանգամանք, որոնք չափազանց կարևոր են վերոնշյալի համատեքստում:

• **Մասնագիտական աճ, ինքնակրթություն:** Գրադարաններում կազմակերպվում են տարբեր ձևաչափերով միջոցառումներ, որոնք նպատակ ունեն զարգացնել գրադարանի մտավոր ռեսուրսները՝ աշխատակիցների մասնագիտական հմտություններն ու կարողությունները: Դրանք սեմինարների, վերապատրաստման դասընթացների, վարպետության դասերի, կոնֆերանսների տեսքով են լինում, որոնք միջգրադարանային կապերի հաստատման, նոր

հմտությունների, կապերի, թվային գործիքների տիրապետման, տվյալների կառավարման մեթոդների, ընթերցողների սպասարկման նոր մեթոդների, համագործակցությունների ամրապնդման, աշխատավայրում մասնագիտական զարգացման աջակցությանն ու զարգացմանն են ուղղված: Այստեղ հարկ է առանձնահատուկ կերպով նշել այս զարգացման մասին աշխատավայրում, քանի որ գրադարանային ոլորտը յուրահատուկ է նրանով, որ անհատի առջև բազում հնարավորություններ է բացում ինքնազարգանալու և ինքնակրթվելու, ինչի գլխավոր պատճառը գրքի հետ ամենօրյա շփումն ու աշխատանքն է: Այստեղ պետք է նշել հատկապես միջազգային վերապատրաստումների մասին: Սա շատ կարևոր է մասնագիտական կրթության շարունակականության, մասնագիտական հմտությունների կատարելագործման և նոր փորձ ձեռք բերելու տեսանկյունից:

• **Փափուկ հմտությունների զարգացում:** Գրադարանում հաղորդակցման հմտությունները կարևոր նշանակություն ունեն ինչպես գրադարանավարների, այնպես էլ ընթերցողների համար: Հաջողված հաղորդակցումը նպաստում է գրադարանի ծառայությունների արդյունավետ մատուցմանը և ընթերցողների կարիքների բավարարմանը: Ահա մի քանի հիմնական հմտություններ, որոնք անհրաժեշտ են գրադարանում արդյունավետ հաղորդակցության համար:

Ակտիվ լսելու հմտություններ

Ընթերցողների կարիքները ճիշտ հասկանալու և համապատասխան տեղեկատվություն տրամադրելու համար կարևոր է ակտիվ լսելը: Սա ներառում է ուշադրությամբ լսել, չընդհատել և հարցեր տալ միայն վերջինիս խոսքի ավարտից հետո: Ուստի, լսելու հմտությունը գրադարաններում ունի առանցքային նշանակություն և դրանք պետք է զարգացնել և կիրառել ամենօրյա աշխատանքի ընթացքում:

Գրավոր հաղորդակցում

Բացի բանավորից, գրադարանավարները հաճախ պետք է գրեն հաղորդագրություններ, պատասխանեն նամակագրություններին, պատրաստեն տեղեկատվական նյութեր, գրեն տարբեր ձևաչափերով հաշվետվություններ՝ եռամսյա, կիսամյակային, տարեկան, որը պետք է լինի ճշգրիտ, հստակ և հասկանալի:

Բանավոր հաղորդակցում

Գրադարանավարները պետք է կարողանան պարզ և հստակ խոսել, մատչելի կերպով տրամադրել պահանջված տեղեկատվությունը, բացատրել գրադարանից օգտվելու կանոնները, ներկայացնել գրադարանի ծառայությունները և տիրապետել այլ տեղեկությունների՝ հանրամատչելի կերպով դրանք ներկայացնելու համար:

Միջմշակութային հաղորդակցում

Գրադարաններ են հաճախում տարբեր մշակույթների ներկայացուցիչներ, ուստի, գրադարանավարները պետք է լինեն զգայուն մշակութային տարբերությունների նկատմամբ և կարողանան արդյունավետ կերպով հաղորդակցվել մեծ լսարանի հետ:

Բաժինների միջև համագործակցություն

Գրադարաններում առկա են տարբեր բաժիններ, հետևաբար, թիմային աշխատանքը նպաստում է բաժինների միջև արդյունավետ համագործակցությանը, միմյանց գործառնությունների մասին տեղեկացվածությանը, փորձի փոխանակմանը՝ նպաստելով գրադարանի արդյունավետ աշխատանքին: Թիմային աշխատանքը գրադարանում կարևոր դերակատարում ունի, քանի որ այն թույլ է տալիս ավելի հաջող կազմակերպել աշխատանքը, բարելավել ծառայությունների որակը և նպաստել փոխաջակցող և հաճելի աշխատանքային մթնոլորտի և միջավայրի ստեղծմանը:

Գրադարանային ոլորտն ընդգրկող ուսումնասիրության քննարկումները տրամաբանորեն ուղղորդում են դեպի գրադարանների դերի մասին հասարակության կյանքում: Այն մշտապես է եղել. նրանք փոխկապակցված հասկացություններ են: Գրադարանները հասարակության կյանքի կարևոր մասն են կազմում, որոնք օգնում են զարգացնել կրթությունը, մշակույթը, սոցիալական կապերը, ինչպես նաև աջակցում են նորարարությանը, մշակութային միջավայրի ստեղծմանը: Նրանք որպես սոցիալական հաստատություններ դարձել են հասարակության զարգացման անբաժանելի մասը: Ժամանակի հրամայականով պայմանավորված նրա դերն ավելի է մեծացել

հասարակության կյանքում: Գրադարանները ապահովում են տեղեկատվության և գիտելիքի անվճար հասանելիություն, ինչը հասարակության բոլոր շերտերի համար է և կրթվելու անվճար հնարավորության մի ձև է հանդիսանում: Գրադարանը կատարում է հասարակապաստ գործունեություն, հետազոտողներին տրամադրելով անհրաժեշտ տեղեկատվություն: Գրադարանները, որպես գիտելիքների և մշակույթի դարպասներ, առաջարկում են բազմաթիվ ուսումնառության հնարավորություններ, որոնք կարող են խթանել երկրի տնտեսական, սոցիալական, մշակութային և այլ ոլորտների զարգացմանը: Գրադարանները տարբեր մարդկանց համար տարբեր նշանակություն ունեն. մի դեպքում այն մշակութային միջավայր է ազատ ընթերցանության համար, մյուս դեպքում հատուկ հետազոտական ուսումնասիրություններ անելու վայր ուսանողների, հետազոտողների, գիտնականների ու տարբեր մասնագիտության տեր անհատների համար, ինչպես նաև անվճար տեղեկատվության հասանելիություն տրամադրող միջավայր: Գրադարանները միջոց են, որով ուսանողները, գիտնականները, հետազոտողները և պարզապես ընթերցողները կարող են մուտք ունենալ գրքերի և այլ տպագիր նյութերի հավաքածուների մեծ աշխարհ: Գրադարանները մեծ պահոցներ են, որտեղ հավաքվում և պահպանվում են ազգային ժառանգության անգին մասունքները: Այս հավաքածուներում կարող են լինել գրքեր, ձեռագրեր, քարտեզներ, նամակներ, նկարներ, և այլ նյութեր, որոնք արտացոլում են երկրի պատմությունը, մշակույթը և ինքնությունը: Գրադարանները ոչ միայն պահպանում են այս նյութերը, այլև ապահովում են դրանց հասանելիությունը ապագա սերունդների համար՝ կամուրջ ծառայելով անցյալի և ներկայի միջև: Ուստի, գրադարանները ոչ միայն անցյալի, մտավոր ժառանգության պահպանման մասին են, այլ նաև ներկայի և առավելապես ապագայի:

Տեղեկատվական գրագիտություն: Սա շատ կարևոր է գրադարանում ռեսուրսների արդյունավետ կառավարման, տվյալների անվտանգության և մի շարք այլ հանգամանքների տեսանկյունից: Օրինակ այսօր թվային ռեսուրսների կառավարումը գրադարանային գործում աշխատանքի հիմնական մասերից է դարձել: **Թվային ռեսուրսները** կարևոր են հասանելիության և մատչելիության, տվյալների կազմակերպման և պահպանման, ավանդական և թվային ռեսուրսների համադրման տեսանկյունից: Ըստ էության թվային ռեսուրսների կառավարման համակարգերի արդյունավետ կիրառությունը գրադարաններում ապահովում է ավելի հարմարավետ և մատչելի կազմակերպված ծառայություններ՝ սկսած գրացուցակների կազմման, օգտատերերի գրանցման և վերջիններիս տվյալների կառավարման տեսանկյունից: Այս ամենի մասին խոսելիս առաջնահերթ է դառնում խոսել դարի հանցագործության՝ **կիբեռահանցագործության** մասին: «Յուրաքանչյուր Կողմ ընդունում է այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել իր ներքին օրենսդրության համաձայն որպես քրեական հանցագործություն սահմանելու միտումնավոր և անօրեն կերպով մեկ ուրիշ անձի սեփականության կորուստ պատճառելը:

ա) համակարգչային տվյալների ցանկացած մուտքով, փոփոխությամբ, ոչնչացմամբ կամ արգելմամբ,

բ) համակարգչային համակարգի գործողության ցանկացած աղավաղմամբ, խարդախ և անազնիվ մտադրությամբ, անօրեն՝ իր կամ մեկ ուրիշ անձի համար տնտեսական շահ հայթայթելու նպատակով» [Կոնվենցիա կիբեռահանցագործության մասին]:

Կիբեռավտանգությունը գրադարաններում գրեթե նույնքան կարևոր է, որքան մյուս կառավարման և տեղեկատվական համակարգերում, քանի որ այն կապվում է գրադարանների էլեկտրոնային շտեմարանների, օգտատերերի անձնական տվյալների և այլ էլեկտրոնային ռեսուրսների պաշտպանության հետ: Նշենք այն կանոնադրյալ գործոնները, որոնցով նշանակալի է կիբեռանվտանգության դերը գրադարաններում. տվյալների ամբողջականության պահպանման, անհարկի ներխուժումներից խուսափելու, տվյալների գործարկման, տեղեկատվական ռեսուրսների պահպանության և այլն: Այս ամենից եզրակացնում ենք, որ տվյալների պաշտպանության համակարգերը պետք է լինեն հնարավորինս **հզոր, արդիականացված, բարձր պաշտպանվածության մակարդակում**՝ անհարկի վնասներից խուսափելու և կորցրած տեղեկատվությունը վերականգնելու նպատակով: Սա

հանցագործության այն տեսակին է պատկանում, որն ավելի հեշտ է իրականացնելը, քանի որ այն կատարվում է համակարգչի միջոցով, իսկ իրավախախտին գտնելը ժամանակատար և բարդ գործընթաց է: Խոսելով տեղեկատվական գրադատության նոր պահանջների մասին, նշենք նաև **արհեստական բանականության (AI)** և **մեքենայական ուսուցման (ML)** մասին, որոնք ավելի ու ավելի են կիրառվում գրադարաններում, օրինակ՝ ավտոմատ կատալոգավորման, տեղեկատվության որոնման, գործառնությունների բարելավման համար: Արհեստական բանականությունը /AI/ կարող է նաև օգնել մեծ ծավալով տվյալների կառավարման, կանխատեսումների, ռազմավարությունների և քաղաքականությունների կազմման և մշակման տեսանկյունից: Խոսենք նաև **կանաչ գրադարանների մասին** [What is Green Library?], որը ներդրում է կանաչ տեխնոլոգիաներ, էներգախնայող համակարգեր, կայուն նյութեր և թվային ռազմավարություններ, որոնք նվազեցնում են ֆիզիկական ռեսուրսների անհրաժեշտությունը: Բազմաթիվ երկրներ ամբողջ աշխարհում ներդրում են կանաչ տեխնոլոգիաներ գրադարաններում՝ նվազեցնելու էկոլոգիական վնասի ազդեցությունը և աջակցելու կայուն զարգացմանը: Ահա մի քանի օրինակներ այն երկրների, որոնք ակտիվորեն օգտագործում են կանաչ տեխնոլոգիաներ գրադարանային ոլորտում. Գերմանիա [Բնապահպանական գրադարան], Մինգապուր [Մինգապուրի գրադարանների ասոցիացիա], Ավստրալիա [Ավստրալիայի գրադարանի և տեղեկատվության միություն] և այլն: Այս երկրներում գրադարանները դարձել են նորարարական կենտրոններ, որոնք ոչ միայն ապահովում են տեղեկատվություն, այլև որպես օրինակելի ձև ծառայում են կայուն զարգացման համար: Կանաչ գրադարանների մասին խոսվում է նաև IFLA հոդվածում նշվում է, որ «Կանաչ և կայուն գրադարանները կարող են լինել հետևյալը. ցանկացած չափի, բայց պարտադիր ունենան կայունության հստակ օրակարգ, որը ներառում է.

Կանաչ շենքեր և սարքավորումներ. շենքի և սարքավորումների արտանետումները կամ ածխածնի հետքը ակտիվորեն նվազում է:

Կանաչ գրասենյակի սկզբունքներ. գործառնական առօրյան և գործընթացները բնապահպանական առումով կայուն են:

Կայուն տնտեսություն. սպառումը զուսպ է, շրանակային և համընդհանուր օգտագործվող տնտեսության պրակտիկան զարգացած է և համայնքին հասանելի:

Գրադարանային կայուն ծառայություններ. օգտատերերի համար հեշտ հասանելի է պատշաճ և արդի տեղեկություններ...:

Սոցիալական կայունություն. կարևորվում է լավ կրթությունը, գրագիտությունը, համայնքի ներգրավվածությունը, միմշակութային բազմազանությունը, սոցիալական ներգրավվածությունը և ընդհանուր մասնակցությունը: Գրադարանն ակտիվորեն աշխատում է անհավասարությունը նվազեցնելու նպատակով:

Շրջակա միջավայրի կառավարում. բնապահպանական նպատակներն են SMART (Specific՝ հատուկ, Measurable՝ չափելի, Achievable՝ իրագործելի, Realistic՝ իրատեսական և Timebound՝ ժամանակի մեջ չափելի, և գրադարանն աշխատում է նվազեցնել իր բացասական ազդեցություն շրջակա միավայրի վրա...:

Պարտավորություն բնապահպանական ընդհանուր նպատակների և ծրագրերի նկատմամբ. պարտավորությունն առանորդվում է ՄՄԿ-ի Կայուն զարգացման նպատակներով, Փարիզի կլիմայի համաձայնագրով և բնապահպանական նմանօրինակ/հարակից հավաստագրերով և ծրագրերով» [Կանաչ գրադարանների մասին IFLA հոդվածը]:

• **Մասշտաբային և նորարար մտածողություն:** Համաշխարհայնացման գործընթացները գրադարաններին նույնպես ստիպում են ժամանակի հրամայականով տիրապետել նոր հմտությունների, կիրառել դրանք, ստեղծագործել և զարգանալ: Մա անհրաժեշտ է, քանի որ նոր միտումները թե՛ հասարակության, այսինքն ընթերցողների և թե՛ գրադարանների համար են: Այն ներառում է մեծ գործիքակազմ, որը ներառում է օտար լեզուների իմացություն, տարբեր մշակույթների և հասարակությունների ներկայացուցիչների հետ գրադարաններում աշխատելու կարողություն, գրադարանային ոլորտի շուկայավարման ծախսարդյունավետ գաղափարների

ներդնում, փաստաթղթաշրջանառության տիրապետում, գրադարանների ռազմավարության և քաղաքականության մշակման վերաբերյալ մի շարք այլ հարցեր և այլն:

SUMMARY

Professional development requires continuous effort. The combination of technical and soft skills, ongoing education, personalized approaches, global thinking, and the use of digital resources are all key areas essential for a modern librarian's success. Professional development in the library field demands the enhancement of diverse and ongoing skills, including digital librarianship, community engagement, and innovation. Librarians must be prepared for change and constantly update their skills to ensure the relevance and effectiveness of their library.

The library sector is undergoing a transformation driven by technological advancements and the evolving demands of society. Today, librarians face new challenges, and their professional development must meet contemporary needs. However, this does not mean the librarian's role is diminishing or becoming secondary. It means that every profession, including librarianship, requires the continuous development of professional skills and the improvement of analytical and managerial capabilities. Implementing cost-effective marketing strategies in the library sector is crucial, as these can help optimize the library's operations, making it more competitive and sustainable.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. What is Green Library? [Electronic Publication] URL: <https://shorturl.at/5R9Z1> 29.11.2024.
2. Why Libraries Have to be Permanently Active on Social Media: 7 “Glorious” Reasons 2021 Update. [Electronic Publication] URL: <http://surl.li/xohsbw>, 08.09.2024.
3. Ավստրալիայի գրադարանի և տեղեկատվության միություն [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://shorturl.at/cgBSH>, 28.11.2024:
4. Բնապահպանական գրադարան / Գերմանիա, Բեռլին / [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://shorturl.at/9Hs0h>, 20.09.2024:
5. Էլեկտրոնային տեղեկատվական աղբյուրների օգտագործումը, Երևան, Խնկո-Ապոր անվան ազգ. մանկ. գրադ., 2009, 41 էջ:
6. Կանաչ գրադարանների մասին IFLA հոդվածը, 2022 (հունվար) [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <http://alarmenia.am/?p=1599&lang=hy>, 13.01.2025:
7. Կոնվենցիա կիբեռհանցագործության մասին / ուժի մեջ է մտել 2007 թ. փետրվարի 1-ին/ [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://shorturl.at/ZE0fj>, 10.09.2024:
8. Հայաստանի ազգային գրադարանի պատմության ուրվագծեր (1832-1925), Երևան, «Գիրք» հրատարակչություն, 2007, 180 էջ:
9. Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության «Կիլիկիա» Մատենադարան [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://shorturl.at/yKAmu>, 24.10.2024:
10. Մինգապուրի գրադարանների ասոցիացիա [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://shorturl.at/BCbP7>, 25.11.2024:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
INFORMATION ABOUT THE AUTHORS
СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ

<i>Աբրահամյան Միրուն</i>	Գեղարքունիք գյուղի միջնակարգ դպրոց, ուսուցիչ
<i>Abrahamyan Sirun</i>	Secondary school of Gegharkunik village, teacher
<i>Абраамян Сирун</i>	Средняя школа села Гегаркуник, учитель
<i>Ալեքսանդրովա Կրասիմիրա</i>	Սոֆիայի Գրադարանային գիտության և տեղեկատվական տեխնոլոգիաների համալսարան, դասախոս, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<i>Aleksandrova Krasimira</i>	University of Library Science and Information Technology (UNIBIT), Lecturer Doctor in Philological Sciences, Professor
<i>Александрова Красимира</i>	Университет по библиотекознание и информационни технологии Софии, лектор Доктор филологических наук, профессор,
<i>Առաքելյան Իրինա</i>	Հայաստանի ազգային գրադարան, Մատենագիտության և գրադարանագիտության բաժնի 1-ին կարգի մատենագետ
<i>Arakelyan Irina</i>	National Library of Armenia, Librarian I of the Bibliography and Library Science Department
<i>Аракелян Ирина</i>	Национальная библиотека Армении, библиограф первой степени Отдела библиографии и библиотековедения
<i>Գաբրիյան Գոհար</i>	Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան, գրադարանի վարիչ
<i>Gaboyan Gohar</i>	ORCID: 0009-0000-6015-5416 Vanadzor State University named after H. Tumanyan, Head of Library
<i>Գաբոյան Գոար</i>	ORCID: 0009-0000-6015-5416 Ванадзорский государственный университет имени О. Туманяна, руководитель библиотеки
<i>Գրիգորյան Ալվարդ</i>	Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության թանգարան, տնօրեն
<i>Grigoryan Alvard</i>	Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ ORCID : https://orcid.org/my-orcid?orcid=0000-0001-8647-2487 Museum of History of the Armenian State Pedagogical University, Director
<i>Григорян Алвард</i>	Candidate of Sciences in Pedagogy, Associate Professor ORCID: https://orcid.org/my-orcid?orcid=0000-0001-8647-2487 Музей истории Армянского государственного педагогического университета им. Х. Абовяна, директор
	Кандидат педагогических наук, доцент ORCID: https://orcid.org/my-orcid?orcid=0000-0001-8647-2487

Թումասյան Ռուզաննա

Tumasyan, Ruzanna

Тумасян Рузанна

Հայաստանի ազգային գրադարան, Մատենագիտության և գրադարանագիտության բաժնի հայագիտական և տեղեկատու մատենագիտության ենթաբաժնի վարիչ
National Library of Armenia, Head of the Armenian Studies and Information Sub-Department of Bibliography and Library Science Department

Национальная библиотека Армении, заведующая Подотделом арменоведческой и справочной библиографии Отдела библиографии и библиотековедения

Կապտերև Անդրեյ

Kapterev Andrey

Каптерев Андрей

Ռուսաստանի պետական գրադարան, Տեղեկատվական հասարակությունում գրադարանների զարգացման հիմնախնդիրների հետազոտման կենտրոնի գլխավոր գիտաշխատող
Սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ORCID: 0000-0002-2556-8028

Russian State Library
Chief Researcher of the Center for Research on Library Development in the Information Society
Doctor of Sociological Sciences, Doctor of Pedagogical Sciences, Professor
ORCID: 0000-0002-2556-8028

Российская государственная библиотека, главный научный сотрудник Центра исследования проблем развития библиотек в информационном обществе
Доктор социологических наук, доктор педагогических наук, профессор
ORCID: 0000-0002-2556-8028

Հակոբյան Աստղիկ

Hakobyan Astghik

Акопян Астхик

Հայաստանի ազգային արխիվ, գլխավոր արխիվագետ
Պատմական գիտությունների թեկնածու
ORCID:0009-0006-7053-1802

National Archive of Armenia, Chief Archivist
Candidate of Historical Sciences
ORCID:0009-0006-7053-1802

Национальный архив Армении, главный архивист
Кандидат исторических наук
ORCID:0009-0006-7053-1802

Հայրիյան Լուսինե

Hayriyan Lusine

Айриян Лусине

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Բանագիտության բաժնի գիտաշխատող
Բանասիրական գիտությունների թեկնածու
ORCID:http://orcid.org/0009-0006-0350-357X
Institute of Archeology and Ethnography NAS RA.
Researcher at the Department of the Folklore
Candidate of Sciences in Philology
ORCID:http://orcid.org/0009-0006-0350-357X
Институт археологии и этнографии НАН РА, научный сотрудник Отдела фольклора
Кандидат филологических наук
ORCID:http://orcid.org/0009-0006-0350-357X

Հարությունյան Արմինե

Harutyunyan Armine

Арутюнян Армине

Հայաստանի ազգային գրադարան, Այլալեզու գրականության մշակման բաժնի վարիչ
National Library of Armenia, Head of the Foreign Literature Cataloguing Department
Национальная библиотека Армении, заведующая Отделом обработки иностранной литературы

Հարությունյան Բալասան

Harutyunyan Balasan

Арутюнян Баласан

Հայաստանի ազգային գրադարան, Գրատպության թանգարանի բաժնի վարիչ
National Library of Armenia, Head of the Printing Museum
Национальная библиотека Армении, заведующая Музеем книгопечатания

Հովհաննիսյան Գայանե

Hovhannisyan Gayane

Оганнисян Гаяне

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ORCID ID: <https://orcid.org/0000-0002-3480-3755>
Brusov State University
Doctor of Sciences in Philology, Professor
ORCID ID: <https://orcid.org/0000-0002-3480-3755>
Государственный университет им. В.Я. Брюсова
Доктор филологических наук, профессор
ORCID ID: <https://orcid.org/0000-0002-3480-3755>

Ղեջյան Լուսինե

Ghrejyan Lusine

Креджян Лусине

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, գիտաշխատող
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
ORCID: <https://orcid.org/0000-0001-8755-3967>
Institute of Archaeology and Ethnography of NAS RA, Researcher
Candidate of Philological Sciences, Associate Professor
ORCID: <https://orcid.org/0000-0001-8755-3967>
Институт археологии и этнографии НАН РА, научный сотрудник
Кандидат филологических наук, доцент
ORCID: <https://orcid.org/0000-0001-8755-3967>

Մելիքբեկյան Նաիրա

Meliqbekyan Naira

Меликбекян Наира

Հայաստանի ազգային գրադարան, Թվայնացման և հրատարակման բաժնի վարիչ
National Library of Armenia, Head of the Digitization and Publishing Department
Национальная библиотека Армении, заведующая Отделом по цифровизации и изданий

Մելյան Քրիստինե

Melyan Kristine

Мелян Кристине

Հայաստանի ազգային գրադարան, Մատենագիտության և գրադարանագիտության բաժնի առաջատար մատենագետ
National Library of Armenia, Leading Bibliographer of the Bibliography and Library Science Department
Национальная библиотека Армении, ведущий библиограф Отдела библиографии и библиотековедения

Նեգրեկ Քրիստինա

Առցանց համակարգչային գրադարանային կենտրոն (OCLC) Եվրոպա, Մերձավոր Արևելք և Աֆրիկա (EMEA) տարածաշրջանում Հարավային Եվրոպայի կենտրոն, տնօրեն

<i>Négre Christian C.</i>	Southern Europe and Middle East, OCLC EMEA, Director
<i>Негрел Кристиан</i>	Онлайн-компьютерный библиотечный центр (OCLC) в регионе Европа, Ближний Восток и Африка (EMEA), директор по Южной Европе и Ближнему Востоку
<i>Ներսեսյան Աստղիկ</i>	Հայաստանի ազգային գրադարան, Հայ գրքի և մամուլի ենթաբաժնի վարիչ
<i>Nersesyan, Astghik</i>	National Library of Armenia, Head of the Armenian Books and Periodicals Sub-Department
<i>Нерсисян Астхик</i>	Национальная библиотека Армении, заведующая Подотделом армянской книги и периодического издания
<i>Ներսիսյան Վարսիկ</i>	Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարան, դասախոս Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ ORCID: https://orcid.org/0000-0003-2881-7154
<i>Nersisyan Varsik</i>	Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, Lecturer Candidate of Sciences Philology, Associate Professor ORCID: https://orcid.org/0000-0003-2881-7154
<i>Нерсисян Варсик</i>	Армянский государственный педагогический университет имени Хачатура Абовяна, преподаватель Кандидат филологических наук, доцент ORCID: https://orcid.org/0000-0003-2881-7154
<i>Ուզունովա Ելենա</i>	Սուրբեր Կյուրեղի և Մեթոդիոսի անվան Բուլղարիայի ազգային գրադարան, անկախ գիտնական
<i>Uzunova Elena</i>	Գիտությունների դոկտոր, դոցենտ SS Cyril and Methodius National Library; Independent Scholar PhD, Associate Professor
<i>Узунова Елена</i>	Национальная библиотека “Святые Кирилл и Мефодий”, независимый ученый Доктор, доцент
<i>Պապպ Վիկտոր</i>	Հունգարիայի ազգային գրադարան, պատմական լուսանկարչության և հարցազրույցների հավաքածու, հետազոտող, պատմաբան Գիտությունների թեկնածու ORCID: https://orcid.org/0000-0002-4182-9910
<i>Papp Viktor</i>	National Széchényi Library, Historical Photograph and Interview Collection, Historian, Researcher PhD ORCID: https://orcid.org/0000-0002-4182-9910
<i>Панн Виктор</i>	Национальная библиотека Венгрии, Коллекция исторических фотографий и интервью, историк, исследователь Кандидат наук ORCID: https://orcid.org/0000-0002-4182-9910
<i>Ռաշևա Իվետա</i>	Սուրբեր Կյուրեղի և Մեթոդիոսի անվան Բուլղարիայի ազգային գրադարան, «Գրադարան» հանդեսի գլխավոր խմբագիր Բանասիրական գիտությունների թեկնածու

<i>Рашиева Ивета</i>	Национальная библиотека имени Святых Кирилла и Мефодия, главный редактор журнала «Библиотека» Доктор филологических наук
<i>Rasheva Iveta</i>	SS Cyril and Methodius National Library Editor-in-Chief of “Library” magazine Doctor of Sciences in Philology
<i>Մոդոմոնյան Լուսինե</i>	Հայաստանի ազգային գրադարան, Համագործակցության և գրքափոխանակության բաժնի առաջին կարգի գրադարա- նավար
<i>Soghomonyan Lusine</i>	Երևանի պետական համալսարանի ասպիրանտ National Library of Armenia, Librarian I of the Cooperation and Book Exchange Department Ph.D. student of the Yerevan State University
<i>Согомонян Лусине</i>	Национальная библиотека Армении, библиотекарь 1-го класса Отдела сотрудничества и книгообмена Аспирант Ереванского государственного университета
<i>Տրոտտեր Վերոնիկա</i>	Ինդիանայի համալսարանի գրադարան, Տարածաշրջանային հետազոտությունների բաժնի աշխատակից
<i>Trotter Veronika</i>	ORCID: https://orcid.org/0000-0002-7330-3542 Indiana University Libraries, Senior Collection Reference Assistant, Area Studies Department
<i>Тромтер Вероника</i>	ORCID: https://orcid.org/0000-0002-7330-3542 Библиотека Индианского университета, Сотрудник Отдела региональных исследований
<i>Ֆիշենկճեան Անի</i>	ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ Հրաչեայ Աճառեանի անուան լեզուի ինստիտուտ, գիտաշխատող
<i>Fishenkjian Ani</i>	Պատմական գիտություններու աստիճան ORCID: https://orcid.org/0009-0000-0476-8816 Institute of History NAS RA, Hrachya Acharyan Institute of Language, NAS RA, Researcher Candidate of Historical Sciences
<i>Фишенкджян Ани</i>	ORCID: https://orcid.org/0009-0000-0476-8816 Институт истории НАН РА, Институт языка имени Р. Ачаряна НАН РА, научный сотрудник Кандидат исторических наук
	ORCID: https://orcid.org/0009-0000-0476-8816

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Ալեքսանդրովա Կրասիմիրա

Սուրբեր Կյուրեղի և Մեթոդիոսի անվան Բուլղարիայի ազգային գրադարանի մշակութային ժառանգության պահպանման կայուն փորձը.....10

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ

Ռաշնա Իվետա

Գրագիտությունը և ընթերցանությունը՝ Բուլղարիայի ազգային գրադարանի պրիզմայով14

ԹՎԱՅԻՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Կապտերն Անդրեյ

Գրադարանային ծառայությունների թվային փոխակերպում. հնարավորություններ և մարտահրավերներ.....17

Հովհաննիսյան Գայանե

Լեզվական բազմազանություն հանուն զլորալ գիտության զարգացման.....26

Նեզրել Քրիստիան

Մետատվյալների ծառայություններ, թվային հավաքածուներ և պահպանություն.....36

Պապա Վիկտոր

Առցանց հրապարակումների մարտահրավերները. պատմական լուսանկարների թվային պահպանում41

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄ

Գաբրյան Գոհար

Գրադարանի կառավարման սոցիալ-հոգեբանական խնդիրները.....48

Գրիգորյան Ալվարդ

Թանգարանային շուկայավարությունը որպես ծառայությունների գրավչության բարձրացման և ռեսուրսների ապահովման միջոց60

ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՆՐԱՀՈՉԱԿՈՒՄ

Հայրիյան Լուսինե

Մուշի և պատմազգագրական հարակից շրջանների ժողովրդագիտական ժառանգությունը Գեղամ Տեր-Կարապետյանի դիտակետում68

Ղռեջյան Լուսինե

Ժողովրդական երգումների իմաստային տիպերը73

Ուզունովա Ելենա

966 թվականի հայկական քառավետարանները որպես Սուրբեր Կյուրեղի և Մեթոդիոսի անվան Բուլղարիայի ազգային գրադարանի հավաքածուի արժեքավոր օտարալեզու ձեռագրեր79

Տրոտտեր Վերոնիկա

Պահպանելով ժառանգությունը. հայոց լեզվի և մշակույթի ուսումնասիրությունը Ինդիանայի համալսարանի գրադարանների հնատիպ գրքերի միջոցով85

ՍՓՅՈՒՌՔԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՆՐԱՀՈՉԱԿՈՒՄ

Հակոբյան Աստղիկ

Իրանահայ տպագրությունն ու մամուլը՝ որպես ազգային ժառանգության պահպանման կտակարարներ90

Ֆիշենկճեան Անի

«Գեղարդ» սուրիահայ տարեգիրքի պատմալեզուագիտական արժեւորումը 100

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Աբրահամյան Սիրուն

Մասնագիտական զարգացումը աշխատավայրից ներս 111

Առաքելյան Իրինա

Արցախի թանգարանները 117

Թումասյան Ռուզաննա

Իրանի հայ մամուլը 121

Հարությունյան Արմինե

MARC 21 ձևաչափ. ոչ գրքային հրատարակությունների արդի խնդիրներ 126

Հարությունյան Բալասան

Հայ գրատպության պատմության հանրահռչակումը միջազգային հարթակներում (AEPМ, IZI TRAVEL) 134

Մելիքբեկյան Նաիրա

Հայաստանի ազգային գրադարանի թվային փոխակերպման գործընթացները արդի մարտահրավերներին ընդառաջ 140

Մեյյան Քրիստինե

Հունաստանում հրատարակված հայ մամուլի դերն ու նշանակությունը 148

Ներսեսյան Աստղիկ

Հայ թարգմանական գրականության մատենագիտություն. մեթոդական հայեցակետ 155

Ներսիսյան Վարսիկ

Նոր բառերի թարգմանական (հայերեն-ռուսերեն-անգլերեն) առցանց բառարանի ստեղծում.
անհրաժեշտությունն ու խնդիրները 162

Սողոմոնյան Լուսինե

Մասնագիտական զարգացման ժամանակակից պահանջները գրադարանային ոլորտում 167

Տեղեկություն հեղինակների մասին 173

CONTENTS

NATIONAL HERITAGE PRESERVATION

Aleksandrova Krasimira

Sustainable Practices in the Preservation of Cultural Heritage at the “St. St. Cyril and Methodius” National Library of Bulgaria	10
--	----

READING PROMOTION

Rasheva Iveta

Literacy and Reading Through the Prism of the Bulgarian National Library	14
--	----

DIGITAL CONTENT MANAGEMENT

Kapterev Andrey

Phygitalization of Library Services: Opportunities and Challenges.....	17
--	----

Hovhannisyan Gayane

Linguistic Diversity for Global Scholarly Communication.....	26
--	----

Christian C. Négre

Metadata Services, Digital Collections, and Preservation.....	36
---	----

Papp Viktor

Challenges of Online Publishing. Digital Preservation of Historical Photographs	41
---	----

MANAGEMENT AND PROFESSIONAL DEVELOPMENT

Gaboyan Gohar

Socio-Psychological Issues of Library Management	48
--	----

Grigoryan Alvard

Museum Marketing as a Means of Increasing the Service Attractiveness and Resource Provision	60
---	----

ARMENIAN HERITAGE PRESERVATION & PROMOTION

Hayriyan Lusine

Gegham Ter-Karapetyan’s Research Findings on the Demographic Heritage of Mush and Neighbouring Historical and Ethnographic Regions	68
--	----

Ghrejyan Lusine

Semantic Groups of Folkloric Oaths	73
--	----

Uzunova Elena

The Armenian Four Gospels of 966 – One of the Most Valuable Foreign Language Manuscripts in the Collection of the St. St Cyril and Methodius National Library	79
---	----

Veronika Trotter

Preserving Heritage: Exploring Armenian Language, History, and Culture Through Rare Books at Indiana University Libraries.....	85
--	----

DIASPORA HERITAGE PRESERVATION & PROMOTION

Hakobyan Astghik

The Preservation of National Heritage: Iranian-Armenian Printing and Continuing Resources.....90

Fishenkjian Ani

Historical and Linguistic Evaluation of the Syrian-Armenian Annual “Geghard” 100

REPORTS

Abrahamyan Sirun

Workplace Professional Development 111

Arakelyan Irina

Museums of Artsakh..... 117

Tumasyan Ruzanna

The Armenian Press in Iran 121

Harutyunyan Armine

MARC 21 Format: Contemporary Issues of Non-Book Publications 126

Harutyunyan Balasan

Armenian Printing History Promotion Within International Platforms (AEPM, Izi Travel) 134

Melikbekyan Naira

The Challenges of Digital Transformation of the National Library of Armenia..... 140

Melyan Kristine

The Role and Significance of the Armenian Periodicals in Greece 148

Nersesyan Astghik

Bibliography of Armenian Translated Literature: Methodological Aspect..... 155

Nersisyan Varsik

New Electronic Dictionary (Armenian – Russian, English): Needs and Challenges 162

Soghomonian Lusine

Modern Requirements for Professional Development in the Library Field 167

Information about the Authors 173

СОДЕРЖАНИЕ

СОХРАНЕНИЕ НАЦИОНАЛЬНОГО НАСЛЕДИЯ

Александрова Касимира

Сохранение книжно-документального наследия в Национальной библиотеке имени Святых Кирилла и Мефодия10

ПРОДВИЖЕНИЕ ЧТЕНИЯ

Рашиева Ивета

Грамотность и чтение через призму Болгарской национальной библиотеки14

УПРАВЛЕНИЕ ЦИФРОВЫМ КОНТЕНТОМ

Каптерев Андрей

Фиджитализация библиотечного обслуживания: возможности и проблемы.....17

Оганнисян Гаяне

Лингвистическое разнообразие для глобальной научной коммуникации.....26

Негрел Кристиан

Услуги по работе с метаданными, цифровые коллекции и их сохранение36

Папп Виктор

Проблемы онлайн-публикации. Цифровое сохранение исторических фотографий41

УПРАВЛЕНИЕ И ПРОФЕССИОНАЛЬНОЕ РАЗВИТИЕ

Габоян Гоар

Социально-психологические вопросы управления библиотекой.....48

Григорян Алвард

Музейный маркетинг как средство повышения привлекательности услуг и ресурсного обеспечения60

СОХРАНЕНИЕ И ПОПУЛЯРИЗАЦИЯ АРМЯНСКОГО НАСЛЕДИЯ

Гайриян Лусине

Исследования Гегам Тер-Карпетяна: этнографическое наследие Муша и соседних историко-национальных регионов68

Греджян Лусине

Семантические группы фольклорных клятв.....73

Узунова Елена

Четыре армянские Евангелия 966 года: ценные манускрипты коллекции Национальной библиотеки Св. Кирилла и Мефодия.....79

Троттер Вероника

Сохранение наследия: исследование армянского языка, истории и культуры через редкие книги в библиотеках университета Индианы.....85

СОХРАНЕНИЕ И ПОПУЛЯРИЗАЦИЯ НАСЛЕДИЯ ДИАСПОРЫ

Акопян Астхик

Сохранение национального наследия: иранско-армянская печать и пресса 90

Фишенкджеан Ани

Историко-лингвистическая ценность сирийско-армянского ежегодника «Гегард»..... 100

ДОКЛАДЫ

Абраамян Сирун

Профессиональное развитие на рабочем месте..... 111

Аракелян Ирина

Музеи Арцаха 117

Тумасян Рузанна

Армянская пресса Ирана 121

Арутюнян Армине

Формат MARC 21: современные проблемы некнижных публикаций 126

Арутюнян Баласан

Продвижение истории армянского книгопечатания на международных платформах (AEPМ, Izi Travel) 134

Меликбекян Наира

Цифровая трансформация Национальной библиотеки Армении: вызовы эпохи 140

Мелян Кристине

Роль и значение армянских периодических изданий Греции 148

Нерсисян Астхик

Библиография армянской переводной литературы. методологический аспект..... 155

Нерсисян Варсик

Создание онлайн-словаря для перевода новых слов (армянский-русский-английский): необходимость и проблемы..... 162

Согомонян Лусине

Современные требования к профессиональному развитию в библиотечной сфере..... 167

Информация об авторах.....173

